Էջմիածին



Ե

2019

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Մայիս

2019
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԷՋՄԻԱԾԻՆ»
կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխաւոր խմբագիր՝
Գէորգ Մաղոյեան

Գլխաւոր խմբագրի տեղակալ՝
Տ. Անդրէաս աբեղայ Եզեկեան

Խմբագիր՝
Արփինէ Չանթիկեան

Տեխնիկական խմբագիր՝
Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ

Տ. Եզնիկ արք. Պետրոսեան, **Տ. Զաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեան**,
Տ. Անդրէաս աբեղայ Եզեկեան, **Ազատ Բօզոյեան**, **Գէորգ Տէր-Վարդանեան**,
Վարդան Դեւրիկեան, **Գոհար Աւագեան**

“Etchmiadzin”
Theological and Armenological Journal

Editorial staff
Editor-in-Chief - **Gevorg Madoyan**

Deputy Editor-in-Chief - **Rev. Fr. Andreas Yezekyan**

Editor
Arpine Chantikyan

Technical editor - **Gor Grigoryan**

Editorial Board

**Archbishop Yeznik Petrosyan, Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Rev. Fr. Andreas Yezekyan, Azat Bozoyan, Gevorg Ter-Vardanyan, Vardan Devrikyan,
Gohar Avagyan**

«Эчмиадзин»
Религиоведческий и арменоведческий журнал

Главный редактор
Геворк Мадоян

Заместитель главного редактора
Иеромонах Андреас Езекян

Редактор
Арпине Чантикян

Технический редактор
Гор Григорян

Редакционный совет

**Архиепископ Езник Петросян, протоархимандрит Закария Багумян,
иеромонах Андреас Езекян, Азат Бозоян, Геворк Тер-Варданян, Вардан Деврикян,
Гоар Авакян**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԱՌԻԹՈՎ

(3-ը մայիսի, 2019 թ.)

Մեծարգո՛ վարչապետ,

Հոգեւո՛ր հայրեր,

Հարգարժա՛ն պետական այրեր եւ ներկաներ,

Ողջունում եւ Մեր օրհնությունն ենք բերում ձեզ։ Մեր ուրախությունն ենք հայտնում Եկեղեցի-պետություն հարաբերությունների արդյունավորման նպատակով աշխատանքային խմբի առաջին նիստի գումարման առիթով։

Հայրենի պետության եւ մեր Եկեղեցու հարաբերությունների կանոնակարգման այս նոր ձեւաչափը բարեպատեհ հնարավորություն է քննարկելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը եւ փնտրելու դրանց լուծման ուղիներ՝ ի խնդիր մեր Եկեղեցու առաքելության արդյունավորման՝ հանուն մեր երկրի եւ ժողովրդի։

Մեր պատմությունը լավագույնս վկայում է, որ Եկեղեցին հոգեփրկչական իր առաքելության ծիրում անուրանալի ներդրում է ունեցել հայկական պետության զորացման եւ ամրապնդման գործում, նաեւ պետության սատարումով արգասավորել է իր հոգեւոր ծառայությունը մեր ժողովրդին։ Եկեղեցու եւ պետության հարաբերությունները Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի եւ Սուրբ Տրդատ Գ. թագավորի սերտ գործակցության շնորհիվ նվիրագործվել են Հայաստանի՝ առաջին քրիստոնյա պետություն հռչակումով, որը եղել եւ մնում է մեր ժողովրդի փառքն ու պարծանքը։ Պետականության բացակայության պայմաններում Եկեղեցին շարունակել է խնամել ու առաջնորդել մեր ժողովրդին՝ արթուն պահելով անկախ պետականության վերականգնման գիտակցությունը եւ ջանքեր ներդնելով հայոց պետության վերահաստատման համար։

Հայրենի պետականությունը անսասան պահելու եւ պետական շահերով առաջնորդվելու Հայոց Եկեղեցու դիրքորոշումը լավագույնս արտացոլված է Սուրբ Սահակ Պարթեւ Հայրապետի հայտնի ձեւակերպման մեջ, որը Հայոց Եկեղեցու ողջ պատմության ընթացքում առանցքային է եղել մեր հայրապետների ու եկեղեցականների գործունեության մեջ։

Մեր Եկեղեցու առաքելությունը վերափոխել է մեր ժողովրդի կյանքը հոգեւոր, կրթական, գիտական եւ մշակութային նշանակալի ձեռքբերումներով։ Եկեղեցու հոգեփրկչական առաքելության առանցքում հոգեւոր-բարոյական արժեհամակարգով անձի կերտումն է, ազգի հավատավոր, հայրենասեր, օրինապահ զավակի կրթությունն ու դաստիարակումը, ինչը նաեւ պետության առաջնահերթությունն է քաղաքացու ձեւավորման պատասխանատու գործում։ Այս առումով մեծապես կարեւոր է պետության եւ Եկեղեցու համագործակցությունը՝ թելադրված ազգային մեր շահերով ու գերակայություններով, մեր ազգային ինքնությունը, ոգին, նկարագիրը պահպանելու հրամայականով։

Փառք ենք տալիս Տիրոջը, որ անկախության անցնող տարիների ընթացքին նշանակալի քայլեր են կատարվել մեր պետության եւ Եկեղեցու հարաբերությունների կարգավորման ուղղությամբ։ Այդուհանդերձ, առկա են լուծման կարոտ կարեւոր հարցեր ու խնդիրներ։ Մենք հույս ունենք, որ այս աշխատանքային խմբի շրջանակներում կգտնվեն արդյունավետ լուծումներ ազգային մեր կյանքում Եկեղեցու առաքելության անխոչընդոտ իրականացման համար։ Քննարկումների ընթացքում, կարծում ենք, նկատի պիտի առնվեն ելակետային որոշ իրողություններ ու դիտարկումներ, որոնք ներկայացնում ենք ստորեւ.

1. ՀՀ Սահմանադրությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ճանաչում է որպես Ազգային Եկեղեցի՝ հաշվի առնելով Եկեղեցու բացառիկ առաքելությունը մեր ժողովրդի կյանքում։ Միաժամանակ Սահմանադրությամբ երաշխավորված է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը։ Հայ Առաքելական Եկեղեցուն առանձնահատուկ կարգավիճակի տրամադրումը երբեմն միտումնավոր ներկայացվում է որպես խտրականության դրսեւորում, ինչը միանշանակ կողմնակալ գնահատական է եւ չի ներդաշնակում միջազգային փորձի եւ ընդունված չափանիշների հետ։ Տարբեր երկրների, այդ թվում նաեւ եւրոպական մի շարք պետությունների կրոնական օրենսդրությունների ուսումնասիրությունը եւ փորձը փաստում են, որ տվյալ երկրի ու ժողովրդի պատմության մեջ մեծ դեր ունեցած կրոնական հաստատության

առանձնահատուկ կարգավիճակը որեւէ ձեւով չի ենթադրում խտրականություն կրոնական կազմակերպությունների նկատմամբ։

2. Կրոնական կազմակերպությունների՝ պետությունից անջատվածության սահմանադրական հիմնադրույթը երբեմն թյուրըմբռնմամբ ընկալվում է Հայոց Եկեղեցու պատմականորեն նվիրագործված առաքելությունը սահմանափակելու իմաստով։ Այս կողմնորոշումը փորձ է արվում հիմնավորել վկայակոչելով պետության աշխարհիկության սկզբունքը։ Մինչդեռ «աշխարհիկ պետություն» հասկացությունը չի կրում հակաեկեղեցական կամ ապակրոնական տարր եւ չի բացառում պետության եւ Եկեղեցու գործակցությունը ու չի խոչընդոտում դրա իրականացմանը կյանքի զանազան ոլորտներում, առավել եւս՝ քրիստոնեական հարուստ ժառանգություն եւ հնագույն ավանդույթ ու անցյալ ունեցող Հայաստանում։

3. Եկեղեցական հիմնահարցերի օրենսդրական կարգավորումներում պետք է նկատի առնվեն նաեւ Հայոց ցեղասպանության, ինչպես եւ խորհրդային տարիներին Եկեղեցու նկատմամբ իրագործված հալածանքների հետեւանքով Հայ Առաքելական Եկեղեցուն հասցված նյութական եւ մարդկային ահռելի վնասներն ու կորուստները, այդ թվում՝ վանքերի, եկեղեցիների, եկեղեցական ենթակառուցվածքների ավերումն ու ոչնչացումը եւ ունեցվածքի ու կալվածքների բռնազավթումը։ Այս ամենը, ինչպես եւ այդ ժամանակաշրջանում Եկեղեցի-պետություն հարաբերությունների փաստացի չգոյության իրողությունը չեն թույլատրել վերականգնելու կրած կորուստները։ Այս համատեքստում կարեւոր է պետության զորակցությունը, որ Եկեղեցին կարողանա վերականգնել անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները իր առաքելության համար ի հայրենիս եւ ի սփյուռս։

Աշխատանքային այս խմբի գործունեության հետ կապված են դրական սպասումներ թե՛ հոգեւորականության, թե՛ հավատավոր մեր ժողովրդի շրջանակներում։ Վստահ ենք, որ Եկեղեցի-պետություն գործակցության ընդլայնումը պիտի նպաստի մեր ժողովրդի ազգային եւ հոգեւոր կյանքի զորացմանը, գիտակից ու օրինապահ քաղաքացու ձեւավորմանը, ընտանիքների ամրությանը, Եկեղեցու պայծառությանը եւ պետության հզորությանը։

Մեր աղոթքն է, որ Տերը խաղաղ երկնքի ներքո բարօրություն ու բարգավաճում պարգեւի հայրենի մեր երկրին եւ արդյունավորի մեր ժողովրդի եւ հայրենի իշխանությունների բոլոր ջանքերը՝ հանուն մեր հայրենիքի, մեր ազգային կյանքի առաջընթացի եւ շեն ու պայծառ գալիքի։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Հերակլիոն, Կրետե, 5-ը մայիսի, 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

« Տէ՛ր, որ հիմնեցուցեր զեկեղեցի Քո ի վերայ վիմի հաւատոյ...
ի խաղաղութեան զսա պահեա՛»
(Ժամագիրք)։

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,

Փառք ենք վերառաքում Բարձրյալին մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներիդ հանդիպելու եւ ձեզ հետ միասին Սուրբ Հովհաննու Կարապետ եկեղեցու 350-ամյակը տոնախմբելու շնորհի համար։ Գոհունակության զգացումով է համակված Հայրապետիս հոգին, որ հովվապետական անդրանիկ այցով գտնվում ենք Միջերկրական ծովի այս գեղատեսիլ կղզում, որտեղ հայորդիք երեք եւ կես դարեր շարունակ սերնդեսերունդ համախմբված են Սուրբ Հովհաննես Մկրտչի անունը կրող այս նվիրական եկեղեցու հովանու ներքո։ Եկեղեցու հոբելյանը մեծ իրադարձություն է ամենքիս համար։ Ուրախալի այս առիթով բերում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքները եւ համայն հայության նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լույսն ու օրհնությունը։

Խորհրդանշական է, որ այսօր Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին տոնում է Կանաչ կամ Աշխարհամատրան կիրակին։ Այն հիշատակությունն է երկրի վրա Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հաստատման, որ հիմնվեց հավատքի վեմի վրա, ինչպես որ օրհնաբանվում է նաեւ Ժամագրքի աղոթական խոսքերով։ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարությունը դարձավ Եկեղեցու հաղթության, Փրկչի կենարար վարդապետության աշխարհում տարածման սկիզբը եւ այն զորությունը, որով քրիստոնյաները համբերեցին բազում չարչարանքների ու նեղությունների, բայց անշեջ պահեցին հավատքի լույսը, դրանով լուսավորեցին աշխարհը եւ հրավիրեցին մարդկությանը ժառանգելու հավիտենությունն ու երկնքի արքայությունը։ Քրիստոսի շնորհած Հարությունը դարձավ զորությունը նաեւ այս

կյանքի, որով դժվարությունների ու խնդիրների առջեւ դիմակայումով հավատացյալները վկայեցին իրենց հավատքի, կամքի ու կյանքի հաղթանակը եւ հավատքի վեմի վրա անսասան մնալով՝ եկեղեցիներ հաստատեցին տարբեր երկրներում։ Հարության զորությամբ էր նաեւ, որ քրիստոսապաշտ մեր ժողովուրդը հառնեց իր համար փորված գերեզմաններից, հարություն առավ Հայոց Ցեղասպանությունից եւ իր կյանքը վերընձյուղեց հավատավոր ու աստվածասեր իր ընթացքի նոր ձեռքբերումներով։ Աշխարհի տարբեր երկրներում հիմնված հայ համայնքներում վերստին կերտվեցին սրբավայրեր, կառուցվեցին եկեղեցիներ, հնչեց աղոթքը, հնչեց հայ լեզուն ու խոսքը, վառ մնաց հայոց ջահը աստվածսիրության ու եկեղեցասիրության՝ ըստ Պողոս առաքյալի հոգեշահ խոսքի. «Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թէ՞ անձկութիւնը, թէ՞ հալածանքը, թէ՞ սովը, թէ՞ մերկութիւնը, թէ՞ վտանգները, թէ՞ սուրը։ Ո՛չ մի արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այդ սիրուց, որ կայ մեր Տէր Քրիստոս Յիսուսով» (Հռ. Ը. 35, 39)։ Ահա այդ սիրով, անխորտակելի հավատքով են հիմնադրվել մեր սուրբ եկեղեցիները, ինչպես որ Սուրբ Հովհաննես Մկրտչի անունը կրող այս եկեղեցին։

Հավատացյալներիս համար Եկեղեցին դեպի Աստված եւ փրկություն առաջնորդող տապան է, որ այս կյանքի ալեկոծությունների, անհանգստությունների ու տագնապների ընդմիջից իր հարկի ներքո ապաստանածներին սնում է հոգեւոր կերակրով, մատուցվում Տիրոջ Կենաց խոսքը եւ ապահով հասցնում դեպի խաղաղ նավահանգիստը։ Եկեղեցու այս մեծագույն փրկարար առաքելության կարեւորությամբ է մեր շարականներում Սուրբ Եկեղեցին գովաբանվում որպես Աստծու քաղաք, աստվածային շնորհներով լցված անխորտակելի հաստատություն. «Տէ՛ր, որ հիմնեցուցեր զԵկեղեցի Քո ի վերայ վիմի հաւատոյ... ի խաղաղութեան զսա պահեա՛»։

Գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ, որ երեք եւ կես դարեր շարունակ Սուրբ Հովհաննու Կարապետ այս եկեղեցին իր հոգեւոր սպասավորներով եւ նրանց լծակից աշխարհականներով գովելի ծառայությամբ հոգեւոր խնամք է մատուցել Կրետեում հաստատված հայորդիներին, առաջնորդել դեպի Աստված, զորացրել հավատացյալներին, բաշխել Սուրբ Հոգու պարգեւները, ամուր պահել ազգային ինքնությունը։

Սիրելինե՛ր, նոր ժամանակներում դուք եք, որ ձեր հայրերի օրինակով, սիրո եւ միաբանության ոգով մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո շարունակում եք կենդանի պահել ազգային-եկեղեցական կյանքն այստեղ եւ ձեր բաժին լույսը հավելել Սուրբ Էջմիածնի Լուսավորչահաստատ

մշտավառ կանթեղին, որ դարերի խորքից մինչեւ այսօր լուսավորում է ազգիս փրկության ճանապարհը։ Դուք էլ ձեր այս փոքրիկ համայնքով, բայց զորավոր հավատքով մաս եք կազմում հայոց ազգային-եկեղեցական կյանքի, եւ շատ կարեւոր է, որ նույն նախանձախնդիր ոգով շարունակեք ընթանալ ձեր հայրերի ավանդած ճանապարհով։

Քրիստոսի Սուրբ Հարության այս տոնական օրերին, երբ ամենքս հարուցյալ Տիրոջով զորացյալ՝ մեր հայացքները ուղղել ենք դեպի փրկության հավիտենական լույսը, Հայրապետիս հորդորն է, որ ամուր հավատքով եւ անխոնջ նվիրումով շարունակեք ձեր աստվածահաճո ընթացքը, նախանձախնդիր մնաք մեր սրբազան արժեքներին եւ ազգային ու եկեղեցական կյանքի հանդեպ նույն նվիրումով շենացնեք համայնքային ձեր կյանքը։ Ձեր եկեղեցու հաստատման 350-ամյակի հոբելյանը նոր հանգրվան նկատեք՝ վերանորոգելու առ Աստված հավատարմության ձեր ուխտը եւ եկեղեցաշեն ու ազգօգուտ իրագործումներով բարեզարդեք ազգային-եկեղեցական մեր անդաստանը։

Այս ուրախ առիթով Մեր շնորհավորանքն ու գնահատանքն ենք բերում ձեզ՝ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին Կրետեի հայ համայնքի հանդեպ իր հոգատար խնամատարության համար, Սուրբ Հովհաննու Կարապետ եկեղեցու վարչության ատենապետին եւ անդամներին ու հավատավոր զավակներիդ՝ մաղթելով սեր եւ երջանկություն ընտանեկան ձեր հարկերից ներս, ուժ եւ կորով, որպեսզի նվիրումով ու ջերմեռանդությամբ կարեւոր մասնակցություն բերեք ինչպես համայնքային կյանքի զորացմանը, այնպես էլ Կրետե կղզու բարգավաճմանը՝ վայելելով տեղական իշխանությունների եւ ժողովրդի սերն ու հարգանքը։

Մենք Մեր գնահատանքն ենք հայտնում նաեւ Հունաստանի իշխանություններին, Կրետեի արքեպիսկոպոսարանին եւ նահանգապետարանին՝ ի դեմս այստեղ ներկա Հունաստանի փոխարտգործնախարար Մարկոս Բոլարիսի, Արքեպիսկոպոս Իրինեոսի եւ Նահանգապետ Ստավրոս Առնաուտակիսի՝ ջերմ ընդունելության, մեր ժողովրդի զավակների հանդեպ բարյացակամության ու զորակցության եւ հոբելյանական միջոցառումներին բերած աջակցության համար։

Աղոթքով հայցում ենք առ բարին Աստված, որ Իր ամենախնամ Աջի հովանու ներքո պահի Հունաստանը եւ Կրետե կղզում ապրող մեր Եկեղեցու զավակներիդ՝ անխոնջ նվիրումով շարունակելու շենացնել Սուրբ Հովհաննու Կարապետ եկեղեցին եւ աշխուժացնել համայնքային կյանքը։

Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքները, որոնց հավարտ սուրբ պատարագի պիտի հաղորդակցվեք, թո՛ղ զորացնեն ձեզ ձեր առաքելության մեջ, եւ Սրբի բարեխոսությամբ հավատավոր գործեր հավելեք ձեր կյանքից ներս։

Թո՛ղ Տիրոջ օրհնությամբ սիրո եւ խաղաղության մեջ շենանա Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, զորեղ եւ բարօր մնա ազգային-եկեղեցական կյանքը աշխարհասփյուռ մեր ժողովրդի, եւ համայն հայության միասնական ջանքերը ծառայեն բարօրությանը Հայաստան աշխարհի եւ պայծառությանը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու։

Թո՛ղ Տիրոջ սերը, շնորհները եւ օրհնությունը լինեն մեզ հետ եւ բոլորի այսօր եւ միշտ. ամեն։

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 12-ը մայիսի, 2019 թ.)

«Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ օծ իսկ զիս,
աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ,
քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսանել»
(Եսայի ԿԱ. 1–2)։

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,

Այսօր վերստին Հոգեգալուստ է մեր Եկեղեցում Սուրբ Հոգու արփիափայլ շնորհների հեղումով։ Մեծ ուրախություն ենք ապրում ամենքս եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման սրբազան արարողության առիթով։

Եսայու մարգարեության խոսքի հիշատակումով Փրկիչը սահմանում է եկեղեցականի ծառայության մարգարեական ու առաքելական կոչումները. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու եւ կույրերին տեսողություն...» (Ղուկ. Դ. 18–19)։ Արդարեւ, առաքելական կոչման շարունակողն է եպիսկոպոսը, ձեռնադրության խորհրդով տերունապատվեր սպասավորության շնորհը փոխանցողը, Սուրբ Հոգով կարգված հոգեւոր տեսուչը հավատացելոց, նախանձախնդիր պահապանը ուղղափառ վարդապետության եւ սրբազան ավանդության, մշտարթուն ծառայողը՝ ի խնդիր Եկեղեցու պայծառության, ժողովրդի անաղարտ հավատքի զորացման։ Հոգեւոր սպասավորության բարձր պատասխանատվություն ստանձնելով՝ եպիսկոպոսը հետեւողն ու օրինակողն է մեր Փրկչի, որ Իր երկրավոր առաքելության ժամանակ ապրեց մարդկանց կենաց խոսքը ավետարանելու, հոգեւոր քաղցը հագեցնելու, մեղքի գերության տակ գտնվողներին սփոփելու եւ ազատագրելու, կյանքի գայթակղություններից կուրացածներին նոր, հոգեւոր տեսողություն պարգեւելու մարդասեր ծառայությամբ։ Սուրբ Պողոս առաքյալի պատգամը հաստատումն է եպիսկոպոսի նկարագրի եւ գործունեության. «Եպիսկոպոսը պետք է անբասիր լինի, որպես Աստծու տնտես. ո՛չ հանդուգն,

ո՛չ բարկացող, ո՛չ անարգող, ո՛չ կռվարար, ո՛չ շահասեր, այլ՝ հյուրասեր, բարեսեր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, ամուր կապված վարդապետության հավատի խոսքին, որ կարողանա հորդորել ողջամիտ վարդապետությամբ» (Տիտ. Ա. 7–9)։ Հիրավի, եպիսկոպոսի առաջնորդության ներքո են արդյունավորվում հովվական բարեխնամ առաքելությունը, Սուրբ Գրքի կենարար խոսքի մատռվակումը հավատացյալներին, վարչական գործառույթները եկեղեցական կյանքի։ Արդարեւ, Տիրոջը հետեւելու եւ նրա առաքելության լուծն առնելու հանձնառությունը շնորհ է՝ գործելու եւ արարելու հանուն հավատավոր ժողովրդի փրկության եւ հոգեւոր մխիթարության։

Մեր պատմությունը հարուստ է սրբակյաց ու անձնդիր վարքով հռչակված եպիսկոպոսների մասին վկայություններով, ովքեր բարի օրինակներ են թողել իրենց առաքելական քաջեռանդ ծառայության։ Նրանց կորովի առաջնորդությամբ է քրիստոսասեր մեր ժողովուրդը վկայել Փրկչին հետեւելու իր անդրդվելի նվիրումի մասին, ստեղծել մշակույթ, գիր ու դպրություն, կերտել վանք ու եկեղեցի, անաղարտ պահել քրիստոնեական ինքնությունն ու արժեհամակարգը, դիմագրավել ժամանակների մարտահրավերներին։ Եւ այսօր էլ նույնն է սպասումը եպիսկոպոսներից՝ անհոգնաբեկ ջանքեր գործադրել, որ հայորդիք առավել հաղորդակից լինեն եկեղեցական մեր սրբություններին, սրբազան ավանդույթներին, վերարժեւորեն մեր անգին հոգեւոր ժառանգությունը, մոլորեցնող ուսմունքների ազդեցությամբ չշեղվեն ճշմարտությունից, անսայթաք ընթանան Քրիստոսի պատվիրանների համաձայն, պահպանեն լուսավորչահաստատ հավատքը, ապրեն քրիստոնեական բարձր արժեքներով, ընթանան փրկության ճանապարհներով՝ ամուր առ Աստված եւ առ հայրենին սիրո ու նվիրումի մեջ։

Սիրելի՛ հավատավոր զավակներ, այսօր եպիսկոպոսության աստիճան ստացած եկեղեցականներն իրենց գովելի սպասավորությամբ վաստակել են հավատավոր հայորդիների սերն ու հարգանքը։ Գոհունակությամբ ենք անդրադառնում նորաօծ Սրբազանների՝ տարիների եկեղեցանվեր ու ազգասեր գնահատելի ծառայությանը, թեմերից եւ համայնքներից Մեր բարեպաշտ հայորդիների բարի վկայություններին, ինչպես նաեւ փափագին՝ նրանց արժանացած տեսնելու եպիսկոպոսական բարձր ու պատասխանատու աստիճանին։ Ուրախությամբ ձեզ ենք ներկայացնում եպիսկոպոսացյալ մեր սիրելի հոգեւոր հայրերին։

Տ. Սերովբե եպիսկոպոս Իսախանյան – *ծնվել է Իրանում, սովորել է Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, իր ծառայությունները բերել Մայր Աթոռում, Միջին Ասիայի հայ համայնքներում, ապա երկար տարիներ հոգեւոր սպասավորությունը շարունակել Գերմանիայի Հայոց թեմում: 2018 թ. ապրիլին Գերմանահայոց թեմի պատգամավորական ժողովի ընտրությամբ կոչվել է թեմական առաջնորդի պաշտոնին:*

Տ. Դանիել եպիսկոպոս Ֆընտըգյան – *ծնվել է ԱՄՆ-ում, սովորել Նյու Յորքի պետական համալսարանում, Սբ. Ներսես ընծայարանում, Սբ. Վլադիմիր օրթոդոքս ճեմարանում, ապա Հռոմի Պապական՝ արեւելագիտության ինստիտուտում: Նա տարիներ շարունակ իր հոգեւոր ծառայությունն է իրականացրել ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմում եւ 2018 թ. մայիսին ընտրվել նույն թեմի առաջնորդ:*

Տ. Տիրան եպիսկոպոս Պետրոսյան – *ծնվել է Հայաստանում, հոգեւոր կրթությունն ստացել Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, ապա բարձրագույն աստվածաբանական իր կրթությունը շարունակել Վիեննայի կաթոլիկ համալսարանում: Նա, որպես փոխտեսուչ, իր ծառայությունն է բերել Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, ապա Կենտրոնական Եւրոպայի հայ համայնքներում, 2013 թվականից սպասավորում է որպես Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակ:*

Նորաօծ մեր Սրբազանները միասիրտ եւ միախորհուրդ ուխտեցին «անխոտոր եւ անսայթաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ եւ պատուիրանաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ»: Սիրելի՜ Սրբազաններ, մաղթում ենք, որ մարգարեական նախանձախնդրությամբ, առաքելական հաստատակամությամբ, Տիրոջ խոսքը մատուցող ավետարանիչների քաջեռանդությամբ, մեր երանելի սուրբ հայրերի լուսաշավիղ օրինակով միշտ ժրաջան իրականացնեք ձեր առաքելությունը, որ հավետ շեն ու պայծառ լինի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, մխիթարությամբ սփոփյալ՝ սրտերն ու հոգիները հավատավոր Մեր սիրելի զավակների: Մեր հորդորն ու պատգամն է, որ հաստատուն պահեք ձեր ուխտը, գործեք եւ ծառայեք մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի լույս օրինակով եւ ձեր ազգօգուտ ու եկեղեցանվեր գործերին հավելեք նորանոր ձեռքբերումներ:

Աղոթքով առ Աստված Տիրոջ մշտական զորակցությունն ենք հայցում ձեզ: Ձեր բարձր առաքելության մեջ թո՛ղ ձեզ զորավիգ լինեն Հայոց

Սուրբ Եկեղեցու հիմնադիրներ Սուրբ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների, մեր պատվական Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ բոլոր սուրբ հայրերի բարեխոսական աղոթքները։ Թո՛ղ Ամենակալ Տերը միշտ խաղաղ ու բարեշէն պահի մեր Մայր հայրենիքը, պայծառ ու անսասան՝ մեր Սուրբ Եկեղեցին եւ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո՝ համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին։

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն։

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԺԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՏՈՒԿ ՆԻՍՏՈՒՄ

(ԱՄԷ, Շարժա, 20-ը մայիսի, 2019 թ.)

«Աստված մեկ արյունից ստեղծեց
մարդկանց բոլոր ազգերը, որ բնակվեն
ամբողջ երկրի վրա»
(Գործք Առաքելոց ԺԷ. 26)։

Սիրելի՛ ներկաներ,

Մեզ համար խորին գոհունակություն է այսօր Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժայի Տեղեկատվական պետական խորհրդում մասնակցելու Հանդուրժողականության տարվա շրջանակներում կազմակերպվող այս միջոցառմանը։

Արաբական Միացյալ Էմիրությունների հիմնադիր հայր ու նշանավոր քաղաքական գործիչ Շեյխ Զայիդ բին Սուլթան Ալ Նահյանի տեսլականով կերտվող հանդուրժողականության եւ խաղաղ համակեցության ստեղծարար ուղին Արաբական Էմիրությունների նոր առաջընթացի ու ձեռքբերումների երաշխիքն է, միաժամանակ ողջունելի ջանք նաեւ մարդկության կյանքում խաղաղության ու հաճության հաստատման ու ամրապնդման գործում։ Մեր շնորհակալությունն ենք հայտնում Արաբական Միացյալ Էմիրությունների մեծարգո նախագահ, Նորին Գերազանցություն Խալիֆ բին Զայիդ Ալ Նահյանին եւ Շարժայի Էմիրության կառավարիչ Նորին Գերազանցություն Շեյխ Սուլթան բին Մուհամեդ Ալ Քասիմիին, ինչպես նաեւ՝ «Լրատվամիջոցների խորհրդի» նախագահ Շեյխ Սուլթան բին Ահմեդ Ալ Քասիմիին, որի հրավերով Մենք՝ որպես հոգեւոր առաջնորդը աշխարհասփյուռ հայ ժողովրդի, եկել ենք ներկայացնելու ձեզ հանդուրժողականության մասին քրիստոնեական մեր դարավոր ավանդույթի ընկալումները՝ հիմնված խաղաղ համակեցության ու մերձավորին սիրելու աստվածային պատգամի վրա, որն իր կյանքում մշտապես կարեւորել ու կարեւորում է մեր աստվածասեր ժողովուրդը։ Բարձրյալը թո՛ղ օրհնի այս միջոցառման կազմակերպման ձեր ազնիվ ջանքերը եւ մարդասիրական նախաձեռնությունները։

Հայ ժողովուրդը, իր պատմության մեջ շատ փորձություններ, տառապանք, ու ցեղասպանություն է տեսել, եւ վշտահար հոգու աղոթքով հաճախ

է խաղաղություն հայցել երկնքից՝ հայացքն ուղղելով դեպի բիբլիական Արարատ սրբազան լեռը, որը խորհրդանիշ է ջրհեղեղից հետո մարդկության նոր կյանքի վերընձյուղման եւ խաղաղության ավետիսի կենսագործման։

Դարերի հոլովույթում արձանագրված փորձառությունը վկայում է, որ հեշտընթաց չեն հանդուրժողականության ճանապարհները, բայց միշտ՝ հնարավոր, եթե ճշմարտապես ունենք իրար սիրելու եւ համերաշխ համակեցության բարի ձգտումը։ Աստված մեկ արյունից է ստեղծել մարդկանց, բոլոր ազգերին. այս հաստատումն է անում Սուրբ Գիրքը՝ մատնանշելով եղբայրասիրության համամարդկային արժեքը (Գործք ԺԷ. 26)։ Մարդկային յուրաքանչյուր էակի հանդեպ Աստծու սերն անխտիր է։

Անհնար է հավատալ ու փառաբանել Աստծուն՝ առանց մարդու կյանքի, նրա աստվածաստեղծ պատկերի ու հիմնարար արժեքների հանդեպ նվիրական զգացումի։ Մարդկանց համար հավասար իրավունքների ապահովումը, հետեւաբար, նշանակում է հաստատել Աստծու արարչության մեծագործությունն ու կատարելությունը։

Հանդուրժողականությունը, միաստվածյան կրոնների բարոյական տեսանկյունից, մարդ անհատի մեջ աստվածային պատկերի ու նմանության ներկայությունը տեսնելն ու դրանով իսկ Աստծուն վկայելն է, մարդկային մեծ ընտանիքի մեջ մեր նմանի հետ մշտական երկխոսությունն է, ստորակարգման բացառումը, ազատության իրավաչափ սահմանումը։ Քրիստոնեական մտածողության մեջ, դեռեւս Դ. դարից սկսյալ, այս մոտեցումը սահմանվել է «միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս, եւ սէր յամենայնի» գաղափարական ընկալումով, որը բոլոր դարերում առաջնորդող է եղել Հայոց Եկեղեցու համար։ Հանդուրժողականությունն ըստ այսմ ներկայացվում է համամարդկային խնդիրների առջեւ համընդհանուր ջանքերի մեկտեղման եւ համագործակցության դրսեւորմամբ՝ եղբայրասիրությամբ պահպանելով այն բոլոր առանձնահատկությունները, որոնցով օժտված են ազգերն ու ժողովուրդները։

Հատկանշական է, որ Հանդուրժողականության տարվա խորհրդանշաններից են իրար միացված ու բացված, դեպի դուրս ուղղված ափերը։ Այսպես է նաեւ հանդուրժողականության դեպքում. եթե նրան միացած չեն աստվածայինի հանդեպ նվիրական հավատը, մարդու կյանքի գերագույն արժեքի գիտակցումն ու ազատության սրբազան սկզբունքը, օտարի հանդեպ սերն ու եղբայրությունը, այն չի բացվում ու ծավալվում՝ աշխարհում տարածվելով իբրեւ միասին ապրելու եւ խաղաղ գոյակցելու աստվածային պատգամից բխող հրավեր։

Արդի ժամանակների ընթացքների փոխշաղկապվածության մեջ իրական է դառնում այն պնդումը, թե Երկիր մոլորակը փոքրանում է. նրա ամեն անկյունում տեղ գտնող որեւէ մտահոգիչ իրադարձություն դառնում է համընդհանուր լուծման ու ջանքերի կարոտ երեւույթ՝ բարեկարգելու, միասնաբար խնամելու, խաղաղությամբ ու բարօրությամբ զարգարելու մեր ընդհանուր տունը։ Ժամանակները փոփոխվել եւ փոփոխվելու են, շարունակ աճելու են մարդու գիտելիքներն ու հնարավորությունները, բայց միշտ արդիական է անհրաժեշտությունը, որ հասարակական գիտակցության մեջ գերակա լինի հանդուրժողականության հոգեւոր-բարոյական ակունքը։

Հավատքն ու բարոյականության ընկալումը Ամենակալը դրել է մարդկանց մեջ՝ իբրեւ յուրահատուկ հնարավորություն Իրեն նմանվելու։ Մենք բոլորս Տիրոջ կերտած տանն ենք ապրում, եւ գործակիցներն ենք Արարչի։ Տարբեր ժողովուրդներ, տարբեր մարդիկ ենք, բայց մեկ Աստծու զավակներ՝ կոչված միմյանց կյանքում առատացնելու հոգեւոր պտուղները եղբայրասիրության, խաղաղության, փոխըմբռնումի ու համագործակցության։

Հանդուրժողականության, փոխըմբռնման ու համագործակցության զորացման ուղղությամբ մարդկության անժխտելի ձեռքբերումներով հանդերձ մեր հասարակությունները 21-րդ դարում բախվում են նորանոր մարտահրավերների։ Դրանցից հատկապես անհրաժեշտ է առանձնացնել հակամարտություններն ու տարաձայնությունները կրոնական լույսի ներքո ներկայացնելու վտանգավոր միտումը։ Այս իմաստով է, որ միջազգային, միջկրոնական-միջմշակութային երկխոսությունների հարթակներում, կրթության ոլորտում, զանգվածային լրատվամիջոցներով հանդուրժողականության ճիշտ մեկնաբանությունն ու մատուցումը կարեւոր ու հրամայական է։

Հանդուրժողականության բացակայության, այլեւ դրա խտրական դրսեւորումների պատճառով է, որ մարդկության պատմության մեջ տեղի են ունեցել ողբերգություններ, պատերազմներ ու ցեղասպանություններ, եւ այսօր էլ հաճախ ականատես ենք դառնում ռասսայական, կրոնական եւ մշակութային եղեռնագործությունների։ Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքին բազմիցս բախվել է անհանդուրժողականության ամենատարբեր դրսեւորումներին, որոնցից ամենասարսափելին 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության մեջ իրականացված Հայոց ցեղասպանությունն էր, որն ուղեկցվեց նաեւ մշակութային ցեղասպանությամբ։

Նույն քաղաքականությամբ 20-րդ դարավերջին, երբ հայ ժողովուրդը Ղարաբաղի պատմական իր հողի վրա անկախության հաստատումով հռչակեց ազատ ապրելու իր իրավունքը, Ադրբեջանի կողմից իրագործվեցին հայերի զանգվածային տեղահանություններ ու ջարդեր։ Անհանդուրժողականության եւ ատելության հետեւանքը եղավ նաեւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության տարածքում հայկական Ջուղա քաղաքի գերեզմանատան հազարավոր խաչքարերի եւ հայ քրիստոնեական մշակույթի եզակի արժեքների ոչնչացումը։ Այսօր սահմանային բախումների հետեւանքով տակավին անմեղ կյանքեր են զոհվում։ Հակամարտության խաղաղ կարգավորմանն ի նպաստ՝ միջազգային ջանքերին, ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին զուգընթաց Մենք շարունակում ենք քայլեր ձեռնարկել Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի հետ, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքի միջնորդական ջանքերով։ Լիահույս ենք, որ գործադրվող ջանքերով կարող ենք հասնել կայուն խաղաղության վերահաստատման, ժողովուրդների միջեւ փոխըմբռնման եւ հանդուրժողականության մթնոլորտի ձեւավորման բարի նպատակին։

Սիրելինե՛ր, հայ եւ արաբ ժողովուրդների դարավոր երկկողմ հարաբերությունները հարուստ են հանդուրժողականության եւ եղբայրասիրության ազնիվ դրսեւորումներով։ Հատկապես Հայոց ցեղասպանությունից հետո հարյուր հազարավոր հայ գաղթականներ իրենց ապահով հանգրվանը գտան արաբական աշխարհի հյուրընկալ երկրներում՝ ձեւավորելով խաղաղ համակեցության ու համագործակցության իրական եւ կենսական օրինակ։ Այդպիսի վկայություններով են զարդարված նաեւ Շարժայում հայ եւ արաբ ժողովուրդների զավակների կյանքը, միասնական մասնակցությունը երկրի առաջընթացին, եղբայրական բարի հարաբերությունները։ Մենք Մեր ժողովրդի զավակների երախտագիտությունն ենք վերստին հայտնում Արաբական Միացյալ Էմիրությունների մեծարգո նախագահին եւ Շարժայի Էմիրության կառավարչին՝ Նորին Գերազանցություն Շեյխ Սուլթան բին Մուհամեդ Ալ Քասիմիին, որ ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդման ոգով եւ ամենայն բարյացակամությամբ զորակցություն են բերում տեղի քրիստոնեական համայնքներին։ Առանձնակիորեն ցանկանում ենք անդրադառնալ, որ Շեյխ Սուլթան բին Մուհամեդ Ալ Քասիմիի մարդասիրական մեծահոգի վերաբերմունքի շնորհիվ Շարժայի հայ համայնքն ունեցավ նաեւ իր աղոթավայրը՝ կազմակերպելու համար ազգային-հոգեւոր իր կյանքը։ Գոհունակությամբ ու շնորհակալությամբ ենք հիշում դեռեւս 2006 թվականին

Նորին Գերազանցություն Շեյխ Սուլթան բին Մուհամմադ Ալ Քասիմիի կողմից Հայաստան կատարված այցի շրջանակներում առնված աստվածահաճո որոշումը՝ վերակառուցելու Հայաստանի նշանավոր վանական համալիրներից Հաղարծնի վանքը՝ իբրեւ հանդուրժողականության եւ կրոնական-մշակութային արժեքների հանդեպ բացառիկ վերաբերմունքի օրինակելի դրսեւորում։ Մեր աղոթքներն ու գնահատանքն ենք բերում Նորին Գերազանցությանը մարդասիրության եւ բարեկամության իր ազնիվ ոգու համար։

Հայ ժողովրդի զավակները, սփռված աշխարհով մեկ, ապրելով տարբեր միջավայրերում, հավատարիմ են մնացել եղբայրասիրության ու օտարասիրության աստվածային պատգամին՝ մշտապես հարգելով մյուս ժողովուրդների կրոնական, մշակութային, կենցաղային ավանդույթներն ու սովորույթները, եւ իրենց կարեւոր նպաստն են բերում բարի առաջընթացին հյուրընկալ երկրների, որոնց ազնիվ եւ օրինապահ քաղաքացիներն են։ Ասվածի լավագույն վկայությունն են ինչպես Շարժայում, այնպես եւ արաբական, մահմեդական երկրներում դարեր ի վեր եղբայրասիրության մեջ ապրող հայ համայնքները։ Համերաշխության ու խաղաղ համակեցության վկայություն են նաեւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի կենտրոնում գործող Կապույտ մզկիթը, կրոնական տարբեր հարանվանությունները, որոնք ապրում են Հայաստանում՝ պահպանելով ու արդյունավորելով իրենց հոգեւոր-ազգային կյանքը։

Կրկին Մեր գնահատանքը հայտնելով այս միջոցառման կազմակերպիչներին՝ ողջունում ենք Հանդուրժողականության տարվա շրջանակներում նախաձեռնվող քայլերը, որոնք ծառայում են կրոնների ու մշակույթների, ժողովուրդների ու քաղաքակրթությունների միջեւ երկխոսության խթանմանը, փոխըմբռնման ու համագործակցության ոգու ամրապնդմանը։ Հայցում ենք Բարձրյալից, որ հանդուրժողականությունը աշխարհում առատ պտուղներ բերի եւ մարդկության կյանքը զարդարի սիրո, խաղաղության ու ստեղծարար ընթացքի բարի արգասիքներով։ Աղոթքով նորանոր ձեռքբերումներ ենք մաղթում այս ձեռնարկի բոլոր պատասխանատուներին։ Ամենակալը թո՛ղ օրհնի ձեզ ու նվիրական ձեր ծառայությունը։ Աղոթում ենք նաեւ Արաբական Միացյալ Էմիրությունների, նրա առաջնորդների եւ բարեպաշտ ժողովրդի շարունակական բարգավաճման համար։ Ամեն։

Շնորհակալություն ձեր ուշադրության համար։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԿՐԵՏԵԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Տ. Տ. ԻՐԵՆԻՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՐԵՏԵԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՆՐԱ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ*

(6 մայիսի 2019 թ.)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս եւ Պատրիարք Ամենայն Հայոց,

Առանձնակի ուրախությամբ եւ հարգանոք այս պահին Ձեզ ու Ձեր հարգարժան պատվիրակությանն ընդունում ենք Կրետեի արքեպիսկոպոսարանում եւ մեր սրտի խորքից արտահայտում ենք հարգանքի ու սիրո ամենաանկեղծ զգացումները։ Ձեր այս այցելությունն արդեն իսկ անջնջելի տառերով է արձանագրվում մեր տեղական Եկեղեցու պատմության մեջ։

Ձեր այս պատմական այցելությամբ՝ առաջին անգամ ոչ միայն Կրետե, այլ նաեւ Հունաստան, անշուշտ, լուսավորում եք այստեղի հայկական գաղութի Ս. Հովհաննես Կարապետ ծխական նշանավոր եկեղեցու կյանքի ու վկայության 350-ամյա տարեդարձի տոնակատարությունները։ Ս. Հովհաննես Կարապետը պարզապես հայկական եկեղեցիներից մեկը չէ. այն հայկական ամենահին տաճարն է Եւրոպայում։

Հերակլիոնում այս օրերին Ձեր ներկայությունը ուրախության աղբյուր եւ հարգանքի արտահայտություն է ոչ միայն հայկական գաղութի, այլ նաեւ ողջ Կրետեի նկատմամբ։ Բոլորս Ձեզ ընդունում եւ ողջունում ենք անկեղծ զգացումներով ու փոխըմբռնման բարի տրամադրությամբ, քանզի քաջ գիտենք, որ յուրաքանչյուր ոք՝ ըստ իր վկայության եւ առաքելության, հարգելով սեփական պատմությունն ու ավանդությունը, կարող է նպաստել առավել բարվոք պայմանների ստեղծմանը, «սիրո եւ ճշմարտության», ինչպես նաեւ ժողովուրդների, մշակույթների, դավանանքների ու դավանաբանությունների ներդաշնակ եւ անկեղծ

---

* *Հունարենից թարգմանեց Տ. Գաբրիել քհն. Վարդանյանը։*

երկխոսության ծավալմանը՝ միմյանց հանդեպ հարգանքի ու Քրիստոսով ճշմարիտ ազատության շրջանակում։

Կրետեի կիսանկախ Եկեղեցին, որը կանոնապես ենթակա եւ հաշվետու է Տիեզերական Պատրիարքությանը՝ Կ. Պոլսի Մայր Եկեղեցուն, ընդունում, վկայում ու հաստատում է Տիեզերական Պատրիարքության այս ավանդույթը եւ խոհեմաբար ծառայում է մարդկանց միջեւ ճշմարիտ համընթացության ու փոխգործակցության ձեւավորմանը։ Գիտենք նաեւ, որ այն ամենը, ինչ միավորում է մեզ, առավել շատ է, քան այն, ինչ բաժանում է մեզ։

Հանձինս Ձեզ՝ պատվում ենք ողջ Հայ Եկեղեցին, շնորհավորում ենք այստեղի հայկական գաղութին իր վկայության եւ հավատքի համար, մեր երկրին մատուցած ծառայության համար, նրա ամենօրյա ազնիվ ընթացքի համար։ Հերակլիոնի հայերն անբաժան մասնիկն ու թանկագին խճաքարն են այս երկրի եւ նրա պատմության խճանկարի։ Սա ընդունում եւ հավաստում ենք բոլորս. վստահ եմ, որ դա փաստում եք նաեւ Դուք՝ կրետացիների հետ հաղորդակցությամբ եւ Ձեր ներկայությամբ։

Հարգանքի ու սիրո այս զգացումով կրկին ողջունում ենք Ձեզ եւ խնդրում այստեղ զգալ այնպես, ինչպես Ձեր երկրում։

Նույն ուրախությամբ եւ հարգանոք ողջունում ենք նաեւ Ձեր հարգարժան պատվիրակության բոլոր անդամներին՝ հոգեւորականներին ու աշխարհիկ գործընկերներին, Հերակլիոնի հայկական գաղութի ներկայացուցիչներին։

Ամփոփելով մեր խոսքը՝ ցանկանում ենք Ձեր պաշտոնական այցելության առիթով Ձերդ Սրբությանը նվիրել արքեպիսկոպոսական մի գավազան, որը Ձեր աջակիցը կլինի հոգեւոր ծառայության եւ առաքելության մեջ։

Ձեզ ենք նվիրում նաեւ Կրետեի Եկեղեցու հրատարակությունները՝ Մեծ կղզու քրիստոնեական հուշակոթողների վերաբերյալ, ինչպես նաեւ մեր կղզու առաջին եպիսկոպոսի սուրբ Տիտոս առաքյալի սրբապատկերի ընդօրինակությունը՝ հարակից մատուռից։

Եւ դարձյալ շնորհակալ ենք Ձեր այս այցելության համար ու մաղթում ենք Ձեզ բարի կեցություն։

Երկար տարիներ Ձեզ, Ձերդ Սրբություն։

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԴԱՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԸՆՏԸԳԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՌԻԹՈՎ

(13 մայիսի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«...հաստատէք ձեր կոչումն ու ընտրութիւնը,
որովհետեւ ասիկա ընելով՝ բնա՛ւ պիտի չսայթաքիք.
արդարեւ այսպէս է, որ ճոխութեամբ պիտի հայթայթուի
ձեզի մեր Տիրոջ ու Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի
յաւիտենական թագաւորութեան մուտքը»
(Բ. Պետր. Ա. 10–11)։

Սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ,

Ես փառք կուտամ Աստուծոյ, որ աղօթակից եմ այսօր ձեզի հետ՝ մատուցանելով անդրանիկ Պատարագս՝ որպէս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եպիսկոպոս, եւ ան ալ այս սրբավայրին՝ Ս. Գայիանէ կոյսին եկեղեցւոյ մէջ։ Երէկ եպիսկոպոս ձեռնադրուեցայ եւ օծուեցայ ձեռամբն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Այդ ձեռնադրութեամբ ես ընտրուեցայ Քրիստոսի առաքեալներու հետեւորդ, այդ ձեռնադրութեամբ նոր կոչում մը ստացայ Տիրոջմէն, որպէսզի հովուապետ ըլլամ Իր Եկեղեցւոյ մէջ՝ հովուելու համար այն հօտին, որ վստահուած է ինծի, քահանայապետ դառնալու այն հոգեւորականներուն, որոնք մեր թեմին կը պատկանին։ Այս ամենը, անշուշտ, արտակարգ պատիւ է ու միեւնոյն ատեն բացառիկ ծանր լուծ մըն է, ծանր պարտականութիւն։ Հետեւաբար՝ ինծի համար յատկապէս մասնաւոր կարեւորութիւն ունի այն երկտողը, որ

ճիշտ հիմա կարդացի, եւ որ մենք քիչ առաջ լսեցինք Պետրոս առաքեալի բերնէն՝ իր Ընդհանրական երկրորդ թուղթէն քաղուած, ուր կգրէ՝ «Հաստատեցէ՛ք ձեր կոչումն ու ընտրութիւնը» (հմմտ. Բ. Պետր. Ա. 10–11)։

Ես պէտք է հաստատեմ, ըստ առաքեալին, իմ եպիսկոպոսութեան կոչումը։ Պետրոս առաքեալը կըսէ. «Ես ամեն օր պէտք է հաստատեմ իմ ընտրութիւնը Աստուծմէ»։ Ինչ կնշանակէ հաստատել, եթէ ոչ յիշել ու գործադրել ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան այն կարեւոր կոչումը, որ ես այժմ ստացած եմ. եւ որքան ատեն կարողանամ յիշել եւ հաստատել այդ աստուածային կոչումը, այդ աստուածակոչ ընտրութիւնը, այն ատենէ, որ պիտի յաջողիմ, պիտի կարենամ աստուածահաճոյ այն առաքելութիւնը, որ տրուած է ինծի, կատարել։ Բայց եթէ պատահի, որ ես մոռնամ այդ կոչումը, ընտրուած ըլլալս, ահաւասիկ, կըսէ առաքեալը, որ պիտի սայթաքիմ, պիտի ձախողիմ Աստուծոյ տրուած այդ առաքելութեան մէջ, պիտի իյնամ։

Ես երէկ ուխտ ըրած եմ իմ օծակից սրբազան եղբայրներուս հետ, որ մենք հաւատարիմ կմնանք այդ կոչումին։ Ես անգամ մը եւս ձեր բոլորին առջեւը, իմ միաբանակից եղբայրներու եւ հայրերու առջեւ կկրկնեմ ուխտս՝ հաւատարիմ մնալու այդ կոչումին՝ հաստատելով այդ կոչումն ու ընտրութիւնը։

Սիրելինե՛ր, սակայն, ես միակը չեմ, որ նոր կոչում ունիմ, միակը չեմ, որ ընտրուած ըլլամ Աստուծոյ կողմէն։ Ամեն մէկս կոչում ունի, ամեն մէկն ընտրուած է Աստուծմէ, ամէն անձ, որ մկրտութեան աւազանի մէջը կնքուած է, արդէն ընտրուած է Աստուծմէ. այդ անձը այդ վայրկեանէն կոչում ունի յատուկ այս իր երկրաւոր կեանքին մէջը, որովհետեւ մկրտութեան խորհուրդով է, որ ամենակալ Հայրը մեզի կըսէ՝ «Դո՛ւն ես Իմ սիրեցեալ զաւակս, դո՛ւն Իմ ժառանգորդն ես, դո՛ւն օծեալ ես, դո՛ւն քրիստոնեայ ես»։ Եւ մեր մկրտութեան ժամանակ Աստուած կվկայէ մեզի՝ «Ես կուզեմ, որ դուն հետս ըլլաս միշտ եւ յաւիտենապէս»։

Ահաւասիկ, ինչ մեծ կոչում է ասիկա։ Բոլորս ալ ընտրուած ենք այն վայրկեանէն, որ այդ սուրբ աւազանի ջուրը մեր վրայ կուգայ, մեզ կմաքրէ ու կսրբէ մեր մեղքերէն, մեր մարդկային տկարութիւններէն։ Ահաւասիկ, դուք ալ իմ հետ պէտք է հաստատէք այդ կոչումը, պէտք է հաստատէք այդ ընտրուած ըլլալը. պէտք է յիշել ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան, որ դուն ընտրուած ես, որ կոչում ունիս հետեւելու մեր Տիրոջը, ժառանգելու այդ խոստացած բարիքները։

Վտանգը, սակայն, մեծ է։ Վտանգն ամեն վայրկեան կայ այս աշխարհին մէջը։ Վտանգն այն է, որ մենք մոռնանք մեր ընտրուած ըլլալը, մոռնանք մեր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պատկանելութիւնը, մոռնանք, որ Աստուած մեզ որդեգրած է որպէս Իր սիրեցեալ զաւակներ, եւ ըստ այնմ՝ սայթաքինք, ձախողինք, իյնանք մեղքի մէջ։ Եւ ի՞նչ է մեղքը, եթէ ոչ մոռնալ, թէ ով ենք մենք, ով ենք մենք որպէս զաւակները Հայ Եկեղեցւոյ՝ օծուած քրիստոնեաները սրբալոյս Միւռոնով։ Պէտք է հաստատենք մեր ընտրութիւնը, պէտք է հաստատենք մեր կոչումը։ Ինչպէս պէտք է ընենք, ինչպէս պէտք է կարենանք յիշել ամեն վայրկեան՝ ո՞վ ենք մենք։ Ս. Պատարագին մասնակցելով՝ ամեն անգամ, որ մենք այս եկեղեցիէն ներս կմտնենք, հաստատած կըլլանք մեր կոչումը, սիրելինե՛ր։ Ամեն ատեն, մասնաւորաբար, երբ մօտենանք այս խորանին եւ հաղորդուինք մեր Տիրոջ կենդանարար մարմնով ու արիւնով, ահաւասիկ, ամենազօրաւոր եւ յարգելի ձեւով հաստատած կըլլանք մեր կոչումը, մեր ընտրուած ըլլալը, մեր՝ Աստուծոյ պատկանելը։ Ամեն ատեն, երբ խաչ հանենք այս եկեղեցւոյ մէջ կամ ճամփուն վրայ, կամ տունին մէջը, ուր ալ որ ըլլայ, երբ ալ որ ըլլայ, ահաւասիկ, զօրաւոր կերպով հաստատած կըլլանք մեր կոչումը, մեր ընտրութիւնը։ Ամեն ատեն, որ անձնազոհ ծառայութիւն կատարենք, օգտակար ըլլանք իրարու, մանաւանդ անոնց, որոնք կարիքն ունին, որոնք հիւանդ են, սգաւոր են, ամեն ատեն, որ սրտով մօտենանք եւ ձեռք երկարինք նրանց, այն ատենէ զօրութեամբ հաստատած կըլլանք մեր կոչումը. ամէն։

Տ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՌԻԹՈՎ

(14 մայիսի 2019 թ.)

«Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս
սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ...»

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Սիրելի՛ հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Երկու օր առաջ՝ Կարմիր Կիրակին, Սուրբ Հոգու առաջնորդութեամբ եւ առաքելական յաջորդականութեամբ ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրութեան եւ օծման խորհրդի միջոցով միաբանակից երկու եղբայրներիս հետ կոչուեցինք եպիսկոպոսական բարձր եւ չափազանց պատասխանատու աստիճանին՝ յանձնառութեամբ կրելու հոգեւոր տեսչի եւ առաջնորդի լուծը։ Ամբողջապէս գիտակցում եմ լուծի ծանրութիւնը Նրա, ում առջեւ ահից քերովբէները թեւասքօղւում են, իսկ համօրէն հրեշտակաց դասը երկիւղով է սպասաւորում։ Միեւնոյն ժամանակ ունեմ այն ներքին վստահութիւնն ու հանգստութիւնը, որ անձնական կարողութիւններիս, գիտութեանս, կամ էլ հովուական փորձառութեանս վստահելով չէ, որ ընդունեցի այս ծանր բեռը, այլ, ինչպէս սրբազան շարականագիրն է ասում՝ այդ աստուածային եւ երկնաւոր շնորհն է, որ միշտ հոգում է Առաքելական Եկեղեցու սուրբ սպասաւորութեան կարիքները։ Պօղոս առաքեալը Կորնթացիներին ուղղուած իր նամակում ասում է, որ Աստուած այս աշխարհի վրայ իր ծրագրերն իրագործելու համար շատ յաճախ ընտրում է տկարներին եւ տգէտներին (Ա. Կորնթ. Ա. 18–29)։

Յիրաւի, աստուածային նախախնամութիւնը յաճախ մեզ անսպասելի անակնկալներ է մատուցում՝ շրջանցելով մարդկային ամեն տեսակ

իմաստութիւն եւ դատողութիւն։ Աստծոյ կանչին անվերապահ հնազանդութիւնն ու վստահութիւնն է, որ մեզ բոլորիս՝ քրիստոնեաներիս, օգնում է աճել, եւ աւետարաններում նկարագրուած թթխմորի եւ սերմի հատիկի օրինակներով ներքուստ վերափոխուել։ Աւետարանը նաեւ շատ յստակ է ասում, որ եթէ մենք մեզ դնում ենք Աստծոյ ծառայութեան մէջ, Նա մեր մէջ եւ մեր միջոցով հրաշքներ է գործում։

Ղուկաս աւետարանիչը մեզ այդպիսի մի հրաշքի պատմութիւն է ներկայացնում Յիսուսի կեանքից, ասելով, թէ Յիսուս մի անգամ գալիս բարձրանում է Սիմոն-Պետրոսի նաւակը եւ խնդրում մի փոքր աւելի խորանալ ծովում՝ ուռկանները գցելու եւ ձուկ բռնելու համար։ Պետրոսը պատասխանում է. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր յոգնեցինք եւ ոչինչ չբռնեցինք, բայց Քո խօսքի համար ուռկանները կգցենք»։ *Ուռկանները գցեցին եւ մեծ քանակութեամբ ձուկ բռնեցին դրանց մէջ, այնքան, որ նրանց ուռկանները պատռւում էին, գրում է Աւետարանիչը։*

Չնայած որ իզուր յոգնեցինք, շեշտում է Պետրոս առաքեալը, բայց քանի որ Դու ես ասում, ուրեմն կանենք այնպէս, ինչպէս Քո կամքն է, Տէ՛ր։ Սիրելինե՛ր, ուշադրութի՛ւն դարձրէք Պետրոսի այս պատասխանին։ Ի՞նչ է նշանակում սուրբ առաքեալի այս խօսքը, եթէ ոչ հաւատքի պատասխան, եթէ ոչ անվերապահ վստահութիւն եւ հնազանդութիւն Աստծոյ կամքին։ Ընդ որում, հաւատքի պատասխանը եւ անվերապահ այս վստահութիւնը Տէրը պահանջում է ոչ միայն մեզանից՝ օծեալ հոգեւորականներիցս, այլեւ բոլոր քրիստոնեաներից, որովհետեւ բոլոր քրիստոնեաները Եկեղեցու մէջ ունեն պատասխանատուութիւն եւ պարտականութիւն։

Պօղոս առաքեալը Կորնթացիներին ուղղուած իր նամակում բացատրում է, որ Աստուած Եկեղեցու մէջ կարգեց բազում անդամներ զանազան ծառայութիւնների համար, սակայն նրանցից եւ ոչ մէկը աւելորդ չէ, որովհետեւ նրանք միայն լրացնում են միմեանց՝ տարբեր, բայց կենսական, անփոխարինելի ձեւով։

Տեսա՞ք, սիրելինե՛ր, թէ Պետրոսի աներեր հաւատքն Աստծոյ խօսքի հանդէպ ինչ հրաշք գործեց։ Արդարեւ, մենք եւս պատրաստ ենք մեր անձը դնելու Տիրոջ ծառայութեան մէջ՝ անսալով Նրա խօսքին եւ վստահելով Նրան։ Աստուած մեր մէջ էլ կարող է հրաշքներ գործել։ Միանշանակ է, որ երբ առանց տարակուսելու վստահում ենք Աստծուն, Նա մեր հոգու մէջ նոր հորիզոններ է բացում՝ համագործակիցը դառնալու Իր սուրբ առաքելութեան։

Աստուածային եւ երկնաւոր շնորհի հանդէպ հնազանդութիւնն ու Տիրոջ առաքելութեանը համագործակից դառնալու գիտակցութիւնն են, որ մեր ընտրութիւնը կանգնեցրին Տիրոջ կողմից նկարագրուած երկու ճանապարհներից նեղի վրայ։ Ի հարկէ, դժուար է նեղ ճանապարհը, փորձութիւնները շատ են, սակայն երբ լսում ես Տիրոջ ձայնը եւ սկսում քայլել այդ ճանապարհով, այն քեզ հարազատ է դառնում։ Աստուած բոլորիս է կանչում ամեն վայրկեան, ամեն օր, սակայն ոչ թէ ինչ-որ բան վերցնելու կամ ստանալու, այլ տալու համար, եւ տալիս է առատաբար, տալիս է լաւագոյնը։ Ուրեմն փորձենք Տիրոջ տան մէջ ստանձնել մեր բաժին պատասխանատուութիւնը՝ ծառայելու Աստծուն եւ մարդկանց այն հաւատով, որ այդ ճանապարհին Տէրն Իր օրհնութիւնները առատօրէն պիտի բաշխի մեզ։

Սիրելինե՛ր, այսօր ուխտի Սուրբ Պատարագ եմ մատուցում այս սուրբ տաճարում՝ Սուրբ Գայանէ վանքում եւ վերանորոգում իմ կեանքի ուխտը Սուրբ Էջմիածնի եւ նրա առաքելութեան նկատմամբ։ Շատ յաճախ են ասում, որ Էջմիածինը առաքելութիւն ունի. ստիպուած եմ մի քիչ խմբագրելով ասել՝ Էջմիածինը չունի առաքելութիւն, Էջմիածինն ինքը առաքելութիւն է։ Եւ այսօր ես միանում եմ այդ առաքելութեանը։ Սուրբ Էջմիածինը մեր ազգի խարիսխն է ու ինքնութեան կորիզը, բայց հարց եմ տալիս՝ ինչո՞ւ է այսպէս։ Մենք աշխարհով մէկ ունենք հազարաւոր հրաշալի կոթողներ, տաճարներ, եկեղեցիներ, որտեղ բնակւում է Աստուած, որտեղ մենք գնում ենք Իր հետ հանդիպման, բայց Սուրբ Էջմիածինը ուրիշ առաքելութիւն ունի։ Ինչո՞ւ է այսպէս։ Պատասխանը շատ յստակ է՝ որովհետեւ Տէրը երկու անգամ իջաւ աշխարհ՝ նախ Երուսաղէմ, ապա՝ Էջմիածին։ Որովհետեւ այս վայրն ընտրեց Աստծոյ Որդին՝ իբրեւ հանդիպման վայր Իր ընտրեալ ժողովրդի՝ մեզ՝ հայերիս հետ։ Եւ դրա համար Էջմիածնի խորհուրդը մեզ համար մեծ սրբութիւն է։ Այսօր խոնարհւում եմ այդ խորհրդին, համբուրում եմ այդ խորհուրդը։

Ուխտի այս պատարագին առաջին գոհութիւնը բնականաբար Աստծունն է, որովհետեւ ամեն անգամ մեզ՝ անարժաններիս հրաւիրում է համագործակիցը դառնալու Իր սուրբ առաքելութեան։ Իսկապէս, յաճախ ինձ հարց եմ տալիս՝ ո՞վ կարող է ստանձնել այն մեծ պատասխանատուութիւնը, եթէ իր վստահութիւնն ամբողջութեամբ աստուածային ողորմութեան վրայ չլինի։ Մենք բոլորս անկատար եկեղեցականներ ենք, բայց հաւատում ենք, որ Աստծոյ օրհնութեամբ պիտի լրացուեն բոլոր մեր

բացթողումներն ու թերութիւնները։ Այս համոզումով է, որ ես էլ համարձակուեցի իմ «այո»-ն ասել Աստծոյ կանչին։ Եպիսկոպոսի՝ մշտարթուն հսկողի նոր պաշտօնս, այսօր, այս պահից դնում եմ Սուրբ Հոգու ձեռքերի մէջ եւ խոստանում ողջ ուժերս ներդնել ի սպաս Աստծոյ եւ Նրա սուրբ ժողովրդի։

Այս առիթով որդիական երախտագիտութեան ամենախորը զգացմունքս եմ ուզում յայտնել ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ում հայրական հայեացքի առաջ հասակ առանք, ում օրհնութեամբ մեր առաջին քայլերը կատարեցինք եկեղեցական ասպարէզում, եւ ահա այսօր իր աջի զօրութեամբ կոչուած ենք ծառայութեան եպիսկոպոսութեան պատասխանատու աստիճանին։ Այս Ս. Խորանի վրայ, իմ եւ ինձ վստահուած հօտի հաւատարմութիւնն եմ ցանկանում յայտնել Ամենայն Հայոց Հայրապետին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։ Աղօթքս է, որ Բարձրեալն Աստուած միշտ անսասան պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու նրա գահակալին՝ պարգեւելով Հայոց հօր արեւշատութիւն եւ երկար ու եկեղեցական գործունէութեան արդիւնաշատ տարիներ։

Իմ գոհութիւնն ու շնորհակալութիւնն եմ յայտնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանակից եղբայրներիս։ Բոլորին՝ աւագ եւ կրտսեր սերունդներին, բոլոր նրանց, ում հետ ճանապարհ եմ անցել։ Ես Էջմիածնի միաբանութեան հարազատ զաւակն եմ, եւ այս միաբանութեան ոգով ծառայեցի ու պիտի ծառայեմ Հայ Եկեղեցուն ու իմ ժողովրդին։ Շնորհակալութեան խօսքս եմ ուղղում ինձ համար այդքան հարազատ հաստատութիւններին՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանին եւ Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցին՝ իրենց բոլոր տեսչական եւ դասախօսական կազմերով, որոնք աւանդ ունեն մեր կեանքի մէջ. բոլոր պաշտօնեաներին։

Շնորհակալ եմ յատկապէս Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական պատուիրակութեան հոգեւոր եւ աշխարհական դասին, եկեղեցական վարչութիւններին, իմ հօտի բոլոր ներկայ եւ բացակայ անդամներին, որոնց ծառայեցի եւ որոնց գործակցեցի զանազան կարգավիճակներում։ Եպիսկոպոս բառը յունարէնից թարգմանաբար նշանակում է վերատեսուչ կամ վերակացու։ Իրականութեան մէջ եպիսկոպոսն այն անձն է, որ ուշադիր է դիմացինի հանդէպ, եւ ով ոչինչ է առանց ուրիշների, քանի որ կոչուած է ուշադիր լինելու ուրիշներին։ Հետեւաբար, սիրելի՛ներ, ձեզանով է եւ ձեզ համար է, որ ես եպիսկոպոս եմ։

Սիրելի՛ հաւատացեալներ, ամփոփելով խօսքս՝ ցանկանում եմ վերահաստատել իմ յանձնառութիւնը՝ հաստատակամ ընթանալու մեր Սուրբ Եկեղեցու վարդապետութեան եւ պատուիրանների համաձայն, բարի սպասաւորութեամբ ուսուցանելու եւ խրատելու իմ խնամքին յանձնուած հաւատացեալներին եւ իբրեւ Ս. Էջմիածնի միաբան՝ ամենայն ջանք գործադրելու համայն հայութեան հոգեւոր կենտրոնի զարգացման եւ պայծառութեան համար։ Թո՛ղ Սուրբ Հոգին առաջնորդի քայլերս, որպէսզի Սուրբ Պօղոս առաքեալի նման ես էլ կարողանամ ասել. «Ապրում եմ, բայց ես չէ, որ ապրում եմ, այլ Քրիստոս է, որ ապրում է իմ մէջ»։

Թո՛ղ Տէրն օրհնի մեզ, մեր ընթացքը այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Տ. ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՍԱԽԱՆԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՌԻԹՈՎ

(19 մայիսի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

«Եւ բանայր (Պօղոս) զգիրս եւ դներ առաջի,
եթէ պարտ էր Քրիստոսի չարչարել եւ յառնել ի մեռելոց
եւ թէ Նա է Քրիստոս Յիսուս, զոր ասն պատուիրեմ ձեզ»
(Գործք ԺԷ. 3)։

Սիրելի՛ հաւատացեալներ,

Այսօր Ս. Զատկին յաջորդող չորրորդ կիրակի օրն է կամ Զատկական հինգերորդ կիրակին, որ Հայ Եկեղեցու Տօնացոյցի համաձայն նուիրուած է Ս. Խաչին եւ կոչւում է Տօն Երեւման Սրբոյ Խաչի։ Եւ քարոզիս բնաբանն ընտրուած է այսօրուայ համար նախատեսուած սուրբգրային ընթերցուածներից՝ Գործք առաքելոցի ԺԷ. գլխից։ Մինչ այսօրուայ տօնին եւ մեր քարոզի բնաբանին անդրադառնալը՝ համառօտ խօսենք այն շրջանի մասին, որում եկեղեցական իմաստով գտնւում ենք։

Քրիստոնէական Եկեղեցին, բնականաբար նաեւ մենք, որպէս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Տիրոջ հրաշափառ Յարութեան եւ Նրա Համբարձման միջեւ ընկած քառասնօրեայ ժամանակահատուածը կոչում ենք Յարութեան շրջան, իսկ մինչեւ Հոգեգալուստ՝ յիսուն օրերը՝ Յինունք, որ է Յիսունք։ Զատկական կամ Յարութեան այս շրջանին, որ մեզ յիշեցնում է Տէր Յիսուսի երկրային առաքելութեան վերջին քառասուն օրերը մինչեւ նրա հրաշալի Համբարձումը, հաւատացեալներս պահք չենք պահում, քանի որ հաստատում ենք, որ յարութեամբ փառաւորուած փեսան՝ նոյն ինքն Յիսուս Քրիստոս մեզ հետ է, ու Եկեղեցին մեզ հրաւիրում է մաքրուած սրտով եւ ամրացած հաւատքով հաղորդակից դառնալ յարուցեալ Փրկչին եւ մեր սրտերը դարձնել Նրա բնակարան։

Տեղեակ էք վստահաբար, որ Յինանց շրջանի կիրակիներն առաքելահաստատ մեր Եկեղեցում ունեն մասնաւոր անուանումներ, իմաստներ ու գոյներ։ Այսպէս՝ Զատկական Բ. կիրակին կոչում ենք Կրկնազատիկ

կամ Նոր կիրակի, Յիսուս Քրիստոսով մեզ պարգեւուած նոր կեանքի կիրակի։ Այն կոչւում է նաեւ Ճերմակ կամ Սպիտակ կիրակի։ Իսկ ճերմակ գոյնը քրիստոնէութեան մէջ հոմանիշն է մաքրութեան ու անարատութեան։ Զատկական Գ. կիրակին յայտնի է մեր Եկեղեցում որպէս Աշխարհամատրան կիրակի, որով յիշում ենք քրիստոնէական առաջին Եկեղեցու հիմնումը Երուսաղէմում։ Այն կոչւում է նաեւ Կանաչ կիրակի, իսկ կանաչը կեանքի, բնութեան զարթօնքի եւ Քրիստոսով վերանորոգման գոյնն է։ Զատկական Դ. կիրակին Հայ Եկեղեցում կոչւում է Կարմիր կիրակի։ Կարմիր գոյնը քրիստոնէութեան մէջ առաջին հերթին խորհրդանշում է Տիրոջ Խաչի վրայ հեղուած արիւնը, Իր հրաշափառ յարութեամբ Տիրոջ յաղթանակած պայքարն ընդդէմ չարի եւ մահուան։ Կարմիրը խորհուրդն է նաեւ քրիստոնեայ անհամար սուրբ նահատակների, վասն քրիստոնէութեան հեղուած արեան։

Զատկական այսօրուայ՝ Ե. կիրակին նուիրուած է Տիրոջ Խաչին եւ մեր Եկեղեցում նշւում է Երուսաղէմի երկնակամարում Տէրունական Խաչի երեւումը կամ գրաբարով՝ Տօն Երեւման Սրբոյ Խաչի։ Եկեղեցում նման տօն ունենալու եւ յիշատակելու առիթ է ծառայել այն դէպքը, որի համաձայն՝ 351 թ. Կոստանդիանոս կայսեր իշխանութեան եւ Երուսաղէմի երկնակամարում երեւում է Տիրոջ կենարար եւ Սուրբ Խաչը։ Այս հրաշքը տեւում է ոչ թէ մի քանի րոպէ, այլ երկար-երկար ժամանակ Քրիստոսի կենարար Խաչը երեւում է երկնքում՝ շատերին մղելով գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցելու Աստծուն։

Շատերը, այս սքանչելի եւ զարմանահրաշ դէպքին ականատես լինելով, հաւատում են Քրիստոսի փրկարար զօրութեանը եւ մկրտւում են։ Այդ օրը մկրտուածների թիւը, ըստ ականատեսների վկայութեան, լինում է շուրջ 5000 հոգի։ Նրանցից մի զգալի մասը մկրտւում է այն աւազանի մէջ, որ գտնւում է Երուսաղէմի հայկական Սրբոց Յակոբեանց վանքում, որտեղ գտնւում է նաեւ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան նստավայրը։

Այս սքանչելի դէպքն առիթ է դարձել, որ հին Եկեղեցում հաստատուի Քրիստոսի Սուրբ Խաչի երեւման տօն, որը Հայ Եկեղեցում նշւում է Ս. Զատիկին յաջորդող Դ. կիրակին, այսինքն՝ Սուրբ Յարութեան տօնից 28 օր յետոյ։

Սուրբ Խաչի երեւման կիրակիի ընթերցումները, որոնց ականջալուր եղանք Ս. Պատարագի սկզբում եւ որոնցից վերցրել եմ իմ քարոզի

բնաբանը, մի կողմից պատմում են մեզ խաչի ու չարչարանքի, խաչելութեան ու մահուան մասին, իսկ միւս կողմից՝ մեզ են փոխանցում յուսալեցուն աւետիսը յարութեան ու Քրիստոսով նոր կեանքի։

Հաւատալ Յիսուսին եւ Նրան որպէս Տէր ու Փրկիչ խոստովանել, նշանակում է միաժամանակ ու հաւասարապէս հաւատալ ոչ միայն խաչուած, այլ նաեւ յարութիւն առած Քրիստոսին։ Եւ մենք՝ Քրիստոսի անուան հաւատացողներս, պէտք է իմանանք, որ Քրիստոսի խաչելութեամբ եւ յարութեամբ է սկիզբ դրւում քրիստոնեաներիս «նոր մարդ», «նոր արարած» դառնալուն, որով մենք եւս լցւում ենք «ի լրումն ժամանակի» յարութիւն առնելու լիայուսութեամբ։ Քրիստոնեայ լինելը պարզ կողմնորոշում չէ կամ ինչ-որ գաղափարի հետեւորդ դառնալու ձգտում, այլ՝ կեանք ու կենսակերպ, որի պաշտպանութեան համար, ի պահանջել հարկին, պէտք է նաեւ «խաչն առնել ուսերին»։

Որքանո՞վ են այս մեկնաբանութիւնները մեզ համար կարեւոր ու էական այսօր, ներկայ մեր կեանքում, եւ ամէնից առաջ ինչ նշանակութիւն ունի այն մեզ համար։ Բնականաբար, ոչ ոք այսօր այլեւս կարիք չունի, բառացի իմաստով, խաչի ճամփան ընտրելու կամ խաչն իր ուսերին առնելու։ Մենք, որպէս քրիստոնեաներ, ազատ ենք մանաւանդ այստեղ՝ մեր հայրենիքում, մեր քրիստոնէական հաւատքն ապրելու, որի համար դատապարտութեան չենք ենթարկւում։

Այնուհանդերձ, եկէք ինքներս մեզ հարց տանք, որքանո՞վ է մեր այսօրուայ հասարակութիւնը քրիստոնեայ։ Այն, որ մենք առաջին քրիստոնեայ պետութիւնն ենք, դա մեր փառաւոր անցեալն է ու հպարտութիւնը։ Բայց այդ հարստութիւնը կամ հպարտութիւնը կարող է փոշիանալ, զրօացուել, եթէ չլինենք ու չդառնանք մեր անցեալի ճշմարիտ ժառանգորդը, եթէ մեր այսօրուայ մտածելակերպն ու ապրելակերպը, միմեանց եւ պետութեան նկատմամբ ունեցած մեր վարուելակերպը հիմնուած չլինի նոյն այդ քրիստոնէական արժեհամակարգի վրայ։ Անցեալը կարեւոր է, անցեալի արժէքները կարեւոր են։ Կրկնենք՝ դրանք մեր պատմութիւնն են, մեր հպարտութիւնը, մեր մաշկի գոյնն են, մեզ ուժ տուող աւիւնը։ Բայց ներկան կերտողներն էլ մենք ենք։ Իսկ այդ ներկան վաղը դառնում է անցեալ։ Եւ մեր զաւակները պէտք է առիթ ու հնարաւորութիւն ունենան մեր կերտած այսօրուայ ու վաղուայ «անցեալով» հպարտանալու, ինչպէս մենք ենք երէկ եւ այսօր հպարտանում մեր պապերի ու հայրերի կերտած անցեալով։

Եթէ բառացի իմաստով այսօր խաչ չենք վերցնում մեր ուսերին, պէտք չէ մոռանալ, որ կայ նաեւ հոգեւոր խաչը, որ քրիստոնեայի համար առաջին հերթին իր հաւատքից բխող ճշմարտութիւնն է, որ պէտք է առնենք մեր ուսերին ու ապրենք ճիշտ եւ ուղիղ, մեր կենսակերպը դարձնենք հայելին մեր քրիստոնէական հաւատքի՝ թէ՛ իբրեւ անհատ, թէ՛ իբրեւ հասարակութիւն։ Իսկ հասարակութիւնը վերացական հասկացութիւն չէ, այլ այն՝ ես եմ, դու ես, նա է, որ խմբուելով՝ դառնում է մենք ու հասարակութիւն։ Իսկ հասարակութիւնը կամ հաւաքականութիւնը դրականօրէն կփոխուի, եթէ այն կազմող անհատներս, ամէն մէկս, այդ փոփոխութիւնը չսպասենք ուրիշից, այլ սկսենք մեզանից։ Որեւէ մէկն իրաւունք չունի, անկախ իր դիրքից ու պաշտօնից, իրեն քրիստոնեայ կոչել, ասել, որ ինքը սիրում է Աստծուն, եթէ սիրոյ եւ հանդուրժողականութեան փոխարէն չարութիւն ու ատելութիւն է սերմանում, եթէ ճշմարտութեան եւ արդարութեան վեհագոյն գաղափարները շահագործում է անձնական նկրտումներին յագուրդ տալու համար։ Եւ այս դէպքում Աստուծոյ համար կարեւոր չէ, թէ նա դիմադիր է, թէ ընդդիմադիր։ Երիցս իրաւացի է Յովհաննէս առաքեալը, երբ զգուշացնում է. «...Աստուած լոյս է. եւ խաւար ի Նմա չիք. եւ ոչ մի։ Եթէ ասիցեմք եթէ հաղորդութիւն ունիմք ընդ Նմա եւ ի խաւարի շրջիցիմք. ստեմք եւ ոչ առնեմք զճշմարտութիւն։ Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք. որպէս Նա ի լոյս է. հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս. եւ արիւնն Յիսուսի Որդւոյ Նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց» (Ա. Յովհ. Ա. 5–7)։

Հայոց շարականագիրներն իրենց հաւատքով զգացել են խաչի զօրութիւնը, նրանից դէպի մեզ ճառագող լոյսը եւ Քրիստոսով նուիրագործուած խաչը կոչել են՝ «միջոց փրկութեան», «աղբիւր բժշկութեան», «զէն յաղթութեան», իսկ Ս. Գրիգոր Տաթեւացին խաչը բնութագրել է որպէս «կամուրջ երկնքի ու երկրի միջեւ եւ երկնքի արքայութեան դարպասների բանալի»։

Հայ Եկեղեցին այսպէս է ընկալում խաչը։ Տարուայ մէջ մեր Եկեղեցին խաչին նուիրել է չորս տօն ու իր հաւատացեալներին այդ օրերին, ինչպէս օրինակ այսօր, երբ նշում ենք Սուրբ Խաչի երեւման տօնը, հրաւիրում է՝ ակնածանքով խոնարհուելու խաչի եւ Խաչեալի առջեւ ու անդրադարձ կատարելու՝ ինչ է խաչը մեզ համար... Ունի՞ նա մեզ համար ինչ-որ նշանակութիւն, թէ՞ մի գեղեցիկ զարդ է կամ առաւելագոյնը՝ անուանապէս մեր՝ քրիստոնեայ կոչուելու արտաքին ցուցադրութեան միջոց։ Հարց

է այս, որ այսօր տալիս եմ բոլորիս։ Եւ պատասխանը իւրաքանչիւրս պէտք է փնտրի իր համար։ Մարդիկ պէտք չունեն իմանալու այդ պատասխանը։ Իսկ Աստուած գիտի այդ պատասխանը։ Մնում է՝ ինքներս մեզ համար գտնենք այն։ Իսկ այդ պատասխանը պէտք է լինի ոչ թէ մեր շուրթերին, այլ այն թաքնուած է մեր սրտում ու երեւում է մեր ապրած կեանքի եւ կենսակերպի մէջ, մարդկանց նկատմամբ մեր ունեցած կեցուածքի ու վերաբերմունքի մէջ։ Թող Տիրոջ խաչը պահապան լինի իւրաքանչիւրիս՝ անհատապէս եւ բոլորիս՝ հաւաքապէս. ամէն։

Այսօր, սիրելի՛ հաւատացեալ քոյրեր ու եղբայրներ, մասնայատուկ եւ նուիրական օր է ինձ համար։ Ս. Պատարագը, որ ես մատուցում եմ այսօր սրբազնասուրբ այս խորանի վրայ, եպիսկոպոսական ուխտի անդրանիկ Ս. Պատարագն է։ Շուրջ երեսուներկու տարի առաջ Աստուծոյ հետ ուխտս կնքեցի, միւռոնաբոյր օծմամբ ձեռնադրուեցի կուսակրօն քահանայ եւ ուսերիս առայ Տիրոջ լուծը՝ իմ հոգեւոր խաչը, որ հոգեւոր ծառայութեան ճամփով կրեցի ու կրում եմ առ այսօր։ Եւ ընդամէնը մէկ շաբաթ առաջ՝ անցեալ կիրակի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Բաց Խորանի վրայ՝ ձեռամբ ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրուեցի եպիսկոպոս, որով առաւել պատասխանատու դարձաւ ծառայութիւնս եւ առաքելութիւնս Տիրոջ փառքի համար՝ ի սպասաւորութիւն մեր Եկեղեցու եւ ժողովրդի։ Եւ այսօր նորոգելով Աստծուն տրուած ծառայական ուխտս՝ որդիական իմ սէրն ու հաւատարմութիւնն եմ յայտնում Ձեզ, Վեհափա՛ռ Տէր, որ Ձեր Օծեալ Սուրբ Աջի ձեռնադրութեամբ եւ օծմամբ ինձ կոչեցիք եպիսկոպոսական աստիճանի։

Օրհնեցէ՛ք ինձ, Վեհափա՛ռ Տէր, եւ Ձեր աղօթքներում յիշեցէ՛ք ինձ։ Աղօթեցէ՛ք ինձ համար, սիրելի՛ սրբազան եղբայրներ, հոգեւոր ու արժանապատիւ հայրեր, սարկաւագներ եւ դպիրներ, մանկունք Եկեղեցւոյ ու նաեւ դուք, սիրելի՛ հաւատաւոր եղբայրներ ու քոյրեր. ամէն։

Տ. ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԱՎԱԳՅԱՆ

ԱՆԴԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԸ ԵՒ ԱՆՁՐԵՒԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՂԱԳՈՐԾԻ համար կենսական նշանակություն ուներ հաջող բերքի ստացումը, որից կախված էր մինչեւ հաջորդ տարվա բերքն ընկած շրջանի նրա ապրուստը։ Պայմանավորված այս հանգամանքով՝ նախաքրիստոնեական շրջանում մեծ տեղ են գրավել բարեբերության հետ կապված ծիսա-մոգական հավատալիքները եւ բերքի հովանավոր չաստվածությունները՝ արեւելյան, հունա-հռոմեական եւ հայկական։

Քրիստոնեության հաստատումից հետո Հայոց եկեղեցական ծիսակատարության մեջ եւս, բնականաբար, պետք է ստեղծվեին հողագործի աշխատանքի եւ բերքի պահպանության համար առ Աստված ուղղված աղոթքներն ու հայցվածները «Մաշտոց» ծիսարանի համապատասխան կանոններով, որոնց հանրագումարն է դարձել Անդաստանի արարողությունը՝ նպատակամիտված համայն աշխարհի բարեբերությանը եւ խաղաղությանը։

Անդաստանի, անձրեւի եւ բերքի հետ կապված արարողությունների հիմքում ընկած է հողագործի եւ Աստծու (հին շրջանում բնության ուժերի) հետ հաստատվող այն ուխտ-դաշինքը, ըստ որի՝ ինքը պետք է համապատասխան զոհաբերություն կատարեր՝ սկսած հերկը նետվող առաջին հատիկների ծիսական նվիրաբերումից մինչեւ ստացված բերքից ընծայումը, որպեսզի երաշտ չլիներ, եւ ակնկալված հաջող բերքն ստացվեր։

Նման բոլոր արարողությունները ունեն հոգեւոր-բարոյական այն խորհուրդը, որ ստացվող բերքից մի մաս որպես տուրք հարկավոր է թողնել աղքատներին եւ արտերի եզրերով անցնող օտարականներին։

«Անդաստան» բառը ծագել է անդ բառից, որը լայն առումով նշանակում է արտ եւ հանդ։ Բառը գալիս է դասական գրաբարից։

Աստվածաշնչում այն կիրառված է 32 անգամ։ Բերենք բնորոշ երկու օրինակ. «Եւ ելին յանդաստանսն եւ կթեցին զայգիս իւրեանց» *(Դատ. Թ. 27) եւ* «...կերակրեաց զնոսա արդեամբք անդաստանաց» *(Բ. Օրին. ԼԲ. 13)։ Այն հիշվում է նաեւ «Կանոնագիրք Հայոց»-ի մի շարք կանոնախմբերում։ Աթանաս Ալեքսանդրացու կանոնախմբի ՀԲ. կանոնում ասվում է, որ եթե քահանան* «...զանդաստան իւր կամ զպարտէզ» *մշակելիս քարը դուրս նետի եւ այն դիպչի անցորդին, ինչպես պետք է վարվել[1]։ Անդաստանն այստեղ ճշտորեն գործածված է հանդ եւ արտ իմաստով։*

Սահակ Պարթեւի կանոնախմբի ԾԱ. կանոնում թվարկվում է, թե իշխաններն ինչ են նվիրում եկեղեցուն, այդ թվում «...յանդաստանաց եւ ի պաճարաց»[2]։ Այստեղ նույնպես այն ունի արտ եւ հանդ իմաստները։

Պարտավի կանոնախմբի ԺԴ. կանոնում ասվում է, որ ով փորձի որեւէ պատճառով վաճառքի հանել եկեղեցու անդաստանը, թող նզովյալ լինի եւ այլեւս քրիստոնյա չանվանվի[3]։

Բերված երեք օրինակում նկատելի է մի օրինաչափություն։ Անդաստանը հիշվում է որպես եկեղեցուն ընծայվող կամ պատկանող հողատարածք, իսկ շինականներին պատկանող հողն անվանվում է հող, կալ, հնձան եւ մի քանի այլ անուններով։ Այստեղից, թերեւս, կարելի է եզրակացնել, որ սկզբնապես Անդաստան է անվանվել եկեղեցական հողատարածքը, եւ դաշտերում Անդաստանի արարողությունն սկզբնապես կատարվել է եկեղեցապատկան հողատարածքներում, որն ավելի է պատշաճել եկեղեցական ծեսի բացօթյա կատարմանը։

Անդաստանի եկեղեցական արարողությունը տարվա մեջ՝ Տյառնընդառաջից մինչեւ Խաչվերաց ընկած շրջանում, կատարվել է 25 անգամ։ Հետեւաբար, կատարվել է սկսվող գյուղատնտեսական աշխատանքներից մինչեւ բերքահավաքն ընկած շրջանում։ Սեպտեմբերին կատարվող Խաչվերացի ժամանակ, ըստ էության, ավարտվում էր բերքահավաքը՝ եզրափակելով գյուղատնտեսական տարին, որի համար Խաչվերացի Անդաստանն առանձնահատուկ ձեւով է կատարվում։

Վահան վարդապետ Տեր-Մինասյանն Անդաստանի արարողությունը կապում է անձրեւաբերության մթագնված ծեսի հետ, որը կատարվում էր Նուրի տիկնիկը պտտեցնելով, որ այդ հին չաստվածությանը վերաբերող

---

[1] *«Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 320։*
[2] *Անդ, էջ 412։*
[3] *«Կանոնագիրք Հայոց», հտ. Բ., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1971, էջ 11։*

«...հանդէսները Տէրնտասի եւ Ծաղկազարդի անդաստաններով կ՚սկսին եւ կը վերջանան Խաչվերացի անդաստաններով»[4]։

Արմաշի դպրեվանքի միաբաններից Պսակ վարդապետը ժողովրդական ակունքներից եկող եւ եկեղեցու կողմից կատարվող Անդաստանի արարողության մասին գրում է. «Իր պարզ նշանակութեամբ՝ արտ բառն է, կամ ցանքը երկրագործի։ Սակայն պաշտամունքի լեզուին մէջ՝ կրօնաշունչ նշանակութիւն մը կ՚առնէ ան, թէեւ բոլորովին չի հեռանար արտ բառին իմաստէն»[5]։

Վահան վարդապետը եւս ընդգծում է, որ Անդաստանն սկզբնապես դաշտերում է կատարվել. «Հին սովորոյթ է արտ օրհնել տալը եւ կըսուէր անդաստան։ Այժմ արտ երթալով զայն օրհնել տալ չկայ. ու միայն ժամերու մէջ կը կատարուի»[6]։

Անդաստանի հետ կապված ժողովրդական հին հավատալիքների աստիճանական մթագնման, եղանակային պայմանների եւ այլազգիների կողմից եկեղեցական թափորը չհանդուրժելու պատճառով եւ քաղաքային միջավայրի պայմանների թելադրանքով Անդաստանի թափորն սկսել է կատարվել եկեղեցու ատյանում, քանի որ հեռու էին դաշտերը[7]։

Թերեւս քիչ դեր չի խաղացել գաղթաշխարհի ազդեցությունը, ուր օտար քաղաքներում ոչ միայն դժվար, այլեւ տարօրինակ կլիներ դաշտեր հասնելը, քանի որ քույր եկեղեցիները չունեն Անդաստանի մեր արարողությունը։ Ուղղափառ աշխարհում նմանաբնույթ թափորով եւ առջեւից տարվող սրբապատկերներով երթ է կազմակերպվում երաշտի ժամանակ, այդ պատճառով մինչեւ ամռան տապն ընկած շրջանում Անդաստանի արարողությունը տարօրինակ կթվար ժողովրդին եւ պատճառ կդառնար Ծառազատկի պես հարուցվող եկեղեցական վեճերի։

Անդաստանը «...սկսվում է երկու տներից բաղկացած քարոզով՝ «Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան» եւ ապա՝ տեառնագրություն «Ի չորիս կողմանս»[8]։ *Արեւելյան կողմի մասին ասվում է.* «Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի արեւելեան կողմն աշխարհիս, եւ

---

[4] Վ. ՎՐԴ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ, *Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, հտ. Բ, Կ. Պոլիս, 1904, էջ 99։*

[5] *«Լոյս», Կ. Պոլիս, 1906, էջ 325–326։*

[6] Վ. ՎՐԴ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ, *Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, էջ 99։*

[7] *Տե՛ս* Ղ. ԱՐՔ. ՋԷՊԷՅԵԱՆ, *Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986, էջ 53–54.* Ա. Ե. ՎՐԴ. ԿՈԱՆԵԱՆ, *Հայ ծիսական պաշտամունքը, Բեյրութ, 2001, էջ 240–241։*

[8] Խ. Հ. ՊԱԼՅԱՆ, *Ժամակարգությունք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, Երեւան, 2005, էջ 94։*

հայրապետութիւն հայոց»[9]։ *Արեւելյան կողմի օրհնությամբ օրհնվում է նաեւ Հայոց աշխարհը ոչ միայն այն պատճառով, որ Արեւելքում է, այլեւ որովհետեւ Աստված, ինչպես Ծննդոց գրքի սկզբում է ասվում, դրախտը հիմնեց Արեւելքում.* «եւ տնկեաց Աստուած զդրախտն յեդեմ ընդ արեւելս» *(Ծննդ. Բ. 8)։ Համաձայն Սուրբ Գրքի (Ծննդ. Բ. 10–15) եւ Հայ Եկեղեցու ավանդության՝ դրախտը եղել է հայկական լեռնաշխարհում, իսկ Հայաստանը գտնվում է Արեւելքում։ Նույն այս պատճառով է, որ Արեւելյան կողմի օրհնության ժամանակ օրհնվում է նաեւ Հայոց հայրապետությունը։*

Ապա «...դարձուցանեն զերեսս յարեւմուտս»[10] *եւ ասում են* «Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի արեւմտեան կողմն աշխարհիս եւ թագաւորութիւն քրիստոնէից»[11]։ *Քանի որ Արեւմուտքը կապվում է Եւրոպայի հետ, ուր Արեւմտյան քրիստոնյա մեծ պետություններն են, դրա համար այս մաղթանքում արտահայտվում են համաքրիստոնեական միասնության ու արեւմտյան քրիստոնեությունից հայ ժողովրդի ունեցած քաղաքական ակնկալիքները, որոնք, բնականաբար, ազգային-եկեղեցական գործոններով էին պայմանավորված։*

Հետո «...շրջելով դառնան ի հարաւ» *եւ ասեն.* «Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի հարաւային կողմն աշխարհիս երկիրս, անդաստանս եւ պտղաբերութիւն տարւոյս»[12]։ *Ինչպես տեսնում ենք, հարավային կողմի օրհնության մեջ է, որ հարազատորեն արտահայտվել է Անդաստանի գաղափարը, ուր նաեւ անդաստան բառն է հիշվում։*

Արարողությունն ավարտվում է հյուսիսային կողմի օրհնությամբ, որը հավաքական ձեւով վերաբերում է քաղաքներին, բնակավայրերին եւ վանքերին. «Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի հիւսիսային կողմն աշխարհիս՝ վանս, անապատս, քաղաքս եւ գիւղս եւ բնակեալ ժողովուրդս ի սմա»[13]։

Տոնացույցում եւ Ճաշոցում նշվում է, որ Անդաստանի արարողությունից հետո գնում էին գերեզմանները, եւ օրհնության կարգն այնտեղ էր շարունակվում։

Տոնացույցի նկարագրությամբ՝ Անդաստանի արարողությունը եռամաս կառուցվածք ուներ.

---

[9] *«Ժամագիրք Ատենի», Վաղարշապատ, 1894, էջ 303։*
[10] *Անդ, էջ 304։*
[11] *Անդ։*
[12] *Անդ։*
[13] *Անդ։*

ա. Անդաստանի կատարումը՝ «Եւ տեառնագրեսցեն զանդաստանն»[14]։

բ. Գերեզման գնալը. «Եւ երթայցեն ի գերեզմանսն»[15]։

գ. Գերեզմանից թափորով ետ դառնալը։

Ճաշոցում նույնպես նշվում է, որ գերեզման են գնում՝ «Եւ երթայցեն ի գերեզմանսն»[16]։

*Անդրանիկ ծ. վրդ. Կռանյանը գրում է, որ Անդաստանի ժամանակ ննջեցյալների կարգն էին կատարում, որովհետեւ դաշտից վերադառնալիս թափորն անցնում էր գերեզմանոցի կողքով, ուր «...*ըստ հայկական սովորութեան, եկեղեցւոյ բակին կամ անոր շրջանակին մէջ կը գտնուէր եւ կը կոչուի «խաչփակ»[17]։

Հայ Եկեղեցու ծիսակարգի հոգեւորական ուսումնասիրողների կողմից նշվել է, որ Անդաստանի արարողությունն անկախ նրանից, թե որ շրջանից է մուտք գործել Հայոց Եկեղեցի, խոր արմատներ է ունեցել՝ գալով հին հեթանոսական արարողություններից։ Պսակ վարդապետն այս մասին գրում է. «Արարողութիւնը այնքան ընտանեկան ու ներքին, բայց շատ գեղեցիկ ու շինիչ բնութիւն մ'ունէր. թերեւս հեթանոսական կրօնքին վերջամնացութիւններէն՝ Դեմետրէ դիցուհիի տօնին յիշատակը եղած ըլլայ այն՝ իր քրիստոնէացած ձեւին տակ»[18]։

*Պսակ վարդապետը Անդաստանի նախօրինակը Հայոց Եկեղեցում համարում է Զենոբ Գլակի (Հովհան Մամիկոնյան) Պատմության մեջ հիշված այն հատվածը, ուր ասվում է, որ Տարոնում Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Հովհաննես Մկրտչի մասունքակիր Աջը բարձրացնելով, տեառնագրում է «...*շուրջ զամենայն կողմամբն գաւառի»[19]։

Երկրի չորս կողմերը տարբեր պատուհասների ժամանակ Ս. Խաչով Տյառնագրելու մասին, որպես Անդաստանի տարբեր ձեւեր, Հայր Պսակը գրում է. «Եկղ. Պատմութեան մէջ յաճախ կ'հանդիպին տեառնագրութիւններ՝ վերահաս պատուհասներու առթիւ. օրինակ երաշտութեան եւ սովի, մահտարաժամներու եւն. որ ատեն եկեղեցիի բովանդակ պաշտօնէութիւնը ժողովուրդին հետ միասին կ'սկսի աղերսել Աստուծոյ, եւ երկրի չորս կողմերը կ'օրհնէ Ս. Խաչով»[20]։

---

[14] *«Տօնացոյց», Վաղարշապատ, 1906, էջ 36։*
[15] *Անդ։*
[16] *«Ճաշոց», Վաղարշապատ, 1999, էջ 164։*
[17] Ա. Ծ. ՎՐԴ. ԿՌԱՆԵԱՆ, *Հայ ծիսական պաշտամունքը, էջ 241։*
[18] *«Վոյս», էջ 326։*
[19] *Անդ։*
[20] *Անդ։*

«Մաշտոցի» հին խմբագրության մեջ իրար հաջորդող 3՝ ԼԶ.–ԼԸ. կանոնները վերաբերում են բերքի առատությանը, բերքը անկորուստ բերքահավաքին հասցնելուն եւ, վերջապես, բերքը երաշտից պաշտպանելուն։

Առաջին կանոնը՝ «Կանոն զԱրմտիս սերմանեաց, զշիւղջ եւ զհնձան աւրհնելոյ», *վերաբերելով բերքի առատությանը, որոշակիորեն կապված է Անդաստանի սկզբնական գործառույթի՝ դաշտերն անձրեւից պաշտպանելու հետ[21]։ Երկրորդը՝* «Աղաւթք ի վերայ Երաշտութեան. անձրեւ լինի», *ինչպես վերնագիրն իսկ հուշում է, վերաբերում է երաշտի ժամանակ անձրեւ գալուն։ Այն ոչ թե կանոն է, այլ մի աղոթք, որի համար խորագրում ոչ թե կանոն, այլ աղոթք է անվանվում[22]։ Երրորդ՝* «Կանոն խաչալուայ առնելոյ» *կանոնը, ինչպես վերնագիրն է հուշում, խաչով օրհնված ջրով դաշտերը ցողելուն է վերաբերում[23]։ Այս կանոնը կապվում է ոչ թե երաշտից, այլ տարբեր հիվանդություններով, մարախով եւ այլ պատճառներով վտանգված բերքի փրկությանը։*

Յուրաքանչյուր կանոնի բնույթն ավելի ցայտուն է երեւում այդ կանոնի՝ առ Աստված ուղղված աղոթքի հայցվածում։ Եթե նախորդ երկու կանոններում հստակորեն անձրեւ էր հայցվում, ապա այս մեկում ասվում է, որ ջրի ցողմամբ թող ի բաց վանվեն բերքի աճեցման բոլոր խոչընդոտները։

Առաջին կանոնը, պահելով իր կենսունակությունը եւ կանոնի մաս կազմող միավորները, որոշակի համառոտմամբ տեղ է գտել նաեւ հետագա շրջանի տպագիր Մաշտոցներում, այդ թվում եւ Վաղարշապատի 1894. Մաշտոցում[24]։

Եթե հին խմբագրության մեջ երաշտին վերաբերում էր որպես կանոն համարվող եւ առանձին թվահամար ունեցող մի աղոթք, ապա հետագայում այն նկատելիորեն ընդարձակվել է՝ ձեռք բերելով կանոնի մաս կազմող բոլոր միավորները՝ հիմնականում պահպանելով կանոնի հիմքում ընկած աղոթքը[25]։

Ինչպես ցույց է տալիս ձեռագիր եւ տպագիր Մաշտոցների համեմատությունը, «Կանոն զարմատիս սերմանեաց, զշիւղջ եւ զհնծան

---

[21] *«Մայր Մաշտոց», Ժ դար, հտ. Ա., գիրք Ա., աշխ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2012, էջ 410։*

[22] *Անդ, էջ 416։*

[23] *Անդ։*

[24] *«Մաշտոց», Վաղարշապատ, 1894, էջ 421–429։*

[25] *Անդ, էջ 431–436։*

աւրհնելոյ» կանոնը հետագայում միավորների եւ բնագրի հավելումներ չի ունեցել։

Կանոնն սկսվում է ԿԴ. սաղմոսի 14-րդ համարով, որը լիովին արտացոլում է ողջ կանոնի խորհուրդը եւ նպատակը. «Հովիտք բազում արասցեն ցորեան»[26]։

Կանոնի ծիսական նկարագրության մեջ, որը չկա Վաղարշապատի 1894 թ. հրատարակությունում, ասվում է. «Առնու քահանայն զխաչն եւ զԱւետարանն եւ երթայ առ մթերեալ արմտիսն»[27]։ *Այստեղ ընդգծվում է, որ քահանան գնում է մթերված՝ հավաքված բերքն օրհնելու։*

Ցանկացած կանոնի բուն էությունն արտահայտվում է քահանայի՝ առ Աստված ուղղված աղոթք-հայցվածում։ Ասվածը լիովին վերաբերում է եւ այս կանոնի աղոթքին, ուր գլխավոր խնդրանքը ոչ թե հաջող բերքի ստացումն է, այլ անձրեւի պարգեւումը։ Բարեբերության գլխավոր պայմանն է համարվում անձրեւը, որի համար վկայակոչելով Եզրի (Ա. Եզր Իէ. 28)[28] եւ Ովսեեի մարգարեության (Բ. 21–22) խոսքերը՝ ասվում է. «Երկինք ցաւղեսցեն յերկիր, եւ երկիր տացէ զպտղաբերութիւն»[29]։ *Այնուհետեւ, աղոթքն անձրեւի հայցմանը հանգեցնելու նպատակով ասվում է.* «Աւրհնեա՛, Տէ՛ր, զամպս, զի քաղցրութեամբ ցաւղեսցեն յանդաստանս [ընդգծումը մերն է] մեր»[30]։ *Այս նախադասությունն իր մեջ խտացնում է Անդաստանի ժամանակ անձրեւի հայցման խորհուրդը։*

*Կանոնի՝ անձրեւի հայցմանը նվիրված լինելն առավել ցայտուն է արտահայտվել աղոթքի երկրորդ մասում, որի սկզբում այն միտքն է ընդգծվում, որ Տերը երկրի բոլոր կողմերից ամպեր է բարձրացնում երկինք, որոնք անձրեւի են վերածվում եւ հեղվում երկրի վրա, նաեւ «...*զփայղատակմունս յանձրեւս դարձուցանես»[31]։ *Կայծակն անձրեւի վերածելու մասին խոսքերը նույնպես ուղղակիորեն կապված են Անդաստանի դաշտային արարողությունների հետ, որն առնչվում է ամպրոպի օդերեւութային հավատալիքի հետ։*

Անձրեւի հայցման աղոթքը ծիսական զարգացման ավելի երկար ճանապարհ է անցել։ «Մաշտոցի» հին խմբագրության մեջ այն աղոթքից դառնում

---

[26] *«Մայր Մաշտոց», Ժ. դար, հտ. Ա., գիրք Ա, էջ 410։*
[27] *Անդ։*
[28] *Տէ՛ս Ա. Մնաց. Իէ. 28։*
[29] *«Մայր Մաշտոց», Ժ. դար, հտ. Ա., գիրք Ա., էջ 413։*
[30] *Անդ։*
[31] *Անդ, էջ 414։*

է անհրաժեշտ բոլոր միավորներն ունեցող մի կանոն, որը, կարծում ենք, բացատրվում է երկու պատճառով։ Նախ՝ «Մայր Մաշտոցի» կանոնահամարներում առանձին համար ունենալով՝ որպես առանձին կանոն է ընկալվել, եւ անհրաժեշտություն է առաջացել այն օժտել կանոնին բնորոշ մյուս միավորներով։ Երկրորդ՝ անձրեւի հայցումը ժողովրդական տարածված հավատալիք էր, եւ երկրագործական կյանքում խիստ անհրաժեշտ էր։

«Մաշտոցի» հին խմբագրության մեջ որպես կանոն-աղոթք՝ այն դրված է Լէ. համարի ներքո, կարճառոտ է եւ ունի հետեւյալ խորագիրը՝ «Աղաւթք ի վերայ երաշտութեան. Անձրեւ լինի»[32]։ Աստվածաշնչում Եղիա մարգարեի մասին ասվում է, որ նա դիմում է ժողովրդին՝ ասելով, որ սկսված երաշտը դադարեցնելու համար թող Բահաղի 450 քրմերն աղոթեն, եւ ապա ինքը կաղոթի։ Եղիան Տիրոջը պատարագ մատուցելուց հետո ելնում է լեռան գլուխը եւ աղոթում, որից հետո «…ամպ մի փոքրիկ իբրեւ զթաթ» ելնում է եւ աճում, ապա «…երկինք մթացան ամպովք եւ հողմով, եւ եղեւ անձրեւ մեծ» (Գ. Թագ. ԺԸ.)։

Այս պատմության հետեւողությամբ աղոթքի սկզբում ասվում է, որ Եղիայի խնդրանքով երկիրը «…անձրեւակոյ, անձրեւախափան» դարձրեցիր եւ նրա իսկ խնդրանքով «…ցաւղ պտղազգեստ շնորհեցեր»[33]։ Հետեւաբար, այստեղ շեշտվում է, որ երաշտն աստվածային պատիժ է, որը պետք է ցրել ապաշխարությամբ եւ ընծայաբերմամբ։ Վերջինս եկել է ոչ միայն Հին Ուխտից, այլեւ հեթանոսության շրջանից ու վաղնջական ժամանակներից եւ համապատասխան վերամեկնաբանման է ենթարկվել քրիստոնեության ընդունումից հետո։

Ուստի այստեղ նույն ձեւով հայցվում է, որ ինչպես Եղիայի խնդրանքով անձրեւ շնորհեց, այնպես աստվածային նույն գթությամբ մարդկանց բազմաթիվ մեղքերն անտեսելով «…զանձրեւս քո առաքեա՛ որք պետս ունին եւ խնդրեն, ուրախ արա՛ զերեսս երկրի յաղագս աղքատաց ժողովրդեան Քո եւ յաղագս տղայոց եւ անասնոց, եւ այնոցիկ որ ակն ունին տալ նոցա կերակուր ի ժամու»[34]։

Քանի որ «Մաշտոցի» հին խմբագրության կանոնը կազմված է ընդամենը մեկ միավորից՝ աղոթքից, ու որեւէ ծիսական հրահանգ չունի, դժվար է ասել՝ այն եկեղեցո՞ւմ է կատարվել, թե Անդաստանի թափորով

---

[32] *«Մայր Մաշտոց», Ժ. դար, հտ. Ա., գիրք Ա., էջ 416։*
[33] *Անդ։*
[34] *Անդ։*

գնացել են դաշտ եւ այնտեղ ասել։ Միայն մեկ աղոթքից կազմված լինելը հիմք է տալիս ենթադրելու, որ այն եկեղեցում է ասվել։

«Մաշտոցի» հին խմբագրության կանոններում նկատելի է հետեւյալ օրինաչափությունը. ժողովրդական ակունքներ ունեցող արարողությունների համար խստորեն սահմանվում են եկեղեցական արարողություններին բնորոշ կանոններ, որպեսզի ժողովրդական շերտը հնարավորինս քիչ արտահայտվի։

1489 թ. Խարբերդում գրված Ս. Ղազարի ձեռագրատան հմր. 148 «Մաշտոցում» քահանայական աղոթքից առաջ ոչ միայն նախորդող սարկավագական ընդունված քարոզն է, այլեւ ծիսական հետեւյալ ընդարձակ հրահանգը, որը պատկերացում է տալիս, թե ինչպէս է կատարվել «Կանոն վասն երաշտութեան անձրեւի» *կանոնը.* «Ելանեն խաչիւ եւ շուրջառով յանդաստանն։ Եւ ժողովուրդն զհետ քահանայիցն, եւ ասեն ըստ պատշաճի աւուրն եւ կարդան աւետ. ըստ խորհրդի։ Եւ երթան ի տեղի նշանաւոր»[35]։

Այստեղ տրված է Անդաստանի թափորի ամբողջական պատկերը, որտեղ խաչով եւ շուրջառով առջեւից գնում են քահանաները, իսկ ետեւից՝ ժողովուրդը։ Ըստ այս հրահանգի՝ օրվա տոնին պատշաճող համապատասխան շարական եւ արարողության խորհրդին համահունչ ավետարանական ընթերցվածքներ են ասում։ Շատ կարեւոր է արարողության տեղի մատնանշումը ժողովրդական հավատալիքային ակունքների վերհանման տեսանկյունից։ Ասվում է, որ ոչ թե դաշտում կամ անդաստանում է կատարվում, այլ «ի տեղի նշանաւոր»։ *Ամեն բնակավայր ուներ իր համապատասխան տեղը, որը հին հավատալիքային որեւէ պաշտամունքի հետ էր կապվում, եւ ժողովուրդն ընդունված կարգով ավանդաբար այստեղ էր կատարում Անդաստանի արարողությունը, որն ակնարկվում էր* «ի տեղի նշանաւոր» *խոսքերով, այլապես կասվեր* «յանդաստան, յարտոռայս կամ ի դաշտս»։

Երաշտի կանոնն անհամեմատ հանդիսավոր եւ ընդարձակ է ներկայացվում Վաղարշապատի հրատարակության «Մաշտոցի» մեջ։ Կանոնի սկզբում դրված ծիսական հրահանգում ասվում է, որ գիշերը հսկում է կատարվում, առավոտյան Ս. Պատարագ է մատուցվում եւ մատաղ է տրվում, ապա «...ելանեն ի թափօր»[36]։

---

[35] *«Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց», Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Գ., 1966, էջ 277։*

[36] *«Մաշտոց», Վաղարշապատ, 1894, էջ 431։*

Երաշտի ժողովրդական արարողություններում նման մատաղն անվանվում էր Ցասման մատաղ եւ տրվում էր Ցասման խաչերի մոտ՝ ի մեղմացումն այն զայրույթի, որի առաջ բերած պատժի արտահայտությունն էր երաշտը։

Ցասման խաչերը կանգնեցվում էին լեռնագագաթներին։ Ցասման խաչերին մատուցվող պաշտամունքի ազդեցությամբ եւ ժողովրդական հավատալիքների քրիստոնեական երանգավորմամբ են գրվել շարականի հետեւյալ տողերը.

«Այսօր ի գլուխս լերանց տուն Աստուծոյ հաստատեալ.

որ եւ յաւէտ ողոգին յամպոց Հոգւոյն աստուածաբուղխ առատահոս անձրեւօք.

բարեբանեա՛ զաղբիւրն կենաց զարբուցանողքն ծարաւեաց»[37]:

Շարականի այս տան մեջ լեռնագագաթներն անվանվում են Աստծու տուն, որոնք շարունակ ողողվում են անձրեւով։

Եզրափակիչ ծիսական հրահանգը վեր է հանում կանոնի ուղղակի կապն Անդաստանի արարողության հետ. «Ապա արասցեն անդաստան ըստ կարգի, եւ դառնալով յեկեղեցին նստին ի սեղան»[38]։

Այս հրահանգից պարզ է դառնում, որ երաշտի կանոնը կազմված է ոչ միայն եկեղեցուց դուրս համապատասխան տեղում ասվող երաշտի աղոթքից, այլեւ հաջորդող Անդաստանից, որից հետո, ի նշան աստվածային պատուհասի, տրվել է ցասման հասարակաց մատաղ։

Ինչպես ասացինք, Անդաստանի կարգը եկեղեցում կատարվում է Տեառնընդառաջից ու Ծաղկազարդից սկսած։ Այդ նույն ձեւով տարվա անձրեւաբերության ժողովրդական հավատալիքային արարողություններն սկսվում են նույն այս շրջանից, որը համընկնում է գարնանացանի աշխատանքների հետ։ Աղ. Մխիթարյանցը գրում է, որ Շիրակում ոչ միայն Վարդավառի ժամանակ էին իրար վրա ջուր ցողում, այլեւ գարնան սկզբին, երբ ցանքի առաջին օրը դուրս էին գալիս դաշտերը «խամահանուկ անելու»՝ *հողը* «խամից» *հանելու եւ հերկի նախապատրաստելու համար։ Այդ օրը բոլոր դաշտ գնացողների վրա ջուր էին ցողում, որ* «...տարին անձրեւաբեր լինի»[39]։ *Ջրով ցողված հողագործներն իրենց հետ անձրեւի կաթիլներ էին դաշտ տանում, որ երաշտը չպատուհասի։*

---

[37] *«Մաշտոց», Վաղարշապատ, 1894, էջ 432։*

[38] *Անդ, էջ 436։*

[39] Աղ. Մխիթարյանց, *Փշրանքներ Շիրակի ամբարներից, Մոսկուա, 1901, էջ 273։*

Հայկական լեռնաշխարհում երաշտը հաճախ էր պատուհասում արտերն ու դաշտերը, ուստի Վարդավառի տոնին կամ Վարդավառի ժողովրդական արարողության տոնին՝ հուլիսի Գ. կիրակիին, ժողովրդական միջոցառումները նվիրված էին անձրեւաբերության։ Քանի որ երաշտը կարող էր լինել Վարդավառից առաջ կամ հետո, ուստի նույն կամ համանման արարողությունները կատարվում էին տեւական երաշտի ժամանակ, անկախ նրանից՝ դրանք կլինեին Վարդավառից առաջ, թե հետո։

Ստ. Լիսիցյանը գրում է, որ Վարդավառի տոնը նվիրված էր լեռնագագաթների պաշտամունքին։ Ասվում է, որ Զանգեզուրում գտնվող Ճգնավորի սարի գագաթին պատվում էր ցցված ժայռը, որին երաշտի ժամանակ մատաղ էին բերում[40]*։*

Քրիստոսի Պայծառակերպությունը եւս տեղի ունեցավ լեռնագագաթին։ Ուստի քրիստոնեության ընդունումից հետո ժողովրդական հին հավատալիքները իրենց տեղը զիջում են կամ սկսում են արտահայտվել քրիստոնեական հասկացությունների միջոցով։

Վաղնջական ժամանակներից լեռնագագաթները կապվել են ջրի պաշտամունքի հետ, քանի որ մոտ են գտնվել երկնքին, որտեղից գալիս էր անձրեւը։ Քիչ դեր չի խաղացել նաեւ այն հանգամանքը, որ ջրերի վտակները եւ աղբյուրները սկզբնավորվել են լեռնագագաթներից։

Հայաստանի տարբեր լեռներում գտնվող եւ ժողովրդի կողմից վիշապաքար անվանվող ձկնակերպ քարե արձանները համարելով Ցասման խաչերի նախօրինակը՝ Աբեղյանը գրում է, որ դրանք դրվել են «...ջրի աստվածուհի Աստղիկ-Դերկետոյի համար, որը պաշտվել է իբրեւ ձուկ»[41]*։*

Աբեղյանը կարծում է, որ ձկնակերպ այս կոթողները կանգնեցված են եղել ձկան պոչի վրա, իսկ վերեւում երինջի գլխի գծագրություն են ունեցել, որի բերանից «...վայր էր իջնում ջրի ալիքների գծագրությունը։ Դա մի սիմվոլ է այն բանի, որ զոհաբերությունն ընդունվում է, եւ վայր են հոսում երկնային ջրերը մոտիկ լճակի, առվի կամ աղբյուրի մեջ»[42]*։*

Նման կոթողները կանգնեցված են եղել արհեստական ոռոգման համակարգերից վերեւ գտնվող վայրերում, որտեղից ջուրը հոսել է ներքեւ՝ ջրամբարները կամ ջրանցքները։

---

[40] Ստ. Լիսիցյան, *Զանգեզուրի հայերը, Երեւան, 1969, էջ 278–279։*

[41] Մ. Աբեղյան, *Երկեր, հտ. է., Երեւան, 1975, էջ 171։*

[42] *Անդ, էջ 166։*

Հիշյալ կոթողների երնջակերպ գլուխ ունենալը ցույց է տալիս, որ երինջների զոհաբերությունը եւ վերջինիս հաջորդող անձրեւն ուղղակիորեն փոխակերպվել են նույն լեռնագագաթներին կանգնեցված Ցասման խաչերի։ Երաշտի եկեղեցական կանոնում տեսանք, որ արարողության սկզբում գիշերը հսկում էին կատարում, առավոտյան Ս. Պատարագ մատուցում, ապա մատաղ անում, հետո թափորով դուրս էին գալիս եկեղեցուց եւ «...արասցեն անդաստան ըստ կարգի» եւ վերադառնալով եկեղեցի՝ «...նստին ի սեղան»[43]։

Քրիստոնեության ընդունումից հետո այդ արձանների վրա խաչեր են փորագրել, որոնք խորհրդանշել են նաեւ անցումը քրիստոնեությանը, կամ համանման գագաթներին կանգնեցրել են Ցասման անվանվող խաչեր՝ ի բարեխոսություն երաշտի՝ որպես երկնային ցասման դադարեցման։

*Վերջիններս Գարեգին եպս. Սրվանձտյանցի կողմից ներկայացված են որպես երաշտի եւ տարերային մյուս աղետների ու պատուհասների դադարեցմանն ուղղված բարեխոսության խաչեր. «*Ցասմանխաչ այն խաչաքարերն են, որ քաղաքից դուրս ու ըստ մեծի մասին վանքերուն մօտ, գեղերուն մօտ, արտի, անդաստանի բոլորը գտնուած բլուրներուն վրայ տնկուած են։ ...Թէ ինչո՞ւ համար ըսուած է Ցասմանխաչ. վասն զի երբ տարաժամ ձիւն կամ կարկուտ տեղայ, բերքերուն վնասէ. երբ մարախն ու թրթուրը բոյսն ու կանաչը գօսացնեն. երբ երաշտութիւն լինի... եւ ինչ վնաս որ պատահի երկրին, այն որ մարդոց ըրածը չէ, Աստուծոյ ցասումն կը համարին. եւ այդ ցասման դէմն առնելու համար Քրիստոսի խաչին պատկերը կը բարձրացնեն այսպէս երկնից առջեւ, որ պատուհասիչ հրեշտակը պատկառի խաչէն, եւ Աստուած հաշտուի»[44]։

Ցասման խաչերի բարեխոսությանը դիմել են Անդաստանի թափորով կամ եկեղեցական արարողությանը զուգահեռ կատարվող ժողովրդական ծեսերով, որոնք սկսվում էին մատաղ անելով եւ թափորի վերադառնալուց հետո մատաղի հասարակական ճաշակմամբ։

Ազգային սովորույթների հիման վրա Ցասման խաչի կանգնեցումն Աբեղյանն այսպես է նկարագրում. «Ցասման խաչը տնկելիս, ինչպես սովորաբար երաշտի ժամանակ, մեծ թափորներ էին անում քաղաքի կամ գյուղի շուրջը անդաստանի չորս տեղում կամ չորս բլուրների վրա։

---

[43] *«Մաշտոց», Վաղարշապատ, 1894, էջ 436։*

[44] Գ. ԵՊՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, *Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 117։*

Այս թափորների ժամանակ ոտաբոբիկ ու գլխաբաց ման էին ածում որեւէ սրբի մասունք։ Մատաղ էին մորթում ու կազմում մեծ հացկերույթ, որ կոչվում էր ցասման հաց. *որովհետեւ հավատում էին, թե կախարդները, որոնք ծառայում են չար ոգիներին, երկինքը կամ ամպերը կապել են, եւ աստված բարկացել,* «ամպերի կապանքը» չի առնակում, որ անձրեւ գա»[45]։

Ցասման մատաղի մասին հիշատակություն կա անգամ «Սասնա ծռերում»՝ որպես արտահայտությունը հայ ժողովրդի դարավոր եւ խորունկ հավատքի։

Ժողովրդական հնչմամբ ցասումը ասվում է «սասում», *ըստ այդմ՝ Ցասման ժամը հնչում է որպես «սասման ժամ»։ Սա ոչ թե բարբառային ձեւ է, այլ գալիս է ժողովրդական մտածողության ակունքներից, որ ցասումն իր հետ բերում է երկրի սասանում առաջացնող պատուհասներ։ Սահակ վրդ. Ամատունին «Սասման ժամ»-ի մասին գրում է.* «Ցասումից ազատվելու համար մատուցած Պատարագ», *եւ ժողովրդական այդ պաշտամունքից վկայակոչում է* «էսօր սասման ժամ կայ»[46] *արտահայտությունը։ Հետո Սահակ վարդապետը ներկայացնում է «Սասնա ծռերի» մի քանի գրառումներ, որոնցում, ինչպես այս փոփոխակում, ասվում է.* «Նախուրդ էսաց.— Դափթ, միր գեղ սասման ժամ ի»[47]։ *Եւ հետո, նախորդը, վերցնելով պղինձը,* «տարաւ սասման ժամու տուն»։ *«Սասում» բառի բացատրության վերաբերյալ Սահակ վարդապետը գրում է.* «Պատիժ, պատուհաս, պատահարք (երաշտ, կարկուտ եւ այլն)»[48]։

«Սասում» բառով ստուգաբանվում է «Սասուն» բառը։ «Սասնա ծռերում» ասվում է. «Ուտ[դ]ի, էս տուն չի, էս սասում ի։ Անուն դրին Սասում»[49]։

Անդաստանի եկեղեցական թափորի՝ դաշտում կատարվելու ընթացքի հետդարձ վերականգնման առաջին աստիճանն է ներկայացնում Նուրիի ժողովրդական արարողությունը, որի ծիսահավատալիքային մթագնումից հետո այն այժմ կատարում են երեխաները։

Նուրիի երգի ամենավաղ գրառումը (1860 թ.) գտնում ենք Պերճ Պռոշյանի գրած «Սոս եւ Վարդիթեր» վեպում[50]։ Ժողովրդական

---

[45] Մ. Աբեղյան, *Երկեր, հտ. է, էջ 168։*
[46] Ս. Վրդ. Ամատունի, *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 583։*
[47] *Անդ։*
[48] *Անդ, էջ 584։*
[49] *Անդ։*
[50] Պ. Պռոշյան, *Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երեւան, 1962, էջ 138։*

արարողության հարազատ նկարագրությունը տվել են Աղ. Մխիթարյանցը եւ Վահան վարդապետը։

Աղ. Մխիթարյանցը գրում է, որ Շիրակում երաշտի տարիներին երեխաները, ավելի վրա լաթեր փաթաթելով, «...պուրպատիկին (Նուրին-Նուրին) կ'շինեն եւ երկու մանուկ բռնած՝ դռնէ դուռ ման կածեն։ Իւրաքանչիւր տանտիկին մի թաս ջուր ցփնելով պուրպատիկինի եւ շրջողների վրայ՝ յետոյ մի բան կտայ, հաւկիթ, եղ, հաց կամ այլ ինչ»[51]։

Վահան վարդապետը նկարագրում է երաշտի ժամանակ տեղի ունեցող Նուրիի արարողությունը։ Արեւմտահայ միջավայրի մի շարք շրջաններում խաչափայտի վրա փաթաթված կտորներով հարսնատիկնիկ են պատեցնում։ Վերջինս անվանվում է «Ձիշի մամա», որը պատելով նրան նվիրված երգն են երգում։ Նույն ձեւով երեխաներին դրամ, հաց, կերակուր են տալիս եւ տիկնիկի վրա «...ջուր կը սրսկեն եւ զայն կը թրջեն, հաւատալով որ երկինք կ'անձրեւէ»[52]։ Այստեղ ջուրն արդեն ոչ թե երեխաների, այլ անձրեւաբերության Նուրիի վրա են լցնում։

Որպես ժողովրդական ջերմեռանդ հավատի դրսեւորում՝ երաշտի ժամանակ Սուրբ Մասունքով դաշտերն օրհնելու եւ Նուրիի պատեցնելու միջոցով անձրեւ բերելու մասին Պ. Պռոշյանը գրում է «Սոս եւ Վարդիթեր» վեպում։ Ասվում է, որ Աշտարակում, երբ երաշտն այնքան է ուժեղանում, որ հողն ու անգամ ամանների ջուրն սկսում են տաքանալ, Աշտարակի ու շրջակա գյուղերի բնակիչները դիմում են Մուղնու Ս. Գեւորգ վանքի վանահորը, որ Սրբի մասունքով թափոր կատարի։

Վանահոր գլխավորությամբ սկսած թափորն այսպես է նկարագրում. «Ինքը բռնեց սուրբ Գեւորգի էրծաթի ոսկեջրած աջը, մնացող տերտերները մինը գլխաքարը, մինը գագաթը, մինն էլ էն դռնավոր մասունքը զգեստավորված, շարական ասելով, խաչ ու խաչփառով՝ մենծ հանդեսով էկան դպա Աշտարակ»[53]։

Բերվող մասունքին դիմավորելու եկած կանանց մասին գրում է. «Կնանիքն էլ ամենքը բոբիկ ոտով, ճամփին քար ու քոլին, փշին, տատաշին, գետնի տաքությունին մտիկ չի տալով՝ ՞ով սուրբ Գեւորգ են կանչում»[54]։ *Կանանց առանձին խմբի հանդիպելը թափորին արդյո՞ք ակնարկ չի*

---

[51] Աղ. Մխիթարյանց, *Փշրանքներ Շիրակի ամբարներից, էջ 200։*

[52] Վ. Վրդ. Տէր-Մինասեան, *Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, գիրք Բ., էջ 102։*

[53] Պ. Պռոշյան, *Սոս եւ Վարդիթեր, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երեւան, 1962, էջ 136։*

[54] *Անդ։*

պարունակում կանանց կատարած վարի մասին, որին անդրադառնալն անպատշաճ է համարել Պռոշյանը։ Տեսնելով Ս. Մասունքը՝ կանայք դիմում են Ս. Գեւորգի բարեխոսությանը։

Պռոշյանը մասունքի թափորին զուգահեռ ներկայացնում է Նուրիի պտտեցնելու արարողությունը, որին հաջորդում է անձրեւի գալը։

Անձրեւը սերտորեն կապված է կայծակի հետ։ Վերջինս անձրեւի նախանշանն է։ Ժողովուրդն ասում է, որ մինչեւ ամպը չգոռա, այսինքն որոտ ու կայծակ չլինի, անձրեւ չի գա։ Վանի մոտ որոտը, որը համարվում է անձրեւ ուղարկողը, անվանվում է «Գրոգրո Բաբա», որի մասին Աբեղյանը գրում է. «Որովհետեւ անձրեւ հողողը Գրոգրո բաբա-ն բարձունքներում է բնակվում, ապա նրա պաշտամունքը, սովորաբար, կապված է լեռնային բարձունքների հետ։ Լեռնային շատ բարձունքներ Հայաստանում եւս, հավանաբար, որպես որոտացողի եւ անձրեւ շնորհողի նստավայր, սուրբ են համարվում, մանավանդ, որ կայծակնահար ժայռերն ու ծառերն ընդհանրապես համարվում են սուրբ»[55]։

Որոտի եւ ամպրոպի հայկական աստվածությունը Վահագնն էր։ Որպեսզի անձրեւ գար, հարկավոր էր, որ կայծակը խփեր, այսինքն՝ որոտալով (որպես Գրոգրո Բաբա) ներքեւ իջներ՝ իր հետ բերելով անձրեւը։ Ամպրոպի աստվածության գործառույթը քրիստոնեության շրջանում փոխանցվել է Եղիային։

Որպեսզի Վահագնը կամ Եղիան կայծակը երկիր իջեցներ, նրան պետք էր գայթակղել կամ գրավել։ Եղիայի դեպքում անհրաժեշտ է դիմել սրբի բարեխոսությանը, սիրտը մեղմելուն եւ ցասումն իջեցնելու համար Ցասման խաչ, ցասման հաց ու մատաղ տալուն, իսկ հեթանոսական Վահագնի դեպքում նրան պետք էր գայթակղել, որպեսզի կայծակ խոյացներ ներքեւ։

Ինչպես Ագաթանգեղոսի պատմությունից է հստակ երեւում[56], Վահագնի սիրուհին Աստղիկ դիցուհին էր։ Որոտի աստվածության սիրտը գրավելու, վար իջեցնելով չորացած երկինքը պատռելու եւ իր հետ անձրեւ բերելու համար լեռնագագաթներին դնում էին դիցուհու արձանը։ Երաշտից ճաքճքված դաշտերում պտտեցնում էին աստվածուհուն խորհրդանշող Նուրիի բորբատիկնիկը՝ դյուցազնի սիրտը սիրով

---

[55] Մ. Աբեղյան, *Երկեր, հտ. է., էջ 78։*

[56] Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց, աշխ.՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1983, §809, էջ 453։*

բորբոքելու եւ ներքեւ կանչելու համար։ Ավելի վաղ շրջանում Աստղիկին նմանակել են մերկ կանայք եւ կույս աղջիկները՝ հեթանոսական ըմբռնումով սրբազան զոհաբերությամբ քրմերի միջոցով իրենց ընծայելով Վահագնին։

Քրիստոնեությունը հոգեւոր վերաիմաստավորման է ենթարկել հին հավատալիքը։ Աբեղյանն այս համակարգում հեթանոսությունից քրիստոնեությանն անցման շրջանում ցասման խաչերի մասին Սրվանձտյանցի բերած հատվածը դիտարկելով՝ գրում է. «Քրիստոնեական դարերում հարատեւել է հին հեթանոսական հավատալիքն ու պաշտամունքն իր արարողություններով, միայն հին անուններին փոխարինել են քրիստոնեականները։ Վահագն աստծու փոխանակ անցել է լոկ Աստված, Վահագնի սիրական տարփածուի Աստղիկի տեղ՝ Աստծու սիրելի որդի Քրիստոս, ամպերը կապող վիշապի տեղ՝ պատուհասիչ հրեշտակը։ Հիմա՝ քրիստոնեական անունների փոխանակ հեթանոսականները դնելով եւ քրիստոնեականները փակագծերի մեջ թողնելով, Սրվանձտյանցի խոսքերով ունենում ենք՝ «Երաշտությունը Վահագնի (Աստծու) ցասումն կը համարեն. այդ ցասման դեմն առնելու համար՝ նրա սիրական տարփածու Աստղիկի ձկնակերպ (սիրելի որդի Քրիստոսի խաչի) պատկերը կը բարձրացնեն երկնից առջեւ, որ ամպերը կապող վիշապը (պատուհասիչ հրեշտակը) պատկառի, եւ Վահագն (Աստված) հաշտվի»,— ավելացնում՝ եւ անձրեւ բերի»[57]։

Ամփոփելով՝ ասենք, որ Անդաստանի արարողությունը լավագույնս ցույց է տալիս, թե հին հեթանոսական պաշտամունքը եւ գյուղացու մտահոգությունը բերքի համար ինչպես է ներդաշնակվել եկեղեցական ծիսակատարությանը՝ քրիստոնեությանը բնորոշ հոգեւոր խորին վերաիմաստավորմամբ։ Այն դարձել է աշխարհի չորս կողմերի համայնական դաշտերի բարեբերության, հայ ժողովրդի համար այնքան տենչալի խաղաղության եւ հայկական արժեհամակարգի անկապտելի մասը կազմող քրիստոնյա աշխարհի (թագաւորութիւն քրիստոնէից) հավաքական օրհնությունը։

[57] *Անդ, էջ 171։*

РЕЗЮМЕ

В статье представлен церковный обряд Андастан — освящение четырех сторон света, и связанные с ним церковные каноны, касающиеся засухи и вызова дождя.

Показано также сопоставление ритуальных церемоний, относящихся к Андастану и вызову дождя, в дохристианском периоде. Сопоставление было осуществлено путем сравнительного анализа народных верований, изображенных в описаниях средневековой армянской литературы, церковного обряда и этнографических обычаев. Подобный метод анализа позволяет выявить процесс ритуального развития церковных канонов, таинство и значение совершаемых церемоний.

SUMMARY

The article presents the ecclesiastical ceremony of blessing the land, and how the church canons of droughts and rainfalls are related to it.

It also reveals the equivalent of ritual ceremonies and rules related to the rite of blessing the land and rainfalls in the pre-Christian era.

The comparison was made through a comparative examination of folk beliefs described in Armenian medieval literature, church rituals and ethnographical customs.

Such a method of analysis enables to disclose the course of ritual progress of church canons and the mystery embraced in the performed ceremonies.

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Սկիզբը՝ թիւ Դ.

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՎԻՃԱԿԱԳՐԵԼՈՒ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՓՈՐՁԵՐԸ 1919–1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ԸՍՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԱՐԽԻՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ)

Գ. «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալներն ըստ թեմերի

«Վիճակացոյց»-ի հարցաթերթերը ներկայացվում են արեւմուտքից արեւելք մոտավոր հերթականությամբ (Ռոդոսթո, Բանդրմա-Բալըքեսիր, Իզմիր, Բուրսա, Կաստամոնի, Մարզվան, Ակն, Արաբկիր)։ Աղբյուրի բոլոր գրությունները տրվում են ըստ բնագրի ուղղագրության։

«1919 թ. վիճակացոյց»-ի՝ յուրաքանչյուր թեմին վերաբերող վիճակագրական աղյուսակը ներկայացնելուց հետո, արեւմտահայության նախաեղեռնյան թվաքանակի վերաբերյալ «վիճակացոյց»-ի տվյալների աղբյուրագիտական արժեքը վերլուծելու նպատակով՝ մենք դրանք համադրում ենք այլ կարեւոր վիճակագրական սկզբնաղբյուրների, հատկապես՝ Հայոց պատրիարքարանի «1913 թ. վիճակացոյց»-ի եւ 1914 թ. օսմանյան պաշտոնական վիճակագրության տվյալների հետ։

1. Վիճակացոյց Ռոտոսթոյի թեմի[1]

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հաստատուն	Աւերեալ
1	Ռոտոսթо	3420	3589	7009	1901	2256	4157	1519	1333	2852	8	6	3	-
2	Զօրլու	669	580	1249	443	371	814	226	209	435	2	-	1	-
3	Տարտանէլ	580	620	1200	323	360	683	217	300	517	1	1	1	կիսկն.
4	Էզինէ Ֆըզըլը	370	300	670	87	80	167	283	220	503	1	-	1	կիսկն.
5	Պալգը գիւղ													

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 իսլամացածներ			
		Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	1914	1919	Բնակեալ	Կիսաւեր	Քնդած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Ռոտոսթо	1	Քնդծ.	2	-	2	-	1000	470	1097	-	229	7	-	1	6
2	Զօրլու	-	-	1	-	1	-	310	147	296	143	34	2	44	45	1
3	Տարտանէլ	-	-	2	կիսկն.	1	կիսկն.	210	141	33	90	112	-	4	2	2
4	Էզինէ Ֆըզըլը	-	-	1	կիսկն.	1	կիսկն.	90	-	20	92	17	-	2	2	-
5	Պալգը գիւղ															

[1] Տե՛ս ԵՀՊ Զաւէն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ Զ985–Զ987։

Ինչպես կարող ենք տեսնել, համաձայն «1919 թ. վիճակագրության»-ի տվյալների՝ նախքան տեղահանությունը Ռոդոսթոյի թեմն ուներ 2163 տուն, 10 128 շունչ հայ բնակչություն, 1919 թ. դրությամբ՝ 5821 շունչ հայ։ Մեծ եղեռնին զոհ էր գնացել 4307 շունչ հայ կամ թեմի հայ բնակչության մոտ 43 %-ը։

Նշենք որ «1919 թ. վիճակագրության»-ից դուրս էր մնացել թեմի՝ Մալկարայի, Սիլիվրի եւ Չանակ-կալեի հայ բնակչությունը, քանի որ նշված ժամանակաշրջանում դրանք օսմանյան վարչական առանձին միավորներ էին կազմում եւ, ըստ երեւույթին, թեմական իշխանություններն ի վիճակի չեն եղել դրանցից տվյալներ հայթայթել։ Թերեւս դա նկատի առնելով՝ «վիճակագրության»-ի թերթի դարձերեսին մատիտով զետեղված է թեմի հայ բնակչության՝ 1905 թ. վերաբերող մեկ այլ՝ ավելի ամբողջական վիճակագրություն. Ռոդոսթո՝ 10 510 շունչ, Մալկարա՝ 2200 շունչ (500 տուն), Չորլու՝ 1350 շունչ (300 տուն), Գալիպոլի՝ 1514 շունչ, Սիլիվրի՝ 927 շունչ, Չանաք-կալե՝ 1100 շունչ (200 տուն), Էզինե՝ 450 շունչ (90 տուն), Բիղա՝ 70 տուն, Գրզել եւ Պալըգալը՝ 21 տուն (հայ բոշաներ), ընդամենը մոտ 18 000 հայ[2]։

Հայկական այլ աղբյուրները որոշ չափով ավել են ցույց տալիս թեմի նախաեղեռնյան հայ բնակչության թիվը։ Այսպես, «Յուշամատեան Ռոտոսթոյի հայերուն 1606–1922» գրքի հեղինակ Սարգիս Պաչաճյանի տվյալներով՝ 1915 թ. Ռոդոսթոյում բնակվում էր 15 000, Մալկարայում՝ 3500, Չորլուում՝ 1500 եւ Սիլիվրիում՝ 650 հայ[3]։ Սփյուռքահայ ուսումնասիրողներ Ռայմոն Գեւորգյանի եւ Փոլ Փաբուջյանի հաշվարկով (հիմնվում է Ս. Պաչաճյանի եւ այլ հեղինակների տվյալների վրա) Ռոդոսթոյի եւ «Արեւելյան Թրակիայի» շրջանների հայ բնակչության թիվը 22 368 էր[4]։

Համեմատության համար՝ համաձայն 1914 թ. օսմանյան վիճակագրության Թեքրիդաղում (Ռոդոսթո) բնակվում էր 9256 հայ (այդ թվում՝ 48 կաթոլիկ, 115 բողոքական), Չորլուում՝ 1678, Մալկարայում՝ 2658, Հայրաբոլուում՝ 193, Գալիպոլիում՝ 1246, Սիլիվրիում (Չատալջա)՝ 842, Չանակ-կալեում (Չանակ-կալե, Էզինե, Բիղա)՝ 2483 հայ (այդ թվում՝ 9 կաթոլիկ), ընդամենը՝ 18 356 հայ[5]։

---

[2] *ԵՀՊ Զավեն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ 2986։ Նույն տվյալները Թեոդիկի մոտ (տե՛ս* Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան..., էջ 415–422)։*

[3] *Տե՛ս* Ս. Գ. Փաչաճեան, *Յուշամատեան Ռոտոսթոյի հայերուն 1606–1922, Պէյրութ, տպ. Տօնիկեան, 1971, էջ 199–202։*

[4] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 57։*

[5] *Տե՛ս* K. Karpat, *նշվ. աշխ., էջ 170, 184, 186։*

2. Վիճակագրություն Պանտրմա-Պալբէխիրի միացեալ թեմի[6]

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հաստատուն	Աւերեալ
1	Պանտրմա	1416	1524	2940	846	971	1817	608	515	1123	4	2	1	-
2	Էտինճիկ	467	449	916	271	268	539	196	181	377	1	1	1	-
3	Հայ գիւղ	487	604	1091	269	392	661	218	212	430	1	1	1	-
4	Պալբէխիր	1500	1800	3300	700	800	1500	800	1000	1800	3	1	-	1
5	Միխալըճ	441	439	880	202	195	397	239	244	483	1	1	1	-
6	Քիրմասթի	446	421	867	188	195	383	258	226	484	1	0	1	-
7	Պալիա Մատէն	1000	250	1250	20	30	50	980	220	1200	1	0	-	-
8	Սուլթան Զայիր Մատէն	300	150	450	100	150	250	200	-	200	-	-	-	-
9	Սուսըղըրլըգ	50	50	100	50	50	100	-	-	-	-	-	-	-
10	Արմուդ Օվա	80	70	150	10	10	20	70	60	130	-	-	-	-
11	Պիւրհանիյէ	30	45	75	-	-	-	30	45	75	-	-	-	-
12	Էտրէմիտ	10	15	25	-	-	-	10	15	25	-	-	-	-
		6227	5817	12 044	2656	3061	5717	3609	2718	6327	12	6	5	1

[6] Տե՛ս ԵՀՊ Զաւէն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ 2988–2989։

	Վիճակին են-թակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 Իսլամացածներ			
		Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	1914	1919	Բնակեալ	Կիսաւեր	Քնդուած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Պանտրմա	-	-	1	-	1	-	378	330	600	30	30	-	-	-	-
2	Էտինճիկ	-	-	1	-	-	-	117	90	109	28	68	5	-	3	2
3	Հայ գիւղ	-	-	-	1	-	-	178	75	112	-	140	-	1	-	1
4	Պալըքէսիր	-	-	1	-	1	-	488	300	400	200	50	-	-	-	-
5	Միխալըճ	-	-	-	1	-	-	120	35	75	20	55	-	6	6	-
6	Քիրմասթի	-	-	-	1	-	1	120	50	50	67	100	-	10	9	1
7	Պալիա Մատէն	-	-	-	1	-	-	35	-	20	25	10	-	-	-	-
8	Սուլթան Զա-յիր Մատէն	-	-	-	-	-	-	-	-	90	-	-	-	-	-	-
9	Սուսըղըրլըգ	-	-	-	-	-	-	-	-	20	-	-	-	-	-	-
10	Արմուդ Օվա	-	-	-	-	-	-	-	-	-	-	30	-	-	-	-
11	Պիւրհանիյէ	-	-	-	-	-	-	-	-	-	-	15	-	-	-	-
12	Էտրէմիտ	-	-	-	-	-	-	-	-	-	-	6	-	-	-	-
		-	-	3	4	2	1	1436	880	1476	370	504	5	17	18	4

Այսպիսով, համաձայն «1919 թ. վիճակագրության»-ի տվյալների՝ Մեծ եղեռնի նախօրյակին Բանդրմա-Բալըքեսիրի միացյալ թեմում կար 2350 տուն, 12 044 շունչ հայ բնակչություն, 1919 թ.՝ 5717 շունչ հայ։ Կորուստը կազմել է 6327 շունչ կամ հայ բնակչության մոտ 53%-ը։

Բանդրմա-Բալըքեսիրի միացյալ թեմի նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակին վերաբերող թվերը մենք հնարավորություն ունենք համադրելու 1913 թ. Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ պատրաստված «վիճակացույց»-ի եւ 1914 թ. օսմանյան վիճակագրության տվյալների հետ (տե՛ս Աղյուսակ 2)։

Ինչպես կարող ենք տեսնել՝ Քարասի գավառի հայ բնակչության թվաքանակի հարցում «1919 թ. վիճակացույց»-ի տվյալները, եւ «1913 թ. վիճակացույց»-ի, եւ 1914 թ. օսմանյան վիճակագրության համեմատ, ավելի ամբողջական եւ, դրանով իսկ, ավելի ճշգրիտ են։

Մեծ եղեռնի նախօրյակին Քարասի գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այլ կարեւոր սկզբնաղբյուրների կողմից հաղորդվող տվյալներն են.

1. Մ. Օրմանյան (1911 թ., սակայն վիճակագրությունը կազմվել է ավելի վաղ՝ 1902 թ.)՝ 15 500 շունչ հայ[7],

2. Հայոց պատրիարքարանի-Ապահովության հանձնաժողով (1912 թ.)՝ 15 000 շունչ հայ[8],

3. Ռ. Գեւորգյան, Փ. Փաբուջյան (ըստ տարբեր աղբյուրների տվյալների)՝ 20 006 շունչ հայ[9]։

---

[7] *Այդ թվում՝ 500 կաթոլիկ հայ (տե՛ս* Մ. Օրմանեան, *նշվ. աշխ., էջ 260)։*

[8] *Այդ թվում՝ Բանդրմա՝ 9000, Բալըքեսիր՝ 6000 (տե՛ս* Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը..., էջ 262)։*

[9] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 157 (այս թիվը չի երկրորդվում մեր տրամադրության տակ եղած այլ աղբյուրների կողմից)։*

Աղյուսակ 2. Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ Բանդրմա-Բալըբեսիրի միացյալ թեմի հայ բնակչության թվաքանակն ըստ 1913 եւ 1919 թթ. «վիճակացոյց»-երի տվյալների եւ 1914 թ. օսմանյան վիճակագրության

Թիւ	Բնակավայր	1913 թ. վիճակացոյց[10]		1919 թ. վիճակացոյց		1914 թ. օսմանյան վիճակագրություն[11]
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Շունչ
1	Բալըքեսիր	614	2606	650	3300	2966
2	Միխալիճ	200	990	150	880	
3	Քիրմասթը	180	880	217	867	
4	Սուլթան Չայիր Մադեն	-	-	90	450	-
5	Սուսըղըրլըգ (Սուսըրլու)	-	-	20	100	-
6	Արմուդ Օվա	-	-	30	150	-
7	Բալիա Մատեն	75	300	55	1250	298
8	Բյուրհանիե (Բաբագյուղ)	52	262	15	75	43
9	Բանդրմա	753	3350	660	2940	5283[12]
10	Էտինճիք	245	991	205	916	
11	Հայ գյուղ	237	1097	252	1091	
12	Կյոնեն	21	110	-	-	53
13	Էդրեմիտ	-	-	6	25	41
14	Սանդրջի	-	-	-	-	20
	Ընդամենը	2377	10 586	2350	12 044	8704

[10] Կաթոլիկ եւ բողոքական հայերը ներառյալ։ Բանդրմա-Բալըքեսիրի միացյալ թեմի՝ «1913 թ. վիճակացոյց»-ի թերթը պահվում է Մատենադարանի Արշակ Ալպոյաճյանի ֆոնդում եւ մեզ է տրամադրվել Միհրան Մինասյանի կողմից (տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8 վավ. 21/1, տես նաեւ Ա. Աստոյան, նշվ. աշխ., էջ 162)։

[11] Հաշվարկը մեր կողմից (կաթոլիկ եւ բողոքական հայերը ներառյալ) ըստ K. Karpat, նշվ. աշխ., էջ 186։

[12] Էրդեկը ներառյալ։

3. Վիճակացոյց Իզմիրի թեմի[13]

Թիւ	Վիճակին են-թակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղե-ռի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	էգ	Գումար	Արու	էգ	Գումար	Արու	էգ	Գու-մար	Առաջ	Յետոյ	Հաստա-տուն	Աւե-րեալ
1	Իզմիր[1]	5288	4917	10 205	Հազիւ կէսը			-	-	-	-	-	8	-
2	Պայրնտրը	116	105	221				-	-	-	1	1	1	-
3	Թիլէ	26	12	38				-	-	-	-	-	-	-
4	Թօրպալը	24	6	30				-	-	-	-	-	-	-
5	Գասապա	194	156	350				-	-	-	1	1	1	-
6	Գրնրք[2]	234	255	489				-	-	-	1	1	1	-
7	Պէրկամա[2]	193	196	389				-	-	-	1	1	1	-
8	Նազիլլի	206	229	435				-	-	-	1	1	1	-
9	Մաղնիսա	949	879	1828				-	-	-	2	2	2	-
10	Էօտէմիշ	647	689	1336				-	-	-	1	1	1	-
11	Գուշատա[3]	36	40	76				-	-	-	1	1	1	1
12	Մէնէմէն	53	30	83				-	-	-	1	1	1	1
13	Քրքաղաճ	440	410	850				-	-	-	1	1	1	-
14	Աքսար[2]	200	220	420				-	-	-	1	1	1	-
15	Տենիզլի[3]	700	650	1350				-	-	-	1	1	1	-
16	Այտրն[2]	260	250	510				-	-	-	1	1	1	-
17	Սէօքէ	150	130	280				-	-	-	1	1	1	-
18	Տիքիլի[3]	13	18	31				-	-	-	-	-	-	-
19	Սալէհլի	20	25	45				12	15	27	-	-	-	-
20	Տէրմէնճիկ[2]	6	11	17				-	-	-	-	-	-	-
21	Գարաբունար	6	11	17				-	-	-	-	-	-	-
22	Շրջակայ գիւղեր	50	60	110				-	-	-	-	-	-	-

[1] Նոր մարդահամարը պատրաստուելու վրայ է եւ համեմատ աւելի ճշգրիտ թիւը պիտի կրնայ ձեռք բերուիլ ի մօտոյ։ Թեմերունը առ այժմ կարելի չէ, կանոնաւոր յարաբերութիւնք խզուած են։

[2] Հէլլեն բանակին գրաւումեն վէրջ այրուած։

[3] Տեղահան եղած են 1915 օգոստ. եւ 1916 փետր-ին։

[13] Իզմիրի թեմի՝ «1919 թ. վիճակացոյց»-ի թերթերը ներկայումս պահվում են Մատենադարանի Արշակ Ալպոյաճյանի ֆոնդում։ Դրանց լուսապատճենները մեզ են տրամադրվել Միհրան Մինասյանի կողմից։

	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 Իսլամացածներ			
		Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	1914	1919	Բնակելի	Կիսաւեր	Քնդրած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Իզմիր	-	-	3	-	3	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	Պայընտըր	-	-	1	-			-	-	-	-	-	-	-	-	-
3	Թիլէ	-	-	1	-			-	-	-	-	-	-	-	-	-
4	Թօրպալը	-	-	1	-			-	-	-	-	-	-	-	-	-
5	Գասապա	-	-	1	-			-	-	-	-	-	-	-	-	-
6	Գընըք	-	-	1	-			-	-	-	-	-	-	-	-	-
7	Պէրկամա	-	-	1	-	1		-	-	-	-	-	-	-	-	-
8	Նազիլլի	-	-	1	-	1		-	-	-	-	-	-	-	-	-
9	Մաղնիսա	-	-	2	1	2		-	-	-	-	-	-	-	-	-
10	Էօտէմիշ	-	-	1	-	1		-	-	-	-	-	-	-	-	-
11	Գուշատա	-	-	1	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
12	Մէնէմէն	-	-	1	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
13	Քրքաղաճ	-	-	-	-	1		-	-	-	-	-	-	-	-	-
14	Աքսար	-	-	1	-	1		-	-	-	-	-	-	-	-	-
15	Տենիզլի	-	-	1	-	1		-	-	-	-	-	-	-	-	-
16	Այտըն	-	-	1	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
17	Սէօքէ	-	-	1	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
18	Տիքիլի	-	-	-	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
19	Սալէհլի	-	-	-	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
20	Տէրմէնճիկ	-	-	-	-	-		-	-	-	-	-	-	-	-	
21	Գարաբունար	-	-	-	-	-		-	-	-	-	-	-	-	-	
22	Շրջակայ գիւղեր	-	-	-	-	-		-	-	-	-	-	-	-	-	

Այսպիսով, համաձայն «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալների՝ Իզմիրի թեմում նախքան տեղահանությունը բնակվում էր 19 110 շունչ հայ։ «Վիճակացոյց»-ով պահանջվող այլ տվյալներ հայ բնակչության մասին (տեղահանվածներ, կորուստ, իսլամացվածներ, տների թիվ եւ այլն) չեն տրվում. միայն նշվում է, որ դրանք կհավաքվեն նոր մարդահամարի ժամանակ, որի իրականացման աշխատանքներն ընթացքի մեջ են։

«1919 թ. վիճակացոյց»-ի՝ նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալի՝ 1914 թ. օսմանյան վիճակագրության կողմից հաղորդվող տվյալի հետ համադրումը ցույց է տալիս, որ դրանք գրեթե չեն տարբերվում իրարից (ըստ օսմանյան տվյալների՝ Իզմիրի (Այդինի) նահանգում 1914 թ. ապրում էր 20 766 շունչ հայ (կաթոլիկ եւ բողոքական հայերը ներառյալ)[14], ինչը վկայում է այն մասին, որ «վիճակացոյց»-ի տվյալներն ըստ էության քաղված են օսմանյան ցուցակներից։

Իզմիրի թեմի համար Հայոց պատրիարքարանի՝ «1913 թ. վիճակացոյց»-ի տվյալները ներկա դրությամբ բացակայում են, ինչը հնարավորություն չի ընձեռում դրանք համեմատել «1919 թ. վիճակացոյց»-ի եւ օսմանյան վիճակագրական տվյալների հետ[15]։

Ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գեւորգյանի եւ Փ. Փաբուջյանի հաշվարկով, որի հիմքում ընկած է 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ լրացված հայկական տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններով, Մեծ եղեռնի նախօրյակին Զմյուռնիայի նահանգում կար 21 145 շունչ հայ բնակչություն[16]։

Ըստ այլ տվյալների՝ Իզմիրի նահանգի հայ բնակչության՝ շուրջ 20 000–21 000 շունչ թիվը իրականից ցածր է։ Այսպես, ըստ Մ. Օրմանյանի՝ թեմի տարածքում XX դարի սկզբներին ապրում էր 27 200 շունչ հայ (այդ թվում՝ 2000 կաթոլիկ եւ 200 բողոքական)[17]։

---

[14] *Տե՛ս* K. Karpat, *նշվ. աշխ., էջ 174։*

[15] *Նույնպես եւ Թեոդիկը, որը օգտագործել է Հայոց պատրիարքարանի 1913 թ. վիճակագրության տվյալները, իր աշխատանքի՝ Զմյուռնիային նվիրված բաժնում որեւէ տվյալ չի հաղորդում նահանգի հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ՝ տալով միայն Զմյուռնիայի թեմի բնակավայրերի անունները եւ դրանց հոգեւորականների ցուցակները (տե՛ս* Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան..., էջ 433–442)։*

[16] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 57, 161։*

[17] *Տե՛ս* Մ. Օրմանեան, *նշվ. աշխ., էջ 260։ Ըստ սփյուռքահայ ուսումնասիրող Ս. Ծոցիկյանի 1947 թ. հրատարակված «Արեւմտահայ աշխարհ» ուսումնասիրության՝ նախքան Մեծ եղեռնը Զմյուռնիայի նահանգի հայ բնակչության թիվը 25 000 շունչ էր (տե՛ս* Ս. Մ. Ծոցիկեան, *Արեւմտահայ աշխարհ,* New York, *տպ. Ա.Յ. Լէյլէկեան, 1947, էջ 208)։ 1912 թ. Հայոց պատրիարքարանի վիճակագրության տվյալի համաձայն՝ Իզմիրի (Այդընի) նահանգն ուներ 11 000 հայ բնակչություն՝ թիվ, որն ըստ երեւույթին արտացոլում է միայն քաղաքի հայ բնակչությունը (տե՛ս* Թէոդիկ, *Ամենուն տարեցոյցը..., էջ 262)։*

4. Վիճակացոյց Պրուսայի թեմի[18]

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հաստատուն	Աւերեալ
1	Պրուսա	3200	3900	7100	899	1287	2186	2301	1613	4914	8	1	1	Վնասուած
2	Սէօլէօզ	4000	3900	7900	900	800	1700	3100	3100	6200	6	1	-	1
3	Կիւրլէ	1600	1200	2800	180	130	310	1420	1070	2490	2	1	1	-
4	Վէրին Պէնլի	2100	1500	3600	108	52	160	2280	1648	3928	3	-	-	1
5	Փոքր Պէնլի	288	200	488							1	-	-	1
6	Կէմլէյիկ	99	40	139	24	23	47	75	17	92	2	1	1	-
7	Եէնիճէ	3355	3146	6501	744	536	1280	2596	2625	5221	4	1	1(***)	1
8	Զէրրահ	1100	1000	2100	460	400	860	640	600	1240	1	1(**)	-	1 (կիս.)
9	Եէնիշէհիր	157	200	357	60	57	117	100	150	250	1	-	-	1
10	Մարմարճրգ	600	750	1350	75	35	110	525	715	1240	1	-	-	1
11	Նորգիւղնիկիոյ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12	Քարսագ	595	605	1200	65	95	160	530	510	1040	2	1	1	-
13	Մեծ Նոր գիւղ	-	-	9700 (*)	-	-	2500 (*)	-	-	-	-	-	-	-
14	Զէնկիլէր	-	-	5000 (*)	-	-	1000 (*)	-	-	-	-	-	-	-
15	Միջագիւղ	-	-	3400 (*)	-	-	500 (*)	-	-	-	-	-	-	-
16	Քէրէմէթ	-	-	1250 (*)	-	-	110 (*)	-	-	-	-	-	-	-

(*) «Ճակատամարտ», թ. 387[19]
(**) Նոր ձեռնագրուած։
(***) Ժողովարան բողոքականաց։

[18] Տես ԵՀՊ Զավեն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ 2994-2995։

[19] Ըստ ծանոթագրության՝ աստղանիշով նշված այս եւ հաջորդ բնակավայրերի հայ բնակչության վերաբերյալ տվյալները վերցված են Կ. Պոլսում հրատարակվող «Ճակատամարտ» օրաթերթից (տես «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920 թ. փետրվարի 25, թիվ 387)։

	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 իսլամացածներ			
		Հասատ-ում	Աւերեալ	Հասատ-ում	Աւերեալ	Հասատ-ում	Աւերեալ	1914	1919	Բնակելի	Կիսաւեր	Քնդրած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Պրուսա	-	-	1	Վնա-սուած	2	-	750	260	400	350	650	-	500	500	-
2	Սէօլէօզ	-	-	-	1	-	1	600	200	420	195	745	-	150	135	15
3	Կիւրլէ	-	-	-	1	-	1	500	15	135	40	225	-	-	-	-
4	Վէրին Պէնլի	-	-	-	1	-	1	300	-	-	-	650	-	3	3	-
5	Փոքր Պէնլի	-	-	-	1	-	1	80	-	80	5	25	-	1	1	-
6	Կէմլէյիկ	-	-	1	-	1	-	50	25	-	50	20	5	-	4	1
7	Եէնիճէ	-	-	1(****)	1	-	1	640	140	188	608	352	-	500	200	300
8	Զէրրահ	-	1 (կի-սաքն.)	-	1	-	1	200	50	180	167	83	-	25	2	23
9	Եէնիշէհիր	-	-	-	1	-	1	65	-	5	67	-	-	-	-	-
10	Մարմարճըգ	-	-	-	1	-	-	110	-	80	200	100	-	-	-	-
11	Նորգիւղ Նիկիոյ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12	Քարսագ	-	-	1	-	1	-	200	5	59	10	101	-	-	-	-
13	Մեծ Նոր գիւղ	-	-	-	-	-	-	1000 (1)	180 (1)	500	-	1500 (*)	-	-	-	-
14	Զէնկիլէր	-	-	-	-	-	-	900 (1)	120 (1)	350	-	650 (*)	-	-	-	-
15	Միջագիւղ	-	-	-	-	-	-	600 (1)	-	25	-	725 (*)	-	-	-	-
16	Քէրէմէթ	-	-	-	-	-	-	150 (1)	-	100	-	150 (*)	-	-	-	-

(1) «Ճակատամարտ», թ. 400[20]։
(*) «Ճակատամարտ», թ. 387։
(****) բողոքականաց։

[20] Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920 թ. մարտի 11, թիվ 400։

Այսպիսով, համաձայն «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալների՝ 1914 թ. դրությամբ Բուրսայի թեմի (Բուրսայի գավառ) 16 հայաբնակ բնակավայրերում կար 10 190 տուն, 52 885 շունչ հայ բնակչություն, տեղահանությունից հետո՝ 11 040 շունչ հայ։ Հայ բնակչության կորուստը կազմում է 41 845 շունչ հայ կամ թեմի հայ բնակչության մոտ 79 %-ը։

Մենք հնարավորություն ունենք համեմատելու այս տվյալները Կ. Պոլսի պատրիարքարանի կարգադրությամբ Բուրսայի առաջնորդարանի կողմից 1913 թ. պատրաստած վիճակագրական աղյուսակի տվյալների հետ։ Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 2-ում «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալները մոտ 15 %-ով ավելի բարձր թիվ են հաղորդում թեմի բնակչության համար։ Մենք հակված ենք ընդունելու «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալները որպես ավելի մոտիկ իրականությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «1913 թ. վիճակացոյց»-ը ըստ երեւույթին կազմված է օսմանյան վիճակագրության հիման վրա, որը տարբեր պատճառներով թերհաշվառում էր հայերին։

Նշենք նաեւ, որ սփյուռքահայ ուսումնասիրողներ Ռ. Գեւորգյանի եւ Փ. Փաբուջյանի հաշվարկով, որի հիմքում ընկած են «1913 թ. վիճակացոյց»-ի՝ Փարիզի Նուբարյան գրադարանում պահվող հարցաթերթերի, ինչպես նաեւ հայալեզու տարբեր հուշամատյան-աղբյուրների տվյալները, Բուրսայի գավառի՝ Բուրսայի թեմն ընդգրկող շրջանների (Բուրսա, Բազարքյոյ, Կեմլեյիկ) հայ բնակչության թվաքանակը Մեծ եղեռնի նախօրյակին 44 309 էր։[21] *Համաձայն 1914 թ. վերաբերող օսմանյան վիճակագրության նշված տարածքում կար 35 533 շունչ հայ (կաթոլիկ ու բողոքական հայերը ներառյալ)։*[22]

---

[21] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 57։*

[22] *Հաշվարկը մեր կողմից ըստ Ք. Կարպատի տվյալների (տե՛ս* K. Karpat, *նշվ. աշխ., էջ 176)։*

Աղյուսակ 3. Մեծ եղեռնի նախօրյակին Բուրսայի թեմի հայ բնակչության թվաքանակն ըստ 1913 եւ 1919 թ. «վիճակացոյց»-երի տվյալների

№	Բնակավայր	1913 թ. վիճակացոյց[23]		1919 թ. վիճակացոյց	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Բուրսա	1373	6628	1400	7100
2	Սյոլոզ	1000	6114	1360	7900
3	Կյուրլե	405	2553	400	2800
4	Քարսակ	190	1050	170	1200
5	Վերին Պենլի (Կեմլեիկի)	600	3000	650	3600
6	Փոքր Պենլի (Կեմլեիկի)	88	375	110	488
7	Կեմլեիկ	64	248	70	139
8	Ենիճե (Ինեգյոլ)	1050	4970	1148	6501
9	Ճերրահ (Ինեգյոլ)	424	2154	430	2100
10	Ենիշեհիր	76	306	72	357
11	Մարմարճըք (Ենիշեհիրի)	290	1380	380	1350
12	Նորգյուղ Նիկիո	45	140	-	-
13	Մեծ Նոր գյուղ	1200	7937	2000	9700
14	Ջենկիլեր	1200	5000[24]	1000	5000
15	Միջագյուղ	675	3057	750	3400
16	Քերեմեթ	380	1215	250	1250
	Ընդամենը	9060	46 147	10 190	52 885

[23] Կաթոլիկ եւ բողոքական հայերը ներառյալ։ Բուրսայի թեմի՝ «1913 թ. վիճակացոյց»-ի թերթը (1-ից 12-րդ բնակավայրերի համար) պահվում է Մատենադարանի Արշակ Ալպոյաճյանի ֆոնդում եւ մեզ է տրամադրվել Միհրան Մինասյանի կողմից։ Մեծ Նոր գյուղի, Միջագյուղի, Քերեմեթի տվյալները վերցրել ենք Սոնա Տերեպեյանի «Յուշամատեան Ջէնկիլէրի հայոց 1528–1923» գրքից (տե՛ս Սօնա Տէրէպէյեան, Յուշամատեան Ջէնկիլէրի հայոց 1528–1923, Փարիզ, տպ. Պ. Էլեկեան, 1973, էջ 138–139)։ Ջենկիլերի հայ տների թիվը տալիս ենք ըստ Թեոդիկի (Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան..., էջ 383), բնակիչների թիվն ըստ Ռ. Գեւորգյանի եւ Փ. Փաբուջյանի (տե՛ս Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, նշվ. աշխ., էջ 147)։

[24] Համաձայն Սոնա Տերեպեյանի՝ Ջենկիլերի հայ բնակչության թիվը Մեծ եղեռնի նախօրյակին 1250 տուն, 6–7000 շունչ էր (տե՛ս Սօնա Տէրէպէյեան, նշվ. աշխ., էջ 94)։ Մեկ այլ տեղ հեղինակը նշում է, որ տեղահանության ընթացքում զոհվել էր 5000 ջենկիլերցի հայեր, տարագրությունից վերադարձել 944-ը (նույն տեղում, էջ 134–135)։

5. Վիճակագրոյց Գասթէմունի թեմի[25]

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հաստատուն	Աւերեալ
1	Գասթէմունի	329	324	653	201	304	505	128	20	148	1	-	-	1
2	Գատրն- Սարայ	84	70	154	51	64	115	33	6	39	-	-	-	-
3	Մուրուրիկ	15	18	33	6	17	23	9	1	10	-	-	-	-
4	Վարի Գույուճուգ	157	153	310	103	134	237	54	19	73	-	-	-	-
5	Վերի Գույուճուգ	10	9	19	4	7	11	6	2	8	-	-	-	-
6	Տատայ	101	107	208	60	89	149	41	18	59	-	-	-	-
7	Կէրիշ գիւղ	55	47	102	28	45	73	27	2	29	-	-	-	-
8	Գարա պըյըգ	127	111	238	61	96	157	66	15	81	-	-	-	-
9	Տէօվրէքեանի	96	87	183	50	81	131	46	6	52	-	-	-	-
10	Թաշ քէօփրիւ	48	57	105	37	55	92	11	2	13	1	-	-	1
11	Վարի էսքիաթճա	98	108	206	60	101	161	38	7	45	-	-	-	1
12	Վերի էսքիաթճա	119	109	228	67	92	159	52	17	69	-	-	-	-
13	Թիւթէնլի	66	63	129	34	49	83	32	14	46	-	-	-	-
14	Զէօրիւլ	16	17	33	7	12	19	9	5	14	-	-	-	-
15	Պէլէն Զայ	54	41	95	29	37	66	25	4	29	-	-	-	-
16	Կիւճիւք Սու	39	40	79	19	39	58	20	1	21	-	-	-	-
17	Թրէկիւլ	50	41	91	34	40	74	16	1	17	-	-	-	-
18	Մալագ գիւղ	46	31	77	23	29	52	23	2	25	-	-	-	-
19	Ղարաճճօ	49	48	97	26	39	65	23	9	32	-	-	-	-
20	Զայըրճըգ	2	2	4	-	1	1	2	1	3	-	-	-	-

[25] Տե՛ս ԵՀՊ Զաւէն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ խ868-խ871։

21	Եիմաճըգ	48	51	99	3	5	8	45	46	91	-	-	-	-
22	Ինէպօլի	94	100	194	62	94	156	32	6	38	-	1	1	-
23	Քեանկրը	157	159	316	118	148	266	39	11	50	1	-	1	-
24	Սինօպ-Գույլուճ	134	126	260	81	115	196	53	11	64	1	-	-	1
25	Սինօպ-Ալիպէյլի	225	215	440	148	174	322	77	41	118	-	-	-	1
26	Պօյապատ	45	42	87	18	34	52	27	8	35	1	-	-	1
27	Պօյապատի գիւղեր	1212	1206	2418	705	1120	1825	507	86	593	-	-	-	-
28	Պարթըն	210	194	404	180	190	370	30	4	34	1	-	1	-
29	Ջայ-ճիմաա	18	15	33	12	15	27	6	-	6	-	-	-	-
30	Տէօվրէկ	248	243	491	211	230	441	37	13	50	1	-	1	1
31	Պօլու	350	358	708	253	345	598	97	13	110	2	1	1	1
32	Տիւզճէ	456	451	907	420	440	860	36	11	47	1	1	-	1
33	Ջօնկուլտակ	256	250	506	280	276	556	-	-	-	1	1	1	-
34	Թոսքա	25	28	53	3	2	5	22	26	48	-	-	-	-
		5039	4921	9960	3394	4519	7913	1669	428	2097	-	-		

	Վիճակին ենթակայ բաղամ կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 Իսլամացածներ			
		Հաստատում	Աւերեալ	Հաստատում	Աւերեալ	Հաստատում	Աւերեալ	1914	1919	Բնակեալ	Կիսաւեր	Քնդրած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Գասթէմունի	-	-	-	1	-	1	-	120	-	-	-	-	3	3	-
2	Գատըն- Սարայ	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	Մուրուրիկ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4	Վարի Գույուճուգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5	Վերի Գույուճուգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6	Տատայ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

7	Կէրիշ գիւղ	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8	Գարա պըյրգ	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
9	Տէօվրէքեանի	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10	Թաշ քէօփրիւ	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	1	-	1
11	Վարի էսքիաթճա	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12	Վերի էսքիաթճա	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	Թիւթէնլի	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14	Զէօրիւլ	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15	Պէլէն Զայ	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
16	Կիւճիւք Սու	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
17	Թրէկիւլ	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
18	Մալաղ գիւղ	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
19	Ղարաճճօ	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
20	Զայըրճըգ	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
21	Եիւմաճըգ	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
22	Ինէպօլի	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	3	3	-
23	Քեանկրը	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	4	4	-
24	Սինօպ-Գուլլուճ	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	3	3	-
25	Սինօպ-Ալիպէյլի	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
26	Պօյապատ	-	-		1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
27	Պօյապատի գիւղեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
28	Պարթըն	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	400	-	400	-
29	Զայ-Ճիւմաա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	30	-	30	-
30	Տէօվրէկ	-	-	-	1	1	-	-	-	-	-	-	480	-	480	-
31	Պօլու	-	-	-	1	-	1	-	-	-	-	-	-	-	-	-
32	Տիւզճէ	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
33	Զօնկուլտակ	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
34	Թոսքան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Այսպիսով, համաձայն «1919 թ. վիճակագրության»-ի տվյալների՝ 1914 թ. Կաստամոնիի եւ Բոլուսի նահանգներում (Կաստամոնիի թեմ) բնակվում էր 9960 հայ, 1919 թ. դրությամբ՝ 7913 հայ։ Կորուստը կազմել էր 2097 հայ, կամ նահանգի հայ բնակչության մոտ 21%-ը[26]։

Նահանգի նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այլ աղբյուրների կողմից հաղորդվող տվյալներն են.

1. Մ. Օրմանյան (1902 թ.)՝ 14 000 շունչ հայ[27].

2. Հայոց պատրիարքարանի՝ 1912 թ. վիճակագրություն՝ 10 000 շունչ հայ[28].

3. Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ թեմական իշխանությունների կողմից 1913 թ. կազմված վիճակագրություն՝ 1734 տուն, 10602 շունչ հայ[29].

4. Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ թեմական իշխանությունների կողմից 1914 թ. կազմված վիճակագրություն՝ 10 058 շունչ հայ[30].

5. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 11 931 շունչ հայ[31].

6. Ռ. Գեւորգյան, Փ. Փաբուջյան (ըստ տարբեր աղբյուրների տվյալների)՝ 13 461 շունչ հայ[32]։

---

[26] *Նահանգից հայ զոհերի մոտավորապես նույն (կլորացված) թիվը՝ 2000 շունչ, նշվում է 1921 թ. ապրիլի 1-ով թվագրված Հայոց պատրիարքարանի վիճակագրությունում (տե՛ս* Թէոդիկ, *Ամենուն տարեցոյցը..., էջ 262)։*

[27] Մ. Օրմանեան, *նշվ. աշխ., էջ 260։*

[28] Թէոդիկ, *Ամենուն տարեցոյցը..., էջ 262։*

[29] *Տվյալն ըստ «Գասթէմունի Հայոց ծագումը» տեղեկագրի, որը կցվել է «1919 թ. վիճակացոյց»-ի թերթերին (տե՛ս ԵՀՊ Զավեն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ խ878)։*

[30] *Նույն տեղում։*

[31] *Տե՛ս* K. Karpat, *նշվ. աշխ., էջ 180, 184։*

[32] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 57, 175–178։*

6. Վիճակագրոյց Մարզուանի թեմի[33]

Թիւ	Վիճակին են-թակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հասարակաց	Աւերեալ
1	*Մարզուան*	*8400*	*8600*	*17 000*	*600*	*1100*	*1700*	*7800*	*7500*	*15 300*	*10*	*Ամբողջ ջարդուած*	*կիսաւեր 2*	*այրած 1*
2	*Կ. Հաճի գիւղ*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	*Վ. Քէօփրիւ*	*1400*	*1600*	*3000*	*30*	*50*	*80*	*1370*	*1550*	*2920*	*1*	-	-	*1*
4	*Հավզա*	*200*	*300*	*500*	*8*	*12*	*20*	*192*	*288*	*480*	*1*	-	-	*1*
5	*Լատիկ*	*500*	*500*	*1000*	*6*	*14*	*20*	*494*	*486*	*980*	*1*	-	-	*1*
6	*Մէճիտ էօզիւ*	*1200*	*1300*	*2500*	*20*	*30*	*50*	*1180*	*1270*	*2450*	*1*	-	-	*1*
7	*Վանքի գիւղ*	*240*	*260*	*500*	-	-	-	*240*	*260*	*500*	*1*	-	-	-
8	*Ենիճէ*	*250*	*250*	*500*	-	-	-	*250*	*250*	*500*	*1*	-	-	*1*

[33] *Տե՛ս ԵՀՊ Զաւեն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ 544-545։*

	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 Իսլամացածներ			
		Հաստատում	Աւերեալ	Հաստատում	Աւերեալ	Հաստատում	Աւերեալ	1914	1919	Բնակեալի	Կիսաւեր	Քնդած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Մարզուան	-	1	Կիսաւեր 4	1	Կիսաւեր 2	-	1000	200	462	170	1728	-	1700	1700	-
2	Կ. Հաճի գիւղ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	Վ. Քէօփրիւ	-	-	-	1	-	1	-	-	100	100	300	-	80	80	-
4	Հավզա	-	-	-	1	-	1	-	-	4	-	21	-	20	20	-
5	Լատիկ	-	-	-	1	-	1	-	-	10	10	50	-	20	20	-
6	Մէճիտ էօզիւ	-	-	-	1	-	1	-	-	100	50	100	-	50	50	-
7	Վանքի գիւղ	-	-	-	-	-	-	-	-	4	-	24	-	-	-	-
8	Ենիճէ	-	-	-	1	-	1	-	-	20	-	30	-	-	-	-

Այսպիսով, եթե ամփոփենք Մարզվանի թեմից ստացված «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալները, ապա 1914 թ. դրությամբ Սեբաստիայի նահանգի Ամասիայի գավառի Մարզվանի, Հավզայի, Քյոփրուի, Լադիկի գավառակների հայաբնակ բնակավայրերում կար 3283 տուն, 25 000 հայ բնակչություն[34], որից 1919 թ. մնացել էր 1870-ը։ Մարդկային կորուստները կազմել են 23 130 շունչ կամ հայ բնակչության մոտ 925 %-ը[35]։

Ստորեւ համեմատական աղյուսակի միջոցով համադրենք նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այս տվյալները այլ առանցքային սկզբնաղբյուրների (1913 թ. «վիճակացոյց», 1914 թ. օսմանյան վիճակագրություն, Կարապետ Գաբիկյանի «Եղեռնապատում»[36], «Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան»[37]) կողմից հաղորդվող տվյալների հետ։

Ինչպես կարող ենք դատել աղյուսակից 4-ից՝ Ամասիայի գավառի Մարզվանի, Հավզայի, Քյոփրուի, Լադիկի գավառակների հայ բնակչություն նախաեղեռնյան թվաքանակի վերաբերյալ «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալները հիմնականում համահունչ են Կարապետ Գաբիկյանի

---

[34] *Վիճակացոյցից դուրս է մնացել Հաջիքյոյ գավառակը։*

[35] *Ամասիայի գավառից վերապրածների մոտավորապես նույն (կլորացված) թիվը՝ 2000 շունչ, նշվում է 1921 թ. ապրիլի 1-ով թվագրված Հայոց պատրիարքարանի վիճակագրությունում (տե՛ս* Թէոդիկ, *Ամենուն տարեցոյցը..., էջ 261)։*

[36] *Կարապետ Գաբիկյանը (1861–1925) սեբաստացի մտավորական գործիչներից էր՝ «Սեբաստիոյ վաստակավոր բանասէր ուսուցիչ» (տե՛ս* Վ. Համբարձումեան, *Գիւղաշխարհ, Փարիզ, Կոմտունի, 1927, էջ 13)։ Հրաշքով ազատվելով Մեծ եղեռնից՝ նա պատրաստել է «Եղեռնապատում» գիրքը (հրատարակվել է 1924 թ. Բոստոնում), որտեղ ներկայացրել է Սեբաստիայի նահանգի հայերի տեղահանման եւ կոտորածի պատմությունը՝ գրքի վերջում զետեղելով նախքան բռնագաղթը վիլայեթի հայ բնակչության վիճակագրությունը։ Կ. Գաբիկյանը նշում է որ իր կազմած վիճակագրությունը հիմնված է սեփական պրպտումների վրա, երբ նա, մտադիր լինելով գրել Սեբաստիայի վիլայեթի վերաբերյալ պատմական-ազգագրական բնույթի ուսումնասիրություն, հետամուտ եղավ* «շատ տեղեր անձամբ այցելած-շրջած, ի մէջ այլ տեղեկութիւններու, հայ ազգաբնակչութան ճշգրիտ թիւը ունենալու» *(տե՛ս* Կ. Գաբիկեան, *Եղեռնապատում փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924, էջ 596)։*

[37] *«Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան» վերնագիրը կրող փաստաթուղթը պատրաստվել է Հալեպում եւ վավերացված 1919 թ. փետրվարի 27-ին՝ «ի դիմաց Սեբ[աստիոյ] Ն[ա]հ[ա]նգ[ի] Գաղթ[ականաց] Յանձնախմբի» վարչության անդամների։ Դրանում ներկայացվում է ըստ առանձին մանր վարչական միավորների՝ Սեբաստիայի նահանգի հայ բնակչության նախաեղեռնյան թվաքանակը, բռնագաղթի պատմությունը, կրած մարդկային եւ նյութական կորուստները, տեղահանության եւ ջարդի գլխավոր կազմակերպիչների ու ջարդարարների անունները եւ այլն։ Փաստաթուղթը ներկայումս պահվում է Փարիզի Նուբարյան գրադարանում, հրատարակվել է սփյուռքահայ ուսումնասիրող Լեւոն Վարդանի կողմից 1995-ին «Հայկազեան հայագիտական հանդեսում» (տեղեկագրի տեքստն ամբողջությամբ տե՛ս «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր ԺԵ, Պէյրութ, 1995, էջ 500–518)։*

եւ «Ամբաստանագիր-տեղեկագրի» կողմից հաղորդվող տվյալներին՝ մոտ երկու անգամ ավել լինելով 1914 թ. օսմանյան եւ օսմանյանից սերվող Հայոց պատրիարքարանի՝ 1913 թ. վիճակագրության մեջ զետեղված թվերից։ Հայկական այլ աղբյուրները եւս նշված շրջանների հայ բնակչության թվաքանակի համար հաղորդում են օսմանյան վիճակագրությունից ավելի բարձր տվյալներ[38]։

Աղյուսակ 4. Մեծ եղեռնի նախօրյակին
Ամասիայի գավառի Մարզվանի, Հավզայի,
Քյոփրուի, Լադիկի գավառակների հայ բնակչությունը
ըստ տարբեր աղբյուրների

	Բնակավայր	1919 թ. վիճակացոյց		1913 թ. վիճակացոյց[39]		1914 թ. օսմանյան վիճակագրություն[40]	Կ. Գաբիկյան[41]		«Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան»[42]	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Մարզվան	2360	17000	2280	10585	9726[43]	2500	17500	2350	16450
2	Վեզիրքյոփրու	500	3000	322	1612	1359	600	4800	600	4200
3	Հավզա	25	500	62	333	335	70	320	-	-
4	Լադիկ	70	1000	60	350	343	100	800	50	350
5	Մեջիդօզու	250	2500	120	700	3722[44]	200	1600	200	1400
6	Ենիջե	50	500	25	140	-	150	1200	150	1050
	Հնդամենը	3255	24500	2869	13720	15485	3620	26220	3350	23450

Ելնելով վերոնշյալից Մարզվանի թեմի նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակի հարցում մենք հակված ենք ընդունել «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալները որպես հիմնականում հավաստի՝ իրականությանը մոտ։

---

[38] *Այսպես, Մարզվան քաղաքի համար 14 000 հայ բնակչություն է նշում Ս. Ծոցիկյանը (տե՛ս* Ս. Ծոցիկյան, *նշվ. աշխ., էջ 415)։*

[39] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 261–263։ 1913 թ. «վիճակացոյց»-ի տվյալները տե՛ս նաեւ Թեոդիկի մոտ (*Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան..., էջ 150–155)։*

[40] *Տե՛ս* K. Karpat, *նշվ. աշխ., էջ 178։*

[41] *Տե՛ս* Կ. Գաբիկեան, *նշվ. աշխ., էջ 602։*

[42] *Տե՛ս «Հայկազեան Հայագիտական Հանդէս»..., էջ 506, 509։*

[43] *Ենիճեն ներառյալ։*

[44] *Հաջիքյոյը ներառյալ։*

7. Վիճակացոյց Ակնայ թեմի Վիճակագրություն 1[45]

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հաստատուն	Աւերեալ
1	Ակն	1000	1720	2720	83	212	295	917	1518	2435	2	-	1	1
2	Ապչուղա	360	600	960	16	25	41	344	575	919	1	-	1	-
3	Կամարակապ	120	300	420	15	39	54	105	261	366	1	-	1	1
4	Կարուշլա	30	56	86	9	13	22	21	43	64	1	-	1	-
5	Լիճք	112	200	312	15	23	38	97	177	274	1	-	-	1
6	Նարվեր	50	77	127	7	11	18	43	66	109	1	-	-	1
7	Բինկեան	360	350	710	5	5	10	355	345	700	1	-	-	3
8	Մուշաղկա	5	9	14	-	-	-	5	9	14	-	-	-	-

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 Իսլամացածներ			
		Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	1914	1919	Բնակելի	Կիսաւեր	Քանդած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Ակն	-	2	1	1	-	1	365	50	300	300	700	-	250	240	10
2	Ապչուղա	-	-	1	1	1	-	158	-	70	100	150	-	41	41	-

[45] Տես ԵՀՊ Զավեն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ 891-892։ Վիճակացոյցի տիտղոսաթերթի վրա պահպանվել է հետեւյալ գրությունը. «Պատրաստեց Թ. Ազատեան»։ Վիճակացոյցը թվագրված է 1920 թ. մարտի 1-ով։

3	Կամարակապ	-	-	-	2	-	1	127	-	40	25	150	-	54	53	1
4	Կարուշլա	1	-	-	1	-	-	42	-	15	15	20	-	25	25	-
5	Լիճք	-	-	-	1	-	1	78	-	20	20	40	-	38	35	3
6	Նարվեր	-	-	-	1	-	-	22	-	8	10	20	-	18	18	-
7	Բինկեան	-	-	-	1	-	1	160	-	10	50	160	-	-	-	-
8	Մուշաղկա	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Վիճակագրություն 2[46]

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Արու	Էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հաստատուն	Աւերեալ
1	Ակն	850	1150	2000	83	212	295	767	938	1705	2	-	1	1
2	Ապ-Ջուղա	320	400	720	16	25	41	304	375	679	1	-	1	-
3	Կամարակապ	160	200	360	15	39	54	145	161	306	1	-	-	1
4	Կարուշլա	120	130	250	9	13	22	111	117	228	1	-	1	-
5	Արեգի	80	120	200	11	24	35	69	96	165	-	-	-	-
6	Անջրդի	400	400	800	27	85	112	373	315	688	1	-	-	1
7	Սաղմըկա	90	110	200	4	11	15	86	99	185	1	-	-	1
8	Մաշկերտ	140	160	300	5	13	18	135	147	282	1	-	-	1
9	Ծագ	190	210	400	32	74	106	158	136	294	1	-	-	1
10	Եհնեսիկ	25	35	60	8	11	19	17	24	41	-	-	-	1

[46] Տէս ԵՀՊ Զաւէն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ խ893-խ896։

11	Ջապլվար[47]	40	60	100	1	7	8	39	53	92	1	-	-	1
12	Հիւնի	20	30	50	3	1	4	17	29	46	-	-	-	-
13	Խոռոչ	60	60	120	7	19	26	53	41	94	1	-	-	1
14	Կռանի	35	45	80	8	10	18	27	35	62	-	-	-	1
15	Հասկենի	30	40	70	-	-	-	30	40	70	1	-	-	1
16	Աղն	220	230	450	4	38	42	196	212	408	1	-	-	1
17	Քուշնա	170	180	350	4	27	31	166	153	319	1	-	-	1
18	Վաղշէն	200	250	450	4	38	42	196	212	408	1	-	-	1
19	Վանք	120	130	250	5	13	18	115	117	232	1	-	-	1
20	Լիճք	230	270	500	15	23	38	215	247	462	1	-	-	1
21	Նարվեր	80	75	155	7	11	18	73[48]	64	137[49]	1	-	-	1
22	Բինկեան	380	420	800	-	5	5	380	415	795	1	-	-	1
23	Զիմառա[50]	95	105	200	3	8	11	92	97	189	1	-	-	1
24	Կասմա[51]	170	150	320	5	10	15	165	140	305	1(x)	-	-	1
25	Վանք	-	-	150	-	-	-	-	-	-	-	-	-	-
26	Զորակ (*)	-	-	100	-	-	-	-	-	-	-	-	-	-
27	Մուշաղկա (*)	-	-	200	-	-	-	-	-	-	-	-	-	-
28	Վեդ փարա (*)	-	-	250	-	-	-	-	-	-	-	-	-	-

[47] Գյուղն առավել հայտնի է իր Ծապլվար անունով՝ այնտեղ են տեղի ունենում Երվանդ Օտյանի «Առաքելութիւն մը ի Ծապլվար» վիպակի գործողությունները։

[48] Բնագրում՝ 71, ինչը սխալ է։

[49] Բնագրում՝ 135, ինչը սխալ է։

[50] Ըստ այլ տվյալների՝ Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տեւրիկի գավառակի կազմում։

[51] Ըստ այլ տվյալների՝ Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տեւրիկի գավառակի կազմում։

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 Իսլամացածներ			
		Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	Հաստատուն	Աւերեալ	1914	1919	Բնակեալ	Կիսաւեր	Քնդրած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	Ակն	2	3	1	1	-	1	400	50	300	100	100	-	250	240	10
2	Ապ-Ջուղա	-	մատուռ 4	1	1	1	-	140	-	50	20	50	-	41	41	-
3	Կամարակապ	-	2	-	1	-	1	100	-	15	10	60	-	54	53	1
4	Կարուշյա	-	1	-	1	-	1	60	-	20	10	20	-	25	25	-
5	Արեգի	-	-	-	-	-	-	40	-	10	10	20	-	20	20	-
6	Անջրդի	-	1	-	1	-	1	180	-	50	20	80	1	49	40	9
7	Սաղմրկա	-	-	-	1	-	-	35	-	2	1	57	-	15	12	3
8	Մաշկերտ	-	-	-	1	-	-	40	-	10	10	50	-	18	17	1
9	Ծաղ	-	-	-	1	-	-	100	-	40	20	40	-	106	102	4
10	Եհնեսիկ	-	-	-	1	-	-	10	-	2	2	16	-	19	18	1
11	Ջապլվար	-	-	-	-	-	-	25	-	-	5	25	-	8	4	4
12	Հիւնի	-	-	-	-	-	-	10	-	2	3	15	-	4	4	-
13	Խոռոչ	-	-	-	1	-	-	50	-	10	5	10	-	26	18	8
14	Կռանի	-	-	-	1	-	-	15	-	-	5	10	-	18	18	-
15	Հասկենի	-	-	-	1	-	-	10	-	-	-	20	-	-	-	-
16	Աղն	-	-	-	1	-	-	120	-	10	20	60	-	36	36	-
17	Քուշնա	-	1	-	1	-	-	80	-	35	5	40	-	31	31	-
18	Վաղշէն	-	-	-	1	-	-	45	-	35	10	55	-	42	40	2
19	Վանք	-	-	-	1	-	-	100	-	10	10	30	-	18	18	-
20	Լիճք	-	-	-	1	-	1	140	-	20	15	75	-	38	35	3
21	Նարվեր	-	-	-	1	-	-	50	-	5	5	40	-	18	18	-
22	Բինկեան	-	-	-	1	-	1	150	-	2	5	143	-	-	-	-
23	Ջիմառա[52]	-	-	-	1	-	-	50	-	2	10	28	-	11	10	1
24	Կասմա[53]	-	-	1	-	-	-	60	-	3	8	51	-	15	10	5
25	Վանք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
26	Զորակ (*)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
27	Մուշաղկա (*)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
28	Վեղ փարա (*)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

(*) Վերոյայտ խաչանշուած հայ գիւղերը յունադաւան լինելուն աքսորէ զերծ մնացին։
(x) Թունաւորուած (ինքնիրեն)

[52] Ըստ այլ տվյալների՝ Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տիվրիկի գավառակի կազմում (տե՛ս նաեւ ծանոթագրություն 117)։
[53] Ըստ այլ տվյալների՝ Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառի Տիվրիկի գավառակի կազմում (տե՛ս նաեւ ծանոթագրություն 117)։

Ինչպես կարող ենք տեսնել՝ մեզ են հասել «1919 թ. վիճակացոյց»-ի՝ Ակնի թեմի համար կազմված երկու ցուցակներ։ Դրանցից մեկը՝ Թորոս Ազատյանի հեղինակությամբ, ընդգրկում է միայն Ակնի եկեղեցական թեմի կազմի մեջ գտնվող բնակավայրերը, մյուսը՝ անստորագիր՝ գուցե, նույնպես Թ. Ազատյանի կողմից կազմված՝ արդեն այլ տվյալների հիման վրա, ներառում է Ակնի գավառակի վարչական սահմաններում գտնվող բոլոր հայաբնակ բնակավայրերը, այդ թվում՝ Ակնի հունադավան հայ գյուղերը, ինչպես նաեւ Աղընի գյուղախմբի 14 բնակավայրերը, որոնք հայկական եկեղեցական-թեմական բաժանմամբ Արաբկիրի թեմի կազմում էին գտնվում[54]։

Ակնի թեմի ենթակայության տակ գտնվող հայաբնակ բնակավայրերի նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ Հայոց պատրիարքարանի 1913 թ. եւ 1919 թ. «վիճակացոյց»-ների ցուցակների տվյալների համադրումը (տե՛ս Աղյուսակ 5) ցույց է տալիս, որ «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալները չունեն ինքնուրույն աղբյուրագիտական արժեք։ Այսպես, Թորոս Ազատյանն իր տվյալները հայ տների մասով վերցրել է «1913 թ. վիճակացոյց»-ի ցուցակից, անհասկանալի պատճառներով ձեռնպահ մնալով նույնը անել շնչերի պարագայում։ Հատկապես իրականությունից ցածր են, չեն հաստատվում այլ՝ անգամ արեւմտահայության թիվը թերհաշվառել հակված օսմանյան աղբյուրների կողմից, Ակն քաղաքի եւ Ապջուղա (Ապուչեխ) բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի համար «1919 թ. վիճակացոյց»-ի երկու ցուցակների հաղորդվող տվյալները (2000–2720)։

Ստորեւ ներկայացնենք Ակնի գավառակի նախաեղեռնյան հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այլ աղբյուրների եւ ուսումնասիրողների տվյալները.

---

[54] *Ակնի եւ Արաբկիրի գավառակների օսմանյան վարչական եւ հայկական եկեղեցական-թեմական բաժանման անհամապատասխանության մասին տե՛ս* Յ. ՃԱՆԻԿԵԱՆ, *Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, 1895, էջ 33, տե՛ս նաեւ* Ա. ՓՈԼԱՏԵԱՆ, *Պատմութիւն Հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969, էջ 70։*

Նշենք, որ ըստ սփյուռքահայ ուսումնասիրող, ծնունդով ակնեցի Ա. Քեչյանի՝ 1878 թ.՝ օսմանյան սահմանադրության առաջին հռչակումից առաջ, օսմանյան իշխանություններն անջատել էին Աղընի գյուղախումբը Ակնի գավառակի կազմից՝ կցելով այն Արաբկիրին, ինչպես նաեւ Ակնի հյուսիս-արեւմուտքում գտնվող հայաբնակ Կամսա եւ Զմառա գյուղերը միացրեցին Տիվրիկի գավառակին, որպեսզի Ակնը չկարողանա տալ հայ երեսփոխան (տե՛ս Ա. ՔԷՉԵԱՆ, Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ, *Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952, էջ 155)։ Աղընի գյուղախումբը նորից կցվեց Ակնի գավառակին Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) նահանգի եւ նրա կազմում՝ Ակնի կազայի (գավառակի) ստեղծումից հետո (նույն տեղում)։*

1. Մ. Օրմանյան (Ակն քաղաք եւ շրջակա 6 հայաբնակ բնակավայրեր)՝ 10 200 շունչ հայ բնակչություն, այդ թվում՝ 200-ը բողոքական[55],

2. Հայոց պատրիարքարան- Ապահովության հանձնաժողով՝ 34 000 շունչ հայ[56],

3. Թեոդիկ՝ 7800 շունչ (միայն Ակն քաղաք)[57],

4. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 9888 շունչ հայ, այդ թվում՝ առաքելական՝ 9373, կաթոլիկ՝ 12, բողոքական՝ 503[58],

5. Ս. Ծոցիկյան՝ մոտ 10 000 շունչ (Ակն քաղաք եւ արվարձաններ)[59],

6. Արփինե Բաբլումյան՝ 15 888 շունչ[60]։

Աղյուսակ 5. Ակնի թեմի հայ բնակչության թվաքանակը ըստ 1913 եւ 1919 թթ. «վիճակացոյց»-ների տվյալների

№	Բնակավայր	1913 թ. վիճակացոյց[61]		1919 թ. վիճակացոյց. Վիճակագրություն 1 (Թ. Ազատյան)		1919 թ. վիճակացոյց. վիճակագրություն 2	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Ակն	1300	7720	1300	2720	500	2000
2	Ապչուղա (Ապուչեխ)	320	1920	320	960	120	720
3	Կամարակապ	215	1260	215	420	85	360
4	Կարուշլա	50	256	50	86	50	250
5	Լիճք	80	526	80	312	110	500
6	Նարվեր	38	207	38	127	50	155
7	Բինկեան	220	1170	220	710	150	800
8	Վանք	-	150	-	-	-	150
9	Զորակ	-	70	-	-	-	100
10	Մուշաղկա	-	164	-	14	-	200
12	Վեղ փարա	-	320	-	-	-	250
	Ընդամենը	2223	13 763	2223	5349	1065	5485

[55] Տե՛ս Մ. Օրմանեան, նշվ., աշխ., էջ 262։

[56] Տե՛ս Թէոդիկ, Ամենուն տարեցոյցը..., էջ 262։

[57] Տե՛ս Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան..., էջ 239։

[58] Տե՛ս K. Karpat, նշվ. աշխ., էջ 182։

[59] Տե՛ս Ս.Մ. Ծոցիկեան, նշվ. աշխ., էջ 11։

[60] Տե՛ս Ա. Բաբլումեան, Ակնի գավառակի հայ բնակչության թվաքանակը Ի. դարի սկզբին, «Էջմիածին. Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի», 2012, ԿԸ (Ե), էջ 118–123։

[61] Տե՛ս Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, նշվ. աշխ., էջ 377–380։

8. Վիճակացոյց Արաբկիր թեմի[62]

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Տեղահանութենէն առաջ			Տեղահանութենէն յետոյ			Կորուստ			Հայ կղերի թիւը		Թիւ եկեղեցեաց	
		Արու	էգ	Գումար	Արու	էգ	Գումար	Արու	էգ	Գումար	Առաջ	Յետոյ	Հաստատուն	Ալեւոր
1	Արաբկիր	3531	4732	8263	-	-	-	-	-	-	-	-	1	-
2	Ամբրկա	120	130	250	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	Աղբն	131	140	271	10	26	36	121	114	235	-	-	-	1
4	Անջրդի	240	270	510	27	85	112	213	185	398	1	-	-	1
5	Եհնեսիկ	100	131	231	8	11	19	92	120	212	-	-	-	1
6	Խոռոչ	95	110	205	7	19	26	88	91	179	1	-	-	1
7	Ծագ	330	357	687	32	74	106	298	283	581	1	-	-	1
8	Կռանի	40	52	92	8	10	18	32	42	74	-	-	-	1
9	Հասկենի	30	40	70	-	-	-1	30	40	70	-	-	-	1
10	Մաշկերտ	240	256	496	5	13	18	235	243	478	1	-	-	1
11	Շեմբիկ	228	240	468	-	-	-	-	-	-	-	-	-	1
12	Սաղմկա	129	150	279	4	11	15	125	139	264	1	-	-	1
13	Վաղշէն	130	146	276	4	38	42	126	108	234	1	-	-	1
14	Վանք	50	79	129	13	18	31	37	61	98	-	-	-	-
15	Քուշնա	180	217	397	4	27	31	176	190	366	1	-	-	-
16	Ծապլվար	7	9	16	1	7	8	6	2	8	-	-	-	-

[62] Տես ԵՀՊ Զավեն Տեր-Եղիայանի արխիվ, թերթ խ889-խ890։ Վիճակացոյցի տիտղոսաթերթի վրա պահպանվել է հետեւյալ գրությունը. «Վիճակագրեց Թորոս Մ. Ազատեան»։ Վիճակացոյցը թվագրված է 1920 թ. մարտի 15-ով։

Թիւ	Վիճակին ենթակայ քաղաք կամ գիւղ	Թիւ վանքերու		Մանչերու դպրոցներ		Աղջիկներու դպրոցներ		Թիւ երկսեռ ուսանողաց		Հայ տուներու ներկայ վիճակը			1914–1918 Իսլամացածներ			
		Հաստատում	Աւերեալ	Հաստատում	Աւերեալ	Հաստատում	Աւերեալ	1914	1919	Բնակեալի	Կիսաւեր	Քնդրած	Կամովին	Բռնի	Դարձող	Մնացող
1	*Արաբկիր*	-	-	-	-	-	*1*	*600*	-	-	-	-	-	-	-	-
2	*Ամբրկա*	-	-	-	*1*	-	-	*50*	-	-	-	-	-	-	-	-
3	*Աղբն*	-	-	-	*1*	-	*1*	*22*	-	*10*	*20*	*30*	-	*36*	*36*	-
4	*Անջրդի*	-	-	-	*1*	-	-	*120*	-	*50*	*20*	*90*	*1*	*49*	*40*	*9*
5	*Եհնեսիկ*	-	-	-	*1*	-	-	*15*	-	*3*	*5*	*18*	-	*19*	*18*	*1*
6	*Խոռոչ*	-	-	-	*1*	-	-	*44*	-	*10*	*2*	*8*	-	*26*	*18*	*8*
7	*Ծագ*	-	-	-	*1*	-	-	*61*	-	*30*	*20*	*32*	-	*106*	*102*	*4*
8	*Կռանի*	-	-	-	*1*	-	-	*25*	-	-	*6*	*10*	-	*18*	*18*	-
9	*Հասկենի*	-	-	-	*1*	-	-	*25*	-	-	-	*14*	-	-	-	-
10	*Մաշկերտ*	-	-	-	*1*	-	-	*41*	-	*10*	*20*	*37*	-	*18*	*17*	*1*
11	*Շեմբիկ*	-	-	-	*1*	-	-	*70*	-	-	*6*	*90*	-	-	-	-
12	*Սաղմկա*	-	-	-	*1*	-	-	*34*	-	*2*	-	*34*	-	*15*	*12*	*3*
13	*Վաղշէն*	-	-	-	*1*	-	-	*29*	-	*26*	-	*30*	-	*42*	*40*	*2*
14	*Վանք*	-	-	-	*1*	-	-	*22*	-	*10*	-	*10*	-	*18*	*18*	-
15	*Քուշնա*	-	-	-	*1*	-	-	*52*	-	*30*	*8*	*30*	-	*31*	*31*	-
16	*Ծապլվար*	-	-	-	-	-	-	-	-	-	-	*4*	-	*8*	*4*	*4*

Ինչպես կարող ենք տեսնել, համաձայն «1919 թ. վիճակացոյց»-ի տվյալների՝ տեղահանությունից առաջ Արաբկիրի թեմի տարածքում (Արաբկիր քաղաք եւ 15 հայաբնակ բնակավայրեր, ներառյալ վարչական առումով Ակնի գավառակի կազմում գտնվող Աղընի գյուղախմբի 14 գյուղերը) բնակվում էր 12 640 հայ։ Հայ տների, կորուստմների եւ վերապրած հայերի թիվը թերի է՝ բացակայում են Արաբկիրի եւ Ամբրկայի տվյալները։ 1913 թ. եւ 1919 թ. «վիճակացոյց»-ների տվյալների համեմատությունից երեւում է (տե՛ս Աղյուսակ 6), որ Արաբկիրի թեմի համար «1919 թ. վիճակացոյց»-ի լրացված հարցաթերթի հեղինակ Թ. Ազատյանը նախքան տեղահանությունը հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ իր տվյալները վերցրել է անմիջապես 1913 թ. «վիճակացոյց»-ից, ուստի դրանք չունեն առանձին աղբյուրագիտական նշանակություն։

«1913 թ. վիճակացոյց»-ի, 1919 թ. Արաբկիրի եւ Ակնի թեմի երկու ցուցակներում համընկնող բնակավայրերի համար հաղորդվող տվյալների համեմատությունը (տե՛ս Աղյուսակ 7) ցույց է տալիս, որ տարբերությունները շոշափելի են միայն տների թվի հարցում, համապատասխանաբար՝ «1913 թ. վիճակացոյց»՝ 579, «1919 թ. վիճակացոյց» (Արաբկիր, հեղինակ Թ. Ազատյան)՝ 629, «1919 թ. վիճակացոյց» (Ակն)՝ 810, ինչը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Ակնի «վիճակացոյց»-ում գուցե հաշվի են առնվել նաեւ նախքան Մեծ եղեռնը դատարկ ու լքված հայ տները եւս (օրինակ՝ Ծապլվար բնակավայրի 30 տնից 25-ը նշված է որպես քանդված)։

Այլ աղբյուրներ Մեծ եղեռնի նախօրյակին Արաբկիրի թեմի հայ բնակչության վերաբերյալ հաղորդում են հետեւյալ տվյալները.

1. Մ. Օրմանյան (1902–1911 թթ.)՝ 19 500 շունչ հայ[63],

2. 1912 թ. Հայոց պատրիարքարան-Ապահովության հանձնաժողով՝ 29 000 շունչ հայ[64],

3. 1914 թ. օսմանյան վիճակագրություն՝ 10 091 շունչ հայ բնակչություն[65]։

---

[63] *Այդ թվում՝ 18 000՝հայ առաքելական, 1000 բողոքական, 500՝ կաթոլիկ հայեր (տե՛ս* Մ. Օրմանեան, *նշվ., աշխ., էջ 262)։*

[64] *Տե՛ս* Թէոդիկ, *Ամենուն տարեցոյցը..., էջ 262։*

[65] *Այդ թվում առաքելական՝ 9204, կաթոլիկ՝ 221, բողոքական՝ 666 (տե՛ս* K. Karpat, *նշվ. աշխ., էջ 182)։*

Աղյուսակ 6. Արաբկիրի թեմի հայ բնակչության թվաքանակը ըստ 1913 եւ 1919 թթ. «վիճակացոյց»-ների տվյալների

№	Բնակավայր	1913 թ. վիճակացոյց[66]		1919 թ. վիճակացոյց (Արաբկիր)	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Արաբկիր	1300	9523	-	8263
2	Ամբրկա	56	250	-	250
3	Աղբն	52	319	60	271
4	Անջրդի	118	510	160	510
5	Եհնեսիկ	26	231	26	231
6	Խոռոչ	20	115	20	205
7	Ծագ	82	687	82	687
8	Կռանի	16	92	16	92
9	Հասկենի	14	70	14	70
10	Մաշկերտ	67	496	67	496
11	Շեմբիկ	96	468	96	468
12	Սաղմկա	36	279	36	279
13	Վաղշէն	56	276	56	276
14	Վանք	20	129	20	129
15	Քուշնա	68	397	68	397
16	Ծապլվար	4	16	4	16
	Ընդամենը	2027	13 858	-	12 640

Աղյուսակ 7. Արաբկիրի թեմի որոշ հայաբնակ բնակավայրերի հայ բնակչության թվաքանակը ըստ 1913 եւ 1919 թթ. վիճակացոյցների ցուցակների տվյալների

№	Բնակավայր	1913 թ. վիճակացոյց[67]		1919 թ. վիճակացոյց (Արաբկիր)		1919 թ. վիճակացոյց (Ակն)	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Աղբն	52	319	60	271	90	450
2	Անջրդի	118	510	160	510	150	800
3	Եհնեսիկ	26	231	26	231	20	60

[66] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 375–377։ Նույն տվյալները Թեոդիկի մոտ, որը սակայն Արաբկիր քաղաքի հայ տների թիվը հասցնում է 2000-ի (տե՛ս* Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան..., էջ 233)։*

[67] *Տե՛ս* Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *նշվ. աշխ., էջ 375–376։ Նույն տվյալները Թեոդիկի մոտ (տե՛ս* Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան..., էջ 233)։*

4	Խոռոչ	20	115	20	205	25	120
5	Ծագ	82	687	82	687	100	400
6	Կռանի	16	92	16	92	15	80
7	Հասկենի	14	70	14	70	20	70
8	Մաշկերտ	67	496	67	496	70	300
9	Սաղմկա	36	279	36	279	60	200
10	Վաղշէն	56	276	56	276	100	450
12	Վանք	20	129	20	129	50	250
13	Քուշնա	68	397	68	397	80	350
14	Ծապլվար	4	16	4	16	30	100
	Ընդամենը	579	3617	629	3659	810	3630

РЕЗЮМЕ

Одним из основных направлений деятельности Константинопольского Армянского патриархата в 1919—1920 годах стал сбор данных о численности армянского населения в преддверии геноцида, а также о людских и материальных потерях, понесенных армянами во время депортации и резни.

Армянский Патриархат и действующее под ее началом «Информационное бюро» осуществляли работы по сбору сведений о положении армян до и после геноцида посредством двух документов — «вопросника» и «переписного листа», которые были отправлены в армянские епархии на территории Османской империи для заполнения. После получения ответов Информационное бюро группировала их по провинциям, обрабатывала данные с целью подготовки публикаций. Однако, по разным причинам, публикации на основе данных из ответов на вопросник и заполненных переписных листов так и не были осуществлены. В настоящее время информация, полученная от отдельных епархий, а также заполненные переписные листы, хранятся в архиве Иерусалимского Армянского Патриархата.

В работе освещаются обстоятельства создания «вопросника» и «переписного листа», а также процесс и результаты сбора информации о положении западных армян, основываясь на эти документы. Мы также представляем данные, содержащиеся в переписных листах, об армянском населении опрашиваемых провинций. Содержащиеся в них данные о численности армянского населения накануне геноцида затем сравниваются с данными других основных

источников, в частности, с переписными листами Константинопольской Армянской Патриархии 1913 года (также известными как Перепись Константинопольского Армянского Патриархата 1913—1914 гг.) и с официальной турецкой статистикой от 1914 года.

SUMMARY

Collection of data on the number of the Armenian population prior to the genocide, as well as on human and material losses suffered by the Armenians during deportations and massacres, was one of the main course of actions of the Armenian Patriarchate of Constantinople in 1919—1920.

The Patriarchate and the Information Bureau that operated under its supervision, collected data on the condition of the Armenians before and after the genocide using two document forms: a "questionnaire" and a "census form," which were sent out to all Armenian dioceses in the Ottoman Empire with a request to fill them in. Upon receiving responses, the Information Bureau proceeded with their classification per province, data processing, and preparations of a forthcoming publication. However, for various reasons, the information contained in questionnaires and census forms was not published. At present, the information obtained from dioceses, along with the completed census forms are kept in the archives of the Armenian Patriarchate of Jerusalem.

This study examines the circumstances surrounding the introduction of "questionnaires" and "census forms" and the process and results of collecting data about the condition of Western Armenians using these document forms. The study presents the data contained in the census forms, the most comprehensive sources of information about the Armenian population of the respondent provinces. The data from the census forms pertaining to the number of the Armenian population prior to the genocide are then compared with the data contained in other main sources, in particular, the 1913 census forms of the Armenian Patriarchate of Constantinople (also known as the Armenian Patriarchate of Constantinople Census of 1913—1914), as well as with the official statistical data from the Ottoman authorities drawn up in 1914.

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ԴՐՎԱԳՆԵՐ 1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻՑ

1918 թ. մայիսի 22-ից սկսվեց մեր նորագույն պատմության փառավոր էջերից մեկը՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսապատումը, որը հայության համար դարձավ գոյատեւման ու ազգապահպանության կարեւոր եւ հաստատուն մի խարիսխ։ Դեռեւս 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Պետրոգրադում տեղի ունեցած բոլշեւիկյան հեղաշրջումն արմատապես փոխեց քաղաքական եւ ռազմական իրադրությունը Ռուսաստանում։ Այն մեծ տեղաշարժեր առաջացրեց նաեւ միջազգային ասպարեզում։ Հոկտեմբերյան հեղաշրջումը, սակայն, առավել ծանր հետեւանքներ ունեցավ հատկապես հայ ժողովրդի համար։ Հեղաշրջման առաջին իսկ օրվանից բոլշեւիկյան իշխանության ընդունած «Հաշտության եւ հողի մասին» դեկրետների «օգնությամբ», մի քանի շաբաթվա ընթացքում կազմալուծվեց ռուսական բանակը՝ երկիրն անպաշտպան թողնելով քառյակ դաշինքի առջեւ։

Քայքայման գործընթացը չշրջանցեց նաեւ կովկասյան բանակը։ 1917 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Սեւ ծովից մինչեւ թուրք-իրանական սահմանը ձգվող 700 կիլոմետրանոց ռազմաճակատն ամբողջովին մերկացավ։ Բոլշեւիկյան կարգախոսներով վարակված, անկառավարելի զանգվածի վերածված 250 հազարանոց զորքը՝ լքելով ռազմաճակատը վերադարձավ Ռուսաստան։ Ինչպես պատկերավոր նկարագրում է Սիմոն Վրացյանը «առանց սպասելու վերին հրամանատարության սահմանուած կարգին, ռուս զինուորները մաս-մաս, հազարներով ու տասնեակ հազարներով լքում էին դիրքերը, թողնում բազմամիլիոն հարստութիւններ, ռազմամթերքի ու պարէնի անհաշիւ պաշար եւ հրացանը գրկած նետւում էին վագոնները, շտապում դէպի տուն, որպէսզի օր առաջ բաժին ստանան բոլշեւիկների խոստացած հողից եւ բուրժուաների գոյքից»[1]։ Նույն Ս. Վրացյանի վկայությամբ՝ «այս

[1] *Տե՛ս* Ս. ՎՐԱՑԵԱՆ, *Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, 1993, էջ 56։*

զանգուածային դասալքութիւնը առանձնապէս հիւանդագին անդրադարձ ունեցաւ կովկասեան ճակատում, ուր ընդհանուր պատճառներից զատ ուժեղ էին եւ ազգային հակամարտութիւնները եւ Թուրքիայի ու Կովկասի մահմեդականների իւրայատուկ փոխյարաբերութիւնները։ Կովկասեան մահմեդականները Թուրքերի Թելադրանքով մի կողմից աշխատում էին արագացնել ռուսական զօրքերի փախուստը, միւս կողմից՝ յափշտակել զէնքն ու զինամթերքը։ Եւ այդ հողի վրայ տեղի էին ունենում արիւնալի ընդհարումներ նահանջող ռուսական զօրամասերի ու մահմեդական ազգաբնակչութեան միջեւ»[2]։

Նման ընդհարումներից ամենաբնորոշը Շամխորի կոտորածն է, որը տեղի ունեցաւ 1918 թվականի հունվարի 9–12-ին՝ Թիֆլիս-Բաքու երկաթգծի Դալար եւ Շամխոր կայարանների միջեւ։ Դարանակալած Թուրք-Թաթարական ոճրագործները մի քանի օր շարունակ գնդակոծում էին ռուսական գնացքաշարերը։ Հանկարծակիի եկած ռուս զինվորները կռվեցին մինչեւ հունվարի 20-ը եւ տալով մոտ 2000 սպանված ու վիրավոր՝ մի կերպ ճանապարհ բացեցին դեպի Բաքու։ Մահմեդական խուժանին հաջողվեց գրավել 15 հազար հրացան, 70 գնդացիր, 20 թնդանոթ եւ այլ ռազմամթերք։ Ինչպես վկայում է Ս. Վրացյանը «Թուրք սոցիալ-յեղափոխական պարագլուխ Ասլան բեկ Սաֆիքուրդսկին, հեծած առջեւի թնդանոթը յաղթական մուտք գործեց Գանձակ»[3]։ Ռուսական կովկասյան բանակի քայքայման ամենաեռուն պահին՝ 1917 թվականի դեկտեմբերի 5-ին, Երզնկայում կնքվեց զինադադար, որով ընդհատվեցին ռազմական գործողությունները կովկասյան ռազմաճակատում։ Նշված իրադարձությունները Թուրքական կողմի համար պարզապես «երկնային մանանա» էին, քանզի ռուսական բանակի կողմից 1916 թվականի փետրվարի 3-ին՝ Էրզրումի ազատագրումից հետո Թուրքական կովկասյան ռազմաճակատի զորքերն այլեւս ուշքի չէին գալիս։ Նրանց ռազմատեխնիկական եւ բարոյահոգեբանական վիճակը չափազանց ծանր էր։ Այժմ ռուսական բանակի քայքայումով եւ Երզնկայի զինադադարով Թուրքերը հրաշալի հնարավորություններ էին ստանում ոչ միայն իրենց ուժերը կարգի բերելու, այլեւ նախորդ 3 տարիներին կրած պարտությունների դիմաց փոխվրեժի (ռեւանշ) հասնելու համար։ 1917 թ. վերջերին կովկասյան ռազմաճակատի

[2] Տե՛ս անդ, էջ 57։
[3] Անդ, էջ 60։

քայքայումից եւ այնտեղից ռուսական զորքերի հեռանալուց հետո ազգային զորամասերի շուտափույթ կազմավորումը դարձավ օրվա հրամայական[4]։ 1917 թ. նոյեմբերի 16-ին Մոգիլյովի զորակայանից պաշտոնական կարգադրություն եկավ ռուսաստանյան բանակային կորպուսների նմանությամբ կազմավորել հայկական զորամիավորում, ուստի զօրաբանակի ձեւավորման սկիզբ պետք համարել այդ հրամանի վավերացման օրը՝ 1917 թ. նոյեմբերի 16[5]։ 1917 թ. նոյեմբերի 19-ին, Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Պրժեւալսկու հմր 796 կարգադրությամբ զորամիավորման հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը (1855–1931 թթ.), որ դեռեւս 1915 թ. ապրիլի 16–18-ին Դիլմանի ճակատամարտում տարած փայլուն հաղթանակի համար, իբրեւ կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի պետ պարգեւատրվել էր Գեորգիեւյան խաչով։ 1917 թ. նոյեմբերի 30-ի հմր 136 հրամանով գեներալ Պրժեւալսկին որոշեց Հայկական զորամիավորման կառուցվածքային կազմը, որը վերջնականապես հաստատվեց դեկտեմբերի 6-ին, հմր 142 հրամանով, ըստ որի միավորման կազմում ընդգրկվեցին 1-ին եւ 2-րդ հայկական հրաձգային դիվիզիաները, Հայկական առանձին հեծելազորային բրիգադը, օժանդակ զորամասեր։ 1918 թ. փետրվար-մարտին հայկական բանակային միավորման կազմում կար հետեւակային 16 գունդ, 6 գումարտակ, 3 հեծյալ գունդ, 2 հրետանային բրիգադ՝ 8 մարտկոց, օդուժի 1 ջոկատ՝ 3 ինքնաթիռով, 3 ինքնաշարժային վաշտ, օժանդակ այլ զորամասեր։ Սակայն դրանց մեծ մասը հաստիքային կազմի առումով համալրված չէր։ Գործող զորամասերում գտնվում էր ընդամենը 7790 մարտիկ՝ 6970 հետեւակային եւ 820 հեծելազորային։ Զորամիավորման անձնակազմը հաստիքային քանակությանը համապատասխան համալրել այդպես էլ չհաջողվեց[6]։

Առաջին դիվիզիայի հրամանատարն էր գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, օգնականը՝ գնդապետ Դանիել-բեկ Փիրումյանը, շտաբի պետը՝ կապիտան Ա. Վեքիլյանը։ Դիվիզիայի մեջ էր մտնում 1-ին

---

[4] Վ. Մելիքյան, *Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը եւ հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր –1918 թ. փետրվար), 2010, էջ 185,186։*

[5] *Տե՛ս* Ա. Նազարյան, *Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում, Երեւան, 1999, էջ 150։*

[6] *Անդ։*

գունդը՝ (գնդապետ Կարաքեշիշյան), գտնվում էր Էրզրումում, 2-րդ գունդը՝ (գնդապետ Սամարցյան)՝ Խնուսում, 5-րդը՝ (գնդապետ Պ. Փիրումյան)՝ Վանում, 7-րդը՝ (գնդապետ Ալ. Բեյ-Մամիկոնյան)՝ Սարիղամիշում, 1-ին հրետանային բրիգադը (գնդապետ Ք. Արարատյան)՝ Թիֆլիսում։ Երկրորդ դիվիզիայի հրամանատարն էր գեներալ-մայոր Միքայել Արեշյանը, օգնականը՝ գնդապետ Ա. Տեր-Սարգսյանը, շտաբի պետը՝ գնդապետ Պ. Աթայանը։ Դիվիզիայի կազմի մեջ էր մտնում 3-րդ գունդը՝ (գնդապետ Փիրումյանց) գտնվում էր Թիֆլիսում, 4-րդ գունդը՝ (գնդապետ Ա. Հովսեփյան)՝ Էրզրումում, 6-րդ գունդը (գնդապետ Մ. Մելիք-Մուրադյան)՝ Ղամարլու-Մակու շրջանում, 8-րդ գունդը (իշխան Հ. Արղության)՝ Ղարաքիլիսայում՝ 2-րդ հրետանային բրիգադը (գնդապետ Կոստանյան)՝ Ալեքսանդրապոլում։ Հեծելազորային բրիգադի հրամանատարն էր գնդապետ Նիկոլայ Ղորղանյան։ Բրիգադի մեջ մտնող 1-ին հեծյալ գունդը՝ (փոխգնդապետ Ջալինյան)՝ Վաղարշապատում։ Բացի այդ Ալեքսանդրապոլում, Բաքվում, Կարսում, Երեւանում կային պահեստային գնդեր եւ գումարտակներ, հեծյալ հարյուրակներ Թիֆլիսում, Նախիջեւանում, որոնք նույնպես մտնում էին՝ Հայկական բանակային զորամիավորման մեջ։ Կորպուսի հրամանատարը՝ գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանն էր, իսկ շտաբի պետը՝ փոխգնդապետ Սկլյարեւիչը, հրետանու պետը՝ փոխգնդապետ Կ. Համազյանն էր (Գամազով)։

Հայոց ազգային խորհրդի կողմից Դրոն (Դրաստամատ Կանայան) նշանակվել էր գոյություն ունեցող եւ ստեղծվելիք հայկական բոլոր զորամասերի ընդհանուր կոմիսար[7]։

1917 թ. դեկտեմբերի 12-ին Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդարանում գումարվեց Արեւմտահայ ազգային խորհրդի ընդլայնված խորհրդաժողովը, որը քննարկեց ռազմաճակատի պաշտպանության գործում արեւմտահայերի ռազմական մասնակցության հարցը[8]։ Որոշվեց ստեղծել արեւմտահայերից կազմված երկրապահ զորամիավորում։ Ընդունված որոշումների իրագործման համար Արեւմտահայ ազգային խորհրդի կազմից ընտրվեց գործադիր մարմին՝ Հայաստանի ապահովության խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Վ. Փափազյանը, անդամներ՝ Սեպուհը, Կարո Սասունին, Ա. Թերզիբաշյանը, Ժ. Միրզախանյանը, Հ. Գալիկյանը եւ ուրիշներ։ Հայոց ազգային խորհրդի եւ Արեւմտահայ խորհրդի

---

[7] *Անդ, էջ 156–158։*

[8] *Տես* Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *Հայաստանը 1912–1920 թվականներին, Երեւան, 2003, էջ 193։*

միացյալ նիստում որոշվեց (9 կողմ, 3 դեմ) երկրապահ զորամիավորման հրամանատար նշանակել Անդրանիկին[9]։

Գլխավոր հրամանատար Պրժեւալսկու 1917 թ. դեկտեմբերի 15-ի հրամանով ենթապորուչիկ Անդրանիկ Օզանյանը պարգեւատրվեց «Սուրբ Վլադիմիր»՝ 4-րդ աստիճանի սրով ու ժապավեններով եւ «Սուրբ Ստանիսլավ»՝ 2-րդ աստիճանի սրով։ Մեկ շաբաթ անց՝ 1917 թ. դեկտեմբերի 22-ին, Պրժեւալսկու հմր 167՝ գաղտնի հրամանով Արեւմտահայ դիվիզիան անվանվեց Հատուկ հայկական հրաձգային դիվիզիա, որի հրամանատար նշանակվեց Անդրանիկ Օզանյանը[10]։ Դրա կազմում ընդգրկվեցին կամավորության սկզբունքով ձեւավորված հայկական հետեւակային չորս՝ Էրզրումի, Ղարաքիլիսայի, Խնուսի եւ Վանի գնդերը, հեծյալ եւ պահեստի մեկական գնդեր, լեռնային 6 մարտկոց, 2 գնդացրային շարժապահեստ։ Ծախսերը հոգալու էր Արեւմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարի շտաբը[11]։

1918 թ. հունվարի 16-ի հմր 77 հրամանով Կովկասյան ռազմաճակատի զորքերի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար գեներալ Լեբեդինսկին կարգադրեց արեւմտահայերից կազմավորել ավելի խոշոր զորամիավորում՝ հատուկ հայկական ջոկատ, որը կարող էր ունենալ մինչեւ 30 հազար մարտիկ։ 1918 թ. հունվարի 23-ին գեներալ Լեբեդինսկին տեղեկացրեց գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովին, որ Հատուկ հավաքական ջոկատի հրամանատարի պաշտոնում նախատեսված Անդրանիկ Օզանյանին շնորհվել է գեներալ-մայորի աստիճան[12]։ Անդրանիկի հրամանատարության ներքո գտնվող հայկական Հատուկ հավաքական ջոկատի (շտաբի պետ՝ գնդապետ Միխայիլ Զինկեւիչ) կազմի մեջ էին 3 հատուկ բրիգադներ։ 1-ին Հատուկ բրիգադի հրամանատարն էր գնդապետ Մորելը։ Միավորման կազմում էին Երզնկայի, Էրզրումի հետեւակային գնդերը, մեկական պահեստային, հեծյալ գնդերը եւ հրետանային դիվիզիան[13]։

2-րդ Հատուկ բրիգադի հրամանատարը գնդապետ Դ. Հովսեփյանն էր։ Նրա կազմի մեջ էին Ղարաքիլիսայի եւ Խնուսի հետեւակային գնդերը

---

[9] *Անդ։*

[10] *Անդ։*

[11] Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *Հայկական կամավորական խմբերը եւ ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Երեւան 1999, էջ 95, 96։*

[12] *Անդ, էջ 194։*

[13] *Անդ։*

եւ օժանդակ զորամասերը։ 3-րդ Հատուկ բրիգադի (հրամանատար՝ գնդապետ Տ. Բաղդասարյան) կազմում էին Վանի երեք հետեւակային գնդերը եւ հրետանային դիվիզիան։ Ջոկատի կազմում էին նաեւ Մուրադի, Սեպուհի, Պանդուխտի, Դալի Ղազարի եւ այլոց գլխավորած կամավորական խմբերը եւ ժողովրդական միլիցիայի զորամիավորումները[14]։ Ըստ զորավար Անդրանիկի տվյալների՝ Հատուկ հավաքական ջոկատի կազմում կար 9000 կանոնավոր զորք ու 16 000 անկանոն ուժ, երկուսը միասին՝ 25 000[15]։

Քաղաքական հետագա զարգացումների արդյունքում 1917 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում ստեղծվեց Անդրկովկասի կոմիսարիատը՝ որպես երկրամասի պետական իշխանության բարձրագույն գործադիր մարմին։ Այն փոխարինեց Անդրկովկասի Հատուկ կոմիտեին (ՕԶԱԿՈՄ), որն ստեղծվել էր 1917 թ. փետրվարյան դեմոկրատական հեղափոխությունից հետո։ Անդրկովկասի կոմիսարիատում եւ ընդհանրապես երկրամասի քաղաքական կյանքում իշխողը երեք քաղաքական ուժերն էին՝ վրաց մենշեւիկները, ՀՅԴ-ն եւ Կովկասյան թաթարների (ապագա «ադրբեջանցիներ») «Մուսավաթ» կուսակցությունը։ Թիֆլիսում ստեղծվեց պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմին՝ Անդրկովկասյան սեյմ։ Բացումը տեղի ունեցավ 1918 թ. փետրվարի 10-ին։ Սեյմի (խորհրդարանի) նախագահ դարձավ վրաց մենշեւիկ Ն. Չխեիձեն։ 125 պատգամավորներից բաղկացած Սեյմում քաղաքական հիմնական ուժերը ներկայացված էին հետեւյալ կերպ՝ ՀՅԴ–27, մենշեւիկներ՝ 32, «Մուսավաթը»՝ 30[16]։

Սկզբից եւեթ եւ Կոմիսարիատը եւ Սեյմը որդեգրեցին հակաբոլշեւիկյան, հակառուսական քաղաքականություն, որն ի վերջո հանգեցրեց Անդրկովկասի փաստացի անջատմանը Ռուսաստանից։ 1918 թ. ապրիլի 9-ին (նոր տոմարով՝ 22) Սեյմն Անդրկովկասը հռչակեց ինքնիշխան պետություն, որը տվյալ պահին ավելի ձեռնտու էր վերջինիս դեմ հարձակում ձեռնարկած Օսմանյան Թուրքիային։ Թե՛ Սեյմում, թե՛ Կոմիսարիատում ներքաղաքական ու հատկապես արտաքին քաղաքական շատ հարցերում ՀՅԴ-ն եւ «Մուսավաթն» ունեին հակադիր դիրքորոշումներ։ Վերջինս, սկզբում սքողված, իսկ հետագայում ավելի ու ավելի բացահայտ

---

[14] *Անդ։*
[15] *Անդ, էջ 195։*
[16] *Անդ, էջ 331։*

պրոթուրքական, հակահայ քաղաքականություն էր վարում՝ իր հովանավոր համարելով Օսմանյան Թուրքիային։ Վրաց մենշեւիկներն արտաքնապես հանդես գալով հաշտարար միջնորդի դերում, իրականում վարում էին հայատյաց քաղաքականություն, հովանավորություն փնտրելով Եւրոպայում՝ Գերմանիա։ Յավոք, մենշեւիկ-մուսավաթական դաշինքին ՀՅԴ-ն չկարողացավ արդյունավետ հակազդել ստեղծված ռազմաքաղաքական շատ բարդ իրադրությունում. պակասում էր քաղաքական փորձառությունը։ Ըստ էության ՀՅԴ-ն մնացել էր մենակ այս հակադրությունների մեջ։ 1917 Թ. դեկտեմբերի 9 (22)-ին սկսվեցին Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունները, որտեղ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավարն էր Ա. Իոֆֆեն։ Սակայն բանակցությունների ընթացքում Գերմանիան խորհրդային Ռուսաստանին վերջնագիր ներկայացրեց եւ խախտելով, 7 օրվա մասին պայմանավորվածությունը՝ անցավ հարձակման[17]։ Գերմանիայի հարձակման հետ միաժամանակ փետրվարի 12-ին, խախտելով Երզնկայի զինադադարը, Կովկասյան ռազմաճակատում հարձակում սկսեցին թուրքերը։ Նույն օրը թուրքական բանակը գրավեց Երզնկան, հաջորդ օրը Բայբուրդը։ Փետրվարի 24-ին՝ թուրքերը գրավեցին Տրապիզոնը, իսկ Էրզրումի ռազմաճակատում՝ Մամախաթունը։ Այդ օրերին Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած ուժերին համառ եւ արյունահեղ դիմադրության էին ցույց տալիս հայկական փոքրաթիվ ուժերը՝ գնդապետ Մորելի ղեկավարությամբ[18]։ 1918 Թ. փետրվարի վերջերին Էրզրումի շրջանում ահեղ մարտեր սկսվեցին, որոնք տեւեցին երկու շաբաթից ավելի։ Այստեղ թուրքերի դեմ կռվում էին Անդրանիկի կամավորական միավորումը եւ առաջին հետեւակային զորախումբը՝ գնդապետ Մորելի հրամանատարությամբ։ Թուրքական հարձակվող զորքերը թվակզմով երեք անգամ գերազանցում էին հայկական ուժերին։ Անդրանիկն աներեւակայելի ջանքեր էր գործադրում, բայց ապարդյուն։ Հայկական զորքերն սկսեցին հետքաշվել։ Նահանջել սկսեցին նաեւ ռազմաճակատի զորքերը՝ Բեժանբեկովի հրամանատարությամբ։ Փետրվարի 12-ին թուրքական զորքերը գրավեցին Էրզրումը։ Սեյմն, անընդունակ լինելով հարձակվող թուրքերի դեմ պատշաճ դիմադրություն կազմակերպել, համաձայնեց հաշտության բանակցություններ սկսել Տրապիզոնում։

---

[17] Հ. Ավետիսյան, *Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թ. մայիս, 1998, էջ 30,31։*

[18] *Անդ, էջ 33, 34։*

Կատարելով Թուրքիայի կամքը՝ 1918 թ. մարտի 1-ին գերմանական հրամանատարությունը Բրեստ-Լիտովսկում Ռուսաստանից պահանջեց դուրս բերել իր զորքերը Կարսի, Արդահանի եւ Բաթումի մարզերից։ Թուրքիան՝ նախքան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումը, խախտելով Երգնկայի զինադադարը, դեռեւս հունվարին վերսկսել էր ռազմական գործողությունները՝ գրավելով Երզնկան, Բայբուրդը եւ Մամախաթունը[19]։

Թուրքերի հետ Տրապիզոնում վարած բանակցությունների ժամանակ՝ 1918 թ. մարտի 14-ին, սեյմի պատվիրակության նախագահ Ա. Չխենկելու հայտարարությունը Երկրամասի «անկախության» մասին դարձավ հիմք գերմանական խմբավորման համար՝ Անդրկովկասի հարցն անջատ, առանց Ռուսաստանի լուծելու համար։ 1918 թ. փետրվար-ապրիլ ամիսներին թուրքական զորքերը, անցնելով հարձակման, իրար հետեւից գրավեցին Էրզրումը, Սարիղամիշը, Արդահանը, Կարսն ու Բաթումը՝ այդ տարածքները, իրենց բնորոշ եղանակով, «մաքրելով» հայերից։ Անդրկովկասյան սեյմի ղեկավարությունը ոչ մի քայլի չդիմեց թուրքերի առաջացումը կանխելու համար։ Համաձայնելով Կարսը հանձնելու թուրքերի պահանջին՝ անդրկովկասյան նոր կառավարության նախագահ Չխենկելին եւ ռազմական նախարար Օդոշելիձեն կարգադրեցին զորքերի հրամանատարությանը՝ այն հանձնել թուրքերին։ Դրան առարկեց առանձին բանակային զորամիավորման հրամանատար Թ. Նազարբեկյանը, որն այդ ժամանակ նաեւ ռազմաճակատի հրամանատարն էր։ Նա պնդում էր, որ Կարսի ամրոցն ուներ պաշտպանվելու բոլոր հնարավորությունները՝ անհրաժեշտ զորք եւ զինամթերք։ Սակայն 1918 թ. ապրիլին Չխենկելին երկրորդ անգամ նոր հրաման տվեց Կարսն անհապաղ թուրքերին հանձնելու վերաբերյալ։ Վրաստանի համար պետք էր պահել Բաթումը։ Սակայն չհաջողվեց, ապրիլի 15-ին թուրքերը գրավեցին Բաթումը, իսկ ապրիլի 26-ին, առանց կռվի՝ Կարսը։ Այնուհետեւ զինադադար կնքվեց, եւ Տրապիզոնում ընդհատված թուրք-անդրկովկասյան բանակցությունները վերսկսվեցին Բաթումում՝ 1918 թ. մայիսի 11-ին։

1918 թ. մարտի 2-ին Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը նշանակվեց ճակատի հրամանատար. ճակատ,

---

[19] Ռ. Թադեւոսյան, *Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX–XX դդ., Երեւան, 2012, էջ 336, 337, 338։*

որ ձգվում էր Օլթիից մինչեւ Մակու։ Օլթի–Բաթում գիծը պիտի պաշտպանեին վրացական զորքերը։ Երկու ճակատների ընդհանուր հրամանատարն էր գեներալ Լեբեդինսկին։ Թ. Նազարբեկյանի տրամադրության տակ կար այդ ժամանակ 36 գումարտակ, մոտ 15 000 զինվոր, որոնք պետք է պաշտպանեին 250 կմ երկարությամբ ձգվող ճակատը։ Հայկական ուժերի դեմ գործում էին թուրքական 5-րդ, 11-րդ եւ 36-րդ դիվիզիաները՝ Էրզրում, Սարիղամիշ հատվածում, եւ մեկական դիվիզիա Ալաշկերտում ու Վանա լճի շուրջը։ Թուրքերն ունեին թվաքանակի գերազանցություն[20]։

Հայերը ցույց են տալիս ուժեղ դիմադրություն, որի արդյունքում թուրքերը յուրաքանչյուր թիզ հող գրավում էին մեծ զոհեր տալով։ Սարիղամիշի պաշտպանությունը հանձնարարվեց Դրոյին, որն այդ օրերին եկել էր Սարիղամիշ։ Սկսվեց արյունահեղ ճակատամարտը, որը տեւեց մի քանի օր։ Մարտի 23-ին, երբ Կարսից կտրվելու վտանգ առաջացավ, գեներալ Արեշյանը նահանջի հրաման տվեց։ Մարտի 23-ի լույս 24-ի գիշերը հայկական զորքերը թողեցին Սարիղամիշը՝ նախօրոք պայթեցնելով պահեստներն ու ռազմական նշանակության կառույցները։ Սարիղամիշի անկումով հայկական զորքերը դուրս եկան Ալաշկերտից, մնալով միայն Վանում։ Այնտեղ պաշտպանվեցին մինչեւ ապրիլի կեսերը, ապա կռվով նահանջեցին դեպի Պարսկաստան։ 1918 թ. ապրիլի 15-ին թուրքերը գրավեցին Բաթումը։ Կարսի կայազորն ուներ 3600 զինվոր, 1700 նորակոչիկ հրետանավոր, 100 գործող եւ 700 հնացած հրանոթ[21]։ Զինվորականների կարծիքով այդ ուժերը կարող էին մեկ ամսից ավելի պաշտպանել Կարսը[22]։ Սակայն Անդրկովկասի անկախության հռչակումից հետո, 1918 թ. ապրիլի 22-ին ռազմական կոմիսար Ն. Չխենկելին գեներալ-լեյտենանտ Օդեշիլիձեի միջոցով հեռագրով տեղեկացրեց Վեհիբ փաշային, որ սկսած 1918 թ. ապրիլի 23-ի ժամը 17։00-ից Անդրկովկասյան կառավարությունը դադարեցնում է ռազմական գործողությունները։ Միաժամանակ Օդեշելիձեն հրամայեց Թ. Նազարբեկյանին, թուրքերին հանձնել Կարսը։ Սեյմի հայ անդամները տեղյակ էին դրան, ուստի հրամանը համարվեց դավաճանություն։ Նազարբեկյանը փորձում էր կապվել Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի

---

[20] *Անդ, էջ 344, 345։*
[21] *Անդ, էջ 345։*
[22] *Անդ, էջ 349, 350։*

հետ, բայց գիծը չէր գործում՝ վրացիների՝ մեղմ ձեւակերպմամբ անբարյացկամության հետեւանքով։ Երբ ի վերջո ստացվեց Ազգային խորհրդի հեռագիրը՝ հաշվի չառնել Զխենկելու հրամանները, արդեն ուշ էր։ Նազարբեկյանը բերդի պարետ Դեեւին կարգադրել էր բերդը հանձնել, եւ ապրիլի 26-ին թուրքերն առանց դիմադրության հանդիպելու գրավեցին Կարսի անառիկ բերդը։

1918 թ. թուրք-հայկական պատերազմում իր հերոսականությամբ եզակի դրվագ էր Էրզրումից (Կարին) հյուսիս՝ Ճորոխ գետի հյուսիսային ափին գտնվող Խոտորջուր գավառի 16 հայկական գյուղերի ինքնապաշտպանությունը։ 1918 թ. փետրվարին Էրզրումի անկումից հետո թուրքական զորքերի հարձակման պայմաններում Խոտորջուրն ստիպված էր պայքարել ոչ միայն տեղական մահմեդական հրոսակախմբերի, այլեւ թուրքական կանոնավոր ստորաբաժանումների դեմ։ Այդ պայքարը ղեկավարում էր 9 հոգանոց ռազմական խորհուրդը մեծ հայրենասեր Օգոստինոս Սչանյանի գլխավորությամբ[23]։ Եթե սկզբում պաշտպանությունն ընթանում էր գավառի շրջագծով մեկ, ապա հետագայում ուժերի անբավարարության հետեւանքով այն կենտրոնացավ Վերին Մոխրկուտ (Մոխրակույտ) գյուղի մոտ գտնվող Աստվածամոր բերդ կոչված հսկա ժայռի վրա՝ 2350 մետր բարձրությամբ։ Այստեղ հավաքվեցին գավառի ողջ հայ բնակչությունը եւ մարտական խմբերը։ Քաջարի խոտորջուրցիներին չկարողացավ ծնկի բերել նույնիսկ թուրքական հրետանին, որը մարտի 17-ից սկսած պարբերաբար գնդակոծում էր բերդը։ Վերջինիս պաշտպանությունը ղեկավարում էր մարտերում թրծված, խիզախ նշանառու Կարո Պապյանը։ Ինքնապաշտպանության ընթացքում տեղի ունեցան հերոսության, ինքնազոհողության ցնցող դեպքեր։ Այն բանից հետո, երբ հայ մարտիկները նույնիսկ մեծ զոհերի գնով չկարողացան գրավել թուրքական հրետանու դիրքերը, խոտորջուրցի մի գեղեցկուհի՝ տիկին Էլինեն, բարձրացավ հարեւան սարալանջը եւ անասելի ջանքերի գնով առաջ բերեց հսկա ձնահյուսի անկում, որն ամբողջովին տակնուվրա արեց եւ ոչնչացրեց թուրքական հրանոթներն ու հրետանավորներին։ Ցավոք այդ ձնահյուսի տակ զոհվեց նաեւ հայ հերոսուհին[24]։

Այն բանից հետո, երբ խոտորջուրցիներն իմացան, որը ընկել է նույնիսկ Կարսը եւ իրենք հայտնվել են թշնամու խոր թիկունքում, եւ դրսից

---

[23] *Տե՛ս Ռ. Թադեւոսյան, նշվ. աշխ., էջ 342։*

[24] *Անդ, էջ 343։*

որեւէ օգնության հույս չկա, որոշեցին ճեղքել շրջափակման օղակն ու անցնել Անդրկովկաս։ 1918 թ. ապրիլի վերջին-մայիսի սկզբին 5 տարբեր ուղղություններով նրանք մեծ ու փոքր խմբերով ճեղքեցին շրջափակման օղակը եւ սկսեցին անցնել Արեւելյան Հայաստան ու Անդրկովկաս։ Բոլորին չէ, որ դա հաջողվեց։ Ոմանք ընկան կենաց ու մահու պայքարում, բայց շատերը հաղթահարեցին խոչընդոտները եւ հասան՝ Թիֆլիս։ Խոտորջուրցիներից առավել անձնուրացների մի խումբ մնաց տեղում եւ կռվեց մինչեւ վերջ։ Խոտորջուրցի մի ծերունի՝ Հովհաննես Զախալյանը իր վերջին մարտում գնդակահարեց 18 թուրք հրոսակայինի, իսկ վերջին փամփուշտն ուղղեց իրեն։

Ահա նման վախճան ունեցավ Խոտորջուրի 5 ամիս տեւած ինքնապաշտպանական հերոսամարտը, որն սկսվել էր 1917 թ. դեկտեմբերի 23-ին եւ շարունակվել մինչեւ 1918 թ. մայիսի սկիզբը, երբ թուրքական հրոսակները հասել էին մինչեւ Ալեքսանդրապոլի մատույցներ։

Թուրքերի այս հաղթանակներից հետո հայերից դատարկվեցին Վանխնուս-Ալաշկերտ-Կարս տարածքները։ Այս վայրերի 70.000-անոց բնակչությունը, հիմնականում տարոնահայությունը, Կարո Սասունու, Սասունցի Մուշեղի, Մանուկի, Զոլոյի, Նորեի եւ այլոց գլխավորությամբ, որ հիմնականում ղեկավարում էին սասունցիների գունդը, միանում է Անդրանիկի՝ դեպի Ալեքսանդրապոլ նահանջող ջոկատին։ Կ. Սասունու եւ Երեւանի ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանի համատեղ ջանքերով որոշվում է գաղթական բնակչությանը, որը հասել էր Սարդարարդատ, տեղավորել Արագածի եւ Երեւանի շրջակայքում[25]։ Սակայն դրան խիստ խոչընդոտում էր Ներքին Թալինի բերդում եւ շրջակա գյուղերում բնակվող թուրքական (թաթարական եւ քրդական) բնակչությունը։ Ներքին Թալինի բերդի եւ շրջակա թուրք-թաթարական գյուղերի մաքրագործումը կարեւոր էր հետեւյալ պատճառներով.

առաջին՝ թուրքական բանակը՝ Ալեքսանդրապոլին մոտենալով՝ թուրք թաթարական շրջաններն ավելի վտանգավոր էին դառնում,

երկրորդ՝ ցանկացած դեպքում նրանք կարող էին փակել Անի կայարանով անցնող երկաթուղին,

երրորդ՝ Արարատյան դաշտի բնակչությունը հնարավորություն չուներ ընդունելու այդքան գաղթականություն։

---

[25] ՌՈՒԲԷՆ, *Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ. է., Երեւան, 1990, էջ 106։*

Եթե շարունակեին մնալ Արարատյան դաշտում, նրանք սովի կմատնվեին։ Այս ամենից զատ, այդ կարեւոր խնդրի լուծումը մեծ նշանակություն ունեցավ նաեւ Սարդարապատի եւ Բաշ Ապարանի հաղթանակների համար, քանզի ապահովեց թիկունքի մաքրումը թշնամուց, որը կարող էր ցանկացած պահի ի չիք դարձնել հետագայի մայիսյան հաղթանակները։ «Թալինի բերդը ոչ միայն կիշխէր Էջմիածնի եւ Աշտարակի վրայ,— գրում է Մուշեղը,— այլ նաեւ տեւական սպառնալիք մըն էր Երեւանի համար։ Հետագային, երբ Սարդարապատի կռիւները տեղի ունեցան, այն ատեն միայն հասկացուեցաւ մեր շարժման կարեւորութիւնը»[26]։ Թուրքական կենտրոն հանդիսացող Ն. Թալինի բերդի գրավումը բարդ խնդիր էր։ Սակայն 1918 թ. մայիսի 5-ին, Արագածի մի քանի թուրք-թաթարական գյուղերի արագ գրավումից հետո, գաղթականության կռվող ուժերը երեք թեւերով գրոհեցին բերդը։ Սասունցիների 1000-անոց հեծելաջոկատի մի մասը՝ Մորուք Կարապետի գլխավորությամբ, հյուսիսից հարձակվում է բերդի վրա, մյուս մասը՝ Փեթարա Մանուկի ու Զոլոյի ղեկավարությամբ, հարձակման անցավ հարավից, իսկ Սասունցի Մուշեղի հեծյալները՝ կենտրոնից։ Զդիմանալով վճռական գրոհին՝ թուրքերը նահանջում են բերդ, որի երեք հսկա դռներից մեկը խորտակում են Մորուք Կարոն եւ Հզոն՝ նախապես պատրաստված գերաններով եւ երկաթե ձողերով։ Խորտակված դարպասներից ներս խուժեցին մյուս հեծյալները։ Այդ տեսնելով՝ թուրքերը հյուսիսային ելքով փախուստի դիմեցին՝ հայերին թողնելով բերդում կուտակված ռազմամթերքի, անասունների եւ պարենի հսկայական պաշարներ, որ բաշխվեցին գաղթականությանը։

Մորուք Կարոյի ջոկատում կռվում էին հայ քաջասիրտ կանայք։ Նրանցից էին նրա կինը՝ Մարթան եւ Կարո Սասունու կինը՝ Հռիփսիմե (Լոլա) Մեծատունյան-Սասունին։ Նրանցից՝ Մարթան Սասունի Իշխնձոր գյուղից էր, մասնակցել էր Սասունի 1915 թ. ինքնապաշտպանական մարտերին։ Լինելով լավ հեծյալ ու դիպուկահար, զինվորական հագուստով ու բերդանկա հրացանը ուսին, ձիու վրա նստած նա առաջնորդում էր նաեւ տարոնահայ գաղթականության հոսքը Արեւմտյան Հայաստանից դեպի Արարատյան դաշտ՝ պաշտպանելով նրանց թուրք-քրդական հարձակումներից[27]։ Նրա կողքին էր նաեւ Լոլա Սասունին, որ բանաստեղծ Միսաք Մեծարենցի զարմուհին, ծնվել էր

[26] *Անդ, էջ 78։*

[27] *Տես* ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ, *Հայ հերոսուհի կանայք, Երեւան , 2016, էջ 451–455, 457։*

Ակնում (Բինկյան), ապա տեղափոխվել էր Սեբաստիա, ավարտելով տեղի ազգային վարժարանն ու ամերիկյան քոլեջը, ստացել էր ժամանակի համար լավագույն կրթություն եւ դաստիարակվել հայրենասիրական ոգով: Նա Համազասպի հսկողության տակ գտնվող խմբակում զենքի ու ձեռքի նռնակի գործածության հմտություններ էր ձեռք բերել, սակայն հայոց ցեղասպանությունից հետո զբաղվել էր Մուշի եւ Սասունի որբերի խնամատարության գործով: Երբ հայ գաղթականությունը, նրանց հետ նաեւ որբերը ճամփա էին բռնել դեպի Արարատյան դաշտ, Լոլան առաջին եկողների մեջ էր: Ֆիդայու տարազով ու զենքը ուսին՝ միացել էր հետնապահ խմբին՝ Փեթարա Մանուկին, Սասունցի Մուշեղին, Մորուք Կարոյին, Զոլոյին եւ նրանց ընկերներին: Սկզբում հին ֆիդայիններից ոմանք Լոլայի ներկայությունն անընդունելի էին համարել, սակայն Մարթայի նման ձիավարության եւ նշանառության տիրապետման, դիմադրության, կորովի եւ զոհաբերության ոգու հանդեպ հետզհետե տեղի էին տվել: Լոլան եւ Մարթան իրենց ներկայությամբ եւ աշխույժ գործունեությամբ նոր ոգեւորություն բերեցին ֆիդայիններին, եւ նրանցից առաջ ընկած, Մորուք Կարոյի խմբում առաջինը գրոհեցին հյուսիսային ուղղությամբ եւ մտան բերդ[28]: Մայիսյան հերոսամարտի օրերին, երբ թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը եւ շարժվեցին դեպի Սարդարապատ ու Ղարաբիլիսա, Լոլայի ամուսինը՝ Կարո Սասունին, մնացել էր Ղարաբիլիսայի ճակատում, կտրվելով տարոնցիների զորամասից: Այդ զորամասը, որտեղ գտնվում էին նրա կինը՝ Լոլան, եւ նորածին զավակը տեղակայված էր Սարդարապատում: Այստեղ էր Սարդարապատի հերոսամարտի օրերին խանձարուրի մեջ փաթաթված երեխան վզից կախված, հերոսուհի Լոլան, իր ընկերուհի Մարթայի հետ միասին: Նա զենքը ձեռքին կռվեց Սարդարապատի ճակատամարտում, ոգեւորելով եւ գրոհի տանելով Դանիել Բեկ-Փիրումյանի՝ Սարդարապատի ջոկատի տղամարդկանց: Այս երկու հերոսուհիները ոչ միայն աչքի ընկան իրենց քաջությամբ մայիսի 22–23-ի գրոհի ժամանակ, այլեւ կազմակերպեցին կանանց ու աղջիկների խմբեր՝ հիվանդներին, զորքերին, կռվողներին ջուր, սննդամթերք ու ռազմամթերք հասցնելու համար:

Մայիսի 24-ից նրանք մեկնեցին Դրոյի ջոկատը համալրելու Բաշ Ապարանի ճակատում, որտեղ նորից աչքի ընկան մայիսի 25–26-ի գրոհների ժամանակ, արժանանալով խրախուսանքների: Մայիսյան հերոսամարտերից հետո Լոլան նվիրվել էր Հայասատանի «Կարմիր Խաչի» կազմավորմանն ու իրագործմանը, զբաղվել որբախնամ գործերով, իսկ Մարթան Մորուք Կարոյի հետ հայտնվել էր Թալինի շրջանի Ահանգչի (Զովասար) գյուղում: Թվում էր, թե նրանց կյանքը նոր պայմաններում խաղաղ ու հանգիստ պետք է ընթանա: Բայց այդպես չեղավ. Մորուք Կարոն եւ Մարթան, դժբախտաբար, հարազատ հողի վրա եւս հանգիստ չունեցան՝ ենթարկվելով բոլշեւիկյան հալածանքի: Մորուք Կարոն ազատվեց հրաշքով, Արաքս գետով անցնելով՝ ՀԽՍՀ սահմանը,

[28] *Անդ:*

1930 թ. հաստատվեց Իրանի Համադան քաղաքում, որտեղ 1949 թ. դեկտեմբերի 6-ին կնքեց իր մահկանացուն:[29] Մորուս Կարոյի փախուստից հետո Մարթային ձերբակալեցին եւ երեք աղջիկների հետ զանազան տանջանքներից հետո 6 ամիս պահեցին Երեւանի բանտի նկուղներում, այնուհետեւ աքսորեցին Ղազախստան, որտեղ հինգ տարի աքսորավայրում տանջանքներից հետո հերոսուհուն հաջողվեց կրկին վերադառնալ Զովասար: Այստեղ էլ ազգին, ընտանիքին ու հարազատներին նվիրված Մարթան կնքեց իր մահկանացուն՝ 1983 թ. հոկտեմբերին[30]: Իսկ Լոլա Սասունին Հայաստանի խորհրդայնացումից հետո հայտնվեց Չեկայի երեւանյան բանտում: Նա կարողացել էր փրկվել Փետրվարյան ապստամբության շնորհիվ, որից հետո անցել էր Երեւանից Զանգեզուր, ապա Պարսկաստան: Այնտեղից Պոլիս, Սոֆիա ու Վիեննա էր անցել, ապա Ժնեւ, իսկ 1925 թ.՝ Սասունիների գերդաստանի հետ Փարիզ, այնուհետեւ վերջնականապես հաստատվել էր Լիբանանում՝ Բեյրութում: Լոլան ինչպես Փարիզում, այնպես եւ Բեյրութում բեղուն գործունեություն է ծավալել «Կապույտ խաչում», ապա Լիբանանի «Օգնության խաչում» ԼՕԽ-ում: Նա վախճանվել է 1969 թ. հոկտեմբերին Բեյրութում[31]:

Ն. Թալինի բերդի անկումից հետո, երեք օրվա ընթացքում, մաքրվեց մինչեւ Աշտարակի Ուջան գյուղն ընկած տարածքը՝ մոտ 70 կմ, ուր տեղավորվեց մոտ 70 հազարի հասնող տարոնահայությունը, որը մինչ այդ կուտակված էր Սարդարապատի շրջանում: Մի քանի օրից մաքրվեցին նաեւ Աշտարակի թաթարական ապստամբ շրջանները[32]: Դրանով ոչ միայն լուծվեց գաղթականության տեղավորման խնդիրը, այլեւ վերացվեց Երեւանի դեմ սպառնալիքը, որն ավելի ակնառու դարձավ Սարդարապատի ու Բաշ-Ապարանի կռիվների ժամանակ: Զարմանքով կարելի է նկատել, որ այս կարեւոր փաստերը երկար ժամանակ դուրս են մնացել պատմաբան ուսումնասիրողների տեսադաշտից, մինչդեռ առանց վերոհիշյալ ռազմավարական ամրոցի գրավման, ինչպես նաեւ Ալագյազի թուրք-թաթարական գյուղերի ազատագրման ու նրանցում գաղթականության տեղավորման հնարավոր չէր ապահովել թիկունքը եւ մայիսյան հերոսամարտի հաղթանակը:

Երկար ժամանակ պատմաբանների ուշադրությունից վրիպել են Շիրակի բնակչության 1918 թ. մայիսյան գոյապայքարի հարցերը, որոնց առաջին անգամ անդրադարձել է պրոֆ. Հ. Մելիքյանը: Թվում

[29] Է. ՄԻՆԱՍՅԱՆ, *նշվ. աշխ., էջ 369:*
[30] *Անդ:*
[31] *Անդ, էջ 457:*
[32] Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ, *Ռուբեն, Երեւան 2007, էջ 275:*

է, թե թուրքական զորքերը գրեթե առանց դիմադրության, անարգել Ալեքսանդրապոլը գրավելուց հետո մոտեցել են Սարդարապատին, բայց իրականում այդպես չի եղել։ Քննարկելով թուրք բարբարոսների դեմ Շիրակի բնակչության 1918 թ. գոյապայքարի հարցերը՝ Հ. Մելիքյանը հանգում է այն հետեւության, որ «Սառնաղբյուրի (Սոգյութլիի) լեռներով շրջապատված գոգավորությունում պատսպարված շուրջ հարյուր հազար փախստական գաղթականներին կոտորածից փրկելու նպատակով, Արեւմտյան Հայաստանի տարբեր մարզերից նրանց ուղեկցած մի շարք հայ անվանի ազգային գործիչների ջանքերով, Սոգյութլի-Մաստարա-Մուսլուղի-Բողազքյասան-Տաշղալա-Մոլլա-Գյոքչա-Շիրվանջուղ գյուղերի շրջանում, տեղական աչքի ընկած գյուղացիների գործուն աջակցությամբ, ստեղծվեց պաշտպանական ամուր պատնեշ, որի կենտրոնը «շտաբը» գտնվում էր Սոգյութլիում»[33]։

Հայկական կամավորական շարժման ժամանակ աչքի ընկած մի շարք խմբապետներ՝ Պանդուխտը, Սմբատը, Մակեդոնը, Բուլանըղցի Մուրադը, Զոլոն, Նորեն եւ ուրիշներ, որոնք Անդրանիկի մտերիմ զինակիցներն էին, անցնելով Էրզրում-Կարս-Ալեքսանդրապոլ նահանջի ճանապարհով եւ իրենց հետ դեպի էջմիածին, Երեւան ուղեկցելով նաեւ Կարսի ու Շիրակի փախստականներին, տեղափոխելով մեծ քանակությամբ զենք, Սառնաղբյուրի հանգուցային գոտում մի քանի օր կանգ առան, կազմակերպված հունի մեջ դրեցին գոյապայքարի ելած նաեւ Արեւելյան Շիրակի մի շարք գյուղերի բնակչության պայքարը։ Սարերը ելած տղամարդկանց միավորելով, շուրջ 3 հազար հոգու զինելով ու վարժեցնելով, իրենց հետ եկած զինյալ կամավորների, նահանջող հայկական զորամասերի ցիրուցան եղած զինվորների հետ միասին, նախքան Սարդարապատի հերոսամարտը, վճռական պայքար կազմակերպեցին թուրքական զորաջոկատների ու նրանց միացած տեղական թաթար-քրդական խուժանի դեմ։

Թուրքերին չհաջողվեց այստեղ եւս իրագործել ցեղասպանության քաղաքականությունը թե՛ Սառնաղբյուրում եւ թե՛ հարեւան գյուղերում պատսպարված, կուտակված փախստական-գաղթականների եւ տեղի բնակչության նկատմամբ։ Բացառություն էր կազմում Զիթհանքովի կոտորածը, որին զոհ գնացին շուրջ 3 հազար հայեր (միայն

---

[33] *Տե՛ս Հ. Մելիքյան, Մարալիկի հնագույն գերդաստաններից մեկի պատմությունը, Երեւան, 2006, էջ 121։*

3 մարագներում այրվեցին 450 հոգի)[34]։ Կատաղի մարտեր տեղի ունեցան Սոգյութլիի, Տաշղալայի, Մոլլա-Գյոքչայի, Շիրվանջուղի սարերում եւլեռնային կածաններին, դեպի Արարատյան դաշտ տանող ճանապարհներին։ Սոգյութլիի եւ Շիրվանջուղի լեռնանցքներից բացի, դիմադրական մարտեր եղան նաեւ Մոլլա-Գյոքչայի շրջակայքում։ Դրանք, ինչպես եւ տեղական՝ առանձին պաշտպանական գոտու կազմակերպումը, նպատակ ունեին կանխելու Ալեքսանդրապոլից, Հոռոմից դեպի Շիրվանջուղ-Սոգյութլի շարժվող թուրքական զորաջոկատների առաջխաղացումը։ Այդ ամենի շնորհիվ հնարավոր դարձավ մայիսի 17-ից 22-ը փախստականների ապահով անցումը դեպի Էջմիածին-Երեւան։ Արեւմտահայ կամավորների եւ Շիրակի վերոնշյալ գյուղերի բնակչության հերոսական գոյապայքարի շնորհիվ կոտորածից փրկվեց հայ ժողովրդի մի նշանակալից զանգվածը եւ այդ ժամանակահատվածում՝ նաեւ տեղի բնակչությունը։

Կարսի գրավումից հետո ստեղծվել էր թուրքական «Կարս» բանակային խմբավորումը՝ Յաղուբ Շեւքի փաշայի գլխավորությամբ, որի նպատակն էր գրավել ամբողջ Արեւելյան Հայաստանը, Թիֆլիսը, Բաքուն, ապա Հյուսիսային Պարսկաստանը, այլ կերպ ասած՝ իրականացնել պանթուրքական իրենց ծրագիրը։

Մայիսի 15-ին, վաղ առավոտյան թուրքական զորքերը հանկարծակի հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա։ Քաղաքում գտնվող բոլոր զորամասերը միահամուռ կռվի ելան։ Յավոք մի քանի ժամ անց թուրքական զորքերը գրավեցին քաղաքը՝ թալան ու սպանություններ կազմակերպելով բնակչության շրջանում։ Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքական զորքերի հրամանատարությունը կատարեց զորքերի վերադասավորում՝ ստեղծելով չորս զորախումբ։ Առաջին զորախումբը, որի հրամանատարն էր Մյուրսել բեյը, շարժվեց Վորոնցովկայի (Կալինինոյի) ուղղությամբ՝ ձգտելով դուրս գալ Բոլնիս-Խաչեն-Թիֆլիս գիծ՝ Վրաստանի մայրաքաղաքը գրավելու համար։ Երկրորդ զորախումբը, որի հրամանատարն էր Ջեմալ-Ջավիդ բեյը, գործում էր Համամլու-Ղարաքիլիսա-Դիլիջան-Ելիզավետպոլ ուղղությամբ՝ Բաքուն գրավելու նպատակով։ Հաջորդ երկու խմբավորումների առջեւ խնդիր էր դրված կարճ ժամանակում գրավել Երեւանը, ամբողջ Արարատյան դաշտը, առաջ շարժվելով՝ գրավել Նախիջեւանը, Զանգեզուրը, Ղարաբաղը՝ դարձյալ Բաքու

[34] *Անդ, էջ 113։*

շարժվելու համար։ Նույն ժամանակ հայոց զորքն ստիպված հետ քաշվեց նաեւ Սուրմալուից, այնուհետեւ թուրքական բանակը մտավ Արարատյան դաշտ եւ մայիսի 21-ին գավթեց Սարդարապատ գյուղն ու երկաթուղային կայարանը։ Սարդարապատում գտնվող՝ 40 հրանոթով զինված 5000-անոց թուրքական 36-րդ հետեւակային դիվիզիայի դեմ կանգնած էր հայկական կորպուսի Ալագյազի խմբավորումը, որի մեջ մտնում էին Երկու հետեւակային բրիգադ՝ Երզնկայի, Էրզրումի, Խնուսի եւ Ղարաքիլիսայի գնդերով, եւ մեկ հեծյալ գունդ[35]։ Առաջին բրիգադի հրամանատարն էր գնդապետ Մորելը, որին փոխարինեց փոխգնդապետ Մխիթարյանը։ Երկրորդ բրիգադի հրամանատարն էր ծագումով գերմանացի կապիտան Շնեուրը։ Յուրաքանչյուր գնդում կար 300–400 զինվոր, որը նախատեսվածից քիչ էր։ Թուրքական առաջխաղացումը կասեցնելու նպատակով կատարվեց հայկական զորամասերի վերախմբավորում։ Ստեղծվեց Երեւանյան զորախումբը՝ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ։ Բաշ-Ապարանի մատույցներում տեղակայված Դրաստամատ Կանայանի (Դրո) զորախմբի խնդիրը թշնամու՝ Սպիտակի կողմից դեպի Երեւան հնարավոր հարձակմանը խոչընդոտելն էր։ Պաշտպանական միջոցներ ձեռնարկվեցին նաեւ Կողբի եւ Իգդիրի մատույցներում։ Այս ուղղությամբ դեպի Երեւան շարժվող թուրքական 5-րդ եւ 12-րդ դիվիզիաների առաջխաղացումը կանգնեցնելու համար, Մ. Սիլիկյանի կարգադրությամբ, պայթեցվեցին Ղարաղալայի եւ Մարգարայի կամուրջները, Արաքսի ձախ ափին խրամատներ կառուցվեցին, եւ թույլ չտրվեց թշնամուն անցնել գետը։ Գնդապետ Բաղդասարյանի գլխավորած ուժերը պաշտպանական դիրքեր գրավեցին Նախիջեւան-Շարուր ուղղությամբ։ Գեներալ Սիլիկյանի լավ մտածված որոշումների շնորհիվ հնարավոր եղավ ապահովել զորաթեւերի անվտանգությունը[36]։

Ժողովրդի ինքնապաշտպանական բնազդը հասավ իր գագաթնակետին։ Մարգարա-Սարդարապատ գծի վրա հավաքվեց Երեւանի եւ նրա մոտակա շրջանների հայ բնակչությունը։ Այս զորահավաքի կազմակերպման գործում մեծ էր Վանի ինքնապաշտպանության հերոս, 1918 թ. Երեւանի ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանի դերը, որին դեռեւս երկու ամիս առաջ խորհուրդը օժտել

---

[35] Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիվները, Երեւան, 1994, էջ 174։*

[36] *Տե՛ս* Ս. ԱՖԱՆԵՍՅԱՆ, *Սարդարապատի հաղթանակը, Երեւան 1991, էջ 16։*

էր դիկտատորի իրավունքներով։ Նրա հմուտ ղեկավարության շնորհիվ Սարդարապատում գտնվող հայկական զորքերը ժամանակին ապահովվեցին զինամթերքով, սննդով եւ ջրով։ Նրա կոչով բազմաթիվ կամավոր աշխարհազորայիններ շտապեցին Սարդարապատ։ Ա. Մանուկյանի հստակ ձեւակերպած հրամաններում հիշատակվում էր հայերի ազատ ու անկախ ապրելու իրավունքը, սեփական ուժերով պաշտպանվելու հնարավորությունը։

Այդ օրերին մեծ թվով խանդավառ դպրոցական աղջիկներ հիվանդանոցները մտան ծառայելու, իսկ մեծ թվով կանայք եւ աղջիկներ էլ խմբեր կազմեցին բանակին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու եւ ծառայելու համար։ Նրանցից շատերը ոչ միայն օգնում էին զինվորներին եւ կռվող աշխարհազորայիններն անհրաժեշտ ջուր, սննդամթերք, փամփուշտներ մատակարարելու գործում, այլեւ զենքը ձեռքին տղամարդկանց կողքին կռվում էին անողոք թշնամու դեմ։ Այդ օրերին Արամ Մանուկյանի կողքին էր նրա կինը՝ Կատերինան, որին փաղաքշական Կատյուշա անունն էին տալիս։ Կատյուշան շատ նվիրյալ հայուհիների գլուխն անցավ եւ նրանց հետ մեծ ծավալի աշխատանքներ տարավ՝ դարձնելով նրանց առաջատար հիվանդապահուհիներ։ Մայիսյան փառավոր հաղթանակներից հետո, երբ ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, 1919 թ. հունվարի 29-ին բծավոր տիֆից՝ անողոք հիվանդությունից, մահացավ ամուսինը՝ նշանավոր Արամ Մանուկյանը, Կատյուշան խորհրդարանի անդամ ընտրվեց եւ կարեւոր աշխատանք տարավ բժշկական հանձնախմբի մեջ։ Հանրապետության անկումից հետո, նա որոշեց հայաստանում մնալ, ուր գտնվում էր ամուսնու շիրիմը՝ Մասեաց հովանու ներքոյ[37]։

Անկախ քաղաքական համոզմունքներից՝ ժողովուրդը ոտքի էր կանգնել կենաց ու մահվան կռվի՝ հանուն հայրենիքի, հանուն ազգային արժանապատվության։ Դա հայերի հայրենական պատերազմն էր, համաժողովրդական ինքնապաշտպանությունը՝ ֆիզիկական բնաջնջումից խուսափելու համար[38]։ Իրավիճակն այնպիսին էր, որ նահանջի մասին մտածելն իսկ անհնարին էր. հաղթանակ կամ մահ։ Սարդարապատի համաժողովրդական պատերազմին մասնակցում էին զինվորականները, գյուղացիությունը, բանվորներն ու արհեստավորները, հոգեւորականությունն ու մտավորականությունը։ Եղնիկ եւ Թադեւոս Թաղիանոսների կոչով հավաքագրված 500 աշխարհազորայիններին առաջնորդում

[37] Ա. Զէյթլեան, *Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճելըս, 1992, էջ 161, 162։*

[38] Հ. Թուրշեան, *Սարդարապատի հերոսամարտը, Երեւան, 1969, էջ 143։*

էին ճեմարանի տեսուչները, արքեպիսկոպոսները, որոնց թվում՝ հայտնի հայագետ Գարեգին Հովսեփյանը եւ Էրզրումի հոգեւոր առաջնորդ Զավեն Բաբայանը, որոնք ձի հեծնած ընթանում էին առջեւից՝ խաչը ձեռքներին։ Զենք էին վերցրել ծերունի Թաղիանոս Թաղիանոսյանը, պատանի Ակսել Բակունցը, ապագա ակադեմիկոսներ Արարատ Ղարիբյանը, Գրիրգոր Ղափանցյանը, մաթեմատիկայի ուսուցիչ Բահաթուր Բահաթրյանը եւ շատ ուրիշներ[39]։ Մայիսի 20-ին առանձին հայկական կորպուսի երկրորդ դիվիզիայի հրամանատար գեներալ Մ. Սիլիկյանը շտաբի պետ փոխգնդապետ Ալեքսանդր Վեքիլյանի հետ միասին մշակեց գործողությունների ծրագիր, որի իրականացումը հանձնարարվեց գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանին։ Գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ գործող Սարդարապատի զորամասը 1918 թ. մայիսի 22-ին թիկունքից երկու ուղղություններով հարձակման անցավ Քյորփալուի (Արշալույս) եւ Ղուրդուղուլի (Արմավիր) գյուղերի բնագծերից՝ եռանդուն գրոհով ջախջախելով թուրքերին Ղամըշլու (Եղեգնուտ) գյուղի շրջանում եւ նույն օրը հետ գրավեց նախորդ օրը թշնամու վերցրած Սարդարարպատ գյուղը։ Հարձակման անցած զորամիավորումների մեջ էր հայկական հետեւակային 5-րդ գունդը, որը մեծ մասամբ համալրված էր ղարաբաղցի զինվորներով, որոնց հրամանատարն էր գնդապետ Պավել (Պողոս) Բեկ Փիրումյանը՝ գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանի հորեղբոր որդին։ Կիլիկիո ապագա կաթողիկոս, արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը նրանց մկրտել էր «մահապարտների գունդ» անունով. այն ուժեղացված էր շրջակա գյուղերից հավաքված շուրջ 500 կամավոր աշխարհազորայիններով։ Հարձակվողների թվում էին գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը, փոխգնդապետ Պերեկրյոստովի պարտիզանական հետեւակային գունդը, Իգդիրի եւ Խնուսի հետեւակային գնդերը, Զեյթունի հեծյալ գունդը՝ գնդապետ Սալիբեկովի հրամանատարությամբ։ Այդ կռիվներում հատկապես աչքի ընկավ Խնուսի հետեւակային գունդը՝ խնուսցի Մուշեղի ղեկավարությամբ, որը իսկական հերոսության օրինակ ցույց տվեց՝ ջախջախելով թուրքական առաջապահ զորամասերը։ Այդ օրը՝ մայիսի 22-ին, ամբողջովին ոչնչացվեցին թուրքական դիվիզիայի երկու վաշտերը[40]։

---

[39] *Տե՛ս անդ։*

[40] *«Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա. 1918 թ. մայիսյան հերոսամարտեր», արխիվային նյութերի փաստաթղթեր, հուշագրություններ եւ այլն (ժողովածու), կազմեցին Ն. Սարգսյանը եւ Ս. Միրզոյանը, Երեւան, 1998, էջ 68, 69։*

Հաղթանակը կատարյալ էր։ Գեներալ Մ. Սիլիկյանը հաղորդում է գլխավոր շտաբին, որ զորքերի մարտական ոգին գերազանց է։ Թուրքերը խուճապահար եւ մեծ կորուստներով նահանջելով 15–20 կմ, օգտվելով այն հանգամանքից, որ հայկական զորքերը իրենց չեն հետապնդում, պաշտպանության անցան «Արաքս» կայարանի շրջանում։ Թուրքական հրամանատարությունը որոշեց ուժեղացնել Սարդարապատի մոտ գտնվող խմբավորումը, ուստի օգնություն ուղարկեց 5-րդ դիվիզիայի զորքերին, սակայն հայերին հաջողվեց դրանց հետ շպրտել։ Մայիսի 22-ից 26-ը Սարդարապատի մոտ թուրքերը կորցրին 500 ասկյար։ Առաջին հաջողությունը մեծապես բարձրացրեց հայոց զորքի եւ ժողովրդի բարոյական ոգին։ Ժողովուրդը դարձել էր միասնական ու միակամ։ Հենց ազգային միասնությամբ էր պայմանավորված Սարդարապատի եւ մյուս հերոսամարտերի հաղթանակը։ Սարդարարպատի վերագրավումից եւ համալրում ստանալուց հետո գեներալ Մ. Սիլիկյանի գլխավորությամբ մշակվեց թուրքական ուժերի ջախջախման ծրագիր, որով նախատեսված էր նաեւ Կարսի ազատագրումը։ Փոխգնդապետ Կարապետ Հասանփաշայանի հրամանատարությամբ ստեղծվեց հարվածային խումբը՝ «Խզանուզի ջոկատը»։ Նրա մեջ մտնում էին Երզնկայի հետեւակային գունդը, Մակուի առանձին գումարտակը, Խնուսի գնդի մեկ վաշտ եւ չորս թնդանոթ, բոլորը միասին՝ 600 զինվոր եւ 200 հեծյալ։ Գեներալ Մ. Սիլիկյանը հրամայեց այդ խմբին՝ մայիսի 27-ի լուսաբացին շարժվել Խզնաուզ (այժմ Աշտարակի Կոշ ավանի մոտ) գյուղից եւ Արագած լեռան փեշերից Շամիրամի ձորով շրջանցել թուրքերի դիրքերը ձախ թեւից[41]։ Նույն օրը կեսօրին Կարապետ Հասանփաշայանի զինվորները թշնամու վրա կրակ բացեցին թիկունքից, նորից աչքի ընկան Խնուսի գնդի մարտիկները[42]։ Այդ հարվածից թուրքերը հանկարծակիի եկան, սակայն դրան հետեւեց 5-րդ հետեւակային «մահապարտների» գնդի գումարտակների հարձակումը ճակատից եւ մշեցի Պանդուխտի (Միքայել Սեֆերյանի) մեկնազենների (պարտիզան) հարձակումը՝ հյուսիսից, որոնք համալրվել էին Թալինի շրջակա գյուղերի՝ Ղրմզլու (Կարմրաշեն), Գյոզլու (Ակունք), Դադալու (Եղնիկ), Խուլդարվիշ (Ոսկեթաս), Ահագչի (Զովասար), Ադյաման (Գառնահովիտ), Սղարշիկ եւ

---

[41] Ա. Կ. Շնէուր, *Սարդարապատի հերոսամարտը։ Մասնակցողի յուշեր, 1967, Ֆրեզնո, էջ 42,43։*

[42] Ե. Կյուրեղյան, *Իմ հուշերի ճանապարհով, Երեւան, 2009, էջ 212–214։*

Աշնակ գյուղերի կռվող բնակչությամբ։ Անցնելով հարձակման՝ հայկական ուժերը, գեներալ Մ. Սիլիկյանի գլխավորությամբ, խուճապահար փախչող թշնամուն հետապնդեցին մինչեւ Ալեքսանդրապոլ։ Շրջահայց գեներալը ցանկանում էր հետ գրավել Ալեքսանդրապոլը, սակայն մայիսի 30-ին Երեւան ժամանած գեներալ Թ. Նազարբեկյանն արգելեց այդ գործողությունը եւ հրամայեց դադարեցնել կռիվները։ Այդ որոշման դեմ զայրացած բողոքեց Սարդարապատի զորաջոկատի հրամանատար գնդապետ Դանիել Բեկ - Փիրումյանը. սակայն՝ ապարդյուն։

Էսադ փաշայի գլխավորած թուրքական 9-րդ դիվիզիայի մի մասը մայիսի 20-ին արդեն գրավել էր Համամլուն (Սպիտակը), իսկ մայիսի 22-ին՝ Բաշ-Ապարանը եւ շարժվել դեպի Երեւան՝ միանալու Սարդարապատի ուղղությամբ գործող թուրքական 36-րդ հետեւակային դիվիզիային։ Դեռեւս Սարդարապատի ճակատամարտից առաջ գեներալ Մ. Սիլիկյանի մշակած ծրագրի համաձայն՝ Արագած լեռան փեշերի եւ Բաշ-Ապարանի պաշտպանությունը հանձնարարվել էր Դրոյի հրամանատարության տակ դրված զորախմբին։ Դրոն սկզբում չհավատաց, որ թուրքական մեծաքանակ ուժերը կարող են կենտրոնացվել Բաշ-Ապարանի ճակատում, առարկեց Սիլիկյանի առաջարկին, պնդելով, որ ճիշտ է համատեղ ուժերով Սարդարապատում ջախջախել թշնամու ուժերը, ապա նոր ջախջախիչ հարված հասցնել Ապարանում գրոհող թուրքերին։ Սակայն, երբ տեղափոխվեց Բաշ-Ապարանի ճակատ, համոզվեց Սիլիկյանի խոսքերի ճշմարտության մեջ։ Մայիսի 22–23-ին առաջին հարվածներին դիմագրավեցին տեղի աշխարհազորայինները Սեդրակ աղայի (Ջալալյանի), Արսեն աղայի (Տեր-Պողոսյան), Բաֆֆու Խնեթի՝ Սամսոն Տեր- Պողոսյանի որդու, Դավիթ Մելիքսեթյանի եւ այլոց գլխավորությամբ։ Նրանք համառորեն մինչեւ վերջ կռվելով դիմադրեցին՝ թուրքական առաջապահ զորամասերին[43]։ Հյուսիս-արեւելքից Երեւանին սպառնացող վտանգը կանխելու համար գեներալ Մ. Սիլիկյանը մայիսի 24-ին Սարդարապատի ճակատից հանեց եւ Բաշ-Ապարանի ճակատ ուղարկեց Դոլուխանյանի հետեւակային 6-րդ գունդը, Ջալինյանի 2-րդ հեծյալ գունդը, Կորոլկովի հեծյալ կամավորներին, Սիլինի սահմանապահ վաշտը, Իգիթխանյանի եւ Սակիլարիի հրետանային մարտկոցը։ Դա հանգեցրեց Սարդարապատի ճակատի մերկացմանը։ Բաշ-Ապարան են մեկնում նաեւ Գանձակեցի Զեմլյակի, զանգեզուրցի Յապոնի, բաշ գառնեցի Մարտիրոսի, Քաչալ

[43] Հ. Ավետիսյան, *Հայոց ազգային միասնության հաղթանակը, էջ 104–105։*

Ղազարի, սասունցի Մանուկի, Զոլոյի, Մակվեցի Մեսրոպի խմբերը[44]։ Թողնելով Բաշ-Ապարանը՝ Դրոյի զորախումբը քաշվեց հարավ՝ դեպի Ալի Քուչակ, այնուհետեւ դիրքեր գրավեց Ղազնաֆար եւ Ղարաքիլիսա գյուղերում։ Մայիսի 24-ին Դրոն ստացավ Սարդարապատի ճակատից հանված համալրումը, Ջհանգիր աղայի ղեկավարած 1500 հեծյալները, որոնք նույնպես եկել էին Սարդարապատի ճակատից։ Նրանց քանակը ավելացավ աշխարհազորայինների հաշվին։ Հայկական զորքերի ընդհանուր թիվը այստեղ հասավ 6000-ի։ Դրոն նախապատրաստեց իր զորքերի հարձակումը մայիսի 25-ին։

Խոսելով Ապարանի ճակատում հայ կանանց կատարած հերոսության մասին՝ պատերազմի մասնակից Վահան Մարտիրոսյանը գրում է. «Իսկական հերոսներ էին մեր աղջիկները... նրանք կռւում էին անձնուիրութեամբ, մինչեւ վերջ յաղթանակի հասնելու վճռականութեամբ... Զինուորական վերարկուներով Նունուֆար Բօզոյեանը, Նախշուն Մանուկեանը, Գարան Մովսիսեանը տղամարդ աղջիկներ էին, թշնամու աչքը հանող...»[45]։

Ճակատամարտի օրերին Նախշունը, Նունուֆարն ու Մաթանը կռվողների, այսպես ասած կապավորներն էին, նրանց հաց ու փամփուշտ հասցնողը։ Նրանց ներկայությունն անասելի ոգեւորում էր կռվողներին։ «Առհասարակ, ճակատամարտի օրերին տղամարդականց հետ փայլեցին նաեւ ապարանցի մամիկները, կանայք ու աղջիկները։ Նրանք հաց էին թխում, կռուողներին փամփուշտ, հաց ու ջուր հասցնում։ Յիշենք նաեւ Քամալի Նախշունին, Զոմոյ Գարանին, Բօզէյ Մաթանին եւ մյուսներին»,– գրում է ականատեսը[46]։

Ապարանի ճակատի մեկ այլ հատվածի կռիվներից խոսելիս հուշագիրը նկատում է. «Ապարանում կռւում էին բոլորը, կռւում էին նուիրական։ Կուզեմ յիշատակել նաեւ ճակատամարտի մասնակից բժիշկ Մեսրոպ Իսահակեանին, գթութեան քոյր Սինամ Բարսեղի Ալեքսանեանին, ովքեր դեղորայքի սնտուկներով, զէնքերը ձեռքերին կռւում էին եւ վիրակապում վիրաւորներին։ Սինամ Ալեքսանեանը իրեն յայտնի բոյսերից պատրաստուած քսուկներով բուժում էր վիրաւոր մարտիկների վէրքերը, զբաղւում էր բուժօգնութեամբ՝ վայելելով մարդականց յարգանքը։ Պատերազմին

---

[44] *Անդ, էջ 160–107*

[45] *«Հայաստանի Հանրապետութիւն», 3 մայիսի, 2018։*

[46] *«Հայաստանի Հանրապետութիւն», 4 մայիսի, 2018։*

մասնակցում էին Աշտարակի, Եղվարդի, Ղարաբաղի եւ ուրիշ բնակավայրերի աշխարհազօրային խմբերը։ Պատերազմը աւարտուեց կանոնաւոր բանակի, աշխարհազօրայինների եւ հայ ժողովրդի միասնական յաղթանակով»[47]։

Դրոյի 6000-անոց ջոկատը հարձակման անցաւ մայիսի 25-ին մտնելով Ալի-Քուչակ, ապա շարժվեց դեպի Բաշ-Ապարան, որտեղ մայիսի 29-ին ջախջախեց թշնամու երկու գունդն ու ծանր հրետանին։ Այս ճակատամարտում հայերին օգնում էր Ջհանգիր աղայի հրամանատարությամբ գործող եզդիների աշխարհազորային ջոկատը։ Թուրքերը տվեցին ավելի քան 200 զոհ՝ մարտադաշտում թողնելով մեծաքանակ ռազմավար։ Մայիսի 29-ին ջախջախված թուրքերը փախան նաեւ Համամլուից (Սպիտակ), որով եւ վերջնականապես վերացավ 9-րդ դիվիզիայի կողմից Երեւանն աքցանի մեջ առնելու վտանգը։ Ճակատամարտի ավարտից հետո թուրքերը սպիտակ դրոշով բանագնաց ուղարկեցին եւ բանակցությունների մեջ մտան Դրոյի հետ։ Ռուշդի բեյը Դրոյին հայտնեց, որ Բաթումում ստորագրվել է զինադադար, որի համաձայն՝ պետք է դադարեցվեին ռազմական գործողությունները։ Նա պահանջեց նաեւ հունիսի 1-ից հայկական զորքերը հետ քաշել Արագածից հարավ։ Դրոն կարգադրեց դադարեցնել մարտերը։

Ղարաքիլիսայում (Վանաձոր) մայիսի 24–28-ը տեղի ունեցան կատաղի մարտեր, որոնց մասնակցեց հայկական 4 գունդ, հավաքական հեծյալ ջոկատը եւ աշխարհազորայինները, ընդհանուր թվով՝ 7000 զինվոր, 10 հրանոթ, 20 գնդացիր։ Թուրքերն ունեին 70 հրանոթ, 40 գնդացիր եւ 10 000 զինվոր, որոնց օգնում էին նաեւ տեղական մահմեդականները։ Հայկական ուժերը համառ դիմադրություն ցույց տվեցին թուրքերին։ Աչքի ընկան գնդապետներ Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանի եւ Նիկոլայ Ղորղանյանի զորամասերը։ Զոհվածների թվում էր շտաբս-կապիտան, հրետանավոր Գուրգեն Տեր-Մովսիսյանը (հիշողություններում նրան բարձր է գնահատել մարշալ Հովհաննես Բաղրամյանը)[48]։

Գուրգեն Տեր-Մովսիսյանի ղեկավարությամբ հրետանավորները թուրքերին գնդակոծում էին բաց դիրքերից։ Թշնամու վրա միայն կեսօրվա ընթացքում արձակվեց 2000 արկ։ Ջինամթերքն սպառելուց հետո հրետանավորները, զինված սուրով ու հրացաններով, անցան գրոհի,

[47] *«Հայաստանի Հանրապետություն», 5 մայիսի, 2018, էջ 3։*

[48] *Տե՛ս* И. Баграмян, Мои воспоминания, Ереван, 1979, с. 91, 92.

կանգնեցրին թշնամու առաջխաղացումը: Մարտերում հաջարի հրամանատար Գուրգեն Տեր-Մովսիսյանի հետ միասին զոհվեցին եւս 25 հրետանավորներ ու զինվորներ[49]:

Ղարաքիլիսայի հերոսամարտում իրենց հաջությամբ աչքի ընկան հայ կանայք: Ականատեսը գրում է. «Ռազմական դրութիւնը համակել է բոլորին, նամանաւանդ կանայք իրենց անձնազոհութեամբ գերազանցում էին 5-րդ դարի փափկասուն տիկնանց: Նրանք տանջւում էին որպէս կին, որպէս մայր, որպէս քոյր: Նրանք շարշարւում էին որպէս տնտեսուհիներ՝ յանձն առնելով կերակրել մարտիկներին, առաջին դիրքերում նրանք տանջւում էին որպէս գթութեան քոյրեր՝ խնամելով ծանր վիրաւորներին: Տղամարդը չէր համարձակւում իր կնոջ դէմ թոյլ երեւալ, վախենալ, չէր թաքնւում, դասալքում, չէր փախչում՝ սարսափելով կնոջ ծաղրից ու արհամարհանքից: Կինը կռուի մէջ էր նուաճել իր իրաւունքը»[50]: Նկարագրելով թուրքերի կողմից Ղարաքիլիսայի եւ շրջակա 7 գյուղերի խաղաղ բնակչության կոտորածները՝ ականատեսը գրում է. «Շատ տեղերում հայ կինը զգալով, որ պղծուելու է իր նուիրական անմեղութիւնը, ոտնահարուելու է իր նամուսը՝ դիմեց ինքնազոհութեան մի բացառիկ միջոցի՝ թունաւորման: Այսպէս ամբողջ ընտանիքներով»[51]:

Ղարաքիլիսայի մոտ 4 օր (մայիսի 24–28-ը) շարունակվող ճակատամարտում հայ քաջերը կասեցրին թուրքերի առաջխաղացումը դեպի Դիլիջան, Թիֆլիս եւ Բաքու: Այնուամենայնիվ, թուրքերը կարողացան մայիսի 30-ին տիրել Ղարաքիլիսային եւ կազմակերպեցին խաղաղ բնակչության մեծ ջարդ: Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերը հայ ժողովրդի աննկուն կամքի, անկախության համար ազգովին պայքարելու պատրաստակամության եւ վճռականության արտահայտություն էին: Զուր չէ, որ թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան ազնվություն ունեցավ բարձրաձայն խոստովանելու, որ «Ղարաքիլիսայի, մոտ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»[52]: Հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը վիժեցրին հայերին ոչնչացնելու՝ երիտթուրքերի ծրագիրը եւ ստիպեցին հաշվի նստել: Հաղթանակը հայոց պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետության ստեղծման համար նախադրյալներ ստեղծեց[53]:

---

[49] *Տե՛ս Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Երեւան, 1997, էջ 230, 234:*
[50] *Մ. Ղազարեան, Ղարաքիլիսայի ճակատամարտը, Թիֆլիս, 1920, էջ 22, 23:*
[51] *Անդ, էջ 44:*
[52] *Տե՛ս Հ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երեւան, 1996, էջ 150:*
[53] *Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 236:*

Մայիսյան հաղթանակներն անսպառ ոգեւորության աղբյուր էին։ Նրանք ապացուցեցին, որ «մարտիրոսացված ժողովրդի երակներում տակավին հոսում է, ինչպես 15 դար առաջ Ավարայրում, արյունն այն հերոսների, որոնք ստեղծել են նրա պատմության աստեղային ժամերը։ Հենց Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի կռիվներում մեր հերոսների թափած արյունը հնարավորություն տվեց դնել անկախ պետության հիմքը եւ ապահովել 3000-ամյա ազգի շարունակականությունը»[54]։ Հայկական անկախ պետությունը հռչակվեց Անդրկովկասի Դաշնային Հանրապետության փլուզումից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին։ Այն օրերին, երբ տեղի էին ունենում մայիսյան հերոսամարտերը, վրաց մենշեւիկների եւ ադրբեջանցի մուսավաթականների գաղտնի գործողության հետեւանքով Անդրկովկասի Դեմոկրատական Դաշնակցային Հանրապետությունը գնում էր դեպի անկում։ Դեռեւս 1918 թ. մայիսի 15-ին, մինչեւ Սեյմի լուծարումը, վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան եւ գեներալ Օ. Ֆոն Լոսովը կնքել էին գաղտնի համաձայնագիր՝ Վրաստանը անկախ հայտարարելու մասին։ Նույնանման որոշում էր կայացվել թուրքերի եւ մուսավաթականների միջեւ։ Գերմանիայի հովանավորությունն ստանալու՝ հայերի բոլոր ջանքերը ձախողվեցին։ 1918 թ. մայիսի 26-ին գումարվեց Անդրկովկասյան սեյմի վերջին նիստը, որտեղ վրացիների պահանջով սեյմն ընդունեց որոշում ինքնալուծարման մասին։ Դրանից 5 ժամ անց նույն սրահում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ։ Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարեց հայկական գավառների միակ եւ գերագույն իշխանություն։ Այդ իրադարձություններից հետո, մայիսի 30-ին, վերսկսվեցին բանակցությունները Բաթումում։ Հայաստանն այդ բանակցություններում ներկայացնում էին Հ. Քաջազնունին եւ Ալ. Խատիսյանը։ 1918 թ. մայիսի 30-ին Հայոց Ազգային Խորհուրդը հրապարակեց հետեւյալ հայտարարությունը, որն ըստ Ս. Վրացյանի «թէեւ իսկական առումով անկախութեան հռչակում չէր, բայց դէպքերի բերումով դարձաւ այդպիսին»[55]։ Նիկոլ Աղբալյանի հեղինակած հայտարարության բանաձեւում ասված էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների

---

[54] *Տե՛ս* Հ. Սիմոնյան, *Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 50։*

[55] *Տե՛ս* Ս. Վրացեան, *նշվ. աշխ., էջ 161։*

գերագոյն եւ միակ իշխանութիւնը։ Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերը կազմել Հայոց Ազգային Կառավարութիւն, Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է Կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար (Հայոց Ազգային Խորհուրդ, 1918 թ., մայիս 30, Թիֆլիս)»։ Այսպիսով, ինչպես գտնում է Ս. Վրացյանը «Հայաստանի անկախութեան յայտարարութեան օրը իսկապէս պէտք է համարուի մայիսի 30-ը, սակայն հակառակ դրան համարւում է մայիսի 28-ը, այսինքն այն օրը, երբ Ազգային Խորհուրդը որոշեց հայկական պատուիրակութիւն ուղարկել Բաթում, իսկ հաշտութեան բանակցութիւններ վարելու թուրքերի նախապայմանը անկախութեան յայտարարութիւնն էր, որը ձեռք էր բերուել մայիսեան յաղթանակների շնորհիւ, ուստի այդ օրն էլ կարող է համարուել անկախութեան սկզբնաւորութեան օրը»[56]։ Այսպես թե այնպես, ըստ Ս. Վրացյանի, Հայաստանի Հանրապետության ծագման օրը եղավ մայիսի 28-ը։ Այդ օրը դարձավ նվիրական հայ ժողովրդի համար, մտավ ազգային տոնացույցի մեջ իբրեւ սրբազան օրերից մեկը[57]։ Ճակատագրի բերումով 1918 թ. հունիսի 4-ին ստորագրած Բաթումի հաշտության պայմանագրով առաջինը Օսմանյան Թուրքիան ճանաչեց Հայոց անկախությունը, անկախ պետականության վերականգնումը։

Այսպիսով, մայիսյան հերոսամարտի մասնակցեց հայոց քաջազունների սխրագործությունների արդյունքում ծնվեց հայոց առաջին անկախ հանրապետությունը։ Մայիսյան հերոսամարտերը ունեցան իրենց խորհուրդը կամ պատմական դասերը։ Առաջին խորհուրդը համազգային միասնության հաղթանակն էր, որը առավել եւս կարեւորվում է մեր օրերում։ Երկրորդ՝ հերոսամարտերը ցույց տվեցին կանոնավոր բանակի ստեղծման անհրաժեշտությունը, որը կամավոր աշխարհազորայիններ հետ միավորման շնորհիվ կարողացավ ապահովել փայլուն հաղթանակներ դարավոր թշնամու դեմ։ Այն առավել ակնառու արտահայտվեց 1988 թ. արցախյան ազատամարտի տարիներին, որի արդյունքում հայոց, այդ թվում Արցախյան ազգային բանակի եւ կամավոր աշխարհազորայինների ուժերով ազատագրվեց Լեռնային Ղարաբաղը եւ ստեղծվեց Արցախի հայոց հանրապետությունը։ Երրորդ՝ մայիսյան հերոսամարտերի արդյունքում ծնված Հայաստանի առաջին Հանրապետության հիմքի

[56] Անդ, էջ 162–163։
[57] Անդ, էջ 163։

վրա կազմավորվեցին Խորհրդային Հայաստանի եւ Հայաստանի երրորդ հանրապետությունները, որոնց պետական կառուցվածքի հիմքում հիմնականում ընկած էին առաջին հանրապետության կառույցները։ Փաստորեն, Հայաստանի երրորդ հանրապետությունը մայիսյան հերոսամարտերում ծնված առաջին հանրապետության ժառանգորդն է։

РЕЗЮМЕ

Статья посвящена историческим событиям 1917 года, произошедшим в Закавказье. В результате октябрьского российского переворота русские военные вывели Кавказский фронт и вернулись в Россию, покинув армянские районы и оставив их беззащитными перед турецко-курдскими силами и мусульманами. Однако в это время был сформирован Новый Армянский корпус под руководством генерал-майора Товмаса Назарбекяна и Еркрапа дивизии генерала Андраника. Вместе с армянским добровольческим отрядом они вели борьбу против турок. Отображая упорное и кровопролитное сопротивление, отряды вынуждены были отступить, оставив при этом Ерзнка, Байбурт, Эрзурум, Карс без боя, а также Саригамыш и другие поселения, приблизились к Александрополю. Новые факты свидетельствуют о героической самообороне Хотозора Каринской губернии, подробностях захвата внутренней талинской крепости, которое длилось пять месяцев. Анализ фактов свидетельствует также об общенациональном характере героических сражений Сардарапата, Баш-Апарана и Гаракилисы. В этих героических битвах проявляется смелое участие в боевых действиях и армянских женщин. Исторически неоспоримые факты основаны на героических эпизодах армянских мужчин, благодаря которым выиграли майские победы. В результате этих героических побед родилась первая армянская республика как независимое государство.

SUMMARY

On the basis of historical undeniable facts, the situation in Transcaucasia is presented in the result of the Russian Coup held in October of 1917, when the Russian forces withdrew from the Caucasian Front to Russia, leaving the Armenian regions

defenseless in front of the Turkish-Kurdish forces and the Muslim mob. The newly formed Armenian Corps, led by Major-General Tovmas Nazarbekyan, the Division of the Defenders of the Land headed by Major-General Andranik, fighting fiercely against numerous Turkish forces and showing a bloody resistance with Armenian volunteer troops, left behind Yerznka, Bayburd, Erzurum, Kars, Sarighamish without a fight and approached Alexandrapol. The 5-month heroic self-defense of Khotorjur of Karin province and the details of the seizure of the fortress in Lower Talin are presented through new facts. With the analysis of existing facts, the nation-wide nature of the heroic battles of Sardarapat, Bash-Aparan and Karakilisa is highlighted. The participation of brave-hearted Armenian women in military operations side by side with men is revealed here. The episodes of the Armenian women's heroism side by side with Armenian men are well-grounded with historical undeniable facts, which ensured the May victories. Due to the victories gained in those heroic battles, the First Armenian Republic was born as an independent state.

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

ՃԵՄԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ (2000–2007 ԹԹ.)

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ բարձրագույն առաջին դպրոցը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի բնութագրմամբ, «հաստատման օրից.... շարունակելով Սուրբ Էջմիածնի Մաշտոցեան դպրոցի, Հայոց երանելի հայրապետների եւ մեծ ուսուցչապետների դպրոցաշէն աւանդները, մշտապէս հաւատարիմ է եղել բարձրակարգ կրթութիւն մատուցելու իր կոչմանը, հաւատաւոր, հայրենանուէր ու եկեղեցասէր, քաջամիտ ու կորովի հայ հոգեւորականներ կրթելու իր առաքելութեանը»[1]։ Նոյնքան ակներեւ է նաեւ կրթական հաստատության դերը հայ մտավորականների՝ հայագետների, լեզվաբանների, գրականագետների, պատմաբանների, մանկավարժների եւ գիտական այլ ոլորտների մասնագետների պատրաստման գործում։

Ճեմարանի՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, կրթական բարեփոխումներն ու գործունեությունը կապված են Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետեւողական ու նպատակասլաց գործունեության հետ։

Այսօր՝ տարիների հեռվից միայն հասկանալի է դառնում այն նպատակաուղղված աշխատանքների աննախադեպ ծավալը, որը Գարեգին Բ. Հայրապետը պատրաստվում էր կյանքի կոչել Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանի կրթական եւ դաստիարակչական ոլորտում՝ նոր սերնդի հոգեւորականներ, ինչպես նաեւ աստվածաբաններ ու եկեղեցական այլ մասնագետներ պատրաստելու բնագավառում։

Կրթական գործում բազմափորձ[2] Հայրապետի նպատակն էր ճեմարանական ուսուցման արդյունավետության բարձրացման միջոցով

---

[1] *«Էջմիածին», 2002, Ը., էջ 31։*

[2] *Խոսքը վերաբերում է Գարեգին արք. Ներսիսյանի ջանքերով հիմնադրված Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում սրբազանի ծավալած մանկավարժական-կազմակերպչական*

պատրաստել քրիստոնեական հավատքի ճշմարտությունների, բարեպաշտության եւ Հայ Եկեղեցու սրբազան ավանդություններով սնված հոգեւոր սպասավորներ, որոնք կկարողանան Աստծու խոսքի թարգմանն ու քարոզիչը լինել կրթական տարբեր մակարդակով եւ հասարակական կարգավիճակով աչքի ընկնող միջավայրում, պատրաստել այնպիսի հոգեւոր հովիվներ, որոնք իրենց առաքելությունը պետք է իրականացնեին ոչ միայն հոգեւոր համայնքում, այլ նաեւ ուսումնական հաստատություններում, զորամասերում, հիվանդանոցներում, քրեակատարողական հիմնարկներում, մանկատներում եւ այլուր։ Իսկ մերօրյա հոգեւորականը որպեսզի պատրաստ լինի բազմադեմ կյանքում Աստծու խոսքը քարոզելուն, նա պետք է տիրապետի նաեւ հասարակական եւ կրթական ծառայություններ մատուցելու հմտություններին, ուստի անհրաժեշտ էր մշտապես կատարելագործել հոգեւոր կրթության համակարգը։

Հայոց Կաթողիկոսի համար աներկբա էր, որ հոգեւորականների մասնագիտական կրթության մակարդակը եւ որակը պայմանավորում են Հայ Եկեղեցու, հավատացյալ համայնքի, ինչպես նաեւ հայրենիքի ապագան։

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի արդյունավետ գործունեության հրատապության մասին Վեհափառ Հայրապետը միանգամայն հստակ բարձրաձայնել է իր անդրանիկ կոնդակում. «Հայրենի սրբութիւններով, քրիստոնէական համամարդկային արժէքներով զօրացնել ազգային մեր կեանքը, խօսքին համարժէք գործերով բարձրացնել մեր միութեան Տաճարը՝ կենսատու աւիշ առնող Քրիստոսի Աւետարանից եւ ներշնչման

վիթխարածավալ աշխատանքներին, որոնց մասին, ցավոք, այսօր քիչ է գրվում։ Այդ մասին Եղիշե ավ. քհն. Սարգսյանը գրում է. «1990 թ. մեծ պատասխանատվությամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գեռաշնորհ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը (այժմ՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս), հաշվի առնելով քաղաքական ազատության այն հովերը, որ սկսվել էին մեր հայրենիքում, հնարավորություն ունեցավ բանալու եւ հավատացյալների տրամադրության տակ դնելու Սեւանի՝ 70 տարի փակ մնացած հրաշակերտ վանքերը։ Գեռաշնորհ սրբազանը, լինելով շրջանավարտը Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանի, շատ լավ գիտեր, որ սահմանափակ թվով ուսանողներ ունեցող հոգեւոր ճեմարանը չի կարող բավարարել գալիք ժամանակների եկեղեցու պահանջները։ Օգտագործելով իր հեղինակությունը՝ Գարեգին սրբազանը կարողացավ հայթայթել ցանկալի այն գումարը, որը հնարավոր կդարձներ, մեր նախորդ մեծերի նման, Սեւանի թերակղզում բանալ հոգեւոր դպրանոց, որն իրավամբ պիտի օգներ Գեւորգյան հոգեւոր ճեմարանին։ Ծրագիրը, որ սրբազանի կողմից ներկայացվում է Վազգեն Ա. Հայրապետին, շատ բարձր է գնահատվում, բայց Հայրապետն այդ հարցում այնքան էլ լավատես չէր։ Իրեն հատուկ լավատեսությամբ՝ Գարեգին սրբազանը, հաղթահարելով… բոլոր դժվարությունները, 1990-ի դպրոցական տարեշրջանին հանդիսավորապես բաց է անում Սեւանի դպրանոցը։ 1994 թ. Գարեգին սրբազանի կողմից դպրանոցը կոչվում է Վազգեն Ա. հայրապետի անունով՝ վերանվանվելով Վազգենյան հոգեւոր դպրանոց». ԵՂԻՇԵ ԱՎ. ՔՀՆ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը (Գեւորգյան ճեմարան-Աստվածաբանական համալսարան), Ս. Էջմիածին, 2009, էջ 190։*

աղբիւր ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու նոյնքան սուրբ Հայրենիքը մեր»[3]։ Այդ խնդրի հետեւողական լուծումը պարզաբանելով՝ Վեհափառ Հայրապետը առաջ է քաշել ժամանակի ոգուն համապատասխան «հոգեւոր սպասաւորների յաջորդական պատրաստութիւնը»։ Ըստ նրա՝ «...նորաբաց եկեղեցիները յուսալի երաշխիքներ են դառնում Մայր հայրենիքում եկեղեցական համայնքների լիարժէք կազմակերպման համար, որպէսզի Առաքելական մեր Եկեղեցին՝ մշտապէս ներկայ իր հաւատացեալների առօրեայ կեանքում, լիարիւն իրականացնի մեր ժողովրդին հովուելու երկնատուր առաքելութիւնը՝ չթողնելով բաց դաշտ օտարամուտ եւ օտարացնող հոսանքների գործունէութեան համար»[4]։

Հայրապետական անդրանիկ կոնդակում Վեհափառը միանգամայն հստակ առաջադրել է նաեւ «նոր սերնդի նվիրյալ հոգեւոր սպասավորներ» պատրաստելու առաջնահերթությունը. «Հոգեւոր կեանքի զօրացման ճանապարհին առաջնահերթ կարեւորում ենք հոգեւորական նոր սերնդի պատրաստութիւնը, որպէսզի օր առաջ կեանք մտնեն Աւետարանի ճշմարտութեան լոյսով զինավառ, շնորհներով լի, մեզ գործակից նուիրեալ հոգեւոր սպասաւորներ՝ առաջնորդելու եւ համախմբելու մեր զաւակներին Մայր Եկեղեցու, հայրենական աւանդների շուրջ»[5]։ Իսկ այդ նպատակի իրագործման համար Ամենայն Հայոց Կաթողիկոսը առաջնային է համարել Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացումը, որի մասին կոնդակում հռչակվել է. «Հայրական մշտական հոգածութեան ներքոյ պիտի պահենք Գէորգեան հոգեւոր ճեմարանը, Վազգէնեան հոգեւոր դպրանոցը եւ Շիրակի հոգեւոր ընծայարանը, որոնցում նախատեսում ենք համակարգել ու բարելաւել ուսումնակրթական գործընթացի կազմակերպումը»[6]։

Աներկբա է, որ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը քաջ գիտակցում էր, որ կրթական ոլորտը պետք է զերծ պահել ցնցումներից՝ ոչնչով չարդարացված արմատական մոտեցումներից եւ անհիմն շտապողականությունից։ Եւ Հայրապետական կոնդակի հորդորը՝ «Ազգային արդար իղձերի իրագործման ճանապարհին լինենք հիմնամուր կամուրջ՝ հայոց անցեալը, ներկան ու գալիքը կապող»[7], լիովին բնորոշում

---

[3] *«Էջմիածին», 2000, Բ., էջ 6։*
[4] *Անդ, էջ 6–7։*
[5] *Անդ, էջ 6։*
[6] *Անդ։*
[7] *Անդ։*

էր Վեհափառի վերաբերմունքը ուսումնական գործի նկատմամբ՝ ներկա եւ գալիք բոլոր գործընթացները խարսխել Հայ Եկեղեցու կրթական ավանդության վրա։

Վեհափառի՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը բուհական չափանիշներին համապատասխանող ուսումնական եւ առարկայական նոր ծրագրերով աշխատելու պահանջները ենթադրում էին փոփոխությունների մի ողջ շղթա։ Նախ՝ կրթական բարեփոխումները ամենից առաջ ենթադրում էին ճեմարանի՝ բարձրագույն ուսումնական հաստատության երբեմնի իրավունքների վերականգնում, ինչը պահանջում էր նաեւ համապատասխան չափորոշիչային-փաստաթղթային մասի պատրաստում։ Երկրորդ՝ այդ խնդրի լուծումից հետո պետք է իրագործվեր ճեմարանի անցումը ՀՀ բուհական համակարգին բնորոշ երկաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա) կրթությանը։ Պահանջը հստակ էր՝ ճեմարանական ավանդական աստվածաբանական կրթությունը բարձրացնել արդի պահանջներին համահունչ որակական նոր մակարդակի։ Վեհափառի առաջադրած խնդիրների իրագործումը ենթադրում էր նաեւ ապագայում ճեմարանավարտների՝ արտասահմանյան աստվածաբանական առաջատար բուհերում կրթությունը կատարելագործելու հնարավորություն։ Երրորդ՝ Հայ Եկեղեցու ապագայի համար հրատապ աստվածաբանական բարձրագույն կրթության անցումը թույլ կտար, որ Հոգեւոր ճեմարանը սփյուռքահայ ուսանողներին պատրաստեր նաեւ որպես հայագետ-ուսուցիչներ։

Եւ ինչպես իր կողմից առաջադրված ծրագրային մնացյալ հարցերում, այս հարցում եւս Հայոց Հայրապետի գործունեությունն աչքի ընկավ խոսքի եւ գործի ներդաշնակ միասնությամբ. «...Նորին Սրբությունը ձեռնամուխ եղավ ճեմարանական կրթության վերակազմակերպմանը՝ համաձայն ժամանակի առաջադրած խնդիրների...»[8]։ 2000 թ. հունիսին Գարեգին Բ. Հայրապետը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հոգեւորական ու աշխարհիկ դասախոսներից աշխատանքային մի խումբ կազմեց եւ նրանց ներկայացրեց Հոգեւոր ճեմարանը բարձրագույն ուսումնական հաստատություն դարձնելու իր ծրագիրը, որը ենթադրում էր հաստատության կառավարչական-համակարգման, իրավական-կարգավորող, ուսումնակրթական, ուսումնամեթոդական եւ հրատարակչական ոլորտների ու վերահսկողական համակարգի կատարելագործում։

[8] «Էջմիածին», 2004, ԺԱ.–ԺԲ., էջ 5։

Այդ նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը աշխատանքային խմբին հանձնարարեց Հայ Եկեղեցու հոգեւոր-կրթական ավանդության հենքի վրա մշակել ու հաստատման ներկայացնել ճեմարանի իրավական-կանոնակարգային, դասավանդման, գործավարության եւ ուսումնական հաստատության գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթեր։ Պահանջ առաջադրվեց նաեւ մշակել հոգեւոր-կրթական ոլորտի կադրային քաղաքականության իրագործման ու վերահսկման որոշակի գործիքակազմ, ստեղծել դասախոսների եւ ուսանողների տվյալների շտեմարան ու նրանց խրախուսման համակարգ։ Ճեմարանը բարձրագույն ուսումնական հաստատության վերածելու գործընթացում Հայրապետը մեծապես կարեւորեց նաեւ Հոգեւոր ճեմարանի եւ աշխարհիկ բուհական ու ակադեմիական հաստատությունների, պետական կառույցների հետ համագործակցությունը, ինչպես նաեւ արտասահմանյան հոգեւոր կրթական հաստատությունների հետ կապերի ստեղծումը։

Նախատեսվում էր նաեւ ծրագրային այնպիսի փաթեթի մշակում, որը կնպաստեր հոգեւոր կրթության կատարելագործմանը, առաջարկներ կներկայացներ ճեմարանի կարգավիճակի բարձրացման վերաբերյալ եւ կօժանդակեր հաստատության՝ իբրեւ բուհի պետական գրանցմանը։ Միանգամայն հստակ պահանջներ առաջադրվեցին նաեւ ճեմարանի ուսումնական եւ առարկայական ծրագրերի կատարելագործման ուղղությամբ։ Ընդ որում, Վեհափառը աշխատանքային խմբին հանձնարարեց, որ արդեն 2000–2001 ուսումնական տարում ճեմարանը պետք է աշխատի բարեփոխված եւ նոր ուսումնական ու առարկայական ծրագրերով[9]։ Այդպես, Վեհափառի գլխավորությամբ, ճեմարանական մասնագետների խումբը ձեռնամուխ եղավ Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատության՝ բուհի կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստմանը։

Հայոց Հայրապետի առաջադրած հիմնախնդիրները ենթադրում էին ճեմարանի շուրջ 130-ամյա հարուստ փորձի եւ ճեմարանական կրթության հիմնարար ավանդույթների պահպանմամբ աստվածաբանական բուհի ստեղծում, որի նպատակն էր արդի պահանջներին

---

[9] *Մանրամասները տե՛ս* ԵՂԻՇԵ ԱՎ. ՔՀՆ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը (Գեւորգյան ճեմարան-Աստվածաբանական համալսարան), էջ 218. նաեւ՝ «Նշանավոր ճեմարանականներ», պրակ 1, Ս. Էջմիածին, 2005, էջ 25–26, 124։*

համապատասխան աստվածաբան-հոգեւորականների պատրաստումը։ Իսկ վերջինիս իրականացումն առաջին հերթին ենթադրում էր ժամանակի հայրենական եւ արտասահմանյան բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխանող նոր ուղենիշային փաստաթղթերի կազմում եւ ներդրում։ Քանի որ Վեհափառի պահանջներն աչքի էին ընկնում համակարգային բնույթով, ծրագրված աշխատանքների եւ դրանց վերահսկողության համար իրականացվեց գործընթացային ղեկավարում։

Առաջադրված խնդիրների լուծումը ամենից առաջ պահանջում էր վերամշակել ճեմարանի ուսումնական ծրագիրը։ Նախկին կառուցվածքը (եռամյա դասարանական եւ եռամյա լսարանային) աստիճանաբար իր տեղը պետք է զիջեր քառամյա բակալավրիատին եւ երկամյա մագիստրատուրային։ Ընդ որում, ուսումնական նոր ծրագիրը պետք է կատարելապես նույնական լիներ Հայ Եկեղեցու մշակած ավանդական հոգեւոր-կրթական սկզբունքներին եւ միաժամանակ պետք է համապատասխաներ այդ ոլորտում գործող պետական չափորոշիչներին։ Փոփոխությունների այդ գործընթացը անհրաժեշտաբար ենթադրում էր նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի առարկայական ուսումնական ծրագրերի եւ սեմինար/գործնական պարապմունքների բովանդակային նորացում։

Այդպես, Գարեգին Բ. Հայրապետի անմիջական ղեկավարությամբ ու հսկողությամբ կազմվեց ՀՀ բուհական չափորոշիչներին լիովին համապատասխանող Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2000–2001 ուսումնական տարվա աշխատանքային նոր ծրագիրը, որի հիմքը ճեմարանի շուրջ 130-ամյա փորձառությունն էր եւ նախորդ շրջանների ուսումնական ծրագրերում առկա մասնագիտական հիմնական առարկայացանկի պահպանումը։ Անփոփոխ էր նաեւ կրթական նպատակների հիմնական ուղղվածությունը[10]։ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2000–2001 ուսումնական տարվա ծրագրում հստակ սահմանված էր նաեւ դասընթացների բաշխվածությունը, ինչպես նաեւ պետական (ավարտական որակավորման) քննությունների եւ ավարտաճառի (դիպլոմային աշխատանք) պաշտպանության սկզբունքները։ Այն կազմված էր նաեւ ՀՀ-ում գործող բուհական կրթական չափորոշիչներին համապատասխան։ Որոշ արժեքավոր

---

[10] *Ճեմարանի 2000–2001 ուս. տարվա կրթամասերի բաշխվածությունը եւ մասնագիտական խմբերը տե՛ս* ԵՂԻՇԵ ԱՎ. ՔՀՆ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը (Գեւորգյան ճեմարան-Աստվածաբանական համալսարան), էջ 310–318, 320–325։*

դիտողություններից ու շտկումներից հետո՝ 2000 թ. հուլիսի 7-ին, Վեհափառ Հայրապետը հաստատեց ճեմարանի 2000-2001 ուս. տարվա աշխատանքային ծրագիրը։

Շուրջ մեկամյա հետեւողական աշխատանքի արդյունքում նախապատրաստվեց նաեւ ճեմարանի՝ բարձրագույն ուսումնական հաստատություն դառնալու համար պահանջվող փաստաթղթերը։

Առաջին անգամը լինելով՝ ամբողջական տեսք ստացավ ճեմարանի կանոնադրությունը, որտեղ հստակ սահմանված էին ճեմարանական կրթությանն առաջադրվող գործընթացային մոտեցման եւ վերահսկողության միջոցներն ու եղանակները։ Կանոնադրությունը սահմանում էր նաեւ ճեմարանի արդյունավետ կառավարման գործիքակազմը, այդ թվում՝ ա. կրթական հաստատության կառուցվածքը, խնդիրներն ու իրավունքները, բ. միանձնյա եւ խմբային կառավարման համակարգերի կազմակերպման եղանակները, գ. կառավարչական ենթագործընթացների փուլային եւ գործառական ոլորտների հստակ տարանջատումը, դ. ճեմարանի տեսչի եւ տեսչության լիազորությունները, ե. կրթադաստիարակչական աշխատանքների բոլոր փուլերում պարտականությունների եւ լիազորությունների բաշխումը, զ. բուհական կյանքի բոլոր փուլերում իրականացվող գործընթացների համակարգային (ընդհանուր եւ կենտրոնացված) կառավարումը, է. ուսանողների պարտականությունները եւ իրավունքները, ը. հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը եւ գույքը, թ. ճեմարանի վերակազմավորման եւ լուծարման եղանակները[11]։ Այդպիսով, ճեմարանի կանոնադրությամբ կրթական հաստատության կառավարումը դարձավ կենտրոնացված ու համակարգված, որի կառուցվածքում գործող եւ վարչական ու կրթական ծառայություն իրականացնող բոլոր կառույցների համար սահմանվել եւ հստակ բաշխվել էին լիազորությունները։

Ճեմարանը բարձրագույն կրթական հաստատություն դառնալու նպատակին ծառայեցին նաեւ Հայոց Հայրապետի ղեկավարած աշխատանքային խմբի կողմից առաջին անգամ պատրաստված ենթականոնադրական մի շարք փաստաթղթեր, ինչպիսիք էին ճեմարանի գիտական խորհուրդի, ֆակուլտետի, ֆակուլտետի խորհրդի, ամբիոնի կանոնակարգերը, դեկանի նշանակման ժամանակավոր կարգը, ամբիոնի վարիչի, ճեմարանի դասախոսական կազմի ձեւավորման կարգերը եւ

[11] *Ճեմարանի կանոնադրությունը տե՛ս անդ, էջ 281-302։*

այլն[12]։ Նախապատրաստվեցին նաեւ «ուսանողին նույն կուրսում թողնելու, հեռացնելու, ազատելու, վերականգնելու եւ կուրսից կուրս տեղափոխելու», «բարձրագույն մասնագիտական եւ հետբուհական կրթության փաստաթղթերի հատկացման, լրացման եւ պահպանման» կարգերը (այդ թվում՝ ակադեմիական եւ այլ տեղեկանքների ձեւանմուշները), ինչպես նաեւ «ավարտական (որակավորման) քննական հանձնաժողովների կանոնակարգը»[13]։ Լրամշակվեցին եւ պետական չափորոշիչներին լիովին համապատասխան տեսքով ներկայացվեցին նաեւ ճեմարանի ընդունելության կանոնները[14]։

Սահմանվեցին նաեւ ճեմարանի՝ ա. գործընթացային լիազորությունները, բ. կրթություն իրականացնելու պարտականությունները եւ լիազորության սահմանները, գ. դասավանդման որակի ապահովման պահանջները։ Մեկ ամբողջական համակարգում միավորվեցին նաեւ ճեմարանական կառույցների եւ ենթաօղակների կատարողական, կարգավորման, վերահսկման եւ համագործակցության գործառույթները։ Հայոց Կաթողիկոսը հատուկ շեշտադրեց նաեւ Հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմի մասնագիտական միավորման, նրանց միջեւ կայուն հարաբերություններ եւ համագործակցություն հաստատելու անհրաժեշտությունը, նրանց կատարելագործման հրամայականը։

Վեհափառ Հայրապետի հանձնարարականով ճեմարանի տեսչությունն ու հանձնախումբը հսկայածավալ աշխատանք կատարեցին նաեւ առարկայական ուսումնական ծրագրերի մշակման եւ դրանց կատարելագործման ուղղությամբ։ Նախկինում ճեմարանում բուհական պահանջներին համապատասխանող առարկայական ուսումնական ծրագրերը մեծ թիվ չեն կազմել։ Այդ ոլորտում տեղ գտած բացասական իրողություններից մեկը միեւնույն դասընթացի՝ մեկից ավելի առարկայական ուսումնական ծրագրերի առկայությունն էր։ Այդ ամենը հաշվի առնելով՝ Վեհափառ Հայրապետը դասախոսական կազմին հանձնարարեց՝ ա. ճեմարանի առարկայական ուսումնական բոլոր ծրագրերը լրամշակել բուհական (ակադեմիական) չափորոշիչներին համապատասխան, բ. դասընթացների ուսումնական ծրագրերը համապատասխանեցնել հաստատության ուսումնական նոր ծրագրին, գ. առարկայական բոլոր

[12] Տե՛ս անդ, էջ 305–308, 326–355։
[13] Տե՛ս անդ, էջ 356–359, 363–385։
[14] Տե՛ս անդ, էջ 303–304։

ծրագրերը մշակել ճեմարանական կրթության պահանջներին եւ պետական կրթական չափորոշիչներին խիստ համապատասխան։

Ճեմարանի տեսչությունը եւ հանձնախումբը նշված ոլորտում եւս շոշափելի աշխատանք կատարեցին։ Դասախոսների հետ պատրաստվեցին, խմբագրվեցին ու քննարկման ներկայացվեցին ճեմարանում դասավանդվող առարկաների ուսումնական ծրագրերը, որոնք լիովին համապատասխանեցվեցին բուհական չափորոշիչներին։ Առարկայական ուսումնական ծրագրերի մաս կազմեց նաեւ նոր պահանջներին համապատասխան դասընթացի գնահատման չափորոշիչների մշակումը, ինչը թույլ էր տալիս վերահսկել ուսանողների կողմից գիտելիքների յուրացումը։ Տեսչությունը զուգահեռաբար իրականացնում էր ուսանողների կրթական առաջընթացի մշտադիտարկում, իսկ արդյունքները պարբերաբար քննարկվում էին տեսչության եւ գիտական խորհրդի նիստերում, որից հետո ներկայացվում էին Հայոց Հայրապետի հավանությանը։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հմուտ ղեկավարության արդյունքում ճեմարանն առաջին անգամ ունեցավ ՀՀ բարձրագույն կրթության պետական չափորոշիչներին լիովին համահունչ փաստաթղթեր։ Դրանցում հստակ սահմանված էին նաեւ հաստատության բարեփոխումների նպատակը՝ մասնագիտական կրթություն ունեցող հոգեւորականների նոր սերնդի պատրաստումը։ Նախանշված էին նաեւ ճեմարանական կրթությանն առաջադրվող հիմնական պահանջները։

Հանձնարարվեց նաեւ աշխատանքներ սկսել բուհերում ընդունված ակադեմիական բնույթի սեմինար/գործնական պարապմունքների ծրագրեր կազմելու ուղղությամբ։

Ճեմարանի մրցակցային առավելություններն ու ներուժը բարձրացնելու միտումով հաստատության ուսումնական ծրագրում նախատեսված էին նաեւ մասնագիտական ընդհանուր եւ հատուկ նոր դասընթացներ։ Նախապատրաստվել էին նաեւ բոլոր հիմքերը՝ Հայ Եկեղեցու կրթական ավանդության շրջանակում եւ բուհական կրթության արդի պահանջներին համահունչ՝ ճեմարանում իրականացնելու աստվածաբանական, հովվագիտական եւ հայագիտական կրթություն։ Հատուկ ուշադրություն դարձվեց հատկապես աստվածաշնչագիտական, աստվածաբանական, եկեղեցագիտական եւ հովվագիտական դասընթացների արդյունավետության բարձրացմանը։

Վերջնական խմբագրման ենթարկվելուց հետո, փաստաթղթերի այդ փաթեթը ներկայացվեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գիտական եւ ուսումնական խորհուրդների ընդլայնված նիստի քննարկմանը։ Համակողմանի քննարկումներից հետո 2000 թ. մարտի 28-ի ընդլայնված նիստը հաստատեց ճեմարանի Կանոնադրության, ենթականոնադրական փաստաթղթերի եւ ուսումնական աշխատանքային նոր ծրագրի նախագծերը։ Այնուհետեւ փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացվեց Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի հաստատմանը։

Մեկ ամբողջ տարի լայնածավալ փորձաշրջան անցնելուց հետո՝ 2002 թ. մարտի 29-ին, Վեհափառ Հայրապետը դիմեց ՀՀ վարչապետին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանին, որպես մայր կրթօջախի, շնորհելու բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ։ Հարցի քննարկման նպատակով ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը կազմեց մասնագիտական հանձնաժողով, որը լիազորված էր ծանոթանալու Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական գործընթացների, դասախոսների, դասախոսությունների որակի ու մատուցման ձեւերի, ինչպես նաեւ ուսանողների եւ ավանդվող առարկաների հետ կապված բոլոր խնդիրներին։

Հանձնաժողովի փորձագիտական եզրակացության մեջ մատնանշվում էր, որ Ճեմարան-Աստվածաբանական համալսարանը «պատրաստում է միայն մեկ մասնագիտությամբ (աստվածաբանություն՝ դասիչ 0222) շրջանավարտներ»։ Հանձնաժողովի միանշանակ եզրակացությունն էր նաեւ, որ «Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ունի բարձրագույն կրթության գործընթացի կազմակերպման բոլոր ատրիբուտները։ Աստվածաբանական համալսարանում, ինչպես մյուս բուհերում, կանոնակարգված է՝ ա. սովորողների ընդունելության կարգը, բ. սովորողների հեռացման եւ վերականգնման կարգը, գ. սովորողների տեղափոխման, փոխադրման կարգը, դ. սովորողների ավարտական քննությունների անցկացման եւ ավարտաճառերի պատրաստման կարգը...»[15]։

ՀՀ կառավարությունը համակողմանի քննարկելով խնդրո առարկա հարցը, ինչպես նաեւ հաշվի առնելով հանրապետության կրթական ոլորտում եւ հոգեւոր-մշակութային կյանքում Ս. Էջմիածնի

---

[15] *Մայր Աթոռ, Կաթողիկոսական արխիվ, ԳՀՃ-ի թղթապանակ. տե՛ս նաեւ* ԵՂԻՇԵ ԱՎ. ՔՀՆ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը (Գեւորգյան ճեմարան-Աստվածաբանական համալսարան), էջ 219։*

հոգեւոր ճեմարանի բացառիկ դերը՝ 2002 թ. հունիսի 13-ի թիվ 833-Ա որոշմամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանին շնորհեց բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ[16]։ Իսկ 2002 թ. հունիսի 22-ին ՀՀ կառավարության որոշումը վավերացրեց նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահը[17]։

Գեւորգյան հոգեւոր ճեմարանին բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ շնորհելու առիթով Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2002 թ. օգոստոսի 21-ի սրբատառ կոնդակում հավաստում է. «Բերկրալից հոգով գոհութիւն ու փառք ենք մատուցում Բարձրեալին, որ Մայր Աթոռիս Գէորգեան հոգեւոր ճեմարանը ուսումնական նոր տարին սկսում է բարձրագոյն կրթական հաստատութեան կարգավիճակով։ Այս մասին Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան 2002 թ. յունիսի 19-ի հրամանագիրը Հայոց պետութեան արժանի գնահատականն է մեր ժողովրդի հոգեւոր կրթութեան, գիտութեան ու մշակոյթի ասպարէզներում Գէորգեան հոգեւոր ճեմարանի բերած անփոխարինելի աւանդի...»[18]։

Վեհափառ Հայրապետի մոտեցման շրջագծում բարձրագույն կրթության անցումից հետո եւս ճեմարանական ուսումնակրթական ու դաստիարակչական աշխատանքները դիտարկվել է որպես շարունակական գործընթաց, որի նպատակներից մեկը եղել է ճեմարանավարտ սաների կրթության շարունակումը այլ երկրների աստվածաբանական համալսարաններում։ Ըստ էության՝ ճեմարանի՝ պետականորեն ճանաչված աստվածաբանական համալսարանի կարգավիճակ ձեռք բերելը Վեհափառ Հայրապետը դիտարկել է որպես հաստատության գիտակրթական գործունեության կատարելագործման եւ բարեփոխման առաջին քայլ։

---

[16] *ՀՀ կառավարության որոշման մեջ արձանագրված էր. «Հաշվի առնելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ներսիսյանի միջնորդությունը եւ Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտում ու հոգեւոր-մշակութային կյանքում Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի բացառիկ դերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է. 1. Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը համարել բարձրագույն ուսումնական հաստատություն։ 2. Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարին՝ թույլատրել Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի սովորողների տեղափոխությունը Հայաստանի Հանրապետության այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ եւ շրջանավարտների հետբուհական մասնագիտական կրթությունը Հայաստանի Հանրապետության գիտակրթական համակարգում». տե՛ս Մայր Աթոռ, Կաթողիկոսական արխիվ, ԳՀՃ թղթապանակ։*

[17] *Տե՛ս Մայր Աթոռ, Կաթողիկոսական արխիվ, ԳՀՃ թղթապանակ։*

[18] *«Էջմիածին», 2002, Ը., էջ 31։*

Նկատի ունենալով ուսումնակրթական գործունեության նկատմամբ Գարեգին Բ. Հայրապետի նախանձախնդիր եւ հետեւողական վերաբերմունքը՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրակազմը միանգամայն արդարացի նկատում է. «Որքան շատ է կատարվածը, նույնքան առավել են եւ այն ծրագրերը, որոնք կյանքի են կոչվել Վեհափառ Հայրապետի կողմից...»[19]։

Այդ առնչությամբ Հայրապետական կոնդակում հավաստվում է. «Նոր էջ է բացում պատմութեան մէջ Գէորգեան հոգեւոր ճեմարանի՝ Մեզ համար թանկ ու նուիրական կրթական հաստատութեան, որի՝ հոգեւոր ճանաչողութեան ու հաւատի լոյսով լեցուն պատերից ներս սկսուել է նաեւ հոգեւորականի Մեր ուղին։ Յոյսով ու լաւատեսութեամբ ներշնչուն նոր այգաբաց ենք դիմաւորում Հայոց Հայրապետս, ճեմարանի ողջ տեսչութիւնն ու դասախօսական կազմը, կրթօջախի հարիւրաւոր շրջանաւարտները... ներկայ ուսանողութիւնը եւ համայն ժողովուրդը մեր՝ հաւատով, որ Հայրենի պետականութեան ազատ երկնքի ներքոյ հայոց հոգեւոր կեանքի լուսառատ նոր հորիզոններ են գծուելու...»[20]։

Երկամյա հետեւողական եւ նպատակասլաց գործունեության արդյունքում, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով, իր 130-ամյա հոբելյանի նախօրեին Գեւորգյան հոգեւոր ճեմարանը վերահաստատեց բարձրագույն ուսումնական հաստատության իր երբեմնի իրավունքը։ Այդպես ճեմարանը սահուն կերպով անցում կատարեց բարձրագույն աստվածաբանական կրթությանը։

Հայ Եկեղեցու ապագայով մտահոգ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի կողմից Գեւորգյան հոգեւոր ճեմարանի բարենորոգման եւ վերածաղկման համար կյանքի կոչված կրթական բարեփոխումները ամենեւին չսահմանափակվեցին այդքանով, որի մասին Վեհափառը հավաստում է. «Մեր հոգիները լեցուն են բերկրանքով, ցնծութեամբ եւ հպարտութեամբ, բայց նաեւ ծանրօրէն իջնում է մեր ուսերի վրայ պարտականութիւնը՝ արժանաւոր շարունակողները լինելու մեր հայրապետների, լուսամիտ վարդապետների, նուիրեալ հոգեւոր ու ազգային

---

[19] *«Էջմիածին», 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 5։ Այդ մասին ամսագրի խմբագրականում գրված է. «... ճեմարանական հիմնում ասվում է՝ Մեծ տեսիլքի մենք զաւակներ։ Եւ Վեհափառ Հայրապետը՝ որպես ճշմարիտ ճեմարանական, այդ մեծ տեսիլքը իր գահակալության այս հինգ տարիներին բոլորանվեր կերպով իրականացնում է մեր ազգային-եկեղեցական կյանքի ամենատարբեր բնագավառներում կատարվող իրագործումներով, որոնցից շատերի թվարկումը կարող ենք սկսել «պատմության մեջ առաջին անգամ» բառերով». անդ, էջ 5։*

[20] *«Էջմիածին», 2002, Ը., էջ 32։*

գործիչների ազնիւ նպատակների, գործի ու գործունէութեան եւ թողած ժառանգութեան...»[21]։

Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ շարունակվեցին արդեն Աստվածաբանական համալսարանի կարգավիճակ ստացած հոգեւոր հաստատության ուսումնակրթական գործընթացների հետագա կատարելագործման աշխատանքները։

Նախանշված ծրագրերի իրականացման համար Վեհափառ Հայրապետը առաջնային համարեց ճեմարանի՝ բուհական երկաստիճան կրթության անցումը, որով պետք է իրականացվեր նաեւ հաստատության հետագա ինտեգրումը ոչ միայն Հայաստանի բարձրագույն ուսումնական համակարգին, այլ նաեւ եւրոպական ընդհանուր կրթական տարածքին։

Վեհափառ Հայրապետի ղեկավարած աշխատանքային խումբը, ճեմարանի գիտական խորհրդի եւ տեսչության հետ համախորհուրդ, ձեռնամուխ եղավ ճեմարանի երկաստիճան կրթության ուսումնական նոր ծրագրերի եւ դրանց հետ կապված փաստաթղթերի նախապատրաստմանը։

Ճեմարան-Աստվածաբանական համալսարանի ուսումնակրթական գործունեությունը կատարելագործելու նպատակով՝ Գարեգին Բ. Հայրապետի հրահանգով 2002 թ. հիմնադրվեցին երկու մասնագիտական (Աստվածաբանության ու Եկեղեցագիտության) եւ երկու սպասարկող (Պատմության եւ իմաստասիրության, Բանասիրության) ամբիոններ[22]։

Ճեմարանի նորաբաց ամբիոնները դարձան բուհական կրթահամակարգի ռազմավարական նպատակներն իրականացնող գործուն օղակներ, ուսումնական հաստատությունը ապահովեցին անհրաժեշտ մասնագետներով, ձեռնամուխ եղան դասախոսների պատրաստմանը եւ նրանց որակավորման բարձրացմանը, ստանձնեցին կրթադաստիարակչական աշխատանքների իրականացման եւ որակի ապահովման լիակատար պատասխանատվությունը։ Ճեմարանում բացվեց նաեւ համակարգչային երկու լսարան։

ՀՀ կրթության եւ գիտության նախարարը 2005 թ. մարտի 18-ին վավերացրեց ճեմարանի՝ բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնելու իրավունքը (կրթական գործունեության արտոնագիր թիվ 322)։ Մեկ տարի անց հաշվի առնելով, որ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր

---

[21] *Անդ, էջ 82–83։*

[22] *Տե՛ս* ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ, *Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը (Գեւորգյան ճեմարան-Աստվածաբանական համալսարան), էջ 226–227։*

ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) բարձրագույն մասնագիտական ուսումնական ծրագրերը եւ շրջանավարտների որակը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին՝ ՀՀ ԿԳ նախարարի կողմից 2007 թ. հունիսի 13-ին ճեմարանին տրվեց հավատարմագրված բուհի կարգավիճակ (ՀՀ կրթության եւ գիտության նախարարության պետական հավատարմագիր թիվ 224)։

2006 թ. հուլիսի 6-ին հավատարմագրվեց ճեմարանի բակալավրիատի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագիրը (պետական հավատարմագիր թիվ 152), իսկ 2007 թ. հունիսի 13-ին՝ մագիստրատուրայի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագիրը (պետական հավատարմագիր թիվ 226)։ 2007 թ. հունիսի 13-ին ճեմարանին իրավունք վերապահվեց նաեւ շրջանավարտներին շնորհել «Աստվածաբանության բակալավր» եւ «Աստվածաբանության մագիստրոս» հավատարմագրված մասնագիտության դիպլոմ (պետական հավատարմագրման թիվ 234 վկայականի հավելված)։

Այդպիսով, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի կրթական բարեփոխումների այս փուլը՝ 2000–2007 թթ., ճեմարանի կյանքում նշանավորվեց հետեւյալ իրադարձություններով՝

ա. Հոգեւոր կրթական հաստատությունը ձեռք բերեց պետականորեն ճանաչված, մասնագիտական կրթություն իրականացնող, հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ.

բ. Պետական կրթական չափորոշիչների պահանջներին լիովին համապատասխան՝ բակալավրիատի եւ մագիստրատուրայի կրթական ծրագրերով ճեմարանին իրավունք վերապահվեց «Աստվածաբանություն» մասնագիտությամբ շրջանավարտներին շնորհել հավատարմագրված մասնագիտության «բակալավրի» եւ «մագիստրոսի» դիպլոմ.

գ. Բոլոր հիմքերը ստեղծվեցին եռաստիճան կրթության անցնելու եւ եւրոպական միասնական կրթական տարածքին ինտեգրվելու համար։

РЕЗЮМЕ

В статье на основе анализа фактического материала исследуется ранний этап образовательных перемен духовной семинарии Первопрестольного Святого Эчмиадзина при Католикосе Всех Армян Гарегине II.

Показывается, что ранний этап последовательной деятельности Католикоса Всех Армян ознаменовался тем, что, во-первых, Духовной семинарии был присвоен статус аккредитованного высшего учебного заведения, осуществляющего специальное образование, во-вторых, вследствие полного соответствия учебных программ бакалавриата и магистратуры семинарии с государственными образовательными стандартами, Духовной семинарии было дано право присваивать выпускникам дипломы степени «бакалавра» и «магистра» по аккредитованной специальности «Богословие», в-третьих, вследствие последовательной деятельности Католикоса Гарегина II духовная семинария Первопрестольного Святого Эчмиадзина присоединилась к высшей образовательной системе Республики Армения. Были созданы также как все основания для осуществления аспирантской подготовки, так и для дальнейшей интеграции в единую европейскую образовательную систему.

SUMMARY

The article expounds the process of educational reforms made by H.H. Karekin II, Catholicos of All Armenians, at the Gevorkyan Theological Seminary of the Mother See of Holy Etchmiadzin, and specifically their initial phase (2000—2007) that had substantial results, namely: a) the religious-vocational institution acquired the status of an accredited institution of higher education offering specialization; b) on the basis of its accredited programs, which are fully compliant with the standards and requirements of the Republic of Armenia, the institution earned the privilege of offering its graduates Bachelor’s and Master’s degrees in Theology; c) the Gevorkyan Seminary was integrated into the system of institutions of higher education in Armenia, thus laying foundations for further integration into the European Higher Education Area and development in the direction of the Three-Cycle System of European education.

ՀԱՅԿԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ
ԵՊՀ

ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ՀՈԳԵՒՈՐ եւ աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության խնդիրը կարեւորվել է բոլոր պատմական համակարգերում, հատկապես, հին եւ միջին դարերում, երբ կրոնը ժողովրդի համար ամբողջական կենսաձեւ էր։ Այդ փոխհարաբերություններում, հասկանալիորեն, կարեւորվում էին տվյալ կրոնում առկա սկզբունքային մոտեցումներն աշխարհիկ իշխանության նկատմամբ։ Այս առումով հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության աստվածաշնչյան, մասնավորապես, նորկտակարանային մոտեցումները, քանի որ քրիստոնեության տարածմանը զուգահեռ դրանք մուտք էին գործում նորանոր երկրների պետական համակարգեր՝ փոխարինելու տվյալ երկում առկա հին մոտեցումներին։ Նույն երեւույթը տեղի է ունեցել նաեւ Հայաստանում 301 թվականին, ուստի ավելի լավ ընկալելու համար Մեծ Հայքի թագավորությունում Դ.-Ե. դարերում տեղի ունեցող երեւույթները հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերության ոլորտում, նախ անհրաժեշտ է պարզաբանել այդ փոխհարաբերությունների նորկտակարանային ձեւը։

Նոր Կտակարանի առաջին իսկ գլուխներում առկա է ժամանակի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների փոխկապակցվածության գաղափարը։ Արտահայտվում են մոտեցումներ, որոնք իրենց խոր ազդեցությունն են թողել հետագա դարերի քրիստոնեություն ընդունած երկրների հոգեւոր եւ քաղաքական դասերի փոխհարաբերությունների վրա. «Նոր Կտակարանն ընդունում է քաղաքական իշխանությունների

գոյությունը, որպես անհրաժեշտ կառույցներ, եւ առաջարկում է համապատասխան քրիստոնեական մոտեցում հրեա եւ հռոմեացի ղեկավարների հանդեպ»[1]։

Հովհ. ԺԹ. 11 համարում նշվում է, որ հռոմեական կուսակալի իշխանությունը տրված էր ի վերուստ, եւ այն ինչ-որ կերպով պետք է ծառայի Աստվածային ծրագրին։ Ղուկասի Ավետարանի երկրորդ գլխում մարգարեության իրականացման համար նշվում է նաեւ կայսեր գործոնը։ Այդ հատվածում երեւում է, որ Աստվածածինը հակասություն չի տեսնում Աստծու զորության եւ կայսեր հրամանին ենթարկվելու մեջ։ Հենց Օկտավիանոս Օգոստոսի մարդահամարի հրամանի արդյունքում էր նաեւ, որ Հովսեփը եւ Աստվածածինը Գալիլիայի Նազարեթ քաղաքից գնացին Բեթղեհեմ՝ Դավթի քաղաքը, որտեղ ըստ մարգարեության, պետք է ծնվեր Փրկիչը։ Այդպիսով, «Ղուկասը ցույց է տալիս թե ինչպես է կասեր հրամանը նույնիսկ առանց նրա գիտության ծառայում Աստծու նպատակին»[2]։

Ղուկասի Ավետարանի ծննդյան օրհներգի՝ Բ. 14 համարի՝ Քրիստոսի միջոցով մարդկանց հոգիներին բերված խաղաղություն զուգորդվում էր նաեւ Օկտավիանոս կայսեր միջոցով Հռոմեական տերությունում հաստատված խաղաղությամբ, նրա իսկ խոսքերով. «Ես խաղաղություն բերեցի պետությանը, առանց որեւէ ցեղի մղելու անարդար պատերազմի»[3]։ Ք. ա. 27-ից մինչեւ մեր թվարկության 180-ականները տեւած համեմատական խաղաղ շրջանն Ավետարանի տարածման կարեւորագույն նախադրյալներից մեկը հանդիսացավ։

Մատթեոսի Ավետարանի երկրորդ գլխում ներկայացվում է Հռոմեական կայսրության բարեկամ Հրեաստանի Հերովդես արքայի եւ հրեա քահանայապետերի համագործակցությունը՝ Մեսիայի ծննդյան վայրը պարզելու առիթով։ Ըստ Հովսեպոս Փլավիոսի՝ հրեական քահանայապետերից ոմանք Հերովդեսի հետ կապված էին նաեւ քաղաքական կառավարչի պաշտոնի միջոցով, իսկ նրա որդի Արքեղայոսի ժամանակ քահանայապետերին էր վստահված ժողովրդի վրա իշխանությունը[4]։ Ռաբունական հասկացողության մեջ Մեսիան հասարակ մարդկային էակ էր, սակայն օծված Աստծու կողմից եւ օժտված բացառիկ կարողություններով։ Ըստ այդ վարդապետության՝ Մեսիան պետք է Իսրայելի Դավիթ

[1] M. M. Margaret, M. Y. Frances, The Cambridge History of Christianity, New York, 2008, p. 524.
[2] C. Bryan, Render to Caesar. Jesus, the Early Church, and the Roman Superpower, Oxford, 2005, p. 99.
[3] S. J. Wood, The Alter-Imperial Paradigm. Empire Studies and the Book of Revelation, Boston, 2015, p. 96.
[4] *Տես* W. Whiston, The Complete Works of Flavius Josephus, Green Forest, 2008, p. 474.

արքայի նման մեծ քաղաքական առաջնորդ լիներ եւ ժառանգեր նրան տրված բոլոր խոստումները[5]։ Նման անձի ի հայտ գալը մարտահրավեր էր Հերովդես Ա.-ի համար, քանի որ, ըստ նախնական պատկերացումների, դեպքերի այդպիսի զարգացումը Հրեաստանի համար կանխատեսում էր Հռոմեական արտոնյալ դասակարգից ազատ եւ բարգավաճ հասարակություն։ Հերովդեսն Օկտավիանոս կայսեր վասալն էր, մի եդոմացի, որը հոր միջոցով հրեականցվել էր, ինչի պատճառով չէր ընդունվում ժողովրդի կողմից[6]։ Հերովդեսը Մատթեոսի երկրորդ գլխում դրսեւորում է կայսրական մեղքի, բռնակալության դիմագիծը՝ հանձնարարելով սպանել Բեթղեհեմ քաղաքի երկու տարեկան ու դրանից ցածր բոլոր արու զավակներին։ Այդ քաղաքում էր ծնվել Հիսուս, եւ Հերովդես Ա.-ն այդ ոճրագործությամբ ձգտում էր պահպանել իր իշխանությունը։ Այդ ամենը հակասության մեջ է դրվում Մատթ. Ա. 21 համարի խոստման հետ. «Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն Նորա Յիսուս. զի Նա՛ փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց». այսինքն՝ դատապարտելի է իշխանության պահպանմանը միտված, որեւէ անարդար, առավել եւս ոճրագործ քայլ։

Նոր Կտակարանն իշխանության համար առաջ է քաշում մի կարեւոր գաղափար, որն է՝ ծառայությունը։ Քրիստոսի օրոք կարծիքներ կային, որ նա պետք է վերականգնի ու հզորացնի հրեական թագավորությունը։ Դրա արքայությունում իշխանական դիրքի խնդրանքի առթիվ Հիսուսը օրինակ է բերում առաջին դարի այլ ազգերի իշխանների կառավարումը, քանի որ Իսրայելի թագավորներն ավելի շատ էին շարժվում բարոյական սկզբունքներով, քան հեթանոս տիրակալները։ Դրան հակառակ՝ Քրիստոս ուսուցանում է. «Ո՛չ այնպէս իցէ եւ ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ» (Մատթ. Ի. 26–27)[7]։ Առաջին դարի համար տիրոջ եւ ծառայի դերերի փոփոխությունը ծայրահեղ երեւույթ էր եւ անգամ մարդկային արժեքի գաղափարակիր ղեկավար անձինք, որ տեսականորեն իրենց ծառաներին համարում էին իրենց հավասար, երբեք չէին անի այն, ինչ Հիսուսն արեց[8]։ Այդ գաղափարը

---

[5] *Տե՛ս* G. W. Broomiley, The International Standard Bible Encyclopedia, Michigan, 1986, p. 332.

[6] *Տե՛ս* B. Pixner, Paths of the Messiah and Sites of the Early Church from Galilee to Jerusalem, San Francisco, 1991, p. 4.

[7] Հ. Յ. Զօհրապեան, *Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենէտիկ, 1805, էջ 1657։ Աստվածաշնչյան բոլոր մեջբերումները կատարել ենք վերոնշյալ հրատարակությունից։*

[8] *Տե՛ս* Կ. Ս. Քիներ, *Աստվածաշունչ՝ հենքի մեկնություն. Նոր Կտակարան, Երեւան, 2004, էջհ. 107։*

համապատասխանում էր նաեւ Պլատոնի՝ կատարյալ պետության մասին պատկերացմանը, ըստ որի ղեկավարը չպետք է կենտրոնանար իր անձնական շահի վրա, այլ պետք է աշխատեր ի սեր ընդհանրական շահի՝ իր ենթակայության ներքո գտնվող մարդկանց կյանքն ավելի լավը դարձնելու համար[9]։

Աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների փոխհարաբերության մասին Նոր Կտակարանյան ամենահայտնի հատվածը կայսրին տրվելիք տուրքի մասին դրվագն է. «Տո՛ւք զկայսեր՝ կայսեր, եւ զԱստուծոյ՝ Աստուծոյ» (Մատթ. ԻԲ. 21)։ Հայ Եկեղեցու ավանդական մեկնության համաձայն, մարդը կազմված լինելով հոգուց եւ մարմնից պարտականություններ ունի Աստծու եւ պետության առջեւ. «հետեւաբար, մարմնով ծառայեք թագավորներին, ովքեր Աստծուց կարգված են... իսկ հոգով՝ աստվածպաշտությամբ, ծառայեք Աստծուն»[10]։ Ավետարանական հատվածը երկկողմանի շեշտվածությամբ նման է Առակաց գրքի պատգամին. «Երկի՛ր յԱստուծոյ որդեակ՝ եւ ի թագաւորէ. եւ ի միոջէ ի նոցանէ մի՛ ապստամբիցես։ Զի՝ յանկարծակի պահանջիցեն զամպարիշտս. եւ զպատուհաս երկոցունց ո՞վ ծանիցէ՞» (Առակք ԻԴ. 21–22)։ Ըստ Աստվածաշնչյան համապատկերի, Իսրայելի իրական եւ գերագույն արքան համարվում է Աստված, եւ Հիսուս հաստատում էր այդ սկզբունքը, որ ո՛չ կայսրը, եւ ո՛չ այլ կայսերական կառավարիչ չէր կարող Իսրայելի ժողովրդի իրական տերը լինել[11]։ Քրիստոս, ցույց տալով մետաղադրամի վրա կայսեր պատկերը, պատվիրում է այն տալ տիրակալին, որովհետեւ այն նրան է պատկանում (Նոր Կտակարանում իրական գանձ համարվում է ոչ թե նյութականը, այլ մարդկային էության բարձրագույն արժեքը)։ Ապա նայելով ժողովրդին, ասում է՝ իսկ Աստծունը տվեք Աստծուն, քանի որ եթե մետաղադրամի վրա կար կայսեր պատկերը ու այն պատկանում է նրան, ապա մարդկանց վրա դրված է Աստծու պատկերը. «Եւ արա՛ր Աստուած զմարդն ի պատկեր իւր» (Ծննդ. Ա. 27) եւ, մարդիկ պատկանում են Աստծուն։

Մատթեոսի ԺԲ. գլխում մարդկային արժեքն ավելի վեր է բարձրացվում, քան օրենքը, քանի որ օրենքն էր մարդկանց համար ստեղծված,

---

[9] Платон, Государство, Москва, 1999, стр. 99.

[10] Հովհաննես Ծորեցի, *Մեկնություն Մատթեոս Ավետարանի, Պրակ Բ., էջմիածին, 2010, էջ 151։*

[11] *Տե՛ս* R. A. Horsley, Jesus and Empire. The Kingdom of God and the New World Disorder, Minneapolis, 2003, 99.

եւ ոչ հակառակը, եւ այն պետք է ծառայի մարդկային կյանքի համար. «Յիսուս երբեք օրէնքի հակասող կամ օրէնքը ջրող դիրքի մէջ չի մտներ. այլ միշտ իր ունկնդիրներուն ուշադրութիւնը կը դարձնէ դեպի օրէնքի ուղիղ ըմբռնումը, եւ մեկնաբանութիւնները կը դարձնէ դեպի օրէնքի ոգիին ճանաչումը. որովհետեւ ոգին չհասկցուած օրէնքը բեռ է»[12]: Օրենքը Նոր Կտակարանում ներկայացվում է որպես արտաքին ուժ մարդկային հարաբերությունների ձեւավորման գործում, եւ շեշտը դրվում է օրենքի՝ ավելի խորին սկզբունքների վրա, որոնք էին՝ արդարությունն ու սերը, եւ դրանցով առաջին հերթին պետք է առաջնորդվեր հասարակությունը:

Հռոմ. ԺԳ. 1–7 հատվածում կոչ է արվում հնազանդ լինել իշխանություններին, քանի որ իշխանությունները համարվում են Աստծու կողմից կարգված: Պատգամվում է լինել օրինավոր քաղաքացի, կատարել բարի գործեր եւ զգուշացվում է հակառակ պարագայում սպասվող դատաստանի մասին: Սակայն այդ սպասվող պատժի վախը չէ, որ պետք է լիներ օրինավորության երաշխիքը, այլ խղճմտանքը, ըստ որի՝ սահմանված կարգով աշխարհիկ իշխանությանը պետք է ցուցաբերվեր հարգանք, վճարվեր հարկ եւ կատարվեր քաղաքացիական պարտքը: Այդ կերպով. «կանոնակարգվում են հասարակության ներսում դասերի ու դասակարգերի փոխհարաբերությունները»[13]: Որոշ մասնագետների կարծիքով այս հատվածն առաջին դարի բազում վտանգների առջեւ կանգնած քրիստոնյաների գոյապահպանությանը միտված ռազմավարության արդյունք է[14]: Սակայն Պողոս առաքյալի նամակների ընդհանուր դիտարկումը ցույց է տալիս, որ այդ մոտեցումը պետության հանդեպ ունեցած գաղափարների եւ հավատքի արտացոլումն է: Պողոս առաքյալի համար պետությունն Աստծու կողմից տրված պարգեւ-հաստատություն էր, որի նպատակն էր պաշտպանել եւ կարգ ու կանոն հաստատել մարդկանց համար, հակառակ դեպքում՝ ամեն մեկը կարող էր ոչնչացնել իր հարեւանին: Նրա համար չկար նաեւ բաժանարարություն Աստծուն ծառայելու եւ պետությանը ծառայելու միջեւ. «անձը կարող է ծառայել պետությանը՝ հետեւելով Քրիստոսին»[15]:

---

[12] Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, *Քննական պատմութիւն Սուրբգրական ժամանակներու, Գիրք Դ., Անթիլիաս, 1974, էջ 840:*

[13] Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, *Աստվածաշնչական Հայաստան, Երեւան, 2005, էջ 584:*

[14] *Տե՛ս* M. G. Barclay, The Gospel of Matthew in its Roman Imperial Context, London, 2005, p. 76.

[15] S. E. Porter, Empire in the New Testament, Oregon, 2011, p. 12.

Միեւնոյն ժամանակ Նոր Կտակարանն աշխարհիկ իշխանությանը պատգամում է սահմանվածից ավել հարկեր չգանձել, նեղություն չպատճառել ժողովրդին, չզրպարտել երկրի քաղաքացիներին եւ բավականանալ այն վարձով, որ տրվում է պետության կողմից (Ղուկ. Գ. 12–15)։ Գործք Ե. 29-ում Պետրոս առաքյալը հրեական քաղաքական խմբավորումների, իշխանավորների, ծերակույտի եւ քահանայական դասի առջեւ, նրանց պահանջին չենթարկվելու պարագայում ասում է. «Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան»։ Ղուկաս Ավետարանիչն այս դրվագում ներկայացնում է ատյանում առաքյալների դեմ կանգնած հրեական կառավարական հաստատությունը, ուր առկա պատկերացումներին հակառակ էին գործել առաքյալները[16]։ Այսպիսով, քրիստոնյաներից պահանջվում էր հնազանդվել տիրող իշխանություններին, որովհետեւ դրանք համարվում էին Աստծու կողմից հաստատված, սակայն քրիստոնյաներից չէր պահանջվում ենթարկվել այն հրամաններին, որոնք դեմ էին Աստծու օրենքներին[17], քանի որ, թեպետ, իշխանությունները կարգված էին համարվում Աստծու կողմից, սակայն դրանք ավելի բարձր չէին, քան դրանք կարգողը։

Գործքի ԻԵ. գլխում Պողոս առաքյալը դատ իրականացնելու համար դիմում է կայսրին, որ նա հաստատի արդարությունը։ Հռոմեացիներին ուղղված իր նամակում (ԺԳ. 1) առաքյալը գրում է, որ այդ իշխանությունն Աստծուց է կարգված, իսկ Պետրոս առաքյալն իր առաջին ընդհանրական նամակի Բ. 1 համարում թագավորին ներկայացնում է, որպես բարձրագույն հեղինակություն ունեցող անձի, որին ժողովուրդը պետք է հնազանդվի։ Հոգեւոր առաջնորդի համար Տիմոթեոսին ուղղված առաջին նամակի Գ.-Ե. գլուխներում ասվում է, որ պետք է անարատ վարք ունենա, լինի ճշմարիտ վարդապետության կրող եւ այդ ուսուցանող, չլինի փողասեր կամ բռնացող, ժողովրդին պետք է ընդունի ինչպես իր ընտանիքի անդամների եւ լինի լավ վերակացու։ Այսպիսով, Աստծուց կարգվելով, աշխարհիկ առաջնորդը ժողովրդի համար պետք է հաստատեր արդարություն եւ ապահովության միջոցով ֆիզիկական խաղաղություն, իսկ հոգեւոր առաջնորդը խաղաղությունը պետք է տարածեր մարդկանց հոգեւոր կյանքում։ Այդ կերպով ձեւավորվում

---

[16] *Տե՛ս* J. S. McLaren, Power and Politics in Palestine. The Jews and the Governing of their Land 100 BC-AD 70, England, 1991, p. 107.

[17] *Տե՛ս* Ա. Յ. Պօյանճեան, *Մեկնութիւն Նորոյ Կտակարանի, Կոստանդնուպոլիս, 1891, էջ 262։*

էր Աստված, թագավոր, հոգեւոր առաջնորդ եւ ժողովուրդ սանդղակը, որը քրիստոնեություն ընդունող շատ երկրների համար ապահովելու էր կենտրոնացված իշխանությամբ հզոր պետություն։

Նոր Կտակարանը, անկախ ժամանակի հասարակական կարգերից, պատգամում է հավասարություն, որովհետեւ Քրիստոսին հավատացող ամեն մի անձ ներկայացվում է որպես մեծ ընտանիքի մի անդամ։ Գաղատացիներին ուղղված նամակում (Գ. 28) ասվում է. «Չի՛ք խտիր, ոչ հրէի, եւ ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի, եւ ո՛չ ազատի. ո՛չ արուի, եւ ո՛չ իգի»։ Հատվածը դեմ է աշխարհիկ իշխանության կողմից հասարակության շերտավորման խորացմանը եւ պատգամում է ուժեղներին գործել ի շահ թույլերի, ինչը չլսված բան էր մի հասարակությունում, որտեղ դեպքերի ընթացքը որոշվում էր բարձր կարգավիճակ ունեցող մարդկանց շնորհիվ եւ նրանց օգտին։ Այդ համարում կոչ է արվում ազգային, ընկերային եւ սեռական հավասարության, որ հունահռոմեական աշխարհի առանցքային խտրականություններն էին[18]։ Առաջին դարում, Նոր Կտակարանում նշվող այս խտրականությունները, միայն հարյուրամյակներ անց ընդհանուր կերպով հաղթահարվեցին զարգացած պետություններում, մինչդեռ քրիստոնեական համայնքն առաջին դարում իր մեջ միավորում էր մարդկային այդ բոլոր խմբերը եւ համայնքի ներսում գործում էր հավասարության, փոխօգնության ու ներուժի համաչափ բաշխման սկզբունքը։ Ձեւավորվում էին նոր հասարակական հարաբերություններ. «անօթեւանների եւ աղքատների համար քրիստոնեությունն առաջարկում էր թե՛ բարեգործություն, թե՛ հույս, նորեկների եւ օտարների համար հաստատում էին կապեր, որբերին եւ այրիներին շնորհվում էր նոր, մեծ ընտանիքի զգացողություն, իսկ այն անձանց, ովքեր ցեղային պայքարի բռնության զոհ էին դարձել, առաջարկվում էր համերաշխություն՝ ընկերային նոր հիմքի վրա»[19]։ Եթե հաշվի առնենք, որ Հռոմեական կայսրությունում ապրում էին մոտ 6 միլիոն ստրուկներ, իսկ կայսրության սրտում՝ Իտալիայում, ստրուկները կազմում էին բնակչության 20–30 տոկոսը[20], դրան գումարած 60 միլիոնանոց կայսրության բնակչության մոտ կեսը կազմող կանայք[21], ապա պարզ է դառնում, թե ինչպիսի դեր է խաղացել նորկտակարանյան հավասարության սկզբունքը քրիստոնեության տարածման

[18] Տե՛ս P. Oakes, Rome in the Bible and the Early Church, Buckinghamshirem, 2002, p. XV.
[19] W. Carter, Matthew and Empire. Initial Explorations, Oregon, 2001, p. 51.
[20] Տե՛ս S. R. Joshel, Slavery in the Roman World, Cambridge, 2010, p. 8.
[21] Նկատի է առնվում իգական սեռը։

եւ տվյալ դասակարգերի նկատմամբ կայսերական քաղաքականության փոփոխության գործում։

Հայտնութենական[22] ավանդույթի կրողներն առաջինից երրորդ դարերում հակասություն էին դնում Աստծու մարդկանց եւ Աստծուն հակառակ «աշխարհի» իշխանության միջեւ։ Այդ ավանդությունը քննադատաբար էր վերաբերվում պետությանը։ Նման դրվագներ կարելի է տեսնել Հովհաննեսի Հայտնության գրքում, սակայն այդ ավանդությունը ծագել էր մինչեւ քրիստոնեությունը, եւ նման հատվածների կարող ենք հանդիպել նաեւ Դանիելի մարգարեության մեջ։ Ըստ մի տեսակետի, Հայտնության գրքում նկարագրվող գազանը եւ Բաբելոն քաղաքը խորհրդանշել է Հռոմեական կայսրությունը, որն այդ գրքում հանդես է գալիս որպես Քրիստոսի հետեւորդների մարդասպան թշնամի[23]։ Հռոմեական կայսրությունն այն տարածքն էր, որում ձեւավորվում, աճում եւ զարգանում էր քրիստոնեական համայնքը, եւ որտեղ առաջին դարի ընթացքին գրի են առնվել նորկտակարանյան գրքերը։ Ուստի, հենց այդ պատմական համապատկերում պետք է ուսումնասիրել նորկտակարանյան մոտեցումները հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների վերաբերյալ։ Պատմականորեն հզոր Բաբելոն քաղաքը Հայտնության գրքի գրության ժամանակ արդեն իսկ գոյություն չուներ, ուստի անիմաստ կլիներ միջագետքյան քաղաքի կործանման մասին գրելը։ Դրա ճիշտ նշանակությունը հասկանալու համար մենք պետք է անդրադառնանք Աստվածաշնչում այդ անվան առաջին գործածությանը։ Ծննդոց ԺԱ. գլխում նկարագրվում է Բաբելոնյան աշտարակաշինության դրվագը, որի նպատակն էր մինչեւ երկինք հասնելը եւ մարդու պաշտամունքի առարկա դառնալը։ Հռոմեական կայսրությունում առաջին դարերի ընթացքում քրիստոնեության մեծագույն խնդիրներից մեկը հենց կայսեր պաշտամունքն էր, քանի որ քրիստոնյաները կարող էին պաշտել միայն Աստծուն, ինչի պատճառով էլ շատերը հալածանքների եւ մահվան էին դատապարտվում։ Հայտնության գրքի ԺԷ. 6 համարը. «արբեցեա՛լ յարենէ սրբոց՝ եւ յարենէ ամենայն

---

[22] *Հայտնություն տերմինը նշանակում է բացահայտել մի բան, որը մինչ այդ հայտնի չի եղել։ Քրիստոնեության պատմության մեջ այն նշանակել է Աստծու կամքի արտահայտում։ Տե՛ս* E. Ferguson, Encyclopedia of Early Christianity, New York, 1998, p.982. *Այն կապվել է վախճանաբանության վարդապետության հետ, ըստ որի աշխարհի իշխանությունը մինչ կործանումը ժամանակավորապես կենտրոնանալու է չարի ձեռքում, որի կործանումից հետո հաստատվելու է ամեն տեսակ արատավորումից զերծ գալիք թագավորությունը։ Տե՛ս* Ա. Ռ. Գաբաեան, *Նոր Կտակարանի ընդհանուր ներածություն, Հայաստան, 2003, էջ 131։*

[23] *Տե՛ս* M. G. Barclay, The Gospel of Matthew in its Roman Imperial Context, p. 28.

վկայիցն» այդ հալածանքների արձագանքն է, ինչի պատճառով արտահայտվում է բացասական դիրքորոշում: Այս գիրքը վառ կերպով դեմ է արտահայտվում աշխարհիկ իշխանական համակարգում անհատի պաշտամունքի որեւէ դրսեւորման:

Այսպիսով, պատմական եւ աստվածաշնչյան շարակարգի լույսի ներքո մեզ հետաքրքրող խնդրի ընդհանուր պատկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նոր Կտակարանը, որպես առաջին դարում ձեւավորվող Եկեղեցու առաջնորդող հիմնավոր սկզբունքների ամբողջություն, ավանդում է հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների հարաբերությունների իր մոտեցումները: Ըստ դրա, պետությունը որոշում է այն համակարգը, որում ապրում է հասարակությունը, հեռու պահում այն քաոսից, ապահովում է խաղաղություն, անվտանգություն, կարգ ու կանոն, իսկ հոգեւոր դասը գործում է հավատացյալ անձի եւ համայնքի դժվարըմբռնելի եւ փոփոխական իրականության հասկացության համար: Դա ընգրկում է մարդու դերը, նպատակը այս աշխարհում, հարաբերությունը իր նմանի եւ իշխանությունների հետ, գաղափարը, թե որտեղից է այն գալիս, ինչ է այն, եւ ինչպես է այն կիրառվում. հնազանդությունը, պարտականությունները, բարոյականությունը՝ ճշմարիտի եւ սխալի ընտրությունը եւ կյանքի էական հավատքային հիմնավոր այլ գործոններ: Նշմարվում է ապագա քրիստոնեական երկրների աստիճանական կառուցվածքը: Նոր Կտակարանի համաձայն, աշխարհիկ իշխանությունը չպետք է իր դիրքի պահպանման համար վնասի այլոց, չպետք է դիտարկի իրեն տրվածը՝ որպես արտոնություն, այլ ընդունի այն որպես ծառայություն, չպետք է չարաշահի իր գործառույթները, չպետք է միտվի անձնապաշտության, իսկ հոգեւոր իշխանությունը հասարակության մեջ պետք է արթուն պահի մի մեծ ընտանիքի պատկանելիության եւ Աստծու ու պետության առջեւ սրբազան պարտքի զգացողությունը: Նման հարաբերությունների պարագային միայն կարող են գործել հավասարությունը եւ արդարությունը:

РЕЗЮМЕ

В статье предпринята попытка исследовать взаимоотношения светских и духовных властей в I веке Р. Х., а также представить новозаветную точку зрения по этому вопросу, согласно которой запрещается наносить вред другим

людям для сохранения власти, исключая всякое проявление культа личности и дискриминации: законы должны употребляться во благо людей, не приемлемо злоупотребление служебным полномочием, а служение Богу и государству не должны быть противопоставлены друг другу. В раннехристианских общинах видны практически применимые принципы, которые несколько веков до этого были лишь идеалистическими идеями, а позже во многих государствах стали всеобщей реальностью. В результате исследования Евангелий, Деяний Апостолов, апостольских писем и книги Откровения мы выявили те важные принципы, на основе которых в последующих веках в странах, принявших христианство, сформировались иерархическая структура и взаимоотношения между Церковью и государством.

SUMMARY

In the article, we attempt to study the relationship between the spiritual and secular authorities in the 1st century AD in the historical and biblical context, as well as the New Testament approaches on them, according to which it is impermissible to put ordinary people in danger for keeping the power, as well as the manifestation of a person's cult and discrimination should be ruled out. Laws should be applied for the welfare of people and not the other way around. Service to God and the state should be made without juxtaposing them and privileges shouldn't be abused. In the early Christian communities, one can find practically applicable principles, which centuries ago were considered as purely idealistic ideas and later, in many states they were turned into universal reality. Studying the Gospels, Acts of the Apostles, Apostolic letters and the Book of Revelation, we have found important principles, on the basis of which countries that adopted Christianity shaped the Church-state relationships and hierarchical structures in later centuries.

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ

ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐ ԽԵՅԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

ԶԱՐԳԱՑԱԾ միջնադարում (ԺԱ.–ԺԳ. դդ.) Դվինն առաջընթաց ապրեց ոչ միայն առեւտրատնտեսական ոլորտում, այլ նաեւ զարգացավ մշակութային կյանքը։ Թատերական եւ կրկեսային ներկայացումները, իբրեւ արվեստի անմիջական ընկալումների յուրահատուկ որակ ու մտածողություն, քաղաքային բնակչության կենցաղավարության մեջ արմատացան ժողովրդական բանահյուսության եւ համընդհանուր քաղաքակրթության պահանջներին համահունչ մակարդակով։ Արվեստի այդ բնագավառների զարգացման խթանը քաղաքային բնակչությանը կենցաղային հոգսաշատ կյանքի ու ընկերային (սոցիալական) անարդար ելեւէջներից դեպի վերկենցաղային աշխարհ փոխադրելու մտահոգությունն էր (հատկապես ընչազուրկ խավի)։ Եւ պատահական չէ, որ այդ միջավայրը դարձավ հասարակական կյանքի հիմնական կենտրոնը, ուր իմաստավորվում էր միջնադարյան մարդու կենցաղավարությունն ու զգայական աշխարհը։

Միջնադարյան Հայաստանի թատրոնի պատմությունն անցել է զարգացման՝ ա. Վաղ (Ե.–Թ. դդ.) եւ բ. Զարգացած (Թ.–ԺԳ. դդ.) փուլեր։

Հայ մատենագրության մեջ պահպանված նկարագրությունները (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Եղիշե, Եզնիկ Կողբացի, Հովհան Մայրավանեցի (Մայրագոմեցի), բանահյուսական գրառումները վերաբերում են նախարարական հանդիսություններ-ի սրահներում ու դահլիճներում, հոգեւոր շինությունների, շուկաների, մզկիթների հրապարակներում ցուցադրվող թատերական ներկայացումներին, զվարճանքներին[1]՝ «...թատերս շինեաց ի քաղաքս, զծաղրածուսն

[1] *Տե՛ս «Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», աշխ.՝ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1957, էջ 63–64։*

յորդորեաց»[2], *կամ՝* «...իսկ հանդիսականդ, անոնց նայելով կը հալի, կիյնայ ծիծաղէն»[3]։ *Թատերական կյանքի խնդիրներով զբաղվող քննախոսներն այդ բոլոր աղբյուրներն ուսումնասիրել են եւ իրենց մեկնաբանություններով արժեքավոր աշխատություններ են հրապարակել (Վ. Հացունի, Գ. Լեւոնյան, Գ. Գոյան, Ս. Լիսիցյան, Հ. Հովհաննիսյան, Է. Պետրոսյան, Ժ. Խաչատրյան, Գր. Օրդոյան եւ այլք)։*

Զարգացած միջնադարի (ԺԱ.–ԺԳ. դդ.) թատերական կյանքի վերաբերյալ մատենագրական վկայություններն անհամեմատ սակավաթիվ են ու իբրեւ քաղաքային կյանքի գեղագիտական մտածողության խորհրդանիշ՝ բացառիկ։ Բեմականացվող թեմաները լուսաբանելու համար թատրոնի հիմնախնդիրներով զբաղվողների փնտրտուքներն ուղղորդել են դեպի մանրանկարների, նաեւ ձեռագրերի լուսանցքներում պահպանված պատկերազարդ աշխարհը, որից բխող հիմնավորումները միշտ չէ, որ կարելի է համարել իրականության ճշմարիտ արտացոլումներ։ Դվինում գտնված՝ տարբեր դիմակներով հարդարված հախճապակե փուխր խեցիով անոթների բեկոտված մասերն ու ալեբաստրոն կճուճն այդ առումով (աղ. 1, նկ. 8) տեղեկատվական մի ողջ շտեմարան են (աղ. 1, նկ. 1, 2, 3, 4, 12). դրանք խիստ արժեքավոր են աղբյուրագիտական, տնտեսական, կենցաղային բազմանշանակ հարցադրումներին պատասխանելու տեսանկյունից։ Խեցեգործ վարպետի հնարամիտ մտածողության արդյունք պետք է համարել արտաքին հարդարադաշտը շքեղացնելու միտումով ընտրված գեղարվեստական միջոցները, վերադրման հնարանքով մշակած՝ առյուծների, արջերի, գայլերի եւ ծաղրածուների դիմակներն ու բովանդակային համապատասխան լուծումներով կազմած տեսարանային զանազան պատկերները (աղ. 1, նկ. 7, 8, 11)։ Այդ զարդապատկերների բովանդակային մեկնաբանման բանալին պետք է փնտրել հնագույն մշակույթի գաղափարաբանության ծալքերում՝ տոտեմական սովորույթների եւ ծիսական արարողությունների ժամանակ նման դիմակներ ու հանդերձանք կրելու գործառույթում[4]։ Միջնադարում ժառանգականության որոշակի տարրեր կրելով հանդերձ՝ նկատելի են, սակայն, թատերական երեւույթների համակարգման նոր ընկալումներ, իսկ խորքային հետազոտության պարագայում՝ թեմաների

---

[2] *ՆԲԼՀ, հտ. 1, Երեւան, 1970, էջ 1004։*

[3] Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ, *Հայուհին պատմության առջեւ, Երեւան, 2007, էջ 221։*

[4] *Տե՛ս* В. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, Москва, *1982, էջ 28, 30, 62։*

բովանդակային իրատեսական ստուգաբանումներ։ Հախճապակե խեցեղենի այս տեսականին Դվինի խեցեգործ արվեստագետի յուրօրինակ մշակումն ու մենաշնորհն էր. վկան քաղաքի տարածքում պեղումներով հայտնաբերված ամբողջական եւ բեկորներից բաղկացած հավաքածուն է։ Շոշափվող թեմայի ընդարձակության պատճառով՝ առյուծների, գայլերի, արջերի դիմակների վերաբերյալ մեր քննությունը հակիրճ է։ Նկատենք միայն, որ ժամանակին Նիկողայոս Մառի հայտնած տեսակետը, թե կենդանական էակների նմուշային արտացոլումների ակունքը պետք է որոնել գրականության էջերում՝ Մխիթար Գոշի եւ Վարդան Այգեկցու առակների իմաստաբանական շերտերում[5], այսօր հայտնվել է արդիական հնչեղության դաշտում։ Հավելենք, որ մտածողությունն ունի շեշտված տարածականություն, որի վկայագիրը կիրառական արվեստի վերոհիշյալ առարկաներն են, որոնց զարդապատկերները բովանդակային մանրամասներով դիտարկելի են իբրեւ կրկեսային ներկայացումների տեսարան, քանզի կրկեսը «թատերային արվեստի մի տարատեսակ էր, որն արտացոլում էր մարդկային վարքագծի կենդանի վերարտադրության անսպասելի, խաղային արտառոց, հրաշակերպ եւ պատրանքային ձեւերը.... Կրկեսը թատերային մշակույթի նախնական արտահայտչամիջոցներից է՝ սկզբնավորված ժողովրդական խաղերի եւ սինկրետիկ բանահյուսության հարակից։ Մինչ եւրոպական միջնադարյան թատրոնի ձեւավորումը՝ Առաջավոր Ասիայում, առավելապես Բյուզանդիայում, Ասորիքում եւ Հայաստանում (Դ.-Ժ. դդ.) կրկեսը եղել է թատերական արվեստի հիմնական տեսակը եւ կոչվել է թատրոն»[6]։ Հայաստանում կրկեսային խաղերի, ներկայացումների դերակատարները եղել են շրջիկներ (լարախաղաց, ձեռնածու, ծաղրածու, խեղկատակ, ըմբիշ)[7]։ Այս մասին վկայվում է. «...եւ լարախիլքն մի թելք խլելով ի լարիցն՝ շարժեցուցանեն զկենդանոյն զպարանոցն եւ զձեռսն ուսովքն. այլ պատճառ է այսր իրի, զի ամենայն մասունքն առ իրեարս իւիք քաջայարմարութեամբ են շարակայեալ»[8]։ *Թատերական այդ կարգի ներկայացումների մասին առկա են հիշատակություններ Եզնիկ Կողբացու եւ Դավիթ Անհաղթի երկերում. Եզնիկ Կողբացու բովանդակալից տեղեկությունները «Եղծ*

---

[5] *Տե՛ս* Н. Марр, Сборник притч Вардана, Материалы для истории средневековой армянской литературы, СПБ, 1899, ч. I, II, 1894:

[6] *«Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 5, Երեւան, 1978, էջ 693։*

[7] *Անդ, էջ 694։*

[8] *Տե՛ս «Հայ ժողովրդական խաղեր», աշխ.՝ Վ. Բդոյանի, հտ. 1, Երեւան, 1963, էջ 174։*

աղանդոց»-ում լիակատար պատասխանում են Հայաստանում թատերային, կրկեսային մշակույթի ձեւավորմանը վերաբերող հարցադրումներին։ Եղնիկ Կողբացին իրեն բնորոշ խորիմաստությամբ վկայում է. «Եւ առաջնոյ չվնասակարութեան գազանացն մարդոյ՝ այժմու համբոյրս եւ ընտելութիւնս վկայեն։ Ջի ոմն զգայլոյ կորիւն սնուցանէ, եւ իբր զշան կորիւնս՝ առ ընտելութեան ընդ անձն անկանին։ Եւ միւսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ ի համբոյր եւ ի բծինս, մինչեւ պատել զսնուցելեաւն. եւ եթէ այլ ոք ի նա հուպ գայցէ, չմոռացեալ զբարս գազանութեանն՝ ի վերայ յարձակի...»[9]։ *Դավիթ Անհաղթը խրտվիլակի ողջ շարժախաղն ընդունում է իբրեւ կրկեսային խաղի փայլուն նվաճում*[10]։

Կարելի է ենթադրաբար մտածել, թե խեցեգործ վարպետն իր տեսողական հիշողությամբ փորձել է կրկեսային երեւույթը փոխանցել ուսումնասիրվող անոթների պատկերազարդ ձեւավորումներին՝ լինի դա գայլի, արջի թե առյուծի կերպարանքներով (աղ. 1, նկ. 7, 8, 11)։

Սույն հաղորդման առաջին բաժինը նվիրված է միջնադարյան աշխարհիկ թատրոնում գործուն մասնակցությամբ հայտնի ծաղրածուի կերպարին եւ նրան հատկորոշող առանցքային մանրամասներին, որոնց գեղարվեստական մշակումները տեսանելի են 1977 թ. Դվինի Ստորին Բերդում հայտնաբերված ալեբաստրոն կճուճի հարդարանքում (աղ. 1, նկ. 6)։ Անոթի գեղադաշտի բովանդակային ստեղծագործական բանաձեւը լուծված է պատկերագրական հաստատուն եւ կանոնիկ սկզբունքներով։ Իբրեւ ստեղծագործական բովանդակային առանցք՝ պատկերադաշտի հարթությունը բաժանված է տարբեր լայնության ուղղահայաց սյուներ՝ յուրաքանչյուրում վերից վար երեք անգամ տեղաբաշխելով երեքական ծաղրածուների միաձույլ դիմակներ, եւ նույն օրինակով՝ գայլերի մի շարք՝ վարպետորեն ձեւավորելով ձեւի ու չափի ներդաշնակ համադրում։ Թեմայի բաժանարար բնորոշիչը համաչափ հավասարակշռություն ձեւավորող ցանցկեն ու կոկոն վարդյակներից բաղկացած ուղղաձիգ եւ հորիզոնական ժապավեններն են։ Ընդհանուր ուրվանկարը վերարտադրում է վարպետի մտահղացած մի պատկերաշար, որով, կարելի է ենթադրել, թե նա փորձել է ներկայացնել ժողովրդական բառապաշարով զինված հայկական առակ, ասացվածքների ու

---

[9] «ԵՂՆԿԱՅ ԿՈՂԲԱՑՒՈՅ ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ» (ԵՂՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, *Եղծ աղանդոց), թարգմ. եւ ծանոթ.՝ Ա. Աբրահամյանի, Երեւան, 1994, էջ 57։*

[10] ՏԵ՛Ս ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ, *Սահմանք իմաստասիրութեան, Երեւան, 1960, էջ 104։*

հանելուկների դյուրընկալելի միտքը կիսագրագետ հասարակությանը մատուցող ծաղրածուի։

Սա թեմայի՝ մեր ոչ կտրուկ, այլ ենթադրական մոտեցումն է։ Շարունակաբար կրկնվող երեք թիվը (երեքական ծաղրածու, երեքական գայլ) խորհրդանշում է տիեզերքի եռամասնության (Տիեզերք-Օվկիանոս-Երկիր) առասպելաբանական մոտեցումը[11] *եւ խորհել է տալիս, թե, անկախ թեմայի բովանդակությունից, այդ մտածողությունն ամրագրված է եղել անոթի կերտման հիմքում։*

Փորձենք պարզաբանել ծաղրածուի կերպարն առկա սկզբնաղբյուրների («Մի՛ լինիր ծաղրածու եւ կատակերգակ. Ըզծաղրածու խեղկատակին, եւ զախտաշարժ բանս նոցին»[12]*) եւ Դվինի հնագիտական նյութի հիման վրա։ Ուսումնասիրվող անոթի վրա նրա կերպարանքը լուծված է ժամանակի թատերական միջավայրի կանոնիկ սկզբունքներով։ Գուցե, ծաղրածուի խաղը բազմիցս տեսած վարպետը կենդանի տպավորությամբ է կճուճի վրա նրան ներկայացրել՝ ձվաձեւ դեմքով, դիմագծերի մելամաղձոտ արտահայտությամբ, ճաղատ, ճակատին էլ գնդիկավոր ժապավենով օղակված։ Ծաղրածուի ճաղատությունը հնուց հայտնի ավանդույթ էր, նախագաղափար, որը մեզ տանում է դեպի խեթթական եւ ուրարտական աշխարհները*[13]*։ Նպատակ չունենալով թափանցել պատմության խորքերը՝ կարելի է միայն հիշատակել, որ Զայդելն ուրարտական գոտիներին նվիրված ուսումնասիրություններից մեկում ներկայացրել է կրկեսային մի դրվագ, ուր մարզիկը (*акробат*) սափրված գլխով է*[14]*։ «Թատրոնի մարդու» թատերական աշխարհում ընդունված ու ներկայանալի այդ կերպարը շարունակել է հարատեւել նաեւ անտիկ աշխարհում.* «Իսկ «թատրոնի մարդը» մասնագիտությամբ է ճաղատ եւ ոչ թե բնությունից։ Օրվա մեջ բազմիցս վարսավիրանոց հաճախելով՝ նա դեմոսին (ժողովրդին) ներկայանում է միայն ու միայն ցույց տալու համար գլխի զորությունը, որից առավել սարսափելի բան չկա»*[15]*։ Իրողությունը կարեւորել են նաեւ միջնադարյան հայ մատենագիրները՝* «...ցոփ խօսելոյ, մոռուս կոչելոյ, ի

---

[11] *Տե՛ս* Ս. Հարությունյան, *Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 9–18.* «Мифы народов мира», Энциклопедия, т. 1, Москва, *1987, էջ 398–468։*

[12] *ՆԲՀԼ, հտ. 1, Երեւան, 1979, էջ 1004։*

[13] *Տե՛ս* "Patrologia Graeca", t. VIII, ed. J.-P. Migne, Paris, *1857, էջ 865.* Ա. Ժամկոչյան, *Միջնադարյան ծաղրածուի պատկերման փորձերը, գեղարվեստական խեցեղենի նմուշները, Հին Հայաստանի մշակույթը,* XII, *Երեւան, 2002, էջ 76։*

[14] *Տե՛ս* U. Seidl, Bronzekunst Urartus, Main zam Rhien, *2004, էջ 14, նկ. 99/1, 2։*

[15] "Patrologia Graeca", t. LVIII, ed. J.-P. Migne, Paris, *1862, էջ 865։*

հրապարակս նստելոյ» բառերով, որտեղ մորուսը հենց ճաղատին է վերաբերում[16]։ Ծաղրածուի գլուխն ածիլելու պատճառը, կարծում ենք, պետք է բացատրել կաշվե պատյանով մարտական հրապարակներում հանդես գալու հանգամանքով, երբ առկա էր հակամարտության ժամանակ հարվածներից պաշտպանվելու անհրաժեշտություն[17]։

Ծաղրածուն միջնադարյան թատերային մշակույթի հավաքական կերպարներից էր, հասարակական միջավայրում զվարթ ու ծիծաղաշարժ տրամադրություն ստեղծողի բնորոշիչը։ Վարդան Այգեկցին գրում է. «Ճոճի մի ծաղր առնէր եւ ուրախացուցանէր զմարդիկ... Կայր խիստ շէն գող մի, եւ կայր յայն ջուռի մի եւ խիստ ծաղր առնէր զայն գեղացիքն եւ ուրախանային իւրմովն»[18]։

Գրականության էջերում նրան բնութագրել են տարբեր պիտակներով՝ խեղկատակ, ծաղրակատակ, խաղակատակ, այպանակ, կատակագուսան եւ այլն։ Ստեփանոս Սյունեցին, լինելով հասարակական այդ խավի հակառակորդը, նրանց բնութագրել է այսպես. «Զկատակերգութիւն աշխարհաւէրն, այսինքն՝ վատ կենցաղավարելոցն եւ անարի եւ ծուլիցն եւ ընչասիրացն եւ ի վերայ այսպիսեացն զեպերականն եւ զհեգնականն առնել ճառս եւ սոիչս, որպէս ռամիկքն սովորաբար ստեղծանեն առ այնոսիկ...»[19]։

Նկատի առնելով ծաղրածուի և՛ դրական, և՛ բացասական հատկանիշները՝ կարելի է ասել, որ «գուսան ծաղրածուք» կերպարն առհասարակ երկփեղկված է։ Դրականն ընդգծվում է հասարակական միջին շերտի համար զվարճալի հանդիսություններով ընկերային անարդարությունները մերկացնելով, իսկ բացասականը՝ խաբելու, այպանելու ունակությամբ. «Միմոս Զիս եւ վաճառական» առակում գրված է. «Միմոս մի էր բնակեալ ի դուռն քաղաքի, որ ասի խաբող եւ խաբէր զմարդիկ»[20]։ Այստեղ նկարագրվում է, թե ինչպես է ծաղրածուն քաղաքի նեղ դարպասով ներս տանում ուշացած վաճառականին եւ խաբելով՝ կերպարանափոխում նրան ծաղրածուի տեսքով, խլում նրա ունեցվածքն ու անհետանում։

---

[16] ՄՄ ձեռագրիր Հմր 7013։

[17] "Patrologia Graeca", t. LVIII, էջ 865։

[18] Ն. Մառ, Ժողովածոյ առակաց Վարդանայ, մաս Բ., Սանկտ Պետերբուրգ, 1894, էջ 26, 27, 49–50։

[19] Ն. Ադոնց, Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները, հտ. Գ., «Ստեփանոսի Սիւնեցւոյ Մեկնութիւն քերականին», Երեւան, 2008, էջ 183–219. Н. Адонц, Дионисий Фракиский и армянский толкователи, Петроград, 1915, էջ 193։

[20] Ն. Մառ, նշվ. աշխ, էջ 49–50։

Նկատի ունենալով ծաղրածուի մասնակցությունը Եւ արքունական զվարճանքներին, Եւ հասարակական լայն միջավայրում՝ նրան համարել են նաեւ ապադասակարգային կերպար։ Իրականում, վերնախավում ծաղրածուն ունեցել է գործուն մասնակցություն. այդ մասին է վկայում Հ. Օրբելու կողմից Ամբերդի բաղնիքում հայտնաբերված ծաղրածուի կմախքը, որի վերաբերյալ ուսումնասիրողը գրել է մի ամփոփ աշխատություն[21]։ Սակայն ծաղրածուն իր էությամբ ռամիկ աշխարհականների միջավայրի ծնունդ էր, նրա անբաժան անդամը. Եսայի Նչեցին գրել է. «...աշխարհաւէն, զի բոլորեցուն յայտնի լինիցի»[22]։ Ծաղրածուի գործունեության հիմնական միջավայրն են եղել շուկաները, եկեղեցիների հրապարակները, քաղաքային դարպասները, որտեղ տոնախմբությունների ժամանակ հավաքվում էր հոծ բազմություն։

Հոգեւորականության վերաբերմունքը թատերական մշակութային այդ աշխարհի հանդեպ մերժողական էր։ Դվինի Հայրապետանոցի փակակալ, տեղապահ Հովհան Մայրագոմեցին՝ հասարակական ընչազուրկ խավի պաշտպանն ու անաչառ քարոզիչը, իր նշանավոր ճառերում չի հանդուրժում «թատերք սատանայականքը», որի ընթացքում երգում եւ պարում էին գուսաններն ու վարձակները։ «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառում նա դատապարտում է հասարակական այն խավին, որն իր հոգսաշատ առօրյան թեթեւացնելու նպատակով գնում էր ոչ թե եկեղեցի, այլ թատերական հրապարակներ (տվյալ դեպքում Դվինի Մայր եկեղեցու հրապարակ)՝ դիտելու համար ցածրաճաշակ ներկայացումներ, որոնցում ծաղրում էին Եկեղեցին, հոգեւորականությանն ու եկեղեցական ծեսերը։ «Կանոնագիրք հայոց»-ում՝ «Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն»-ում[23], կարդում ենք՝ «Ոմանք յազատաց ի վերայ վանաց իշխանութիւն առնեն, եւ զվանական՝ զոր կամին հանեն եւ արկանեն, զոր չէ արժան եւ աւէն. եւ ոմանք ընտանեաւք ի վանսն նստին[24]՝ արհամարհեալ զեկեղեցեաւն Աստուծոյ՝ անպատկառելի անամօթութեամբ...»։ *Այս առնչությամբ նաեւ գրված է.* «Արհամարհութիւն, ձաղութիւն եւ հայհոյութիւն հոսեն ի նոցանէն հանապազ.... զոմանս հայհոյէ,

---

[21] *Տե՛ս* И. Орбели, Баня и скоморох XII века, Избр. труды, Ереван, *1963, էջ 316–322։*

[22] Եսայի Նչեցի, *Վերլուծություն քերականության, աշխ.՝ Լ. Խաչերեանի, Երեւան, 1966, էջ 72։*

[23] *«Կանոնագիրք հայոց», հտ. Բ., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1971, էջ 200, 210։*

[24] *Տե՛ս «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք», Վենետիկ, 1836, էջ 127–128.* Մ. Գոճայեան, *Յովհան Մայրագոմեցի. Միջնադարյան մեծ ճառագիրը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հտ. Է., Պէյրութ, 1974, էջ 213–224։*

զոմանս բամբասէ, զոմանս թշնամանէ, եւ զոմանս ձաղէ, խեղութեամբ ամօթով կուրացուցանէ. ոմանց ստէ, եւ յարգանօք սնափառեցուցանէ. իբրեւ զշուն կատաղեալ զամենեսեան առհասարակ խածանէ»[25]։ *Ուստի, պետք է արգելել թատերական այդ ներկայացումները, որոնք մարդկանց շեղում են ճշմարիտ հավատքից։ Մեկ այլ ճառում նաեւ գրված է.* «Վասն հմայից եւ անաւրէն դիւթականաց, որք թիւրեցան յաշխարհ ի ճշմարիտ եւ յուղիղ պատուիրանացն, գնացին զկնի սատանայի առ կախարդս եւ առ թովիչս եւ առ վհուկս եւ առ ձեռնածուս, եւ թողին զկաթուղիկէ եկեղեցի եւ խաչն աստուծընկալ...»[26]։ *Հայ Եկեղեցին, չհանդուրժելով հոգեւոր շինության հրապարակում ցուցադրվող բեմադրությունները, արգելող կանոններ է մշակել։ Դվինի եկեղեցական ժողովներից մեկում (645 թ.) ընդունվել են այդպիսի որոշումներ[27]։ Միջնադարյան մարդուն թատրոնից կտրելու յուրաքանչյուր փորձ հանդիպել է դիմադրության, որովհետեւ մարդկային հոգում, եկեղեցու նկատմամբ սիրո հետ մեկտեղ, արմատացած էր նաեւ թատերասիրությունը։ Այդ առումով տեղին է հիշատակել Աբրահամ Գ. Կրետացու (1734–1737 թթ.) հետեւյալ խոսքերը Անիի բնակչության խոտոր վարքագծի վերաբերյալ՝* «... զժամարարն արտաքս կոչէին եւ բարձրացուցանել տային զԱւետարանն եւ համբուրէին. եւ այսպէս զնշխարս առեալ գնային ի թատերս, ի թատրոնս եւ յասպարէզս ձիարշաւանաց»[28]։

Ամփոփելով ալեբաստրոն կճուճի եւ բազմաթիվ բեկորների հարդարանքում առկա ծաղրածուի պատկերագրական կերպարի քննությունը՝ կարելի է եզրակացնել, որ արտաքին չափ ու ձեւը, գունեղ երանգավորումը (ջինջ կապույտ) եւ թատերային խորհրդանիշ դիմակների եւ հարդարազարդերի միաձույլ համատեղումը յուրահատուկ է այն առումով, որ մի կողմից այն դիտարկելի է իբրեւ հարդարարվեստի գեղարվեստական ստեղծագործություն, մյուս կողմից՝ իբրեւ բրուտ արհեստավորի կենցաղային հնարամիտ գործունեության նրբաճաշակ արտահայտություն։ Տեղին է հիշել Դավիթ Անհաղթի սահմանումը, թե արվեստը նախ ունակություն է գործնական նպատակի իրականացման համար՝ բանականի

---

[25] *«Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք», Վենետիկ, 1836, էջ 127–128։*

[26] ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ, *Յովհան Մանդակունի եւ Յովհան Մայրագոմեցի, «Շողակաթ», Հայագիտական ժողովածու, գիրք 1, Ս. Էջմիածին, 1913, էջ 122։*

[27] *«Կանոնագիրք հայոց», հտ. Բ., էջ 211–212։*

[28] *«Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմութիւն անցիցն իւրոց եւ Նատր Շահին պարսից», Վաղարշապատ, 1870, էջ 103։*

միջոցով (հոգեւոր տեսական)՝ «առ պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղումս»[29]։

Թեմայի շրջանակում ուշադրություն ենք դարձրել նաեւ 1966 թ. Դվինի կենտրոնական թաղամասում՝ 20 սմ խորությունից, երջանկահիշատակ Ա. Քալանթարյանի հայտնաբերած դրոշմազարդ մի բեկորին, որը, առանց իմաստաբանական վերլուծության, հրապարակվել է ինչպես նրա, այնպես եւ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի կողմից (աղ. 1, նկ. 6)։ Հ. Պետրոսյանը, որը դրոշմազարդ խեցեղենի վերաբերյալ ունի մասնավոր հրապարակումներ, սույն բեկորի թեմատիկան հիմնավորել է Վարդան Այգեկցու «Քահանան եւ շունը» առակի հենքով, որը, մեր կարծիքով, վերանայման կարիք ունի[30]։ Նախ նշենք, որ բեկորի վրա հանդիպում է թատերական պարարվեստի գեղարվեստական պատկերագրության մեկ այլ հորինվածք, որը, բացի որոշակի բովանդակությունից, հստակ պատասխանում է զարգացած միջնադարում տիրող գաղափարախոսական-բարոյական բազմանշանակ հարցադրումներին։ Անոթի պսակը երիզող դրոշմազարդ գոտին, շուրջանակի հատվածաբար, կրկնության ռիթմով հարդարված է հորինվածքային եզակի պատկերաշղթայով, որի բովանդակությունը հստակ ընթեռնելի է եւ, ըստ էության, ավելի շատ արտառոց է, քան՝ օրինաչափ։ Պատկերամակերեսին՝ համաչափորեն տեղաբաշխված յուրաքանչյուր հատվածում, նկատելի է վեղարակիր տղամարդու պատկեր՝ խաչը ձեռքին, աջակողմյան ու ձախակողմյան դաշտում՝ կանանց ընկերակցությամբ շուրջպարի մի տեսարան։ Կերպարներն անհանդերձ են՝ գործողության շարժը ցուցադրելու պահով։ Վերջնարդյունքում պատկերագրությունը կրում է առավել իրատեսական, քան վերացական բովանդակություն։ Մեր դիտարկմամբ՝ այն ԺԲ.-ԺԳ. դդ. (բեկորը գտնվել է այդ շերտում) Դվինի աշխարհիկ կյանքում տեղի ունեցած մշակութային, գաղափարական, բարոյական ու հոգեբանական տեղաշարժերը համախմբող մի պատկերագրություն է, որը փորձել ենք մեկնաբանել հետեւյալ կետերով.

ա. Կիրառական եւ հարդարարվեստի առարկայի վրա արհեստավոր-արվեստագետի կողմից հասարակության լայն խավին ներկայացնել որոշ հոգեւոր սպասավորների անպարկեշտ կենցաղավարությունը, վարքն ու բարքը։ Դվինի եկեղեցական ժողովներից մեկում ընդունվել է

---

[29] *Տե՛ս* Դաւիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան, աշխ.՝ Ս. Արեւշատյանի, Երեւան, 1960, էջ 104։*

[30] *Տե՛ս* Г. Петросян, Средневековый пир и закавказские сосуды для подачи вина на стол, «Археология, этнология и фольклористика Кавказа», Эчмиадзин, *2003, էջ 347.*

հատուկ կանոն, որով հստակ դատապարտվում են եկեղեցու տարածքում վարձակներին ու գուսաններին օթեւան տրամադրող քահանաները. «Արդ՝ զվերագրեալ կանոնս սահմանադրութեան մերոյ խաւսեսցին ի լսելիս լսողաց վարդապետք եւ երիցունք եկեղեցւոյն, եւ որք միանգամ ուկնդիրք լիցին եւ հրամանակատարք, աւրհնեսցին ի Քրիստոսէ եւ ի սրբոց վարդապետաց եւ ի մեր միաբան ժողովոյս. իսկ եթէ ըմբոստացեալք եւ ամբարտաւանեալք արհամարհիցեն, այնպիսիքն եղիցին արհամարհեալք ի սրբոց վկայիցն եւ տարագրեալք յամենայն հոգեւոր աւրհնութենէ: Զի վանքդ անուն հանգստարանք են սրբոց եւ աթեվանք եպիսկոպոսաց եւ քահանայից, սարկաւագաց եւ աբեղայից եւ աղքատաց»[31]: *Գրիգոր Մագիստրոսը նրանց կենտրոնն անվանում է «Շնավանք»՝ «Եւ բնակեալք էին Շնավանսն այն արք հանդերձիւք կրօնաւորաց եւ կանանց բազմութիւն»[32]: Տրամաբանական է մտածել՝ այդ հանդիպումներն ավարտվել են անոթի վրա պատկերված խնջույքներով: Ըստ Մանուկ Աբեղյանի՝* «Դա ազգային կուլտուրայի ու գրականության զարգացման մի իրականություն է, արդյունք հայկական քաղաքային կյանքի բարգավաճման.... այդ վերափոխված շրջանը՝ անվանված վերածնություն, իբրեւ հեթանոսական սովորույթների վերապրուկ, որի մեկնաբանության բանալին պիտի փնտրել ԺԲ.-ԺԳ. դդ. տիրող գաղափարախոսության եւ արվեստի շերտերում: Այդ ժամանակ վերածնվել է հեթանոսական դարերի բուն աշխարհիկ ոգին ու աշխարհայեցողությունը՝ հակառակ կրոնաեկեղեցականին»[33]: *Իսկ բեկորի հայտնաբերման հանգամանքները ժամանակագրորեն համընկնում են վերոհիշյալ մտածողությանը:*

բ. Թոնդրկյան շարժման արձագանքներով, որի երկբեւեռ մոտեցումը կարելի է մեկնաբանել անոթը պատրաստող վարպետին կամ պատվիրատուին համարելով Թոնդրակյան շարժմանը հարող կամ դրան հակառակորդ: Փաստ է, որ պավլիկյանները, ապա նաեւ Թոնդրակյանները մերժում էին Մկրտության, Հաղորդության, Պսակի խորհուրդները, Խաչն ու Եկեղեցին. Գրիգոր Նարեկացու խոսքով՝ «բազում ինչ աստուածային եւ առաքելական ամենայն ինչ ուրացեալ է ի նոցանէ, եւ խափանեալ յաստուածային կարգաց»[34]: *Իսկ Գրիգոր Մագիստրոսը գրում է.* «Եւ այս ինչ են անօ-

---

[31] *«Կանոնագիրք հայոց», հտ. Բ., էջ 211–212:*

[32] *«Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագ. յառաջ. եւ ծանօթ.՝ Կ. Կոստանեանցի, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 152:*

[33] Մ. Աբեղյան, *Երկեր, հտ. Դ., Երեւան, 1970, էջ 20:*

[34] *«Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ...», «Գիրք թղթոց», Մատենագիտութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 499:*



1

2

3



4

5

6

7

8

9

10

11

12

ոէնութիւնք չարագործացն այնոցիկ… ո՛չ պահք նոցա, ո՛չ խտրութիւնք արանց եւ կանանց եւ ո՛չ ընտանեաց, թէպետ եւ ոչ յայտնապէս համարձակին եւ ոչ պատուեն.... այլ զամենայն ծաղր առնեն՝ զհին եւ զնոր օրէնս»[35]։ *Իսկ Արիստակես Լաստիվերտցին նկարագրում է Հակոբոս եւ Կունծիկ աբեղաների անբարո վարքը՝ վերջիններիս համարելով հասարակական չարիք[36]։ Բացառված չէ, որ նշյալ բեկորը հարդարող վարպետը հակաթոնդրակյան է եղել եւ նպատակ է ունեցել այդ պատկերագրությամբ ներկայացնել նրանց անբարո կենցաղավարությունը։*

գ. Մյուս կողմից՝ հնարավոր է, որ վարպետը եղել է թոնդրակյան շարժմանը հարող եւ փորձել է այդպիսով գովերգել հոգեւորականի ներկայությունն իրենց շարքերում։

Այսպիսով, կիրառական եւ դեկորատիվ արվեստի դվինյան նմուշներով կարելի է եզրակացնել, որ բովանդակային մանրամասներում խտացված ազգային ու համընդհանուր քաղաքակրթության հիմնական տարրերը մեկ անգամ եւս հավաստում են Ա. Յակոբսոնի առաջադրած տեսության ճշմարտացիությունը, այն է՝ խեցեգործությունը ոչ միայն մարդու կենցաղային, այլ նաեւ գեղագիտական պահանջը բավարարող առարկայական վկայագիր է։ Հավելենք, որ այն ունի աղբյուրագիտական արժեք հեռավոր անցյալի մարդու կենցաղը, բարքերը, հոգեբանական ու գաղափարական աշխարհն ընկալելու համար։

РЕЗЮМЕ

Во время археологических раскопок столицы средневековой Армении — Двина, была обнаружена большая коллекция фаянсовой керамики с накладными маскаронами в образах льва, медведя, волка и клоуна. Статья посвящена изучению одного из главного персонажа театральных представлений — клоуна. В средневековой Армении театральные представления осуществлялись на рыночных площадях, церквях и у городских ворот. Слушатели церковного сословия вели упорную борьбу против этого явления и применяли церковные каноны (законы), запрещающие эти представления. Однако горожане игнорировали

[35] *«Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 148–168։*

[36] *Տե՛ս «Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ», աշխ.՝ Կ. Յուզբաշեանի, Երեւան, 1963, էջ 119–120։*

эти запреты и одновременно активно участвовали как на этих увеселительных мероприятиях, так и в церковных службах.

SUMMARY

During the excavations, a large amount of ceramic artifacts with images of bears, lions, wolves and clowns were discovered at the medieval capital of Armenia (Dvin). The aim of this article is to reveal the role of clowns' activity in theatrical performances, which is of high importance. In medieval Armenia, the theatrical performances were held at the outskirts of the city, at public places and in markets. Priests could not tolerate this and even adopted ecclesiastical laws, which forbade theatrical performances in the neighborhood of churches. The citizens, however, did not pay any attention to this law and continued their theatrical entertainments along with participiption in Church ceremonies.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏՂԻԿ ՉԱՆԹԻԿԵԱՆ

ԿԵԱՆՔՆ ԱՌԱՆՑ ՀԱՒԱՏՔԻ[1]

«Հաւա՜տք, հաւատքն է միայն, որուն երկնային ուժին առջեւ
լեռնանման դժուարութիւնք կը հարթուին,
նոյն իսկ մահն իր աւարը ետ կուտայ,
կը խորտակուի սեւ պատուարը անոր,
կը պատռի մռայլ վարագոյրը կեանքին»[2]:

ԱՐԴԻ աշխարհում գիտական առաջընթացը, տեխնոլոգիական նորագոյն նուաճումները թելադրում են այլ հետաքրքրութիւններ եւ պահանջներ: Ակնյայտ է, որ փոխուել են արժեհամակարգերը, պատկերացումներն ու մօտեցումները, փոխուել է նաեւ հասարակութեան վերաբերմունքը տպագիր գրքի նկատմամբ, որին այսօր փոխարինում են էլեկտրոնային տարատեսակ կայքերը: Սակայն իրողութիւն է, որ տպագրութեան գիւտը դարձաւ մարդկային մտքի հրետանին, իսկ գիրքը՝ այն անանց արժէքը, որի շնորհիւ վերապրեցինք նախորդ դարերի պատմութիւնը, դարձանք հոգեւոր արժէքների կրողն ու փոխանցողը: Ահա այս գիտակցումով է առաջնորդւում Հայ Եկեղեցին՝ հաւատարիմ մնալով տպագիր գրքի հանդէպ ունեցած իր աւանդական վերաբերմունքին:

Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի նախաձեռնութեամբ եւ Արթուր սրկ. Գէորգեանի աշխատասիրութեամբ 2018 թ. լոյս տեսաւ հայ նահատակ հոգեւորականներից մէկի՝ Ներսէս վրդ. Դանիէլեանցի քարոզգիրքը:

---

1 ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆՑ, Կեանքն առանց հաւատքի, Բ. հրատ., կազմ.՝ Արթուր սրկ. Գէորգեան, խմբ.՝ Անդրէաս աբղ. Եզեկեան, հտ. Ա., Ս. Էջմիածին, 2018, 120 էջ:

2 Անդ, էջ 22 (այսուհետ՝ սոյն հրատարակութիւնից մէջբերումների էջերը կը նշուեն բնագրում՝ փակագծի մէջ):

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան Ներսէս վրդ. Դանիէլեանցը քիչ յայտնի մտաւորական-հոգեւորականներից է, ում ստեղծագործութիւններն ասես խնամքով պահուած գանձեր լինեն, որոնք բացայայտելիս հոգիդ անասելի խաղաղութեամբ է լցւում։ Հոգեւոր սպասաւորութեանը զուգահեռ՝ Հայ Եկեղեցու վարդապետը ծաւալել է նաեւ մանկավարժական ու գրական գործունէութիւն։ Ներսէս վրդ. Դանիէլեանցի «Կեանքն առանց հաւատքի» (Վիեննա, 1903 թ.) եւ «Կաթիլ մը ջուր այրած սրտերու» (Կ. Պոլիս, 1912 թ.) քարոզգրքերը տպագրուել են դեռեւս նրա կենդանութեան օրօք։ Թողել է նաեւ անտիպ երկեր, որոնք, կարծում ենք, մոռացութեան չպէտք է մատնուեն։ Անդրադառնանք «Կեանքն առանց հաւատքի» քարոզգրքի երկրորդ հրատարակութեանը, որը հիանալի հնարաւորութիւն է ծանօթանալու մտաւորական-հոգեւորականի քարոզներին, մտքերին ու գաղափարներին, տարբեր հարցերի շուրջ նրա վերլուծութիւններին, որոնք այժմէական են եւ ուսանելի։

Նախ նշենք, որ քարոզգրքերը խիստ տարբերւում են գիտական հրատարակութիւններից իրենց ձեւաչափով, բովանդակութեամբ, ոճով, կիրառած լեզուական եւ մեթոդական գործիքակազմով։ Տարբեր է նաեւ նպատակը. այն մարդկային հոգու անկեղծ խօսակցութիւնն է իր «ես»-ի, Աստուծոյ կամ իր նմանի հետ։ Այսու, քարոզգրքերը չենք կարող վերլուծել ու արժեւորել ըստ գիտական հաստատուած չափորոշիչների, սկզբունքների եւ չափանիշների։

Սոյն հրատարակութիւնը բաղկացած է «Կենսագրական ակնարկ»-ից եւ քսան քարոզից։ «Կենսագրական ակնարկ»-ում (էջ 5–12)՝ գրուած կազմողի կողմից, համառօտ ներկայացուած է հայ հոգեւորականի կեանքն ու գործունէութիւնը, մէջ են բերուած հատուածներ նրա յուշերից։ Ներսէս վրդ. Դանիէլեանցը յայտնի է եղել նաեւ «Սսական Վարդ» կեղծանուամբ, որով նրան «օծել» է Մկրտիչ Ա. Վանեցի (1892–1907 թթ.) հայրապետը։ Նա, տարբեր ծածկանուններով, աշխատակցել է Կ. Պոլսի եւ Իզմիրի թերթերին՝ հրատարակելով չափածոյ ստեղծագործութիւններ, պատմագիտական, բարոյախրատական ու աստուածաբանական յօդուածներ։ Ներսէս վրդ. Դանիէլեանցը մէկն էր Մեծ Եղեռնի այն միլիոնաւոր նահատակներից, որոնց դիերը մնացին խորը ձորերում կամ ճանապարհների վրայ՝ անթաղ եւ անշիրիմ։

Նկատելի է, որ գրքում ընդգրկուած քարոզները ներկայացուած չեն կանխաւ որոշուած կարգով եւ կուռ կառուցուածքով. դրանք բովանդակային առումով փոխկապակցուած չեն միմեանց ու չեն ենթարկւում

ժամանակագրական յաջորդականութեան սկզբունքին։ Այս քարոզները խօսուել են տարբեր տարիների եւ անդրադառնում են ազգային-եկեղեցական իրադարձութիւններին, քրիստոնէական հաւատին առընչուող տարաբնոյթ հարցերին ու խնդիրներին, եկեղեցական տօներին, հոգեւոր սպասաւորութեանը, հայոց մշակոյթին. դրանք նաեւ բացայայտում ու խարազանում են հայ հասարակութեան կեանքում տեղ գտած արատաւոր երեւոյթները։ Քարոզները հեղինակի մտքի, խոհերի, մտորումների, ընկալումների, նաեւ անկեղծ մտահոգութեան անբասիր արտացոլանքն են։ Այս մասին վկայում է նաեւ ինքը՝ Ներսէս վրդ. Դանիէլեանցը. «Խօսեցայ.... ինչ որ ներշնչեցին ինձ Աւետարանի ոգին ու մեր հարց հաւատքը, գրեցի՝ ինչ որ զգացի կամ թելադրեց ինձ հայ ժողովուրդին սէրը...» *(էջ 13)։ Այս համառօտ քարոզներում հայ հոգեւորականի խօսքը չափազանց պատկերաւոր ու գեղեցիկ է, երբեմն՝ խիստ եւ հատու։*

Այսպէս՝ խօսելով հայ ժողովրդի պատմական փառահեղ անցեալի մասին՝ հայ մտաւորական-հոգեւորականն արտայայտում է իր մտահոգութիւնը՝ կապուած ներկայի եւ ապագայի հետ. «Արեւմուտքէն փչող ամէն տեսակ հովերու հանդէպ շատ լայնօրէն կը բանանք մեր սրտերն ու քսակները, ու այդ հովեր, թունաւոր օձերու պէս, անզգալի կերպով կը սողոսկին, կը մտնեն անարգել մեր բնատոհմիկ ընտանեկան դրախտէն ներս ու անցնելով իբր խորշակ մեր մատաղ սերունդի հոգիներուն եւ սրտերուն ծաղկաստանի վրայէն՝ կը խարե՛ն, կը խամրե՛ն անոնց բարոյական ու հայրենական սրբենի զգացումներուն ծաղիկները կենսաբոյր...» *(էջ 14)։ Այս կործանարար վտանգից փրկուելու համար ինչպէս անցեալում, այնպէս եւ այսօր պէտք է կարեւորել ու արժեւորել հայ ժողովրդի գոյութեան երրորդութիւնը կազմող սրբավայրերը՝ ընտանիքը, դպրոցն ու Եկեղեցին։ Ազգապահպանման հոգեւոր պատերազմում կարեւորելով հայ եկեղեցականների դերակատարումը՝ Ներսէս վրդ. Դանիէլեանցը պնդում է, որ պէտք է առանձնակի ուշադրութիւն դարձնել քարոզչութեանը, քանզի միայն հաւատով* «մարդ կրնայ ապրիլ աս վշտի կեանքը՝ ձախորդութեան մէջ անընկճելի, տառապանքներու հանդէպ մխիթարուած ու մահուան դէմ անվեհեր» *(էջ 15)։*

Առաջին՝ «Կեանքն առանց հաւատքի» վերնագրուած քարոզում հեղինակը խօսում է գիտութեան եւ կրօնի մասին, անդրադառնում դրանց փոխյարաբերութեանը։ Ըստ այսմ՝ «հաւատքն ու կրօնական զգացումը հին են մարդուն չափ, յաւիտենական են կեանքին պէս». *կեանքն առանց*

հաւատքի, ասել է թէ՝ մարդն առանց հոգու, սիրտն առանց սիրոյ եւ զգացմունքի (էջ 19)։ Իսկ գիտութիւնը մարդկային մտքի, իմացականութեան լոյսն է, այն ընդլայնում է մեր մտահորիզոնը, նրա միջոցով ենք ճանաչում մեզ շրջապատող արտաքին աշխարհը։ Գիտական նուաճումների շնորհիւ փոխւում են նիւթական կեանքի պայմանները, բարելաւում ապրելու կերպերն ու եղանակները։ Մտաւորական-հոգեւորականն այստեղ իրաւամբ նկատում է, որ եթէ անգամ գիտութիւնն իր հրաշքներով ու հրաշալիքներով, իր նուաճումներով եւ առաջընթացով կատարելութեան գագաթնակէտին էլ հասած լինի, այն չի կարող փոխարինել կրօնին ու հաւատքին։ Գիտութիւնը չի կարող սփոփել, մխիթարել երկրային կեանքից, տառապանքներից ու կենցաղային խնդիրներից յոգնաբեկ մարդ արարածին, չի կարող բժշկել նրա վիրաւոր հոգին, չի կարող ցրել մահուան՝ թանձր խաւարի նմանուող սարսափը։ Մինթէ «քրիստոնէին հաւատքը չէ, որ գոցուած գերեզմանէն անդին ցոյց կու տայ բացուած յաւիտենականութեան մը դռները, ուսկից կը ցօղեն, կը կաթկթին սփոփանքի սուրբ ցօղերն անուշակ՝ մեր վշտաբեկ սրտերուն վրայ» *(էջ 20)։*

Յաջորդ՝ «Կեանքին արժէքը» քարոզում Հայ Եկեղեցու վարդապետը խօսում է կեանքի իմաստի մասին, իր տեսանկիւնից արժեւորում մարդու ապրած տարիները, փորձառութիւնը։ Նշենք նաեւ, որ քարոզը խօսուել է Ամանորի առիթով։

«Անոր ծնունդը» վերնագրով քարոզը նուիրուած է քրիստոնէական մեծագոյն տօնին՝ Սուրբ Ծննդեանը։ Ըստ Ներսէս վրդ. Դանիէլեանցի՝ ապականուած եւ մեղքերի տիղմում յայտնուած հեթանոսական աշխարհը մաքրագործուեց Աստուծոյ Որդու՝ Յիսուս Քրիստոսի ծննդեամբ՝ «Անոր ծնունդը եղաւ ծնունդն ազնիւ զգացումներու, Անոր յայտնութիւնն եղաւ յայտնութիւնը բուն ճշմարիտ կեանքին…» *(էջ 31)։ Քրիստոսի մարդեղութիւնն ու ծնունդը թերեւս աստուածային փրկագործութեան սկիզբն էր, երբ* «…երկինք ու երկիր զիրար կը համբուրեն սիրոյ ու արբութեան համբոյրներով, վասնզի խաղաղութեան ու հաշտութեան աղեղն էր ձգուեր դէպ ի երկինք…. ու այլ եւս փրկուած էր մոլութեան ու մոլորութեան, ապականութեան ու պղծութեան մահացուցիչ ջրհեղեղին մէջ խեղդուելու վտանգին հասած մարդկութիւնը…» *(էջ 30)։*

«Սրտին խորհուրդը» քարոզում Հայ Եկեղեցու վարդապետը անդրադառնում է մարդու չար եւ բարի մտքերին ու խորհուրդներին, պատկերաւոր ներկայացնում դրանց հակադրութիւնը։ Հիմնաւորելով չար

խորհուրդների վտանգաւորութիւնն ու վնասակարութիւնը՝ հեղինակը շեշտում է, որ «վատ ու ստորին խորհուրդներն են, որ կը ժանգոտեն խիղճը, կապականեն սրտին մաքուր զգացողութիւնը, վերջապէս կը մթագնեն մտքին պայծառութիւնը» *(էջ 35)։*

Յաջորդ քարոզները բարոյախրատական բնոյթ ունեն։ Ներսէս վրդ. Դանիէլեանցը անդրադառնում է հասարակութեան կեանքում տեղ գտած արատաւոր ու մեղսալի երեւոյթներին, սովորոյթներին։ Հեղինակի արգահատանքի խօսքն անխտրօրէն ուղղուած է հասարակութեան բոլոր դասերի ներկայացուցիչներին՝ աշխարհական թէ հոգեւորական, բարձրաստիճան պաշտօնեայ թէ ռամիկ։ Զգրելի երեւոյթների տարածման պատճառներից մէկը մարդկային անտարբերութիւնն է դիմացինի վշտի, սխալների, մոլորութեան ու անկման հանդէպ։ Թէեւ Ներսէս վրդ. Դանիէլեանցի խօսքը խիստ է, մերկացնող, սակայն նա սէր եւ ներողամտութիւն է քարոզում մոլորեալների ու անկեալների նկատմամբ՝ յուսալով, որ վերջիններս դարձի կը գան եւ կը գտնեն քրիստոնէական կեանքի ճշմարիտ ուղին։ Որպէս ասուածի լաւագոյն հաստատում՝ վարդապետը յիշեցնում է անառակ որդու մասին աստուածաշնչեան առակը։

Մէկ այլ՝ «Ներել, թէ՞ պատժել» վերնագրով քարոզում վարդապետը, զուգահեռներ անցկացնելով Հին եւ Նոր Կտակարանների միջեւ, մէկ անգամ եւս կարեւորում է ներելու կարողութիւնը՝ այն համարելով քրիստոնէական վարդապետութեան հոգեւոր զէնքը. «Քրիստոնէական կրօնի մեծութիւնն ու վսեմութիւնը՝ սիրոյ, գթութեան եւ ներման սկզբունքին մէջն է, այս երբեակ սուրբ զգացումներն են, որ մարդը կը մօտեցնեն մարդուն եւ մարդն՝ Աստուծոյ» *(էջ 70)։ Ներսէս վրդ. Դանիէլեանցը, Աստուածաշունչ մատեանը վկայակոչելով, մէկ անգամ եւս ընդգծում է, որ այն, ինչ ի զօրու չեղաւ իրագործել հինկտակարանեան օրէնքն իր խստութեամբ ու պահանջկոտութեամբ, Աստուծոյ Որդու՝ Յիսուս Քրիստոսի քարոզած սիրոյ պատուիրանով իրականութիւն դարձաւ։*

Նշեալ քարոզների տրամաբանական շարունակութիւնն ասես լինի «Գթութեան ոգին» քարոզը, որտեղ հանգամանօրէն արժեւորւում է մարդկային գթասրտութիւնն ու ողորմածութիւնը, իր նմանին օգնելու պատրաստակամութիւնը. «Կեանքի հոգեկան ճգնաժամերուն մէջն է, որ գթութեան զգացումը կընէ մարդը մարդուն համար հրեշտակ մը, որ կը կատարէ Աստուծոյ պաշտօնը…» *(էջ 51)։*

Իր խօսքն առաւել ազդեցիկ եւ տպաւորիչ դարձնելու համար Ներսէս վրդ. Դանիէլեանցը կիրառել է լեզուական տարբեր միջոցներ՝ համեմատութիւն, համադրում, փոխաբերութիւն, հակադրութիւն։ Այսպէս՝ մէկ այլ՝ «Արդարութեան եւ ճշմարտութեան ծարաւիներ» քարոզում համեմատութեան հրաշալի օրինակ է առկայ՝ «Ինչ որ է բնութեան մէջ արեւն ու իր ջերմութիւնը բուսականութեան համար՝ նոյնն է եւ աւելի արդարութիւնն ու ճշմարտութիւնը մեր բարոյական կեանքին համար…» *(էջ 112)։*

«Անհաւատարիմը» քարոզում Հայ Եկեղեցու վարդապետը հակադրում է հաւատարմութիւնն ու անհաւատարմութիւնը, վստահութիւնը եւ անվստահութիւնը. պատկերաւոր բազմաթիւ օրինակներով նա հիմնաւորում է հաւատարմութեան ու վստահութեան անփոխարինելի դերակատարումն ընտանեկան, ընկերային (սոցիալական) կեանքում՝ դրանք համարելով մարդկային յարաբերութիւնների եւ առընչակցութիւնների հիմնասիւները (էջ 53–57)։ Ներսէս վրդ. Դանիէլեանցն ընդգծում է. «Եթէ կայ աշխարհի վրայ սուրբ ուրախութիւն, ճշմարիտ երջանկութիւն մը, հոգ չէ, որ ան քանի մը օր կամ քանի մը ժամ տեւած ըլլայ, այն միայն անոնք կզգան որոնց սիրտը կապուած է հաւատարմութեան ու վստահութեան սիրոյ օղակապերովը, որուն բնա՜ւ չեն կրնար վնասել նախանձի կամ կասկածանքի ժանգերը ժահրոտ» *(էջ 56)։*

«Հացին համար ի՞նչ կընենք՝» քարոզում խարազանւում են մարդկային արատները՝ նիւթապաշտութիւնը, անազնուութիւնը, ստախօսութիւնը, ագահութիւնը։ Հեղինակը սրտի ցաւով նկատում է, որ «…մարդ ամէն բան նիւթականացուց նիւթին համար ու անոր շուրջը կամ դիմացը իր խիղճը խիճ դարձաւ, հոգին ալ՝ մարմին, որ բնազդով սկսաւ գործել, քան բանականութեամբ» *(էջ 65)։ Ագահների մասին ասում է, որ նրանց կեանքն ըստ էութեան ունայն է, հոգեւոր որեւէ արժէքից զուրկ, քանզի* «խարդախութեամբ դիզուած ոսկիներուն փայլն իրենց կեանքին արեւն ըրին կամ կուտը՝ իրենց կոյր հոգիին…» *(էջ 66)։ Նշենք նաեւ, որ Ներսէս վրդ. Դանիէլեանցի բարոյականաստուածաբանական շեշտադրումները հետաքրքիր են եւ իւրօրինակ. դրանք ասես մի քանի շերտ ունեն, որոնք ընթերցողը պէտք է բացայայտի։*

«Սրտին ծաղկազարդը» քարոզում Ներսէս վրդ. Դանիէլեանցը շատ գեղեցիկ զուգահեռներ է անցկացնում բնութեան զարթօնքի, ծաղկունքի եւ մարդու հոգեւոր նորոգման, ներքին մաքրագործման միջեւ։ Նա հարցնում է քրիստոնեային, որը բոլոր հաւատացեալների հաւաքական կերպարն է, «…ի՞նչ կարժէ բնութեան եւ Աստուծոյ տաճարին ծաղկազարդուիլն ու փոփոխութիւնները, մինչ դու չես զգար փոփոխութիւն մը քու մէջդ

հոգեպէս, եւ սիրտդ իբր ամայի անապատ մը կը մնայ թափուր, ուր չճառագայթէր, չցոլանար սէրը սրբացնող ու աստուածացնող...» *(էջ 86)։*

«Վերջին սեղանը» քարոզում նկարագրելով Վերջին ընթրիքը՝ վարդապետը խօսում է սիրոյ պատուիրանի նոր՝ նորկտակարանեան բովանդակութեան մասին, որն աւանդուեց մարդկութեան Փրկչի կողմից։ Այս սիրոյ վրայ է կառուցուել քրիստոնէական Եկեղեցին (խօսքը հոգեւոր համայնքի մասին է), որը հիմնադրման սկզբնական շրջանում սոսկալի հալածանքների ենթարկուեց, աննկարագրելի հարուածներ ու տառապանքներ կրեց, սակայն անսասան եւ կանգուն մնաց. «Այն (եկեղեցին) կը նմանի ծովափունքի հաստատ ժայռին, զոր կատաղի ծովին ալիքները շառունակ կապտակեն ու կը հարուածեն, բայց ժայռը աւելի կը փայլի, աւելի կը յղկուի այդ ալիքներէն...» *(էջ 91)։*

«Ահաւոր գիշերը» քարոզում՝ խօսուած Աւագ Ուրբաթ օրը մատուցուած Ս. Պատարագին, Ներսէս վրդ. Դանիէլեանցը չափազանց պատկերաւոր եւ տպաւորիչ է նկարագրում Յիսուս Քրիստոսի խաչելութեանը նախորդող իրադարձութիւնները։ Նախ ներկայացնում է ահասարսուռ տագնապի, անասելի երկիւղի եւ սպասումի այն գիշերը, որը պէտք է փոխեր մարդկութեան ողջ պատմութեան ընթացքն ու իր անջնջելի հետքը թողնէր՝ «Տագնապներուդ (իմա՛ Յիսուս Քրիստոսի) ահաւոր գիշերը ծնաւ կեանք մը մարդուն համար, որ այլ եւս չվախնար մահուան գիշերներէն. գերեզմանդ անմահութեան դուռը բացաւ...» *(էջ 98)։ Քրիստոսի չարչարանքներով եւ խաչելութեամբ իր լրումին հասաւ փրկագործութեան խորհուրդը։ Ըստ Հայ Եկեղեցու վարդապետի՝ Աստուծոյ Որդին եղաւ լոյսը մեր մտքի, անմահութիւնը մեր կեանքի, սէրը մեր սրտի եւ ճշմարտութիւնը մեր հոգու. Նրա մահուան ահաւոր գիշերը մեզ՝ մահկանացուներիս համար ծնեց անմահութեան առաւօտը (էջ 98)։*

Նախորդին բովանդակային առումով շարունակում է «Մա՞հ, թէ՞ կեանք» քարոզը՝ խօսուած Սուրբ Յարութեան տօնին։ Ներսէս վրդ. Դանիէլեանցը շեշտում է՝ Քրիստոս իր յարութեամբ հաստատեց, որ մարդու համար մահ չկայ. Նրա մահով «մահուան գաղտնիքը լուծուեցաւ, մահը կեանք ծնաւ, մինչ՝ առաջ կեանքն էր, որ մահ կը ծնէր մարդուն համար» *(էջ 101)։ Եւ յիրաւի, Աստուծոյ Որդու յարութեամբ մահուան պատանքը փոխակերպուեց անմահութեան պատմուճանի, իսկ գերեզմանի մթին անդունդը դարձաւ յաւիտենական կեանքի ճանապարհը։ Կեանքի ճշմարիտ օրինակը մեզ յայտնուեց Քրիստոսի երկրային կեանքով, իսկ Նրա մահուամբ ու*

յարութեամբ լուծուեց գաղտնիքը մահուան, որի խայթոցից առաջացած արիւնոտուած վէրքերը բուժուեցին, սպիացան Փրկչի վէրքերից կաթկթացող արեան ցօղերով (էջ 118)։

Մէկ անգամ եւս արժեւորելով Աստուածաշունչն ու համեմատելով միւս գրքերի հետ՝ Ներսէս վրդ. Դանիէլեանցը այն համարում է քրիստոնեայի կեանքի գիրքը, սրտի նուիրական մատեանը եւ հոգու անբիծ հայելին։ Աստուածաշունչ մատեանն անանց գանձ է, որը չի ենթարկւում ժամանակի «սպառնալիքին»։ Վարդապետը գրում է. «Աւետարանն այն մաքուր ու սուրբ գետակն է, ուր մարդ աշխարհի կենցաղին մէջ աղտոտած կեանքին բիծն ու աղտերը կը լուայ. Ան՝ տրտմածներուն մխիթարանքն է, տառապեալներուն սփոփանքը, խթան մը սուտ իմաստուն կարծուածներուն բրտացած զգացումներուն, խաւարամիտներուն լոյսը…» *(էջ 106–107)։*

Այս հրատարակութեան մէջ ընդգրկուած քարոզներն ունեն աստուածաբանական, բարոյախրատական բնոյթ։ Մեր կարծիքով՝ քարոզխօսութեանն առընչուող ցանկացած նիւթ պէտք է ծառայի որոշակի նպատակների՝ ուղղորդի ընթերցողի միտքը դէպի քրիստոնէական բարոյական արժեհամակարգը, ներկայացնի Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը, հոգեկան խաղաղութիւն պարգեւի. Ներսէս վրդ. Դանիէլեանցն իր այս քարոզգրքով թերեւս յաջողութեամբ լուծել է վերոնշեալ խնդիրները։ Քարոզգիրքը ծաւալուն չէ. հեղինակի խօսքը գեղեցիկ ու ազդեցիկ է, բառապաշարը՝ հարուստ եւ իւրօրինակ։ Քարոզները տարաբովանդակ են, չեն կրկնում միմեանց, սակայն դրանցում նշմարւում է հեղինակի հիմնական նպատակն ու ասելիքը։ Ամէն քարոզն ընթերցելուց յետոյ դեռ երկար ժամանակ ակամայից մտորում ես, խորհում, վերլուծում մտաւորական-հոգեւորականի մտքերն ու տեսակէտները։ Սոյն գիրքը վարդապետի հոգու ինքնաբուխ եւ անկեղծ խօսքն է, քրիստոնէական հաւատի մի տպաւորիչ քարոզ. «Կեանքին գաղտնիքը հաւատքով միայն կրնայ լուծուիլ. հաւատքը կեանքն իսկ է, կեանքը՝ յոյս, եւ յոյսը՝ սէր. առանց այս երրորդութեան ոչ կեանք կայ իրական եւ ոչ երջանկութիւն տեւական։ Հաւատացէք՝ պիտի յուսաք, յուսացէք՝ պիտի սիրէք, սիրեցէք՝ պիտի ապրիք…» *(էջ 23)։*

Այսպիսով, քարոզգիրքը կազմողը կարեւոր ու դրուատանքի արժանի աշխատանք է կատարել՝ հայ հոգեւոր գրականութիւնը համալրելով եւս մէկ արժէքաւոր հրատարակութեամբ։

СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** по случаю первого заседания рабочей группы Церковь–государство. 5

Проповедь **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** в церкви Святого Иоанна Предтечи 8

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** по случаю епископского рукоположения . .12

Доклад **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** в ходе специальной сессии Государственного информационного совета Шаржи 16

ОФИЦИАЛЬНОЕ

Слово **ВЫСОКОПРЕОСВЯЩЕННОГО АРХИЕПИСКОПА КРИТСКОГО ИРИНЕЯ** в ходе приема Католикоса Всех Армян и его делегации в Резиденции Крита 21

ПРОПОВЕДИ

Проповедь **ЕПИСКОПА ДАНИЕЛА ФИНДИКЯНА,** произнесенная в церкви Святой Гаяне во время первой Литургии Епископского обета. 23

Проповедь **ЕПИСКОПА ТИРАНА ПЕТРОСЯНА,** произнесенная в церкви Святой Гаяне во время первой Литургии Епископского обета. 26

Проповедь **ЕПИСКОПА СЕРОВБЕ ИСАХАНЯНА,** произнесенная в церкви Святой Гаяне во время первой Литургии Епископского обета. 31

РЕЛИГИОВЕДЕНИЕ

АРХИМАНДРИТ НАРЕК АВАГЯН – Канон Андастана и народные ритуалы вызова дождя 36

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

РОБЕРТ ТАТОЯН – Попытки Армянского Патриархата Константинополя в 1919–1920 гг. составить статистику человеческих и материальных потерь западных армян во время Геноцида армян (согласно архивным материалам Иерусалимского Армянского Патриархата) 53

ЭДИК МИНАСЯН – Эпизоды майских героических сражений 1918 г. 87

АВЕТИС КАЛАШЯН – Образовательные реформы в духовной семинарии Св. Эчмиадзина при Католикосе Всех Армян Гарегине Втором (2000–2007 гг.) 115

СООБЩЕНИЯ

АЙКАРАМ АКОПЯН – Новозаветные подходы к взаимоотношениям духовной и светской властей. 130

АГАВНИ ЖАМКОЧЯН, НЮРА АКОПЯН – Отражение борьбы светской и духовной идеологии в керамических изделиях 140

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АСТГИК ЧАНТИКЯН – Жизнь без веры 152

CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasaion of the first meeting of the Church-State working group 5

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, in St. Hovhannes Karapet Church 8

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, on the occasion of the episcopal ordination 12

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS**, at the special session of the National Media Council of Sharjah . . . 16

OFFICIAL

Message of **HIS EMINENCE IRENAEUS, ARCHBISHOP OF CRETE** during the reception of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians and his delegation in the Archdiocese of Crete 21

SERMONS

Sermon delivered by **H.G. BISHOP DANIEL FINDIKYAN** during his first episcopal Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 23

Sermon delivered by **H.G. BISHOP TIRAN PETROSYAN** during his first episcopal Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 26

Sermon delivered by **H.G. BISHOP SEROVBE ISAKHANYAN** during his first episcopal Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 31

RELIGIOUS STUDIES

ARCHIMANDRITE NAREK AVAGYAN – Canon of blessing the land and ethnographical rites of rainfall 36

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

ROBERT TATOYAN – Efforts (made in 1919—1920) of the Armenian Patriarchate of Constantinople to gather statistics of human and material losses suffered by the Western Armenians during the Armenian Genocide (according to the archives of the Armenian Patriarchate of Jerusalem) 53

EDIK MINASYAN – Episodes of the May heroic battles of 1918 87

AVETIS KALASHYAN – Educational Reforms at the Gevorkyan Theological Seminary during the Pontificate of H.H. Karekin II (2000—2007) 115

ESSAYS

HAYKARAM HAKOBYAN – New Testament approaches on the relationship between spiritual and secular authorities. 130

AGHAVNY ZHAMKOCHYAN, NYURA HAGOPYAN – Manifestations of spiritual and secular ideology in ceramic culture 140

LITERARY REVIEW

ASTGHIK CHANTIKYAN – Life without faith 152

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը Եկեղեցի-պետութիւն աշխատանքային խմբի առաջին նիստի առիթով 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ քարոզը Սուրբ Յովհաննու Կարապետ եկեղեցում (Կրետե) 8

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ պատգամը եպիսկոպոսական ձեռնադրութեան առիթով 12

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ բանախօսութիւնը Շարժայի պետական տեղեկատուական խորհրդի յատուկ նիստում 16

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԿՐԵՏԷԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Տ. Տ. ԻՐԵՆԻՈՍԻ խօսքը Կրետէի Արքեպիսկոպոսարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ նրա պատուիրակութեան ընդունելութեան ժամանակ 21

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԴԱՆԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԸՆՏԸԳԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում Եպիսկոպոսական ուխտի անդրանիկ Պատարագի առիթով 23

Տ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում Եպիսկոպոսական ուխտի անդրանիկ Պատարագի առիթով. 26

Տ. ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՍԱԽԱՆԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում Եպիսկոպոսական ուխտի անդրանիկ Պատարագի առիթով 31

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԱՒԱԳԵԱՆ – Անդաստանի կանոնը եւ անձրեւաբերութեան ժողովրդական արարողութիւնները 36

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԵԱՆ – Մեծ եղեռնի ընթացքում արեւմտահայութեան կրած մարդկային եւ նիւթական կորուստները վիճակագրելու Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի փորձերը 1919–1920 թուականներին (ըստ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի արխիւի նիւթերի) 53

ԷԴԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ – Դրուագներ 1918 թ. մայիսեան հերոսամարտերից 87

ԱՒԵՏԻՍ ՔԱԼԱՇԵԱՆ – Ճեմարանի կրթական բարեփոխումները Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրօք (2000–2007 թթ.). 115

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿԱՐԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ – Հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնների փոխյարաբերութեան նորկտակարանեան մօտեցումները 130

ԱՂԱՒՆԻ ԺԱՄԿՈՉԵԱՆ, ՆԻՒՐԱ ՅԱԿՈԲԵԱՆ – Հոգեւոր եւ աշխարհիկ գաղափարախօսութեան դրսեւորումներ խեցեգործական մշակոյթում 140

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏՂԻԿ ՉԱՆԹԻԿԵԱՆ – Կեանքն առանց հաւատքի. 152

ԱԲՀ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Աւգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865

ԱԺ - Արեւելագիտական ժողովածու, Երեւան

ԱԻ - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԱՀ - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1–26, Շուշի/Թիֆլիս, 1896–1916

ԱՖՏ - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան

ԲԵՀ - Բանբեր Երեւանի համալսարանի, Երեւան

ԲՀ - Բանբեր հայագիտության, Երեւան

ԲՀԱ - Բանբեր Հայաստանի արխիվների, Երեւան

ԲՄ - Բանբեր Մատենադարանի, Երեւան

ԳԱԹ - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան

ԳԻ - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԳՀՃ - Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին

ԴԱՆ - Դաշտային ազգագրական նյութեր

ԴՀՊ - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1–13, Թիֆլիս, 1893–1917

ԴՀՎ - Դիվան հայ վիմագրության, Երեւան

Ե(Լ)Ժ - Երկերի (լիակատար) ժողովածու

ԵՊԿ - Երեւանի պետական կոնսերվատորիա

ԵՊՀ - Երեւանի պետական համալսարան

ԷԱԺ - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1–9, Մոսկվա, 1901–1913

ԷՊԱԹ - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան

ԼԻ - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան

ՀԱ - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա

ՀԱԱ - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան

ՀԱԲ - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1–4, Երեւան, 1971–1979

ՀԱԲՆ - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան

ՀԱԲՌ - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1–5, Երեւան, 1942–1962

ՀԱԹ - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ

ՀԱԻ - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան

ՀԱՊ - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան

ՀԲԲ - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1–4, Երեւան, 1944–1945

ՀԺՀ - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան

ՀՀ - Հայագիտական հանդես, Երեւան

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան

ՀՀՀ - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս

ՀՀՀԾ - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան

ՀՀՀՍ - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ

ՀՀՄ - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան

ՀՀՄԾ - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան

ՀՀՑ - Հայագիտության հարցեր, Երեւան

ՀՀԾՏԲ - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1–5, Երեւան, 1986–2001

ՀՊԹ - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան

ՀՊՀ - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան

ՀՊՀՑ - Հայոց պատմության հարցեր, Երեւան

ՀՊՄՀ - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան

ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1–13, Երեւան, 1974–1987

ՀՏ - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան

ՄԱ - Մերձավոր Արեւելք, Երեւան

ՄԱԵԺ - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան

ՄՀ - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

ՄՄ - Մաշտոցի անվան Մատենադարան, Երեւան
ՄՊՎ - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երեւան
ՄՑՀՁ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան
ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան), հ. 1–2, Վենետիկ, 1836–1837
ՆՀԺՊ - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երեւան
ՇՀՀԿ - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
ՊԲՀ - Պատմաբանասիրական հանդես, Երեւան
ՊԻ - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
ՊՄ - «Պատմություն եւ մշակույթ» հայագիտական հանդես, Երեւան
ՎՀԵՊ - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երեւան
ՎՀՀ - «Վէմ» համահայկական հանդես, Երեւան
ՏՀԳ - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երեւան
ՑՁՄՄ - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երեւան
ՔՀ - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
ՔՀՀ - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002
ՕԱՀՀՄ - Օտար աղբյուրները հայերի եւ Հայաստանի մասին, Երեւան
АГВ - Армянский гуманитарный вестник, Ереван
АО - Археологические открытия, Москва
АПА - Археологические памятники Армении, Ереван
АРА - Археологические раскопки в Армении, Ереван
ВВ - Византийский временник, Ленинград-Москва
ВДИ - Вестник древней истории, Москва
ВЕУ - Вестник Ереванского университета, Ереван
ВОН - Вестник общественных наук, Ереван
ДВ - Древний Восток, Ереван
ДКА - Древнейшая культура Армении, Ереван
ИАЭ - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
ИАН - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
ИФЖ - Историко-филологический журнал, Ереван
КБС - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
КВ - Кавказ и Византия, Ереван
КДА - Культура древней Армении, Ереван
КСИА - Краткие сообщения института археологии, Москва
КСИИМК - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
МАК - Материалы по археологии Кавказа, Москва
МИАН - Материалы по истории армянского народа, Ереван
МНМ - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991–1992
НАА - Национальный архив Армении, Ереван
СА - Советская археология, Москва
СМОМПК - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1–46, Тифлис, 1881–1915
СЭ - Советская этнография, Москва
ХВ - Христианский Восток, Санкт-Петербург
AJNES - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
AS - Anatolian Studies, Cambridge
AW - Antike Welt, Mainz am Rhein
BAR - British Archaeological Reports, International Series, Oxford
CAH - Cambridge Ancient History, Cambridge
IC - Iran and the Caucasus, Leiden
JANER - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
JAOS - Journal of American Oriental Society, Michigan
JAS - Journal of Armenian Studies, Belmont
JSAS - Journal of the Society for Armenian Studies, Fresno
MDOG - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
OrCh - Oriens Christianus, Leipzig
PO - Patrologia Orientalis, Paris-Brepols
RÉArm - Revue des études arméniennes, Paris
SMEA - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829–4243

Հրատարակվում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերւում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատուութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal “Etchmiadzin”

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ http://www.flib.sci.am/arm/node/2

Հեռ. (+374–10) 517–296/174
Ստորագրուած է տպագրութեան՝ 15.06.2019 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ